ՀՈՇՈՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ

Մեծ եղեռնը
վերապրած
ԱՎՐՈՐԱ ՄԱՐԴԻԳԱՆՅԱՆԻ պատմությունը

ՀՈԾՈՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՏԴ 941(497.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)52
Մ 134

Երաշխավորվել է տպագրության Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի կողմից

Պատմությունը անգլերեն գրի է առել Հարվի Լ. Գեյթսը
Նախաբանը՝ Նորա Վալնի

Թարգմանությունը՝ Գուրգեն Սարգսյանի
Խմբագիր և սրբագրիչ՝ Սվետլանա Դանիելյան

Գիրքը տպագրվել է Ջևան Չելոյանցի աջակցությամբ

Մարդիգանյան Ա.
Մ 134 Հոշոտված Հայաստան. Ավրորա Մարդիգանյանի պատմությունը/ Ա. Մարդիգանյան.-Եր.: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2015.- 208 էջ:

Գիրքը ներկայացնում է Հայոց ցեղասպանությունը վերապրած դեռատի հայուհու՝ Ավրորա Մարդիգանյանի (Արշալույս Մարտիկյան) հուշերը իր և իր տարագիր, բռնագաղթյալ ժողովրդի անցած տանջալից, անմարդկային փորձություններով լի ճանապարհի մասին: Վերապրածների հազարավոր հուշ-պատմություններ կան՝ իրենց ժառանգներին փոխանցված, սակայն Ավրորայի պատմությունը ուշագրավ առանձնահատկություն ունի. հրաշքով փրկված Ավրորա Մարդիգանյանը հայտնվում է ԱՄՆ-ում, որտեղ նրա պատմության հիման վրա ստեղծվում և 1918-ին տպագրվում է «Հոշոտված Հայաստան» գիրքը: Նույն թվականին էկրան է բարձրանում բարեգործական նպատակներով նկարահանված «Հոշոտված Հայաստան» («Հոգիների աճուրդ») համր ֆիլմը, որտեղ Ավրորային վիճակված էր մարմնավորելու իր իսկ կերպարը և դառնալու առաջին հայ կինոդերասանուհին:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների, Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև կինոյի պատմությունն ուսումնասիրողների համար:

ՀՏԴ 941(497.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)52

ISBN 978-9939-822-56-3
© Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2015

947.925

ՄԱՐԴԻԳԱՆՅԱՆ ԱՎՐՈՐԱ

ՀՈՇՈՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ

Այս պատմությունը Մեծ եղեռնից
հրաշքով փրկված մի հայ աղջկա մասին է

Ա 100860

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻ Է ԱՌԵԼ ՀԱՐՎԻ Լ. ԳԵՅԹՍԸ

ԱՌԱՋԱԲԱՆԸ՝ ՆՈՐԱ ՎԱԼՆԻ

Երևան - 2015

ՀԻՄՆԱՐԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽԱՎԱՐԻՆ ՀԱՂԹԱԾ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ
Ավրորա Մարդիգանյանի կյանքի ուղին

«Հոշոտված Հայաստան» գիրքը ներկայացնում է Ավրորա Մարդիգանյանի (Արշալույս Մարտիկյան)՝ Արևմտյան Հայաստանի Չմշկածազ գյուղում ծնված մի դեռատի հայուհու հուշապատումը: Ավրորայի նման հազարավոր, միգուցե հարյուրհազարավոր երիտասարդ հայուհիներ կարող էին պատմել երիտթուրքերի կողմից իրագործված հայերի ցեղասպանության տարիներին իրենց ճակատագրի, իրենց ապրած սարսափների ու տառապանքների մասին:

Երևի նման պատմություններ այլևս չգտնվեն. տասնյակհազարավոր աղջիկներ սպանվեցին սիրիական անապատներ տանող ճանապարհներին կամ էլ մինչև իրենց կյանքի վերջը փակված մնացին մուսուլմանական հարեմներում: Կարդալով Ավրորայի պատմությունը՝ կարելի է պատկերացնել, թե ինչպիսին կարող էին լինել մյուսների պատմությունները: Անկասկած, դրանցից յուրաքանչյուրը կարող էր ֆիլմի սցենարի հիմք դառնալ:

Ավրորա Մարդիգանյանի հուշագրությունը վերնագրվեց «Հոշոտված Հայաստան»: Այն ունեցավ մի քանի հրատարակություն. առաջինը սահմանափակ քանակով լույս տեսավ 1918-ին Նյու Յորքի «Kingfield Press Inc.» հրատարակչությունում՝ որպես ներդիր ունենալով սպանությունների և զանգվածային տեղահանությունների տեսարանների եզակի լուսանկարներ: Կազմին Ավրորան էր՝ ավանդական տարազով: Արդեն հաջորդ տարի լույս տեսավ երկրորդ հրատարակությունը, իսկ հաջորդները դարձան ամենաշատ վաճառվող գրքերից: «Հոշոտված Հայաստանը» վերահրատարակվեց քսան անգամ: Գրքի հաջողությունն այնքան մեծ էր, որ ամերիկացի հրատարակիչները գրքի վերջում առևտրային բնույթի գովազդային հայտարարություններ էին տեղադրել:

Առաջին հրատարակության նախաբանում Նորա Վալնը՝ Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտեի հանրության հետ կապերի քարտուղարը, գրում է. «Նա անգլերեն չգիտեր և ինձ ողջունեց իր մայրենի լեզվով... Չնայած Ավրորան շատ էր հոգնած,

սակայն համառորեն շարունակում էր պատմել իր կրած տառապանքների մասին»:

Ամերիկացիներից շատերը տեղյակ էին երիտթուրքերի կողմից հայերի հանդեպ կատարվող հրեշավոր հանցագործությունների մասին: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ մինչև 1917 թվականը, ԱՄՆ չեզոք պետություն էր, և ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչները, ուսումնական հաստատություններն ու միսիոներները գործում էին առանց սահմանափակումների՝ ակամա դառնալով Հայոց ցեղասպանության ականատեսն ու վկան: Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն բազմիցս միջնորդել էր և պահանջել երիտթուրքերի վերնախավի ներկայացուցիչներից կասեցնել խաղաղ հայ բնակչության տեղահանության հրամանը և դադարեցնել հայերի ոչնչացումը սիրիական անապատներում: Մորգենթաուն ինքը հայերի կոտորածները բնութագրել է որպես «մի ողջ ժողովրդի ոչնչացման նոր ձև»:

Ավրորան պատմում էր իր պատմությունը հայերեն, իսկ նրա թարգմանիչները դարձան այն ընտանիքի անդամները, որտեղ նա ապրում էր ԱՄՆ՝ Նյու Յորք ժամանելու առաջին օրերին: Ավրորայի պատմությունը շարադրեց ու մշակեց Հարվի Լ. Գեյթսը: Առաջին հրատարակության տիտղոսաթերթին համապատասխան գրություն կա. «Պատմությունն անգլերեն գրի առավ Հ. Լ. Գեյթսը»:

1918 թվականին Ավրորայի պատմությունների հիման վրա գրվեց ֆիլմի սցենար՝ «Հոշոտված Հայաստան» կամ «Հոգիների աճուրդ» վերնագրով: Ֆիլմը նկարահանվեց Կալիֆոռնիայում և ունեցավ վիթխարի հաջողություն: Ամերիկյան մամուլը լի էր ֆիլմի և «հայ Ժաննա դ'Արկի» (այդպես էին կոչում Ավրորային) մասին հոդվածներով: Ֆիլմի վարձույթից ստացված ողջ շահույթը (30 մլն դոլար) պետք է հատկացվեր Մերձավոր Արևելքում, Հունաստանում և Հայաստանում ապաստանած տասնյակհազարավոր հայ որբերի գոյատևման միջոցների ձեռքբերման գործին:

Նշենք, որ Ավրորա Մարդիգանյանի պատմությունների կինոտարբերակը մեղմ վերարտադրությունն էր այն սարսափների ու տառապանքների, որոնց ականատես էր դարձել դեռատի հայուհին:

Ֆիլմի սցենարը պատրաստ էր, և գլխավոր դերակատարուհու ընտրության հարցում ռեժիսոր Օսկար Ապֆելը անսպասելի որոշում կայացրեց. նա գլխավոր հերոսուհու դերի համար հրավիրեց հենց իրեն՝ Ավրորա Մարդիգանյանին: Ֆիլմում նկարահանվեց նաև Հենրի Մորգենթաուն՝ մարմնավորելով ինքն իրեն՝ այդ տարիներին Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպանին: Ավրորա Մարդիգանյանի սիրելի մարդու՝ Անդրանիկի դերը կատարում էր իր ժամանակի հայտնի դերասան Իրվինգ Քամինգսը, իսկ որբանոցի դաստիարակչուհու կերպարը մարմնավորում էր Հոլիվուդի հայտնի դերասանուհի Աննա Նիլսոնը: Ֆիլմի զանգվածային տեսարաններին մասնակցում էին ԱՄՆ-ում բնակվող հայեր և հույներ:

Նկարահանումները տևեցին երկու ամսից էլ քիչ:

Բացառիկ ֆիլմ ստացվեց: Բացի այն, որ կինոյի պատմության մեջ առաջին անգամ նկարահանվում էր համր ֆիլմ տեղի ունեցող կոնկրետ պատմական իրադարձության՝ հայերի ցեղասպանության մասին, այստեղ գլխավոր դերակատարուհին ինքնաբուխ հաղորդում էր իր իսկ ապրած ցավն ու տառապանքը, և կինոդիտողը կարծես ինքն էր անցնում այն մղձավանջի միջով, որում հայտնվել էր գլխավոր հերոսուհին: Այդպիսով ֆիլմը ձեռք էր բերում փաստագրական-գեղարվեստական արժեք:

Հաջի-Ղաֆուրի հարեմից փախչելու հերթական դրվագի նկարահանման ժամանակ Արշալույսը, արագ իրար կապելով երկու կարպետների ծայրերը, իջեցնում է այն գետնին՝ մոտավորապես վեց մետր, և լսելով ռեժիսորի «պատրաստվե՛ք» հրահանգը՝ ցատկում է պատուհանագոգին և սկսում է արագ սահել ներքև: Սակայն, ոգևորվելով, նա մի պահ բաց է թողնում կարպետը ձեռքից և ճչալով ընկնում ցած՝ վնասելով կոճը: Կինոսրահի բժիշկներն անմիջապես օգնության են հասնում. ցավազրկում են և պատգարակի վրա տեղափոխում հիվանդանոց: Թեև առաջնային զննումը ցույց տվեց, որ ճաքը խոր չէ, այդուհանդերձ, բժիշկները նրան հրահանգեցին անկողնային ռեժիմ պահպանել երկու-երեք օր:

Նա խնդրում, աղաչում էր բժիշկներին, ֆիլմի տնօրենին... «Տեսե՛ք, - ցատկելով մահճակալից և ողջ ուժով հենվելով վնասված ոտքի վրա՝ համոզում էր Արշալույսը, - տեսեք, ոտքս ինձ բոլորովին չի

անհանգստացնում, ես կարող եմ քայլել, կարող եմ մասնակցել նկարահանումներին»:

Նրան անհնար էր տարհամոզել... Ռեժիսորը որոշում է նկարահանել միայն այն դրվագները, որտեղ կարիք չկար քայլելու կամ այլ կերպ ծանրաբեռնելու վնասված ոտքը:

Նկարահանումների ավարտից հետո ռենտգեն հետազոտությամբ պարզվեց, որ կոճի վնասվածքն ավելի լուրջ է, քան թվում էր: Երկար ժամանակ ֆիլմի հերոսուհին ստիպված էր պառկած մնալ անկողնում: Առողջանալուց հետո խոստովանում է. «Ես դիտմամբ էի թաքցնում ցավը. եթե ինձ հանձնարարված պարտավորությունը ժամանակին չկատարեի, իմ հոգին, իմ սիրտը կտանջվեին Հայաստանիս համար»:

Նյու Յորքում, Սան Ֆրանցիսկոյում, Լոս Անջելեսում «Հոգիների աճուրդ» ֆիլմի յուրաքանչյուր պրեմիերայից հետո կազմակերպվել է Ավրորա Մարդիգանյանի հանդիպումը տեղի վերնախավի հետ: Նման մի հանդիպման ժամանակ Ավրորա Մարդիգանյանը նշել է. «Այն, որ դուք այսօր ինձ տեսնում եք այստեղ՝ բեմի վրա, զուտ պատահականություն է: Մեզ՝ տասնյոթ աղջիկներիս, Բեքրան բեկը և նրա վայրենի քրդերը քշում էին դեպի հինավուրց քաղաք Դիարբեքիր: Քաղաքի դարպասները փակ էին, իսկ Բեքրան բեկը չէր ցանկանում գլուխ դնել մեզ հետ: Ոչ այնքան հեռվում 16 խաչ էր վեր խոյանում, իսկ մենք 17-ն էինք. մեկ խաչ պակաս էր... Ահա թե ինչու եմ ես այստեղ»:

Առաջին անգամ ֆիլմը ամերիկյան հասարակությանը ներկայացվեց Վաշինգտոնում 1919 թ. հունվարին, իսկ առաջին նյույորքյան ցուցադրությունը կազմակերպվեց շքեղ «Պլազա» հյուրանոցի պարասրահում: Այնուհետև՝ Ֆիլադելֆիա, Չիկագո, Բոստոն, Լոս Անջելես, ընդհանուր առմամբ՝ քսաներեք նահանգի խոշոր քաղաքներում: Ֆիլմը մեծ հաջողություն ունեցավ Լատինական Ամերիկայի բազմաթիվ երկրներում, հատկապես՝ Մեքսիկայում և Կուբայում: Ավրորայի անունը և ֆիլմի վերնագիրը չէին իջնում ամերիկյան թերթերի էջերից: Գործի դրվեց նաև Հոլիվուդի համար սովորական փորձամեքենան՝ երիտասարդ Ավրորային հոլիվուդյան աստղ «սարքելու» և դրանով փող աշխատելու համար՝

օգտվելով նրա հանրաճանաչությունից: Բայց Ավրորային դա չէր հետաքրքրում. նա դեռ ուշքի չէր եկել մղձավանջային հիշողություններից: Հերթական ցուցադրությունից և հյուրասիրությունից հետո, գտնվելով ամերիկացի հանդիսատեսի ուշադրության կենտրոնում, Ավրորան ուշագնաց եղավ և դրանից հետո այլևս չներկայացավ հանրությանը: Գեյթս ամուսինները արագ ելք գտան ստեղծված իրավիճակից. Ավրորային արտաքինով նման մի քանի աղջկա վարձեցին, ովքեր, երբեմն միաժամանակ, հանրությանը ներկայանում էին որպես Ավրորա Մարդիգանյան:

Մեծ Բրիտանիայում «Հոգիների աճուրդ» ֆիլմն առաջին անգամ ցուցադրվեց Լոնդոնի թագավորական «Ալբերտ հոլում» 1920 թ. հունվարին՝ նախօրոք ենթարկվելով գրաքննության: Անգլիական թերթերն ու ռադիոն հայտնում էին, որ բոլոր տոմսերը վաճառվել են, և նշում էին, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է տեսնել «Հոգիների աճուրդը»: «The Bioscope» շաբաթաթերթը բազմաթիվ մեջբերումներ տպագրեց կինոդիտողների նամակներից. «Քոլսթոնի սրահն ունի 3500 հանդիսատեղ, սակայն հարյուրավոր այցելուներ, կինոթատրոնի մոտ խմբված, չէին կարողանում տոմս ձեռք բերել: Շնորհավորում ենք Բրիստոլում ամենալավ ֆիլմի ցուցադրության առթիվ: Հո՛գ տարեք, որպեսզի ֆիլմի ցուցադրությունը երկարաձգվի ևս մեկ շաբաթով»:

Բրիտանական գրաքննության բազմակի միջամտությունից հետո ֆիլմի ցուցադրությունը դադարեցվում է մեկընդմիշտ: Բրիտանական իշխանությունները վախենում էին, թե մուսուլման թուրքերի դաժանությունը ներկայացնող տեսարանները կարող են բրիտանական գաղութների մուսուլման բնակչության շրջանում հուզումներ առաջացնել: Ֆիլմը Մեծ Բրիտանիայում ցուցադրվեց Ազգերի լիգայի հովանավորությամբ:

Բայց ինչու՞ թե՛ գիրքը, թե՛ կինոֆիլմը, ունենալով աննախադեպ հաջողություն (բացառապես ամեն օր ամերիկյան հեղինակավոր թերթերը հոդվածներ էին տպագրում այդ ֆիլմի մասին, լուսանկարներ հրապարակում), հանկարծ անհետացան հրապարակից:

Քաղաքական ու աշխարհաքաղաքական առաջնահերթությունների և ուղենիշների փոփոխությունն իր հետքը թողեց «Հոշոտված

Հայաստան» կամ «Հոգիների աճուրդ» գրքի, ինչպես նաև ֆիլմի հետագա ճակատագրի վրա: Գիրքը հանվեց գրախանութներից, իսկ ֆիլմի ցուցադրությունը դադարեցվեց թե՛ Միացյալ Նահանգներում, թե՛ Անգլիայում:

Նման ճակատագիր ունեցավ նաև մեկ այլ ֆիլմի սցենար՝ գրված ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հանրահայտ վեպի հիման վրա: Ֆիլմը Մովսեսի լեռան վրա տեղի ունեցած հայերի հերոսական ինքնապաշտպանության մասին է: Այն պետք է նկարահանվեր 1935-ին խոշոր հոլիվուդյան կինոստուդիայի՝ «Մետրո Գոլդվին Մեյերի» նախաձեռնությամբ, սակայն թուրքական իշխանությունների ճնշման տակ Վաշինգտոնն արգելեց նկարահանումները: Պատճառը պարզ է. ֆիլմը պետք է պատմեր, թե ինչպես ավելի քան 50 օր վատ զինված հայերը հերոսական դիմադրություն ցույց տվեցին թուրքական կանոնավոր զորամիավորումներին և 1915 թ. սեպտեմբերին Պորտ Սաիդ տարհանվեցին ֆրանսիական ռազմանավերի օգնությամբ: Սա վտանգավոր և անընդունելի մի թեմա էր Թուրքիայում իշխող քեմալական վարչակազմի համար, որի ճնշման տակ ամերիկյան կողմը տեղի տվեց:

Ավրորա Մարդիգանյանի հուշագրությունն աստիճանաբար անհետացավ գրադարաններից, իսկ նրա ֆիլմի ամբողջական տարբերակը չի հայտնաբերվել մինչ օրս: Ո՞վ գիտի, գուցե մի որևէ գավառական արխիվում կամ հենց Հոլիվուդում Ապֆելի դարակազմիկ աշխատանքի ամբողջական տարբերակը դեռ սպասում է իր հայտնաբերողին: Սակայն մինչ այդ այն գտնելու ուղղությամբ որոշ խանդավառների գործադրած ջանքերն ապարդյուն են անցնում: Պահպանվել է ժապավենի միայն 18-րոպեանոց մի հատված:

2011 թ. Կալիֆոռնիայում տողերիս հեղինակը բոլորովին պատահաբար կարողացավ Ավրորա Մարդիգանյանի բարեկամների մոտ հայտնաբերել հերոսուհու լուսանկարների արխիվը, այդ թվում նաև՝ Մարտիկյանների ընտանեկան միակ բնօրինակ լուսանկարը, որտեղ Ավրորան ընդամենը չորս տարեկան է: Արխիվում պահպանված էին նաև նրա նամակները: Մեծ հաջողություն էր, որ երկար բանակցություններից հետո Ավրորայի ազգականները համաձայնեցին այդ անգին փաստաթղթերը հանձնել Հայոց ցեղասպանության թանգա-

ռան-ինստիտուտին: Ավելի ուշ հավաքածուն համալրվեց Ավրորայի անձնական իրերով և նրա Աստվածաշնչով, այնուհետև՝ Ավրորայի և «Հոշոտված Հայաստան» ֆիլմի մասին հոդվածներ պարունակող բնօրինակ ամերիկյան թերթերով և պաստառներով:

Ավրորայի հետագա կյանքն այնքան էլ լավ չդասավորվեց. 28 տարեկանում նա ամուսնացավ գաղթական հայ երիտասարդի հետ: Թեև Ավրորան որդի ուներ, սակայն հետագա տարիներն ապրեց մենության մեջ, գրեթե մեկուսացած արտաքին աշխարհից: Նրանք, ովքեր ինչ-որ կերպ շփվել էին նրա հետ, պատմում էին, որ կյանքի մայրամուտին նա կորցրել էր բանականությունը և ամբողջ ժամանակն անցկացնում էր «թուրքերի վերադարձին» սպասելով:

Նրան կերակրում էր մի հայուհի՝ ամենօրյա գնումները փոխանցելով պատուհանից: Իր կյանքի վերջին օրերը Ավրորա Մարդիգանյանն անցկացրեց «Արարատ հոում» ծերանոցում:

Նա կյանքից հեռացավ 1994-ին, 92 տարեկանում: Ավրորայի դին ոչ ոք չպահանջեց, և «հայ Ժաննա դ'Արկի», աճյունն ամփոփվեց ընդհանուր գերեզմանատանը, որտեղ «անհայտների» մահվան տարեթվով թիթեղյա ցուցանակ էր միայն տեղադրված՝ «1994»:

Անկասկած, երիտասարդ հերոսուհի Արշալույս-Ավրորան դարձավ այն սերնդի խորհրդանիշը, որը պայքարում էր մահվան ու բռնության դեմ, իսկ հետագա սերունդների համար՝ մարդկային անկոտրում կամքի և չարին հաղթելու վճռականության մարմնացում:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ

պատմական գիտությունների դոկտոր
ՀՅԹԻ տնօրեն

ԶՈՆ

Գիրքս նվիրում եմ այս սքանչելի երկրի՝ Միացյալ Նահանգների բոլոր այն մայրերին ու հայրերին, ովքեր իրենց դուստրերին դաստիարակել են ճշմարիտ հավատով առ Աստված:

Աչքիս առջև է մայրիկիս անշնչացած մարմինը՝ նետված անապատ այն բանի համար, որ ինձ ավանդել էր չուրանալ Հիսուս Քրիստոսին՝ մեր Փրկչին: Ես տեսել եմ տանջամահ եղող հորս, ով իր փոքրիկ աղջկան պատգամել էր. «Հավատա՛ մեր Տիրոջը, թող Նրա կամքը կատարվի»: Ես տեսա հազարավոր գեղանի մայրերի սիրասուն դուստրերին, որ նահատակվեցին թուրքի մտրակի կամ դանակի հարվածներից, սովից ու ծարավից կամ էլ քշվեցին գերության, որովհետև չուրացան իրենց քրիստոնեական փառավոր հավատքը:

Աստված ողորմած եղավ իմ հանդեպ և խնայեց կյանքս՝ հնարավորություն տալով ազգիս փրկված բեկորների պատգամը փոխանցելու ամերիկացի ժողովրդին, որպեսզի ամերիկացի յուրաքանչյուր հայր, յուրաքանչյուր մայր հասկանա, որ այն, ինչ պատմելու եմ այս գրքի էջերում, սիրո ու փառաբանության խոսք է առ Աստված... իմ փրկության համար:

Ավրորա Մարդիգանյան
Լաթամ, Նյու Յորք

դեկտեմբեր, 1918 թ.

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Իր ժողովրդի կյանքում կատարված հոգեցունց և ողբերգական իրադարձությունների մասին փոքրիկ Ավրորան պատմեց ինձ, որպեսզի ես էլ իմ մայրենի լեզվով այն հասցնեմ աշխարհին: Այդ հնարավորության համար պարտական եմ լորդ Ջեյմս Բրայսին՝ Միացյալ Նահանգներում Մեծ Բրիտանիայի դեսպանին, ում իր կառավարությունը հանձնարարել էր հետաքննել հայերի կոտորածների գործը: Պարտական եմ նաև դոկտոր Քլերենս Աշերին, ում մասին Ավրորան հիշատակում է իր պատմության մեջ: Աշերը ականատես է եղել Վանի կոտորածին: Երախտապարտ եմ նաև դոկտոր Մակ-Քալումին, ով փրկեց Ավրորային Էրզրումում և օգնեց նրան Ամերիկա հասնելու:

Ընթերցողը ամենայն վստահությամբ կարող է կարդալ Ավրորայի պատմությունը, քանզի այնտեղ ամեն բառ ճշմարիտ է: Այն, ինչ պատահել է քրիստոնյա այս աղջկա հետ, հավաստի վավերագիր-փաստաթուղթ է:

ՀԱՐՎԻ Լ. ԳԵՅԹՍ

Ա-100850

ՆԱԽԱԲԱՆ

Նա կանգնած էր իմ առջև՝ բարալիկ, նուրբ, դեռատի մի աղջիկ՝ փայլուն, սև մազերով: Մինչև չսկսեցի հարցուփորձս, և նա չբարձրացրեց աչքերը, որոնց մեջ ես կարդացի նրա անլուր տառապանքների անջնջելի պատմությունը, չկարողացա հավատալ, որ այդ աղջիկը Ավրորա Մարդիգանյանն է, ում ես սպասում էի: Նա անգլերեն չգիտեր և ինձ ողջունեց իր մայրենի լեզվով:

Դա մեր առաջին հանդիպումն էր 1917 թվականի գարնանը: Դրանից շաբաթներ առաջ ես նամակ էի ստացել, որտեղ խոսվում էր դեռատի մի հայուհու մասին: Նրան մենք սպասում էինք: Նամակագիրը խնդրում էր հնարավորինս օգնել աղջկան: Մեկ տարի առաջ մի հայ պատանի էլ էր եկել Կովկասյան նպաստամատույցի կենտրոնից, և բարեսիրտ մարդիկ նրան օգնել էին տեղավորվելու գիշերօթիկ դպրոցում: Ես նման մի ծրագիր էլ կազմել էի Ավրորայի համար՝ ուղարկել նրան նույն գիշերօթիկ դպրոցը:

Այդ երեկո թարգմանչի միջոցով մենք զրուցում էինք նրա կրթության շուրջ, բայց նա տխրությամբ գլուխն էր տարուբերում, թեև ցանկանում էր դպրոց գնալ, երաժշտություն սովորել, ինչպես նրա հայրն էր ծրագրել նախքան ջարդերը: Բայց նա հիմա

ՀԻՄՆԱՐԱՐ ԳՐԱԴԱՐԱՆ

մի հանձնարարություն ուներ, հանձնարարություն իր տառապյալ ժողովրդից՝ ուղղված ամերիկացի հայրերին ու մայրերին:

Աղջկա աչքերի մեջ նկատվող վճռականությունն ինձ ստիպեց հարցնել նրա տարիքը: Պատասխանը եղավ՝ տասնյոթ:

Թեև Ավրորան հոգնած էր, և նրա նյարդերը քայքայված էին, սակայն համառորեն պնդում էր, թե՝ պետք է պատմեմ հեռվում մնացած զարհուրելի տեսարանների՝ անապատ քշված հայ ընտանիքների, թուրքական հարեմներին վաճառված կույս աղջիկների, բռնագաղթի ճանապարհին բռնաբարված կանանց, սովամահ եղած մանկահասակ երեխաների մասին: Նա մեզ խնդրում էր օգնել իրեն, օգնել իր ժողովրդին:

«Իմ հայրն ասում էր՝ Ամերիկան ճնշվածների բարեկամն է: Ջորավար Անդրանիկն ինձ ուղարկեց այստեղ, որովհետև հավատում էր, որ դուք կօգնեք ինձ»,- աղերսում էր աղջիկը:

Նրա պատմածները թարգմանվում էին: Երբեմն հանգստանալու նպատակով հարկ էր լինում օրերով դադարեցնել զրույցը (տարիների տառապանքը քայքայել էր նրան), թեև նա չէր հրաժարվում շարունակել իր պատմությունը նույնիսկ ամոան սաստիկ շոգին: Պատճառաբանելով, որ պետք է անպատճառ անգլերեն սովորի, համոզեցինք նրան երեք շաբաթով հանգստանալու մեկնել Քոնեքթիքուտի ծովեզրյա ճամբարներից մեկը:

Նա, ով կկարդա Ավրորա Մարդիգանյանի կյանքի վերջին երեք տարվա պատմությունը, հազիվ թե հավատա, որ մեր ժամանակներում հնարավոր են նման բաներ: Դուք կունենաք նույն ապրումները, ինչ ես ունեցա, երբ առաջին անգամ լսեցի Ավրորայի ժողովրդի տառապանքների մասին, վերապրեցի ճիշտ այն զգացումները, ինչ ունեցել էի 1917 թվականի հոկտեմբերին, երբ Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան գործադիր կոմիտեն ինձ նախաճաշի հրավիրեց, որը կազմակերպված էր ԱՄՆ 17 հյուպատոսների և միսիոներների պատվին: Նրանք նոր էին վերադարձել Թուրքիայից՝ վերջին երկու տարվա ընթացքում ականատես լինելով հայերի ջարդերին ու տեղահանություններին: Ես այնպիսի մարդկանց էի լսում, որոնց հայտարարությունների ճշմարտացիությանը կասկածել չէի կարող: Նրանք պատմում էին, թե ինչպես հայ քրիստոնյա կանանց

ու երեխաների հագուստների վրա նավթ լցնելուց հետո նրանց փակել են մի եկեղեցում և ողջակիզել:

Հիանալի ընտանիքների, ինչպես՝ իմը կամ ձերը, նրբագեղ, կրթված աղջիկները վաճառվում էին Արևելքի շուկաներում որպես հարճեր: Սովից մեռնող մանկահասակ երեխաներ և հետո... Հետո՝ դիմումներ, աղերսագրեր... օգնելու համար ողբալի վիճակում գտնվող՝ կոտորածից փրկված հայ մարդկանց, որոնց հավաքել էին ժամանակավոր նպաստամատույց կայաններում:

Իմ լսածներին անկարող էի հավատալ, սակայն երբ նայում էի նախաճաշի սեղանի շուրջ նստած ծանոթ տիկնանց ու այրերի դեմքերին, ուղղակի չէի կարող չհավատալ նրանց պատմածներին: Ահա այդ պատվական անձինք՝ դոկտոր Ջեյմս Լ. Բարտոնը՝ Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտեի նախագահը, դեսպան Հենրի Մորգենթաուն և Էլքուսը, ովքեր իրենց ասածները հիմնավորում էին փաստերով և սեփական աչքերի տեսածով, Քլիվլենդ Հ.Դոջը, ում դուստրը՝ տիկին Էլիզաբեթ Հանթինգթոնը, այժմ Կոստանդնուպոլսում է, որդին՝ Բեյրութում, և երկուսն էլ օգնում են նպաստամատույցի աշխատանքներին: Ներկա էին տիկին Լյուսիլ Ֆորմանը՝ Ջերմանթաունից, Չ. Վիքրին՝ Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտեի գործադիր քարտուղարը, դոկտոր Սամուել Թ. Դաթոնը՝ Համաշխարհային դատական լիգայի ներկայացուցիչը, Ջորջ Թ. Սքոթը՝ Արտաքին առաքելությունների երիցական խորհրդից և այլք:

Նրանք, ովքեր կկարդան այս պատմությունը, առավելաբար կդժվարանան հավատալ, քանի որ հնարավորություն չեն ունեցել անձամբ լսելու այդ պատկառելի այրերին ու տիկնանց, ովքեր լիազորված էին խոսելու այդ օրը:

Այնպես պատահեց, որ, այդ ժամանակվանից սկսած, Արևելքից՝ Պարսկաստանից, ռուսական Կովկասից և Օսմանյան կայսրությունից եկող գրեթե բոլոր հաղորդագրություններն անցնում էին իմ ձեռքով, և ես գիտեմ, որ այս գրքում ներկայացվող եղելությունները չափազանցված չեն: Այս ներածականում ես ցանկանում եմ ձեզ ծանոթացնել լորդ Բրայսի զեկույցներին, դեսպան Մորգենթաուի պատմությանը, լորդ

Սեսիլի՝ Բրիտանիայի խորհրդարանի առջև վերջերս ունեցած ելույթներին և ԱՄՆ Պետքարտուղարության արխիվային փաստաթղթերին: Եվ միայն այդ ժամանակ դուք կհավատաք, որ ներկայացվող պատմությունը եղելություն է, և դրա մասին կարող էր պատմել Մերձավոր Արևելքում հավաքված մոտավորապես երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար ունեզրկված, թշվառ բռնագաղթյալներից յուրաքանչյուրը:

Սա կենդանի մարդու վավերագիր է: Օրիորդ Մարդիգանյանի վկայությունները, նշած անունները, թվականները, վայրերը միշտ չէ, որ ճշգրիտ համընկնում են այն փաստերին ու տվյալներին, որոնք հիշատակվում են դեսպան Մորգենթաուի, լորդ Բրայսի և ուրիշների կողմից: Սակայն մենք պետք է նկատի ունենանք այն հանգամանքը, որ Ավրորան հազիվ 17 տարեկան է, որ նա ապրել է պատմության մի դժնի ժամանակահատվածում և մի երկրում, որն ամենից շատ է տուժել Առաջին համաշխարհային պատերազմից: Մենք չպետք է մոռանանք նաև, որ Ավրորան պատմաբան չէ, որ նրա թարգմանիչն այս պատմությունը գրի առնելիս չի փորձել ամերիկյան հասարակությանը ներկայացնել այդ ժամանակաշրջանի պատմությունը: Պարզապես Ավրորայի նպատակն է եղել փոխանցել իր ժողովրդի պատգամը ամերիկացի ժողովրդին, որպեսզի վերջինս ինչ-որ չափով տեղեկացված լինի Մերձավոր Արևելքում տիրող իրադրության մասին անցած մի քանի տարվա ընթացքում, որպեսզի ամերիկացիներն օգնեն ապագայում այնտեղ հաստատելու օրինավոր և կայուն իշխանություն:

Խոսելով հայ ժողովրդի նկարագրի մասին՝ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն նյույորքյան «Իվնինգ Սան» թերթում վերջերս հրատարակած իր հոդվածում գրում է. «Հերոդոտոսի ժամանակներից Ասիայի այս մասը կոչվել է Հայաստան (Արմենիա): Ներկայիս հայերը անմիջական շառավիղներն են բնիկ հայ ժողովրդի, որն ապրել է այս տարածքում 3000 տարի: Նրանց ծագումն այնքան հին է, որ թաղված է առասպելի ու խորհրդավորության մշուշում: Կան տակավին չվերծանված սեպագիր արձանագրություններ Վանի՝ հայոց ամենամեծ քաղաքի մոտակայքում

գտնվող ժայռերի վրա: Որոշ գիտնականներ (ասեմ, որ նրանք այնքան էլ շատ չեն) փորձում են հայերին նույնացնել Ավետարանում հիշատակված խեթերի հետ:

Որոշակի ի՞նչ է հայտնի հայերի մասին... Նրանք դարեր շարունակ ներկայացել են որպես քաղաքակիրթ և ամենաաշխատասեր ժողովուրդը Օսմանյան կայսրության արևելյան մասում: Նրանք Հայկական բարձրավանդակից տարածվել են սուլթանի տիրապետության ողջ տարածքով և մեծ քաղաքների բնակչության նշանակալի մասը կազմել: Ամենուրեք հայերը հայտնի են իրենց գործարարությամբ, իրենց խելքով և օրինակելի կյանքով: Նրանք թուրքերից այնքան բարձր են իրենց ինտելեկտով ու բարոյականությամբ, որ առևտրի և արդյունաբերության մեծ մասն անցել է նրանց ձեռքը: Հույների հետ հայերը կայսրության տնտեսական ուժն էին: Այս ժողովուրդը քրիստոնեություն է ընդունել չորրորդ դարում և ընդունել է որպես պետական կրոն՝ հիմնելով Հայոց Եկեղեցին: Սա գոյություն ունեցող քրիստոնեական եկեղեցիներից ամենահինն է:

Դիմակայելով դաժանագույն, անպատմելի փորձությունների՝ այս ժողովուրդը ծայրահեղ համառությամբ կառչել է իր վաղքրիստոնեական հավատքից: 1500 տարի նրանք ապրել են Հայաստանում՝ քրիստոնեական կղզյակում՝ շրջապատված հետամնաց այլադավան ժողովուրդներով ու ցեղերով: Նրանց կյանքը եղել է անվերջանալի մարտիրոսություն: Այն տարածքը, որտեղ նրանք ապրել են, մի օղակ է Եվրոպայի ու Ասիայի միջև, և ասիական բոլոր՝ սարակինոսյան, մոնղոլական, քրդական և թուրքական հրոսակախմբերն անցել են այս երկրով»:

Ավրորա Մարդիգանյանը եկել է Ամերիկա՝ պատմելու իր ժողովրդի կրած անլուր տառապանքների մասին և իր ներդրումն ունենալու հայրենի երկրի վերածնման գործում:

Ավրորայի՝ այս դեռատի, փխրուն աղջկա նպատակն է ամերիկացի ժողովրդին հաղորդակից դարձնել իր պատմությանը մամուլի, այս գրքի և ֆիլմի միջոցով, որն արդեն պատրաստվում է Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտեի ջանքերով: Ես կարծում եմ, որ Ավրորան մեծ գործ է կատարում,

որպեսզի խաղաղություն վերահաստատվի և բարի կամք դրսևորվի իր հինավուրց բիբլիական հողում: Նրա մայրը, հայրը, նրա եղբայրներն ու քույրերն այլևս չկան: Ըստ ամենահավաստի աղբյուրների՝ երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար ունեզրկված ժողովրդի մեծ մասը, հիմնականում՝ կանայք ու երեխաներ, տեղահանվել ու քշվել են իրենց բնակավայրերից: Նրանցից շատերը հազարավոր մղոններ հեռու են իրենց բնակավայրերից: Նրանք իրենց ողբալի հայացքները դարձնում են դեպի Ամերիկա՝ օգնություն աղերսելով:

Դոկտոր Ջեյմս Լ. Բարտոնն այս ամսին 200 կանանց և տղամարդկանց հետ մեկնելու է այնտեղ, որտեղից եկել է Ավրորան, որպեսզի աջակցի այդ երկրի վերաշինման աշխատանքներին: Սա միայն մի մասն է այն արձագանքի, որ տրվեց ի պատասխան կարոտյալ հայ ժողովրդի օգնության կանչի:

Հուսով ենք, որ Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտեի ջանքերով երեսուն միլիոն դոլար հանգանակելը (եթե ողջ ամերիկացի ժողովուրդը մասնակցի) կլինի օգնության կանչի ևս մեկ արձագանք:

Դու, սիրելի՛ ընթերցող, նույնպես կարող ես օգնել Ավրորա Մարդիգանյանին՝ կարդալուց հետո այս գիրքը փոխանցելով մեկ ուրիշին:

Դեկտեմբերի 2, 1918 թ.
Ուան Մեդիսոն ավենյու
Նյու Յորք

Նորա Վալն
Հայ-սիրիական նպաստամատույցի
ամերիկյան կոմիտեի
հանրային կապերի պատասխանատու

ԱՐՇԱԼՈՒՅՍ՝ ԼՈՒՅՍՆ ԱՌԱՎՈՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԱԽԵՐԳԱՆՔԸ

Ծեր Վարդապետը՝ հովիվը, ում ոչխարների բուրդը իր տերերի երեք սերունդ էր հագցրել, հիմա ասես ուրվական կանգնած էր Տավրոս լեռան գագաթին: Ձիգ ու անշարժ կանգնած այդ բարձրահասակ մարդու տարիքը մատնում էին հողմահար, կամային դեմքի խորշոմները: Նա թեթևակի էր հենվել իր հովվական ցուպին, որպեսզի արհամարհանք չզգար սեփական անձի հանդեպ:

Դեպի արևելք ու դեպի հյուսիս փռված էին Մամուրեթ ուլ-Ազիզի հարթավայրերը, այս ու այն կողմում սարավանդներ էին, որ տարածվում էին լեռների ստորոտներում: Քսանհինգ դար շարունակ ամեն գարնան շատ ու շատ հովիվներ էին կանգնել այս նույն լեռնագագաթին՝ դիտելու Մամուրեթ ուլ-Ազիզի հարթավայրերի ու սարավանդների կանաչ գորգը, սակայն նրանցից քչերին էր բախտ վիճակվել տեսնելու, որ խոտերն ու թփերն այդքա՜ն վաղ կանաչած լինեին: Ծեր Վարդապետը շատ երջանիկ պիտի լիներ այդ հրաշալի ու խոստումնալի եղանակի համար և այդ մասին պատմեր իր ոչխարի հոտին. դա հնավանդ սովորություն էր: Բայց այդ օրը հովիվն անհանգիստ էր. գիշերը մի տարօրինակ, վատ նախազգացում էր

պատել նրա հոգին: Նույնիսկ լուսաբացին չէր կարողացել ազատվել դրանից: Հիմա նա սևեռուն նայում էր ոչ թե աչք շոյող կանաչ տարածքներին, որոնք շուտով մեղմացնելու էին ոչխարների անհանգիստ մայունը, այլ հեռու-հեռավոր չարագույժ հյուսիսին, որտեղ Եփրատի ոլորապտույտ կապտավուն ժապավենը կորչում էր արշալույսի մշուշների մեջ: Ինչ էր որոնում ինքը՝ չգիտեր, բայց կանխազգում էր՝ ինչ-որ բան սպառնում է հյուսիսից:

Հանկարծ լսվեց բարեպաշտ մուսուլմաններին երրորդ աղոթքի կանչող և արշալույսը ողջունող ծորուն ու միապաղաղ ազանը, որ տարածվում էր հովտից դեպի լեռները: Դա միանգամից սթափեցրեց հովվին. «Ահա՛, ահա՛ այն նշանը... Վտանգը գալու է հյուսիսից, բայց ինչ էլ լինի, նախ լինելու է քաղաքում»:

Հովիվը նայեց ներքևում փռված հովտին, տների տանիքներին, դրանք բաժանող նեղ, ոլորապտույտ փողոցներին: Նրա հայացքն ընկավ մինարեթի ցոլքին, և այդ պահին դարձյալ լսվեց ազանը: Նրա աչքերն արագ սահեցին քաղաքի վրայով դեպի այնտեղ, ուր արևի ճառագայթները խաղում էին հայազգի Չմշկիկ կայսեր հինավուրց բերդամրոցի գորշաշագանակագույն ավերակների հետ: Մի ծանր տխրություն իջավ նրա դեմքին. մինարեթը կանգուն էր, իսկ Չմշկիկ արքայի ամրոցը կործանվել էր: Ահա թե ինչու էր քաղաքում երկու տարբեր աղոթքներ հնչում, ահա թե ինչու վտանգը գալու էր հյուսիսից:

Ծերունին հովվացուպն ուղղահայաց խրեց հողի մեջ՝ նշան իր ոչխարներին, թե որտեղ իր ցուպն է ցցված, նրանց հովիվը պարտավոր է վերադառնալ այնտեղ: Հետո սովորականի պես իջավ լանջն ի վար տանող ճանապարհով, որտեղից սկսվում էին քաղաքի բնակելի տները: Իր առաջացած տարիքին անհարիր վճռական ու հաստատուն քայլերով նա անցավ քաղաքի միջով, մինչև հասավ այն փողոցներին, որտեղ քաղաքի հարուստների տպավորիչ տներն էին: Անցավ զբոսայգու կողքով, որը ժողովրդի համար որպես հավաքատեղի էր ծառայում: Փոքր շրջադարձից հետո հասավ բանկիր Մարդիգանյանի տանը: Ծեր Վարդապետը միշտ էլ սպասված հյուր էր նրանց տանը: Նա եղել էր Մարդիգանյան գերդաստանի երեք սերնդի ոչխարի հոտի պահապանը:

Աղախինը փողոցի դուռը բացեց և ներս հրավիրեց հովվին՝ ուղեկցելով նրան մինչև պարտեզի խորքը: Երբ աղախինը փակեց դուռը, այցելուն նրան հարցրեց.

- Պարոնը դեռ տա՞նն է, թե այսքան վաղ արդեն գնացել է իր գործին:

- Ամո՛թ քեզ այդ հարցիդ համար,- պատասխանեց կինը՝ առանց ձևական քաղաքավարության, ինչը հատուկ էր աղախիններին,- մոռացե՞լ ես՝ ինչ օր է այսօր...

Զարմանքի նշաններ երևացին ծերունու աչքերում: Կինն զգաց, որ նա չի հիշում օրվա մասին և ավելի մեղմ ասաց.

- Չգիտե՞ս, Վարդապե՛տ, այսօր Զատկի կիրակին է:

Ծերունին շփոթվեց, բայց արժանապատվությունը փրկելու համար ասաց.

- Եթե դու ապրեիր այնքան, ինչքան Ծեր Վարդապետը, կուզեիր մոռանալ շատ ավելին, իսկ այն, ինչ շուտո՛վ է գալու...

Կինը համբերություն չուներ լսելու ծերունու քրթմնջոցը և «խորհրդավոր վերահաս վտանգի» սպառնալիքը նրա դյուրագրգռությանը վերագրեց: Կնոջ խայթող պատասխանը հովիվն անցկացրեց ականջի կողքով և առանց ավելորդ խոսակցության անցավ պարտեզի միջով, մտավ տուն:

Մարդիգանյանների տունը նման էր իր ժամանակի ունևոր հայերի տներին: Պարտեզից դեպի տան լայն շքամուտքը տանող աստիճանները և ճեմուղին սալարկված էին սպիտակ մարմարով: Ընդարձակ նախասրահի հատակը նույնպես պատված էր մարմարե խոշոր ու գեղեցիկ սալիկներով: Դրսից շենքը բավական մռայլ ու անհրապույր տեսք ուներ. հավանաբար դա ժամանակ առ ժամանակ հանդիպող խստաշունչ ձմռանը դիմակայելու համար էր: Դրա փոխարեն տան ներսում ամեն ·իր վկայում էր շքեղության ու հարստության մասին: Հողամասի այն տարածքը, որ զբաղեցրել էր տունը, թեք էր, ուստի սենյակները կառուցվել էին մեկը մյուսի վրա՝ դարավանդաձև. մեկի տանիքը ծառայում էր որպես մուտք վերևի սենյակի համար:

Ընդարձակ հյուրասենյակում, որտեղ Ծեր Վարդապետը հետ ու առաջ էր քայլում, քարե մի մեծ բուխարի կար, որի երկու կողմերում դրված էին ցածր բազմոցներ: Տեղական արտադրության ասեղնագործ

շքեղ ծածկոցներ ու բարձեր էին զարդարում բազմոցները: Մարմարյա հատակը ծածկված էր թաղիքե հենքի վրա գործված պարսկական ու հայկական փափուկ, հաստ գորգերով: Բուխարիի վերևում կախված էր մի հազվագյուտ «Աստվածամայր», կողքին՝ հանրաճանաչ հայ նկարչի մի բնանկար և յուղաներկ մի կտավ՝ հոլանդական նավահանգստի տեսարանով: Սենյակի մի անկյունում դրված էր դաշնամուրը, կողքին՝ բարձր աշտանակ: Արևելյան վառ գույների նախապատվությունն ակնհայտ էր, համադրումը՝ ճաշակով ու ներդաշնակ:

- Քրիստոս հարյավ ի մեռելոց, իմ բարի՛ Վարդապետ...

- Օրհնյա՛լ է հարությունը Քրիստոսի,- պատասխանեց ծերունին, ինչպես պահանջում էր սովորույթը: Ապա նա մի այնպիսի լրջությամբ խոսեց, որ դիմացինն իսկույն հասկացավ, թե այս մարդուն ինչն է բերել իր տուն:

Գիշերը տեսիլք էր երևացել ծերունուն.

- Մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը երազումս երևաց ինձ և ձեռքը ծանրորեն դնելով ուսիս՝ ասաց. «Արթնացի՛ր, Ծեր Վարդապետ, արթնացի՛ր: Քո հոտը վտանգի մեջ է. քեզ չի փրկի նույնիսկ Աստծո ողորմածությունը: Արթնացի՛ր և փրկի՛ր ոչխարներիդ»: Ահա թե բարի սուրբն ինչ ասաց ինձ: Ես փութով վեր թռա, բայց երբ իմ շատ բան տեսած ու հոգնած աչքերը բացեցի, տեսիլքն անհետացել էր: Ես վազեցի դեպի փարախ, բայց մարդ-մուրդ չկար, որ խանգարեր հոտիս հանգիստը: Ոչխարները խաղաղ քնած էին, սակայն ես այլևս չկարողացա քնել: Հենց աչքերս փակվում էին, Սուրբ Գրիգոր Լուսավորիչը գալիս կանգնում էր դիմացս՝ ասես կշտամբելու ինձ ծուլության համար: Լուսաբացին հոտս քշեցի լեռները:

Այստեղ հովիվը տատամսեց: Շուտասելուկի պես նա ամեն ինչ ասել էր, իսկ հիմա գրեթե շնչասպառ էր լինում: Նրա տերը ծեր ու հավատարիմ իր հովվին լսեց պատշաճ ուշադրությամբ և առանց ժպիտի, դեմքի քար արտահայտությամբ ասաց.

- Ափսո՜ս, Վարդապետ, անհանգիստ ես քնել: Այս առավոտ, ինչպես բոլորս, դու էլ պիտի ուրախանաս... Ասա ինձ՝ այդ ի՞նչ ես հիշել այսօր՝ առավոտ կանուխ, ապա վանի՛ր քեզնից այդ մտքերը:

- Կան բաներ, տե՛ր իմ, ո՛չ դու, ո՛չ էլ ես չենք կարող ջնջել մեր հիշո-

ղությունից: Հիշում եմ, մի անգամ էլ մեր սուրբը երևաց ինձ երազում՝ զգուշացնելով վերահաս վտանգի մասին: Այն ժամանակ ես ուշադրություն չդարձրի, քանի որ շատ էի երիտասարդ ու անհոգ. դրանք ուրախ տարիներ էին. Հայաստանում խաղաղություն էր, երկիրը ծաղկում էր: Բայց հենց նույն օրը չարիքը եկավ հյուսիսից: Քսան տարի առաջ էր...

Տանտերը ցնցվեց. նյարդային սարսուռ անցավ մարմնով, դեմքը պատի ծեփ դարձավ: Քսան տարի առաջ... Դա այն ժամանակ էր, երբ իր ժողովրդի հարյուրհազարավոր զավակներ կոտորվեցին սուլթան Համիդի արյունոտ ձեռքով: Առանց մի բառ ասելու նա մոտեցավ լուսամուտին, հեռացրեց վարագույրները և նայեց դուրս՝ տան պարտեզին:

Մարդիգանյանը իր ժամանակի հաջողակ հայ գործարարներից էր: Նա քիչ էր ժպտում, բայց նրա ձայնի մեջ բարություն կար, աչքերի մեջ՝ մեղմություն: Գուցե Ամերիկայի կամ Եվրոպայի որևէ զբոսավայրում քայլելիս նա մի շատ սովորական մարդ թվար՝ ոչ մի բանով անցորդների ուշադրություն չգրավող, բայց այդ պահին, երբ նա հեռացավ պատուհանից, միայն սուր աչքը կարող էր նրա դեմքին ու շարժումներում նկատել այն անբացատրելին, անորսալին, ինչը բնորոշ է դարերով ճնշված ժողովրդին:

- Այն, ինչ պատահեց քսան տարի առաջ, ի՛մ Վարդապետ, երբե՛ք չի կարող կրկնվել: Մենք՝ հայերս, ոչինչ չենք արել մեր տերերի՝ թուրքերի զայրույթը գրգռելու համար: Ընդհակառակը, մենք ապացուցել ենք պետությանը հոժարակամ ծառայելու մեր պատրաստակամությունը: Մեր երիտասարդները թուրքական բանակի կազմում մասնակցում են այս աշխարհակործան պատերազմին, թեև նրանց համակրանքը սուլթանի թշնամիների կողմն է (դա նրանք ցույց չեն տալիս): Նրանք՝ մեր զավակները, ինքնակամ իրենց կյանքը զոհում են ճակատամարտերում մեկ նպատակի համար՝ թուրքական պետությունը հանկարծ պատճառ չունենա իր զայրույթը մեր ժողովրդի գլխին թափելու: Օրեր առաջ սուլթանի նախարարը՝ ազդեցիկ Էնվերը, իր երախտագիտությունը հայտնեց հայ ժողովրդին այն ծառայության համար, որ նա մատուցում է Կիսալուսնին: Նրանք չեն համարձակվի մեզ նորից հալածել:

- Բայց անցյալ գիշերվա տեսիլքս այն նույնն էր, որը 1895 թվականին ահազանգեց մեզ սպառնացող վերահաս չարիքի մասին:

- Այս անգամվանը դատարկ երազ է, - հանգստացրեց վաճառականը՝ համոզվածության շեշտ հաղորդելով իր խոսքին: Հովիվը վիրավորվեց, երբ գործատերը չհավատաց «վերահաս չարիքի» նշանին, ինչպես ինքն էր հավատում: Ծերունին դուրս եկավ սենյակից, անցավ պարտեզով՝ անչափ վիրավորված: Նա մոտեցավ դարպասին և երբ ուզում էր դուրս գալ, մի մեղմ, երիտասարդ ձայն նրա ուշադրությունը գրավեց:

- Վարդապե՛տ, սպասի՛ր, գալիս եմ...

Ծերունին կանգ առավ: Իրեն էր մոտենում ընտանիքի անդամներից մեկը, ով շա՜տ հարազատ էր իր սրտին. Արշալույսն էր՝ Մարդիգանյանների դուստրը:

«Արշալույս» նշանակում է «լույսն առավոտի»: Անգլերենում միայն մեկ բառ կա՝ «Ավրորա», որով կարելի է թարգմանել հայերեն «Արշալույսը»: Նա գիշերվա պես սև, վառվռուն աչքերով 14-ամյա աղջիկ էր՝ ամբողջությամբ ժպիտ ու ավյուն, ինչպես արևային պայծառ օրը: Ծեր Վարդապետի հոտի ամեն մի ոչխար նրա սիրելին էր, հատկապես՝ սևուկները:

Երբ Արշալույսը մոտեցավ հովվին, անմիջապես զգաց, որ նա մռայլ է, և հայացքով հասկացնել տվեց, որ ինքը վիրավորված է նրանից:

- Մի՞թե դու կհեռանայիր առանց շնորհավորելու իմ Ջատիկը և ինձ երջանկություն մաղթելու: Թե՞ Ծեր Վարդապետն այլևս չի ցանկանում ուշադրություն դարձնել ինձ նման ձանձրալիի վրա, - ասաց աղջիկը և քիթը կախեց:

Բայց ծերունու վիրավորանքն այդքան հեշտ չէր կարելի մեղմել. թերևս աղջկա երևալը է՛լ ավելի խորացրեց այն:

- Անիմաստ բան է երջանկություն ցանկանալը, ավելի լավ է երջանկություն տալ: Երբ մարդը ոչինչ չունի տալու, նշանակում է առաքելություն էլ չունի: Ես այսօր չեմ կարող երջանկություն մաղթել նույնիսկ քեզ, Արշալո՛ւյս, հետևաբար մտքովս չանցավ քեզ հանդիպել:

- Դա ճի՛շտ չէ, Վարդապե՛տ: Այսօր Քրիստոս հարություն է առել,

ուստի ամեն տեղ ուրախություն է, իսկ ինձ համար՝ առավել ևս. երեկ հայրս խոստացավ, որ մինչև հաջորդ Զատիկը ինձ ուղարկելու է Կոստանդնուպոլիս, ապա գուցե Շվեյցարիա կամ Փարիզ՝ ուսումս շարունակելու: Դա քեզ չի՞ ուրախացնում, Վարդապե՛տ...

Մի ակնթարթ ծերունին սևեռուն հայացքով նայեց աղջկա աչքերին, կրկին ձեռքը մոտեցրեց դարպասին, ասես նեցուկ էր փնտրում իր փուլ եկող մարմնի համար: Արշալույսին թվաց, թե վիրավորել է հովվին: Առանձնակի քնքշությամբ աղջիկը բարձրացրեց ձեռքերը՝ նրա կրծքին դնելու համար, սակայն չհասցրեց... Ծեր Վարդապետն արդեն հեռացել էր՝ փակելով դարպասն իր և աղջկա միջև:

Մեկ ժամ հետո հովիվը նորից կանգնեց լեռան գագաթին՝ դիտելով քաղաքը և Մամուրեթ ուլ-Ազիզի հարթավայրը, որն արդեն ողողված էր արևի վաղորդյան ճառագայթներով:

Մի քանի մղոն դեպի հարավ երևում էին Տավրոսի լեռնաշղթան և դարերով լքված հանքավայրերը, որտեղ ժամանակին, ըստ ավանդության, եղել էին Սողոմոն իմաստունի հանքերը: Երևում էր Խարբերդը, որտեղ քարավանները կանգ էին առնում՝ հանգստի համար, Վանը՝ Հայոց հինավուրց մայրաքաղաքը, Սվազը՝ «Հուսո քաղաքը»: Այդ ամենը հորիզոնից այն կողմ էր. նրանց արմատները թաղված էին նախապատմական ժամանակներում: Մտովի ծերունին հերթով այցելում էր այդ փառապանծ քաղաքներից յուրաքանչյուրը և պատկերացնում, թե ինչ հույսով ու հավատով է հայ ժողովուրդը նշում Զատիկը: Հետո նա նորից հետ նայեց. հայացքն ընկավ մինարեթին ու տանիքներին տների, որոնք հարթավայրից տարածվում էին դեպի բլուրների ստորոտները:

Ծեր Վարդապետը մտածում էր ո՛չ միայն 1915 թվականի, ո՛չ միայն Զատկի սքանչելի այդ առավոտի և սիրելի Հայաստանի մասին, այլև՝ այն դեռատի աղջկա, ում անունն էր Արշալույս, այսինքն՝ Լույսն առավոտի:

ԳԼՈՒԽ Ա
ՓԱՇԱՆ ԵԿԱՎ ՄԵՐ ՏՈՒՆ

Իմ պատմությունը սկսվում է 1915 թվականի ապրիլից՝ Զատկի առավոտից: Այդ օրը մեր ընտանիքը պատրաստվում էր ուրախ և առանձնակի բարձր տրամադրությամբ դիմավորելու Զատիկը, քանի որ Կոստանդնուպոլսից լուր էինք ստացել, որ թուրքական կառավարությունը վերջերս իր երախտագիտությունն է հայտնել հայ զինվորներին իրենց հավատարիմ ծառայության և Առաջին աշխարհամարտում ցուցաբերած արժանապատիվ մասնակցության համար: Երբ Թուրքիան վեց ամիս առաջ մտավ պատերազմի մեջ, մի ահավոր խուճապ սկսվեց Հայաստանում. առանց Անգլիայի ու Ֆրանսիայի հովանավորության թուրքերը, օգտվելով նպաստավոր պայմաններից, կարող էին նորից հալածանքներ ու ճնշումներ սկսել քրիստոնյաների, հատկապես հայերի շրջանում: Հայ երիտասարդ տղամարդիկ կնախընտրեին կռվել սուլթանի թշնամիների կողմից, բայց նրանք շտապեցին մտնել օսմանյան բանակ՝ ապացուցելու, որ իրենք հավատարիմ են Օսմանյան կայսրությանը: Այժմ, երբ սուլթանը գնահատել էր հայերի նվիրվածությունը, մուսուլման իշխողների կողմից սպասվող նոր հալածանքների սպառնալիքն աստիճանաբար վերանում էր:

Մամուրեթ ուլ-Ազիզի վիլայեթի գլխավոր քաղաք Խարբերդից քսան մղոն հեռավորությամբ գտնվող մեր Չմշկածագում՝ չկային ավելի երախտապարտ մարդիկ Հայաստանի տևական խաղաղության համար, քան իմ հայրը, մայրը, քույրս՝ Լուսինեն և ես: Չնայած ընդամենը 14 տարեկան էի, իսկ Լուսինեն 17 էլ չկար... Ախր Հայաստանում մինչև իսկ փոքր երեխաներն են մշտապես վախի մեջ ապրել:

Ես շատ հուզվել էի Զատկի սուրբ օրվա առթիվ հորս պատրաստած նվերից. նա խոստացավ շուտով ինձ ուղարկել եվրոպական որևէ դպրոց՝ շարունակելու և ավարտելու կրթությունս, ինչպես վայել էր վաճառականի աղջկան, իսկ Լուսինեն պատրաստվում էր ամուսնության, և նա ամեն ինչ անում էր՝ իր օրիորդական վերջին Զատկի առավոտը ուրախ-զվարթ անցկացնելու համար: Նույնիսկ Ծեր Վարդապետի՝ մեր հովվի այդքան վաղ այցելությունը՝ տագնապահարույց մարգարեությամբ, բոլորովին չփչացրեց Լուսինեի տրամադրությունը:

Հայելու առջև երևի հարյուրերորդ անգամ ես վերահարդարում էի վարսերս և զարդարում դրանք երկնագույն ժապավեններով: Մի գաղտնիք խոստովանեմ. հոգուս խորքում հույս էի փայփայում, թե իմ ժապավենները եկեղեցում պատարագի ժամանակ իմ հասակակից աղջիկների նախանձն էին շարժելու: Լուսինեն, օգտվելով ավագ քրոջ իրավունքից, անկեղծորեն հանդիմանում էր ինձ փառասիրությանս համար: Նա միշտ խիստ էր ու լռակյաց: Ես հենց այն է ուզում էի նրան ասել, որ ինքը նախանձում է ինձ, որովհետև շուտով ամուսնանալու է, իսկ ամուսնացած աղջիկներին արգելվում էր կապույտ ժապավեններ կապել, երբ մայրս սենյակ մտավ: Շեմն անցնելով՝ նա հենվեց պատին, նայեց ինձ, բայց ոչ մի բառ չասաց:

- Մայրի՛կ, ի՞նչ է պատահել, - բացականչեցի ես: Նա չպատասխանեց, լուռ մատնացույց արեց պատուհանի կողմը: Ես ու Լուսինեն

---

* ՉՄՇԿԱԾԱԳ գյուղաքաղաքի անվանումը թուրքական աղավաղմամբ հնչում է ՉՄՇԳԵՋԵԿ: Անգլերեն բնագրում ՉԷՄԵՇ-ԳԵՋԱԿ:

անմիջապես նետվեցինք դեպի պատուհանը: Մեր դարպասների մոտ կանգնած էին երեք թուրք ժանդարմներ՝ զինված հրացաններով, կազմ ու պատրաստ: Նրանց թևերին հատուկ թևակապեր կային՝ ապացույց, որ նրանք Հուսեյն փաշայի՝ մեր շրջանի զինվորական կառավարչի անձնական թիկնապահներն էին:

Ես դարձա դեպի մայրս, թե՝ ի՞նչ է նշանակում սա: Նա փուլ էր եկել հատակին և լաց էր լինում: Մայրս չէր խոսում, այլ մատով ցույց էր տալիս ներքևի հարկը, և ես հասկացա, որ Հուսեյն փաշան եկել է մեր տուն՝ ինձ ուզելու: Իմ ուրախությունը սգի փոխվեց, ես էլ ընկա հատակին ու լաց եղա: Մի ներքին ձայն ինձ ասում էր՝ մեր վերջը եկել է:

Մեծահարուստ, բռնակալ Հուսեյն փաշան՝ սուլթանի բարեկամը, երկար ժամանակ ցանկանում էր ինձ իր հարեմը տանել:

Նրա տունը քաղաքից դուրս էր, կառուցված էր հիասքանչ պարտեզի մեջտեղում: Շրջակա քաղաքներից նա իր ապարանք էր բերել տասնյակից ավելի քրիստոնյա գեղեցկուհիների: Հայաստանում մութասարիֆը՝ գավառապետը, կամ զինվորական կառավարիչը անսահմանափակ իշխանություն ունեին: Նրանք ոչ մի այլ հրամանի չէին ենթարկվում, բացի անմիջականորեն սուլթանի վեզիրներից տրված հրամաններից և, որպես կանոն, սարսափելի անխիղճ էին ու բռնակալ:

Հայ ծնողի համար վտանգավոր էր նահանգապետին զայրացնելը: Երբ սուլթանի ներկայացուցիչը մի սիրուն հայ աղջիկ էր տեսնում, ցանկություն էր հայտնում նրան իր հարեմը տանելու: Նպատակին հասնելու համար շատ միջոցներ կային. Հուսեյն փաշան բացահայտ պահանջում էր կա՛մ վաճառել ինձ, կա՛մ նվիրել իրեն, և դա հաճախ ուղեկցվում էր քողարկված սպառնալիքներով: Մերժելու դեպքում աղջկա հորը հալածում էին: Որպեսզի աղջկա «վաճառքը» օրինականացվեր, և մութասարիֆն իրավունք ունենար աղջկան իր հարճը դարձնելու, անհրաժեշտ էր, որ հայրը աղջկան համոզեր կամ ստիպեր հավատափոխ լինել և իսլամ ընդունել:

Երեք անգամ Հուսեյն փաշան պահանջել էր, որ հայրս ինձ տար իրեն, երեք անգամ էլ հայրս արհամարհել էր ու մերժել: Փաշան վախենում էր պատժել մեզ, քանի որ հայրս հարուստ էր և Անգլիայի

հյուպատոսի՝ պարոն Սթիվենսի հետ ունեցած բարեկամական կապերի շնորհիվ ձեռք էր բերել Մամուրեթ ուլ-Ազիզի նահանգապետի՝ վալիի հովանավորությունը: Բայց հիմա պաշտպան հյուպատոսը հեռացել էր, և վալին ոչ ոքից այլևս չէր վախենում: Արդեն Հուսեյն փաշան կարող էր անել այն, ինչ կամենար: Մի ներքին զգացողությամբ հասկացա նաև, թե ինչու էր մեր տուն եկել զինված թիկնապահներով. Հուսեյն փաշան էլի էր գալու իմ հետևից:

Ես փաթաթվեցի մորս ու Լուսինեին, իսկ երկու փոքրիկ քույրերս կպան փեշերիս: Մենք լսում էինք սանդուղքի վերին աստիճանին կանգնած հորս և կառավարչի խոսակցությունը: Հուսեյնն արդեն ոչ թե խնդրում էր, այլ պահանջում:

- Շուտով Կոստանդնուպոլսից հրաման կգա, և ձեզ՝ բոլոր քրիստոնյա շներիդ, կքշենք այստեղից: Ոչ մի մարդ, կին կամ երեխա, ով իսլամ չի ընդունի, չի մնա այստեղ,- հոխորտում էր նա: - Երբ այդ ժամանակը գա, ոչ ոք քեզ չի փրկի, ինձնից բացի: Տո՛ւր ինձ աղջկադ՝ Արշալույսին, և ես քո ողջ ընտանիքը կպաշտպանեմ: Մերժիր և հետո կհասկանաս, թե ինչ է սպասում ձեզ:

Հայրս չէր կարողանում ծպտուն հանել: Նա խեղդվում էր ատելությունից, անզորությունից ու սարսափից: Մայրս ճչում էր ցավից: Ես խնդրում էի մորս թույլ տալ սանդուղքով ներքև վազել և հանձնվել փաշային: Ես ամեն ինչ պատրաստ էի անել՝ փրկելու մորս, հորս և իմ փոքրիկ քույրերին:

Հետո հայրս հանգստացավ, և մենք լսեցինք այն, ինչ նա ասաց փաշային.

- Թող Աստծո կամքը լինի, Տերը երբեք չի կամենա, որ իմ երեխան իր կյանքը զոհի հանուն մեր փրկության:

Մայրս ավելի ամուր սեղմեց ինձ իր կրծքին՝ ասելով.

- Հայրդ խոսեց և՛ քեզ համար, և՛ մեզ համար:

Հուսեյն փաշան զայրացած հեռացավ՝ թիկնապահներին հետևից գցած: Հազիվ էր նա հեռացել, երբ փողոցում խռովություն սկսվեց, մի մեծ իրարանցում: Խումբ-խումբ թուրքեր սկսեցին հավաքվել փողոցների անկյուններում: Մարդիկ վազում էին դեպի մեր տուն՝ պատմելու նոր ստացված լուրի մասին, որ ձիավոր սուրհանդակը Խարբերդից էր բերել:

- Վանում կոտորած է սկսվել. թուրքերը տղամարդկանց, կանանց ու երեխաներին կտոր-կտոր են անում, սպանում: Քրդերը աղջիկներին գողանում են:

Վանը Հայաստանի ամենամեծ քաղաքն է: Շամիրամ թագուհու օրոք այն Վանի թագավորության մայրաքաղաքն էր: Վանը Քսերքսեսի հայրենիքն էր, և, ինչպես մեզ սովորեցրել են դպրոցում, այս քաղաքը Արամ թագավորն էր կառուցել Ավետարանում հիշատակված ջրհեղեղից հետո ազատված ցամաքի կենտրոնում՝ այն սուրբ վայրում, որտեղ Նոյի տապանը կանգ էր առել: Վանը շա՛տ սիրելի է հայերի համար. այն մեր հոգևոր ու ազգային կենտրոններից է: Վանը գտնվում է Չմշկածագից 200 մղոն դեպի արևելք: Քաղաքը ավելի քան հիսուն հազար հայերի հայրենիքն է: Վանի վալին՝ Ջևդեթ բեյը, Հայաստանում թուրքական իշխանության գլխավոր ներկայացուցիչն էր և ամենադաժան իշխանավորը: Վանի հայերի կոտորածը ազդանշան էր, որ շուտով այն տարածվելու էր ողջ Հայաստանով մեկ:

Խարբերդից եկած ձիավորին բերեցին մեր տուն: Հայրս փորձեց հարցուփորձ անել, բայց նա միայն կրկնում էր.

- *Էրմենլերի հե՛փ քեսփիլեր, հե՛փ, գեթրի՛ բիթրի՛*... (բոլոր հայերին կոտորեցին, բոլորը մեռան, բոլորին սպանեցին...): Նա ողբում էր շարունակ: Խարբերդում լուրն ստացել էին հեռագրով, իսկ ձիավորը, որ մեր քաղաքից էր, շտապել էր մեզ զգուշացնելու:

Ես աղաչեցի, պաղատեցի հորս ու մորս, որպեսզի թույլ տան ինձ՝ վազեմ գնամ Հուսեյն փաշայի պալատը և ասեմ նրան, թե՝ ինչ կամենում ես, համաձայն եմ, միայն թե փրկիր իմ ընտանիքը, նախքան տեղահանության ու կոտորածի հրամանը կհասնի: Մայրս սեղմեց ինձ իր կրծքին, իսկ հայրս միայն կրկնում էր. «Աստված ողորմած է, ոչինչ չի պատահի...»:

Լուսինեն լալիս էր: Արուսյակն ու Սառան՝ իմ փոքրիկ քույրերը, նույնպես լաց էին լինում: Հայրս գունատվել էր: Նա դողացող ձեռքերը դրեց իմ ուսերին և փորձեց հանգստացնել ինձ: Ես փակեցի աչքերս, և ինձ թվաց՝ տեսնում եմ հորս, մորս, քույրերիս ու եղբայրներիս՝ բոլորն էլ սպանված... Ես սարսափում էի, որ այդ ամենը լինելու է վաղ թե ուշ: Հուսեյն փաշան ասել էր, թե ինքը կարող է փրկել

իմ ընտանիքը, սակայն ես չէի կարող չհնազանդվել հորս կամքին: Հանկարծ հիշեցի հայր Ռուբենին:

Պոկվեցի մորիցս, տան հետնամուտքից դուրս նետվեցի փողոց, որ տանում էր դեպի եկեղեցի, որտեղ հայր Ռուբենը սպասում էր իր ծխի անդամներին: Ոչ ոք քաջություն չէր ունեցել այդ սուրբ մարդուն հայտնելու Վանից հասած լուրերի մասին: Երբ վազելով մտա խորանի հետնամասում գտնվող փոքր սենյակը, նա զարմացած էր, թե ինչու իր ժողովուրդը եկեղեցի չի եկել:

Ես ընկա նրա ոտքերի առջև և երկա՛ր, շատ երկար չէի կարողանում արցունքներս զսպել ու ասել, թե ինչի համար եմ եկել: Հայր Ռուբենը հասկացավ՝ ինչ-որ բան է եղել: Նա շոյեց գլուխս և սպասեց: Երբ հանգստացա, պատմեցի Հուսեյն փաշայի այցելության և նրա սպառնալիքների մասին: Հետո հայտնեցի նրան ձիավոր սուրհանդակի բերած լուրը: Ես աղաչեցի նրան, որ ասի, թե իմ որոշած քայլը ճի՞շտ է՝ իմ կամքով գնալ դառնալ Հուսեյն փաշայի հարճը, եթե միայն նա փրկի իմ ծնողներին, իմ եղբայրներին ու քույրերին:

Հայր Ռուբենը կրկնել տվեց ասածներս: Երբ խոսքս ավարտեցի՝ ասածներս կրկնելով, նա ձեռքը դրեց գլխիս և ասաց.

- Աստծուն դիմենք, զավա՛կս...

Ապա հայր Ռուբենը աղոթեց:

Նա խնդրեց Տիրոջը, որ ինձ առաջնորդի Ի՛ր ընտրած ճանապարհով:

Չեմ հիշում աղոթքն ամբողջությամբ, որովհետև դառնագին լալիս էի և շա՜տ էի վախենում: Ես հասկանում էի, որ տերհայրն աղերսում է ինձ համար և իմ ժողովրդի՝ հիշեցնելով մեր Հայր Աստծուն, որ մենք նրա առաջին հավատացյալներն ենք եղել և մնացել ենք հավատարիմ՝ թեև հալածված երկար դարեր: Երբ տեր Ռուբենն աղոթում էր, ես թեթևություն զգացի և ակամա սկսեցի հավատալ ու հուսալ, որ սեփական ականջներով կլսեմ այն պատասխանը, որ վստահաբար կգա Վերևից՝ հայր Ռուբենի աղոթքներով:

Տերհայրն ասաց «ամե՛ն», մենք միասին ծնկի իջանք և սպասեցինք: Հանկարծ հայր Ռուբենը սեղմեց ինձ իր կրծքին և սկսեց խոսել.

-Քո ուղին, զավա՛կս,- ասաց նա,- պարզորոշ է. պատասխանը եկավ: Հավատա՛ Հիսուս Քրիստոսին, Նա կփրկի քեզ. Նա գիտի,

թե քեզ ինչպես փրկի: Ավելի նախընտրելի է մեռնելը կամ անասելի տանջանքների ենթարկվելը, որ մահից էլ սարսափելի է, քան հավատափոխ լինելով՝ մյուսների համար վատ օրինակ դառնալը: Գնա՛ տուն, մխիթարի՛ր ծնողներիդ, միաժամանակ հնազանդվի՛ր նրանց:

Այդ և հաջորդ օրը սուրհանդակները ձիերով գնում-գալիս էին Խարբերդ՝ վերջին լուրերը բերելով Վանից: Մեր սիրտն ուռչում էր ուրախությունից, երբ լսում էինք, որ հայերը բարիկադներ են կառուցել և կռվում են, բայց վախենում էինք հետևանքներից:

Այդ գիշեր մեր քաղաքում ոչ ոք չքնեց:

Գիշեր ու ցերեկ հայր Ռուբենը և նրա օգնականները՝ քահանաները և ամերիկյան քոլեջի կրոնի ուսուցիչները, այցելում էին հայերի տները և նրանց ընտանիքների հետ աղոթում:

Քաղաքի երևելի մարդիկ սպասում էին Հուսեյն փաշային՝ տեղեկանալու համար, թե արդյոք մեզ որևէ վտանգ սպառնո՞ւմ է: Փաշան նրանց ասաց, որ իրենց վախն ու անհանգստությունն անտեղի են, որ Վանում անկարգությունները պարզապես հասարակական կարգ ու կանոնի խախտում են:

Ծնողներս դարձյալ հավատացին հայերի ապահովության այդ կիսատ-պռատ խոստումին, բայց արդեն երեքշաբթի մենք հասկացանք, որ խաբված ենք: Այդ առավոտ Հուսեյն փաշան հրամայեց շրջանի բանտերի դռները բացել, բոլոր հանցագործներին, ելուզակներին ու մարդասպաններին ազատ արձակել և հավաքել իր պալատի շուրջ:

Մեկ ժամ հետո այդ ելուզակներին ժանդարմական համազգեստ հագցրին, յուրաքանչյուրին տվեցին հրացան և մի երկար դաշույն: Նրանց հրապարակում շարքի կանգնեցրին, թե՝ սպասե՛ք հրամանի: Սա՛ է թուրքական մեթոդը, երբ կեղտոտ գործեր էին կատարվելու:

Կեսօրին ժանդարմները կամ ինչպես նրանց անվանում են՝ զաբթիեները, շրջեցին քաղաքի փողոցներով՝ հայտարարություններ փակցնելով պատերին և յուրաքանչյուր փողոցի անկյունի ցանկապատին: Վաղ առավոտյան հայրս գնաց Խարբերդ՝ խորհրդակցելու հարուստ հայ վաճառականների հետ և դիմելու վալիին՝ Իսմայիլ բեյին: Մայրս հոգեկան տագնապալից ապրումներից այնքան էր տկարացել,

որ չկարողացավ դուրս գալ փողոց և կարդալ հայտարարությունը: Ես ու Լուսինեն գնացինք:

Հայտարարության մեջ ասված էր.

«ՀԱՅԵ՛Ր,

Նորին գերազանցություն Հուսեյն փաշան հրամայում է՝ անմիջապես գնացե՛ք ձեր տները և մնացեք այնտեղ, մինչև Նորին գերազանցությունը կհաճի թույլ տալ շարունակել աշխատանքները: Այն հայերը, ովքեր փողոցում կամ աշխատավայրում կլինեն, կբացակայեն իրենց տներից, կձերբակալվեն և խստագույնս կպատժվեն:

(ստորագրություն)
Ալի Աղազադե (քաղաքապետ)»:

Երբ մենք բացատրեցինք մայրիկին հայտարարության բովանդակությունը, նա շատ անհանգստացավ, որովհետև հայրիկը գնացել էր Խարբերդ և դեռ չէր վերադարձել: Նա կարող էր վերադառնալ քաղաք կեսօրից հետո՝ անտեղյակ հրամանին, հետևաբար կարող էին նրան ձերբակալել հենց փողոցում: Եղբայրս՝ Պողոսը, որ 15 տարեկան էր, գնացել էր հարևանի տուն: Մենք նրան նեղ ու խուլ նրբանցքներով ուղարկեցինք քաղաքից դուրս՝ բաց տարածություն, որտեղ նա կարող էր հանդիպել հայրիկին Խարբերդից վերադառնալու ճանապարհին և զգուշացներ նրան հրամանի մասին:

Ավելի ուշ մենք փառք էինք տալու Աստծուն, որ հայրիկը քաղաքում չէր:

Իսկ այդ ժամանակ պատկերացնել անգամ չէինք կարող, թե ինչ էր թաքցնում այդ հրամանը, չէինք կարող հավատալ, որ այդ «հավաքը» նշանակում է կանխամտածված, ծրագրված զանգվածային ջարդեր, և այդ միջոցը ընտրվել էր, որպեսզի բոլոր հայերը տանը լինեին, և զաբթիեների գործը հեշտանար:

Ժամը 4^{00}-ին ժանդարմները, նրանց հետ նաև բանտից ազատված ելուզակները շարժվեցին դեպի քաղաքի ամենահարուստ մարդկանց տները՝ հրամայելով նրանց ներկայանալ Հուսեյն փաշայի ընդունելությանը:

Երբ մայրս մեր դռանը մոտեցող սպային բացատրեց, որ հայրս տանը չէ, զաբթիեն, կոպտորեն մորս հրելով մի կողմ, խուզարկեց տունը: Հետո նրանք պահանջեցին հորս աշխատավայրի բանալին: Լուսինեն վազեց վերին հարկ՝ բանալիները բերելու, սպան պնդեց միասին գնալ: Երբ Լուսինեն ուղղվեց դեպի հորս սենյակը, զաբթիեն գրկեց քրոջս՝ պատառոտելով նրա զգեստը: Լուսինեն ճչաց: Զաբթիեն այնքան ուժգին ապտակեց Լուսինեի դեմքին, որ քույրս փովեց հատակին: Զաբթիեն թողեց քրոջս և դուրս եկավ իր մարդկանց հետ:

Մեր պատուհանից երևում էր քաղաքի հրապարակը: Զաբթիենները այնտեղ էին հավաքել քաղաքի հիսուն երևելի տղամարդկանց, որոնց մեջ էր հայր Ռուբենը, ամերիկացի միսիոներների կողմից հիմնադրված քոլեջի տնօրենը, պրոֆեսորներ, բժիշկներ, բանկիրներ, վաճառականներ և այլ զբաղմունքի տեր մարդիկ:

Փոխանակ իրենց գերիներին փաշայի պալատ առաջնորդելու՝ պահակները նրանց տարան ուրիշ ուղղությամբ՝ քաղաքի մի այլ մաս: Հետո միայն իմացանք, որ նրանց տարել էին ոչ թե մութասարիֆի մոտ՝ ընդունելության, այլ՝ բանտ: Այդ նպատակով էր մութասարիֆը բանտերը դատարկել:

Որոշ կանայք, հասկանալով, թե իրենց ամուսիններին ուր են տանում, և ինչ է սպասում նրանց, արհամարհելով հրամանը՝ վազեցին փողոց և փորձեցին հասնել իրենց հարազատներին: Ժանդարմները հրացանների խզակոթերով հարվածում էին նրանց և հեռացնում: Պրոֆեսորներից մեկի կինը կարողացավ ճեղքել պահակների շղթան և հասնել իր ամուսնուն: Ժանդարմներից մեկը փորձեց հետ քաշել խիզախ կնոջը, բայց նա ամուր կառչել էր ամուսնուց ու ճչում էր: Մոտ կանգնած զինվորն իջեցրեց հրացանը և սվինը խրեց նրա մարմինը: Ամուսինը նետվեց դեպի զինվորը, բռնեց կոկորդից, բայց կողքի ժանդարմը սպանեց նրան:

Գերիներին ստիպեցին քայլել պրոֆեսորի և նրա կնոջ դիակների վրայով, մինչդեռ նրանց երեխաները, որ դուրս էին վազել տնից, մի կողմ կանգնած, մղկտալով իրենց ձեռքերն էին կոտրատում ու աղիողորմ լալիս: Երբ գերիներն ու ժանդարմները՝ զաբթիեները,

հեռացան, այդ ժամանակ միայն թույլ տվեցին ծնողների մարմինները տուն տանել: Մեզնից և ոչ ոք չհամարձակվեց դուրս գալ և օգնել խեղճ երեխաներին:

Յոթ հարյուր տարվա բանտը անկանոն քարերով կառուցված շինություն էր: Սկզբում վանք էր եղել, սակայն թուրքերը 1580 թվականին այն գրավելուց հետո բանտի էին վերածել: Բանտը շրջապատված էր բարձր պարսպով և ուներ ընդարձակ բակ, որտեղից մուտք կար դեպի ստորգետնյա մռայլ ու երկար զնդանը:

Այդ օրը մայրս, Լուսինեն և ես չափազանց հուզված սպասեցինք հայրիկին: Երեկոյան մի ժանդարմ եկավ մեր տուն և հարցրեց հայրիկի մասին: Նա եկել էր ստուգելու՝ արդյոք հայրս չի՞ վերադարձել Խարբերդից, որովհետև «ընդունելությանը» չէր մասնակցել: Մայրս հարցրեց՝ ինչու տղամարդկանց տարան բանտ, եթե մութասարիֆը ցանկանում էր նրանց ընդունել: Զինվորն ասաց, որ այդպես ավելի լավ է, ավելի հարմար, քանի որ մինչև պալատ գնալը երկար ճանապարհ է: Մենք մի քիչ հանգստացանք՝ այդ բացատրությունը լսելով, բայց երեկոյան, երբ տղամարդիկ չվերադարձան իրենց տները, նորից խառնվեցինք իրար: Սկսեցինք վախենալ: Կասկածեցինք, որ հայրիկին ու Պողոսին բռնել են արդեն:

Մութն ընկել էր: Բանտ քշված տղամարդիկ տուն չվերադարձան: Նրանց կանայք ու աղջիկներն այլևս չդիմացան անորոշ վիճակին: Արհամարհելով տնից դուրս չգալու հրամանը՝ կանայք ու երեխաները փոքր խմբերով սկսեցին հավաքվել փողոցներում, իսկ ավելի համարձակ տղամարդիկ շարժվեցին դեպի բանտ: Նրանք սպասեցին դրսում մինչև կեսգիշեր՝ հուսալով տեսնել իրենց հարազատներին կամ իմանալ, թե ինչ է կատարվում ներսում: Ժամը 11⁰⁰-ին բանտի դռները բացվեցին, և Հուսեյն փաշան իր կառքով, զինված հեծյալ թիկնապահների ուղեկցությամբ դուրս եկավ:

Կանայք խոնվեցին նրա շուրջը, սակայն զինվորները քշեցին նրանց: Հազիվ էր փաշայի կառքն անհետացել, երբ բանտի ներսից լսվեցին սուր ճիչեր ու վայնասուն: Ես ու Լուսինեն գաղտագողի կարողացել էինք բանտի պարսպից ներս սողոսկել, սակայն մարդկանց վայնասունից սարսափած՝ տուն փախանք:

Հայրիկն ու Պողոսն արդեն տանն էին. վերադարձել էին ուշ երեկոյան: Հայրիկը շատ տանջված տեսք ուներ: Նա ինձ առավ իր թևերի մեջ, տարօրինակ ձևով համբուրեց: Ես նայեցի նրա արցունքներով լի աչքերին: Առանց հարցնելու հասկացա, որ Խարբերդում պաշտպանություն գտնելու նրա փորձը չէր հաջողվել: Ողջ գիշեր մենք չքնեցինք. բանտից մեզ էին հասնում մարդկանց սարսափելի ճիչեր: Հաջորդ օրը միայն իմացանք, թե ինչ էր կատարվել բանտում. բանտարկյալներից մեկը կարողացել էր դուրս պրծնել և սողեսող հասնել տուն:

Երբ Հուսեյն փաշան վերադարձավ բանտ, այնտեղ հավաքվածներին հայտարարեց, որ նոր հրաման է եկել Կոստանդնուպոլսից. այնտեղ ասվում է, որ հայերը հավատարիմ չեն եղել թուրքական կառավարությանը, դավադրաբար ցանկացել են օգնել Դաշնակիցներին: Հուսեյն փաշան պահանջեց, որ բանտարկյալներն ասեն, թե իրենք ի՞նչ գիտեն այդ դավադրության մասին: Նրանցից յուրաքանչյուրը վստահեցրեց, որ դավադրություն չկա, որ հայերը միայն ցանկանում են խաղաղ ապրել իրենց թուրք հարևանների հետ, հնազանդ լինել սուլթանին և կատարել այն ամենը, ինչ կպահանջվի իրենցից: Հուսեյն փաշան հասկացրեց, որ ինքը համոզված է դրանում և հեռացավ՝ ասելով, որ հաջորդ առավոտ բոլորը կարող են վերադառնալ իրենց տները:

Մինչ բանտարկյալները շնորհավորում էին միմյանց խոստացված ազատության համար՝ հույս ունենալով ինչ-որ ձևով այդ լուրը իրենց ընտանիքներին հասցնելու, հենց այդ պահին ժանդարմները հայտնվեցին և մարդկանց քշեցին բակի մի անկյունը: Հրացանափողերն ու սվինները նրանց վրա ուղղելով, որպեսզի չփախչեն, ասկյարները շարքից մեկ-մեկ դուրս էին բերում հայ գերիներին, օդակի մեջ առնում և հրամայում նրանց խոստովանել, որ իրենք սուլթանի դեմ կազմակերպված դավադրության մասնակից են:

Գերի վերցված հայերից յուրաքանչյուրին, ով հրաժարվում էր իր վրա բարդված մեղադրանքներից և հայտարարում, որ խոստովանելու ոչինչ չունի, կատաղած ժանդարմները մերկացնում էին և կաշվե մտրակով հարվածներ տեղում նրա մարմնին: Երբ զոհն ուշագնաց

էր լինում, զաբթիեները նրան նետում էին մի կողմ մինչև ուշքի գալը, ապա նորից ու նորից էին մտրակահարում: Թուրք զինվորները այդպես շարունակեցին այնքան ժամանակ, մինչև հոգնեցին: Նրանք ծերերից ութին ծեծելով սպանեցին և մարմինները նետեցին բանտի բակի մի անկյուն:

Հայր Ռուբենին ծեծելիս սպաներից մեկը միջամտեց: Նա ասաց, որ ժամանակի վատնում է, քանի որ բոլոր քահանաները առանց այն էլ պետք է մեռնեն: Հետո նա դարձավ հայր Ռուբենին և ասաց, որ նրան չեն սպանի, եթե ուրանա Քրիստոսին և իսլամ ընդունի: Իսկ եթե հրաժարվի, ասաց սպան, այնքան կծեծեն, մինչև շունչը փչի:

Խեղճ հայր Ռուբենն այնքան էր ուժասպառվել, որ չէր կարողանում պատասխանել: Երբ զինվորները նրան բաց թողեցին, նա տապալվեց գետնին: Հետո փորձեց խոսել, գլուխը երերաց, իսկ թուրքը կարծեց, թե նա իրենց կրոնը ընդունելու նշան արեց:

- Կանգնեցրե՛ք դրան,- հրամայեց սպան:

Երկու զինվոր բարձրացրին նրան: Սպան հրամայեց կրկնել իսլամի հավատամքը. «Կա միայն մեկ Աստված՝ Ալլահը, իսկ Մուհամեդը նրա առաքյալն է»:

- Չկա ուրիշ Աստված, բացի... - հնարավորինս հստակ սկսեց հայր Ռուբենը՝ լայն բացած աչքերը հառելով դաժան սպայի վրա: Քիչ շունչ առնելով՝ շարունակեց,- և Քրիստոս՝ Նրա որդին, իմ Փրկիչն է:

Սպան սուրը դուրս քաշեց պատյանից և կտրեց հայր Ռուբենի գլուխը:

Հաջորդը քոլեջի տնօրեն պրոֆեսոր Փոլադյանն էր: Նրան էլ ասացին, թե կյանքը կփրկվի, եթե հրապարակավ իսլամ ընդունի: Պրոֆեսոր Փոլադյանը Հայաստանի պատվաբժան մարդկանցից էր: Նա ուսում էր ստացել Միացյալ Նահանգներում՝ Ելի համալսարանում: Շատ հարգված էր Անգլիայում ու Ֆրանսիայում իր ազնիվ գործերի համար: Նա շատ էր ծերացել: Ես սիրում էի նրան ավելի, քան որևէ մեկին, բացի իմ հայրիկից:

Մի անգամ դեռ փոքր էի, հիվանդությանս պատճառով զրկվել էի քոլեջում կազմակերպված Ամանորի հանդեսից: Այդ օրը պրոֆեսոր Փոլադյանը տոնածառի ճյուղերից կախել էր քաղցրավենիքով լի տոպրակ-

ներ Չմշկածագի երեխաների համար: Պրոֆեսորը հարցրել էր Լուսինեին, թե ինչու տոնածառի շուրջ հավաքված երեխաների մեջ ես չկամ, և երբ քույրս նրան ասել էր պատճառը և լաց եղել, պրոֆեսոր Փոլադյանը կառքով շտապել էր մեր տուն, որ քուլեջից երկու մղոն հեռու էր, և իր հետ բերել էր ինձ հասանելիք քաղցրավենիքի փոքրիկ տոպրակը: Այդ երեկո նա պատմեց ինձ Քրիստոսի Ծնունդի պատմությունը: Այդ օրվանից ես միշտ Աստծուն աղոթելուց անմիջապես հետո պրոֆեսոր Փոլադյանին էի աղոթում, մինչև որ մայրս հասկացրեց ինձ, որ չի կարելի կենդանի մարդուն սրբացնել:

Պրոֆեսոր Փոլադյանին չէին ծեծել: Սպան նրա կյանքը խնայել էր՝ պայմանով, որ նա հրապարակավ դավանափոխ լինի: Պրոֆեսորն արդեն ուժասպառ էր եղել՝ ականատես լինելով իր բարեկամների տանջանքներին: Նա ասել էր սպային, որ նույնիսկ սեփական կյանքի փրկության համար չի ուրանա իր հավատքը: Թուրք զինվորները զարհուրելի կերպով պատժեցին նրան. մեկ առ մեկ քաշեցին նրա ձեռքերի ու ոտքերի եղունգները, պոկեցին մազերն ու մորուքը, ապա քրքրեցին նրա մարմինը դանակներով:

Ողջ գիշեր բանտի բակից լսվում էին տանջալլուկ մարդկանց ճիչերն ու աղաղակները: Կանայք, որ սպասում էին բանտի պարսպից դուրս, խելագարվում էին: Լուսաբացին զինվորներն աշխատեցին հեռացնել նրանց՝ հավատացնելով, թե իրենց ամուսինները շուտով տուն կվերադառնան: Հենց որ կանայք տեսադաշտից հեռացան, զինվորները դուրս բերեցին կտտանքների ենթարկված տանջահար մարդկանց, կապեցին իրար մի երկար պարանով և տարան դեպի քաղաքից 10 մղոն հեռավորությամբ գտնվող Մուրադ գետը: Հասնելով գետի ափին՝ զինվորները հարձակվեցին նրանց վրա և սվիններով ծակծկեցին մարմինները: Նրանցից միայն մեկը խույս տվեց մահից՝ թաքնվելով ինչ-որ մեկի դիակի տակ՝ մեռած ձևանալով:

Հաջորդ օրը հինգշաբթի էր՝ մուսուլմանների հանգստյան օրը: Զինվորները նախորդ օրը՝ ժամը 9^{00}-ին, շրջեցին փողոցներով՝ հայտարարելով, որ 18 տարեկանից բարձր բոլոր հայ տղամարդիկ հավաքվեն հրապարակում: Յուրաքանչյուր փողոցում մի թուրք սպա մոտենում էր հայի տանը և տեղեկացնում՝ եթե 18 տարեկանից

բարձր որևէ մեկը մեկ ժամից հրապարակում չլինի, տեղնուտեղը կգնդակահարվի:

Մայրս, ես ու Լուսինեն նետվեցինք հայրիկի գիրկը: Մեզանից ամեն մեկն աշխատում էր փաթաթվել նրա վզով: Նա շատ տխուր էր և լուռ:

- Առանձին-առանձին, սիրելինե՛րս...- ասաց նա, մեզանից յուրաքանչյուրին համբուրեց և հրաժեշտ տվեց: Փոքրիկ Սառան յոթ տարեկան էր, իսկ Հովնանը՝ վեց. նրանց գրկեց և երկար պահեց գրկում: Հետո համբուրեց իմ շրթունքները. հայրս այդպես երբեք չէր համբուրել ինձ: Նա մայրիկին պատվիրեց լաց չլինել, այլ արիաբար սպասել: Հետո դուրս գնաց:

Պողոսը հետևեց հայրիկին, որպեսզի մի քիչ ավելի երկար նրա հետ լինի: Երբ հայրիկն արդեն հրապարակում էր, Պողոսն ուզեց վերադառնալ, բայց զինվորը տեսավ նրան ու բռնեց օձիքից՝ ասելով. «Դո՛ւ էլ արի... հարկ չի լինի վաղը կանանց հետ քեզ քարշ տալու»: Հայրիկը բողոքեց, թե Պողոսն ընդամենը 15 տարեկան է, բայց զինվորը չլսեց:

Եղբայրս այլևս տուն չվերադարձավ ...

ԳԼՈՒԽ Բ
ՍԿՍՎԵՑԻՆ ԶԱՐՀՈՒՐԵԼԻ ՕՐԵՐ

Երկրորդ հարկի իմ սենյակի պատուհանից ես հետևում էի, թե ինչպես հայրս անցավ փողոցը և մտավ հրապարակ: Մայրս հյուրասենյակում փլվել էր բազմոցին, իսկ Լուսինեն, փոքր եղբայրներս ու քույրերս սիրտ էին տալիս նրան: Նույնիսկ մեր փոքրիկներն էին ստիպում նրան հավատալ, թե հայրիկը շուտով կվերադառնա: Երբ ասկյարը Պողոսին հրեց, ես ճչացի: Մայրս լսեց և շտապ բարձրացավ ինձ մոտ: Նրան հետևեցին Լուսինեն ու երեխաները: Պողոսին դեպի հրապարակ տանելը միայն ես էի տեսել, ուրեմն ե՛ս պետք է ասեի նրանց, որ ոչ միայն հայրիկին, Պողոսի՛ն էլ տարան: Եղբայրս ցանկանում էր հայր Ռուբենի նման հոգևորական դառնալ: Ես կարկամել մնացել էի: Մայրիկը կարծեց, թե փողոցում հայրիկիս հետ է ինչ-որ բան պատահել:

- Շո՛ւտ ասա ինձ, ի՞նչ տեսար, սպանե՞լ են հորդ,- ճչաց մայրս:

Ես չէի կարողանում պատասխանել, միայն գլուխս էի աջ ու ձախ տարուբերում: Հանկարծ մայրս նկատեց, որ Պողոսը չի երևում: Դա անհանգստացրեց նրան: Դարձավ Լուսինեին.

- Որտե՞ղ է տղաս՝ Պողոսը... Ինչո՞ւ այստեղ չէ:

Լուսինեն ուզեց վազել բակ՝ Պողոսին գտնելու: Ես նշան արեցի, որ չգնա, ապա փաթաթվեցի մորս ու արցունքներիս միջից ասացի.

- Նրանք Պողոսին էլ տարան: Նա հայրիկի հետ է:

Մայրիկը փլվեց հատակին և երեսը ծածկեց: Ես ու Լուսինեն ծնկի եկանք նրա կողքին: Մայրս լաց չէր լինում. նրա աչքերը ցամաքել էին: Նա մեզ հավաքեց իր շուրջը: Ես դրանից հետո այլևս չեմ տեսել մորս լացը, նույնիսկ այն պահին, երբ ասկյարները Ահմեդ բեյի հրամանով ծեծելով սպանեցին նրան՝ միաժամանակ ստիպելով ինձ դիտել այդ տեսարանը (նախքան Ահմեդ բեյի հարեմ ինձ տանելը):

Իմ սենյակի պատուհանից մենք տեսնում էինք, թե ինչպես հրապարակում տղամարդիկ միմյանց հանգստացնում էին կամ բորբոքված խոսում: Օրվա երկրորդ կեսին արդեն թուրք զինվորները հրապարակում հավաքել էին ավելի քան 3000 տղամարդ ու պատանի: Ասկյարներն ու զաբթիեները խուզարկում էին տները, որպեսզի 18 տարեկանից բարձր ո՛չ մի տղամարդ ձեռքերից «չպլստար»:

Երբ կանայք փարվեցին իրենց ամուսիններին ու հայրերին, ասկյարները հավատացրին, թե հավաքում են նրանց Իսմայիլ բեյի՝ վալիի հետ հանդիպման համար, և որ բեյը գալու է իր նստավայրից՝ Խարբերդից: Կանանց մի մասը հավատաց այդ բացատրությանը, իսկ մյուս մասը հասկացավ, որ դա խաբեություն է:

Մեր տնից ոչ այնքան հեռու ապրում էր Անդրանիկենց ընտանիքը: Նա երիտասարդ էր, ավարտել էր Մարզվանի ամերիկյան քոլեջը և ծնողների հետ եկել էր Չմշկածագ՝ դպրոցում ուսուցիչ աշխատելու: Անդրանիկը շատ հարգված էր մեր քաղաքում: Քույրս՝ Լուսինեն, շուտով նրա կինը պիտի դառնար: Երբ թուրքերը մեր քաղաքում զորահավաք հայտարարեցին, Անդրանիկին ազատեցին՝ նկատի ունենալով նրա ուսուցիչ լինելու հանգամանքը: Անդրանիկի հայրը ենթարկվեց հրամանին ու գնաց հրապարակ, իսկ Անդրանիկը մնաց տանը: Նա, քրոջ շորերի մեջ ծպտված, թաքուն դուրս եկավ քաղաքից: Ծանոթ թուրքից մի ձի գնեց (վստահում էր նրան) և հենց այդ թուրքի միջոցով էլ Լուսինեին լուր ուղարկեց, որ ինքը գնում է Խարբերդ՝ Գերմանիայի ազդեցիկ հյուպատոսի՝ կոմս Վոլֆ ֆոն Վոլֆսքելի

մոտ՝ Զմշկածագի հայերի անվտանգության համար միջնորդություն հայցելու:

Լուսինեի տրամադրությունը բարձրացավ, երբ լսեց, որ Անդրանիկը վտանգի մեջ չէ: Այդ երեկո մի քանի հարևան, նրանց մեջ նաև հարուստ մարդկանց կանայք եկան մեր տուն՝ մեր պատուհանից սեփական աչքերով դիտելու հրապարակը՝ այն հույսով, թե կարող են գոնե մի ակնթարթ տեսնել իրենց սիրելիներին: Ասկյարները թույլ չէին տալիս կանանց հավաքվել հրապարակի մոտ, ոչ էլ շփվել իրենց տղամարդկանց հետ:

Տիկին Սրբուհին՝ մի շատ գեղեցիկ կին, որ մեկ տարի էլ չկար, ինչ ամուսնացել էր մեր քաղաքի ամենահարուստ արդյունաբերողի որդու հետ, ուր որ է պիտի մայրանար: Մեր պատուհանից նա նկատեց ամուսնուն և չկարողացավ զսպել իրեն. վազեց դեպի հրապարակ՝ ճչալով. «Վարդա՜ն ջան, Վարդան ջան...»: Երիտասարդ ամուսինը լսեց կնոջ կանչն ու վազեց հրապարակի ծայրը՝ թևերը լայն տարածած՝ սիրելիին գրկելու համար: Հենց այն է պիտի նետվեր ամուսնու գիրկը, երբ մի զաբթիե հրացանի խզակոթով հարվածեց նրա գլխին: Երբ զաբթիեն և նրա ընկերները նկատեցին, որ երիտասարդ կինը հղի է, հերթով սվինները խրեցին նրա որովայնը: Ամուսինն ընկավ գետին, ուշագնաց եղավ: Ասկյարները նրան հեռացրին, իսկ կնոջ բզկտված մարմինը թողեցին այնտեղ, ուր ընկել էր:

Մայրամուտին, երբ քաղաքի գրեթե բոլոր հայ կանանց աչքերը ցամաքել էին, և այլևս արցունք չէր մնացել նաև իմ ու Լուսինեի աչքերում, թուրքական թաղամասի Էլ Հասան մզկիթի մինարեթից լսվեց առաջին աղոթքի կանչող ազանը: Ինձ թվաց, թե մոլլան իր ազանով ծաղրում է մեզ. «Չկա ուրիշ Աստված, Ալլահից բացի, եկե՛ք աղոթքի, եկե՛ք փրկվելու»: Առանց մայրիկիս ասելու ես ծնկի իջա և աղերսեցի մեր Աստծուն, որ չմոռանա մեզ ու վերադարձնի մեր հայրիկին: Գուցե Աստված լսեց ձայնս, որովհետև հենց թուրքերի նամազն ավարտվեց, մի զինվոր կանգնեց մեր դռանը: Նա ասաց, որ հայրիկը փող է տվել իրեն, որ երկտող հանձնի մեզ. այնտեղ ասված էր՝ հայրիկը կկարողանա մեզ հանդիպել ու խոսել, եթե գնանք հրապարակի հյուսիսային կողմը: Մենք գնացինք. հայրս ու Պողոսը

սպասում էին մեզ այնտեղ: Որոշ ժամանակ նա չէր կարողանում խոսել: Հետո ասաց.

- Մեզ անապատ են քշելու:

Սպաները նրանց ասել էին, որ հայ տղամարդկանց տանում են 60 մղոն հեռավորության վրա գտնվող Արաբկիր քաղաք, որտեղ նրանք կմնան տեղի ճամբարում այնքան ժամանակ, մինչև թուրքերը կորոշեն, թե երբ նրանք կվերադառնան իրենց տները: Հայրս ասաց, որ չի հավատում, թե իրենց երբևէ թույլ կտան տուն վերադառնալ:

Հայրս մորս ասաց՝ քանի որ Պողոսն իր հետ է գալու, լավ կլիներ մի վերմակ բերեինք Պողոսի համար և մի քիչ էլ փող: Հորս մոտ ընդամենը 100 թուրքական լիրա կար, որը հավասար էր ամերիկյան 440 դոլարի: Նա հույսը դրել էր այն բանի վրա, որ եթե շատ դրամ ունենա, կկաշառի թուրք զինվորներին, և նրանք թույլ կտան Պողոսին ձիով գնալ կամ ճանապարհին փախչել:

Ես ու մայրս շտապեցինք տուն: Նա իջավ նկուղային հարկ, որտեղ հայրս մեծ գումար էր թաքցրել մեզ համար: Երբ ես գնացի վերմակը բերելու, մտքովս անցավ վերցնել իմ վերմակը, որ հայրս էր բերել ինձ համար Իզմիրից տասներորդ տարեդարձիս առթիվ: Դա ինձ պատկանող իրերից ամենագեղեցիկն էր: Նրա վրա ասեղնագործված էին Ավետարանի տասը պատվիրանները: Շատերն էին ասում, որ դա հազար տարվա հնություն ունի: Ես վերմակը վերցրի Պողոսի համար, իսկ մի օթոց էլ՝ հայրիկի:

Պողոսը լաց եղավ, երբ տեսավ իմ վերմակը: Մենք լավաշի մեջ չոր մրգեր ու պանիր էինք փաթաթել հայրիկիս ու եղբորս համար: Մայրս նաև թուրքական 200 լիրա էր վերցրել, որը հավասար էր 1000 ամերիկյան դոլարի:

Ասկյարներն այս անգամ չթողեցին մեզ երկար խոսել հայրիկի հետ: Մենք սպասեցինք փողոցի հանդիպակաց կողմում՝ պարզապես հեռվից նրանց նայելով, մինչև մութն ընկնելը: Հետո գնացինք տուն և... այլևս չտեսանք ո՛չ հայրիկին, ո՛չ էլ Պողոսին:

Երբ տուն հասանք, տեսանք, որ գլխավոր ոստիկանապետ Աբդուլլահ բեյը, հյուրասենյակում կանգնած, մեզ է սպասում: Աբդուլլահը միշտ էլ հայրիկի բարեկամն էր եղել, և մենք կարծում էինք,

որ նա բարի մարդ է: Թերևս նա մեզ օգներ, եթե կարողանար: Երբ մայրս աղաչեց նրան գոնե Պողոսին վերադարձնել, նա ցույց տվեց նահանգապետ Իսմայիլ բեյի կողմից ստորագրված մի հրաման, որ իրեն էր հանձնել Հուսեյն փաշան: Փաստաթուղթն ուներ հետևյալ բովանդակությունը. «Եթե հայերի տեղահանության շրջանում որևէ մուսուլման, լինի տեղի բնակիչ կամ եկվոր, փորձի թաքցնել կամ որևէ ձևով պաշտպանել մի հայ քրիստոնյայի, նախ իր տունը կհրկիզվի, ապա այդ քրիստոնյան կսպանվի իր իսկ աչքի առջև: Օգնության ձեռք մեկնած մուսուլմանն ու նրա ողջ ընտանիքը կենթարկվեն մահապատժի»:

- Տեսնո՛ւմ եք, ես չեմ կարող օգնել ձեզ, եթե նույնիսկ շատ ցանկանամ, բայց որպես ձեր տան բարեկամ կարող եմ խորհուրդ տալ. դուք երկու երիտասարդ, գեղեցիկ աղջիկներ ունեք: Նրանք դեռ կարող են փրկվել, եթե ուրանան ձեր կրոնը և ընդունեն մեր Ալլահին... Ես անձամբ կխոսեմ Հուսեյն փաշայի հետ, եթե դուք ցանկանաք, որ Լուսինեն ու Արշալույսը բարձրաձայն կրկնեն ոեկան՝ իսլամի երդումը: Փաշան ուրախությամբ կընդունի երկուսին էլ, և այդպիսով կփրկեք թե՛ նրանց, թե՛ ձեզ շա՜տ ու շատ անխուսափելի դժբախտություններից: Համաձայնե՛ք, քանի դեռ ուշ չէ,- դիմելով մայրիկիս՝ հորդորում էր Աբդուլլահ բեյը:

Հուսեյնը ցանկանում էր մեզ երկուսիս էլ տանել իր հարեմը: Ես հիշեցի հայր Ռուբենի խոսքերը. «Հավատա՛ Աստծուն և հավատարիմ եղիր Նրան», բայց ներքուստ որոշեցի՝ ես պե՛տք է զոհաբերեմ ինձ: Եվ կգնայի փաշայի հարեմը, եթե մայրս Աբդուլլահին չասեր.

- Ասա՛ փաշային, որ մենք հավատում ենք միայն մեր Աստծուն և պատրաստ ենք ընդունելու այն, ինչ Տերը կամենա:

Աբդուլլահը հարգում էր մայրիկին իր քաջության համար: Բեյը խոնարհվեց մորս առջև, հրաժեշտ տվեց՝ ասելով.

- Ցավում եմ ձեզ համար... դեռ ինչե՞ր են լինելու...

Այդ երեկո Անդրանիկը վերադարձավ Խարբերդից և անմիջապես եկավ մեր տուն: Նրա հագին դեռ քրոջ զգեստն էր: Երբ երևաց դռան շեմին, Լուսինեն վազեց և ընկավ նրա գիրկը: Անդրանիկի աչքերը մատնում էին, որ վատ լուր է բերել:

- Ես խնդրեցի կոմս ֆոն Վոլֆսքելին, որ մեզ փրկի,- ասաց Անդրանիկը: - Կոմսն ասաց, որ դա սուլթանի հրամանն է՝ Թուրքիայում կենդանի չթողնել և ոչ մի քրիստոնյա հպատակի, և ինքը կարծում է, որ սուլթանն իրավացի է:

Լուսինեն իր հոգու խորքում հույս էր փայփայում, թե Անդրանիկին կհաջողվի ինչ-որ դրական բանի հասնել: Քույրս այնպե՞ս էր հավատում նրան... Լուսինեն հոգեպես ընկճվեց, երբ իր հույսերը փշուր-փշուր եղան, բայց նա շատ ավելի անհանգստացած էր Անդրանիկի համար, քան՝ իր: Նա խնդրեց Անդրանիկին փորձել քաղաքից փախչել, սակայն Անդրանիկը որոշեց միաժամանակ քրոջ շորերի մեջ ծպտված մնալ: Լուսինեն իր մազերից մի փունջ կտրեց և դասավորեց Անդրանիկի գլխին այնպես, որ մազերի ծայրերը երևան գլխաշորի տակից. այդպես նա ավելի էր աղջկա նման: Նրանք մտածում էին, որ Անդրանիկի համար ավելի ապահով կլինի քաղաքից գիշերով դուրս գալը և գյուղում ծանոթ թուրքերի տանը թաքնվելը:

Բայց ինչ-որ ձևով իշխանությունները գլխի էին ընկել, որ Անդրանիկը չի հանձնվել: Երեկոյան զաբթիեները Աբդուլլահի գլխավորությամբ խուզարկեցին նրանց տունը և հրամայեցին, որ նա դուրս գա: Երբ մայրն ասաց, որ որդին տանը չէ, ժանդարմների պետը պատասխանեց՝ եթե նա չհանձնվի, իրենք տունն անմիջապես կիրկիզեն տնեցիների հետ մեկտեղ:

Հարևանուհիներից մեկը շտապեց մեզ հայտնելու այդ լուրը: Անդրանիկը մի կողմ նետեց իրեն քողարկող հանդերձը, վերցրեց հին թուրը, որ հայրս կախել էր պատից և դուրս թռավ: Նա ճեղքեց ժանդարմների շարքը և մտավ տուն: Այստեղ նա գտավ մորը, քույրերին և հավաքված հարևաններին՝ սարսափած ու ահաբեկված:

Ժանդարմները հրամայեցին, որ նա անմիջապես դուրս գա: Անդրանիկը տեսավ, որ թուրքերը նավթով լի մեծ տարաներ բերեցին: Նա համբուրեց մորը, քույրերին՝ նորից ու նորից, և դուրս եկավ փողոց: Թուրքերը սպանեցին նրան դանակներով հենց դռան շեմին: Անդրանիկի քույրը վազեց և իրեն գցեց եղբոր անշնչացած մարմնի վրա: Նրան նույնպես դանակահարեցին:

Երբ հարևաններից մեկը մեզ հայտնեց պատահածի մասին, Լուսինեն դուրս նետվեց դեպի Անդրանիկենց տուն և օգնեց երկուսի մարմինները ներս տանելու:

Հայրիկին և բոլոր տղամարդկանց հենց այդ գիշեր տարան: Նստած իմ սենյակում՝ մենք փորձում էինք զաբթիեների ջահերի ու ճրագների լույսի տակ հրապարակում հավաքված մարդկանց մեջ գտնել մեր հարազատներին: Այդ ընթացքում զաբթիեների նոր խումբ հայտնվեց: Հանկարծ մեծ աղմուկ բարձրացավ, իրարանցում սկսվեց: Շուտով մարդկանց շարք կանգնեցրին՝ զաբթիեներով ու ասկյարներով երկու կողմից շրջապատված, և դուրս տարան հրապարակից: Շատ մութ էր, ուստի մենք չկարողացանք տեսնել հայրիկին ու Պողոսին, բայց համոզված էինք, որ նրանք նայում են մեր պատուհաններին՝ մեզ տեսնելու հույսով:

Նրանց քշեցին դեպի Կարասու* գետը, որ Եփրատի վտակներից է:

Շատ ծեր ու տկար մարդիկ չէին կարողանում երկար քայլել և ընկնում էին ճանապարհի եզրին: Զաբթիեները սպանում էին նրանց ու հեռանում:

Լույսը բացվել էր, երբ մարդկանց շարքերը հասան Կարասու գետի ափին գտնվող Գվազիմ գյուղը, որ 12 մղոն հեռու էր մեր քաղաքից: Այս գյուղում մի մեծ շենք կար, որ թուրքերը երբեմն օգտագործում էին որպես զինվորական ճամբար՝ քրդերին զսպելու համար, իսկ խաղաղ ժամանակ՝ որպես բանտ: Տղամարդկանց կեսին տեղավորեցին այդ շենքում և ասացին, որ նրանք պետք է մնան մինչև հաջորդ օրը: Զաբթիեները մյուսներին գետը մտցրին և քշեցին դեպի Արաբկիր:

Հենց նույն օրը զաբթիեները վերադարձան Գվազիմ. գետն անցկացնելուց հետո, հենց գյուղը կորել էր տեսադաշտից, նրանք անմիջապես սպանել էին բոլորին:

Երբ Զմշկածագում իմացան, որ իրենց տղամարդկանց մի մասին թողել են Գվազիմի բանտում, հարյուրավոր կանայք փոշոտ ճանապարհով շտապեցին դեպի այդ գյուղը: Ես ու Լուսինեն էլ գնացինք՝ հույս ունենալով վերջին անգամ տեսնելու մեր հորն ու եղբորը:

---

* Կարասու - հայերեն՝ Սեջուր

Գվազիմ գյուղում մի ծեր հայ կին կար, որ 1895 թվականի մեծ ջարդերի ժամանակ ապրել էր մեր քաղաքում: Նա գեղեցիկ կին էր: Այն տարիներին քրդերը նրան գողացել էին: Իր կյանքը փրկելու համար նա կրոնափոխ էր եղել: Հետո Գվազիմ գյուղում այս կնոջը վաճառել էին մի թուրք բեյի: Սա հայ աղջկան պահել էր իր հարեմում մինչև ծերություն: Այդ տարիներին, թեև «հավատափոխ» էր եղել, սակայն հոգում պահել էր իր քրիստոնեական հավատքը: Բեյը նրան կոչում էր Ֆաթմա:

Ֆաթման բանտի պահակներին համոզել էր, որ թույլ տան ջուր տանել բանտարկյալներին: Այդ օրը նա բանտարկյալներին տեղեկացրեց, որ զաբթիեները վերադարձել են առանց հայ տղամարդկանց: Պարզ էր, հայերը հասկացան, որ նույն ճակատագիրն իրենց է սպասում:

Երբ Ֆաթման դուրս եկավ բանտից, ինձ ասաց, որ հայրս ու Պողոսը ներսում են, պատվիրել են ասել, որ հույսներս չկորցնենք: Քիչ հետո մենք տեսանք, որ Ֆաթման նորից մտավ բանտ՝ այս անգամ ջրի դույլի մեջ թաքցրած երկու ծանր քարեր, այնքան ծանր, որ հազիվ էր տանում: Երրորդ անգամ նա մտավ բանտից ներս՝ նավթով լցված դույլերով:

Երբ մութն ընկավ, երիտասարդ մարդիկ, որ ավելի ուժեղ էին ու քաջ, սպանեցին բոլոր ծերերին Ֆաթմայի բերած քարերով:

Ամենից առաջ հայրս Պողոսին էր սպանել. ախր եղբայրս շատ էր երիտասարդ ու անօգնական:

Երբ բոլոր ծերերին ու թույլերին արդեն սպանել էին, երիտասարդները նավթը շրջեցին ու կրակի տվեցին բանտը՝ իրենց հետ ամեն ինչ հրկիզելով (Ֆաթման մեզ պատմեց այդ ամենը):

Քիչ հետո զաբթիեները գլխի ընկան, որ կատարվածը Ֆաթմայի ձեռքի գործն է: Ծեր կնոջը քարշ տվեցին դեպի հրկիզվող շենքը ու գցեցին կրակների մեջ:

Շաբաթ օրը՝ լուսաբացին, ես ու Լուսինեն վերադարձանք տուն՝ մայրիկի մոտ:

- Թող Աստծո կամքը լինի,- ահա այն ամենը, ինչ նա կարողացավ ասել, երբ մենք նրան պատմեցինք բանտում պատահածի մասին:

Մայրս էլ պատմեց, որ Գվազիմ գյուղում մեր եղած ժամանակ մեծ տոնախմբություն էր տեղի ունեցել Էլ Հասան մզկիթում՝ նվիրված մուսուլմանական սուրբ օրվան: Մի բարձրաստիճան իմամ էր եկել Տրապիզոնից՝ հատուկ քարոզներ կարդալու այնպիսի մեծ իրադարձությունների կապակցությամբ, ինչպիսին են սուրբ պատերազմը՝ Ջիհադը, և քրիստոնյաների զանգվածային կոտորածը:

Այդ առավոտ ասկյարները շրջեցին փողոցներով և պատերին փակցրին մի նոր հայտարարություն, որից մենք այնքա՜ն վախենում էինք: Դա նահանգապետի հրամանն էր, որտեղ ասված էր՝ քաղաքի բոլոր քրիստոնյա հայ կանայք՝ երիտասարդ թե ծեր, պետք է պատրաստ լինեն տարհանվելու՝ երեք օրվա ընթացքում թողնելով իրենց տները: Թե ուր՝ հրամանում ասված չէր:

Հենց որ թուրք բնակիչները լսեցին նոր հրամանի մասին, նրանցից շատերը եկան մեր գյուղաքաղաքի հայկական թաղերը՝ առաջարկելով գնել այն ամենը, ինչ հայ կանայք կցանկանան վաճառել: Քանի որ քաղաքում ոչ մի տղամարդ չէր մնացել, նրանց այլևս խորհուրդ տվող չկար:

Մերը քաղաքի լավագույն տներից էր: Բազմաթիվ հարուստ թուրքեր նախ եկան մեր տուն: Նրանք մեզ ասացին, որ ավելի լավ է մեր գորգերը, մայրիկի, իմ ու Լուսինեի ասեղնագործած գեղեցիկ ժանյակները վաճառենք իրենց: Յուրաքանչյուր հայ աղջիկ փոքր հասակից սովորում էր ասեղնագործել սքանչելի ժանյակներ: Ոչ մի հայուհի իրեն երջանիկ չէր զգա, մինչև չասեղնագործեր իր հարսանեկան քողը: Առհասարակ թուրքերը մեծ հաճույքով էին գնում այդ ժանյակները և ավելի բարձր գնով վաճառում օտարերկրյա առևտրականներին: Բայց ոչ մի հայ աղջիկ իր ամուսնական ժանյակ-քողը չէր վաճառում, եթե միայն սով չէր: Ես ու Լուսինեն ասեղնագործել էինք մեր ամուսնական ժանյակ-քողը և պահել մինչև բաղձալի օրը: Մենք հասկանում էինք, որ տեղահանման ժամանակ չենք կարողանալու մեր ժանյակ-քողերը վերցնել մեզ հետ, քանի որ մեզանից հաստատ կգողանային, ուստի մենք վաճառեցինք թե՛ մերը, թե՛ մայրիկինը՝ այդ ամենի համար ստանալով մի չնչին գումար: Ամերիկա տեղափոխվելուց հետո ես տեսա անկողնու ծածկոցներ, սեղանի սփոռոցներ՝ պատրաստված

ամուսնական ժանյակ-քողերից, ինչպիսին մերն էր, և որոնք վաճառվում էին խանութներում հարյուրավոր դոլարներով: Հայրիկը մեզ համար շատ գորգեր էր բերել Խարբերդից, Զմյուռնիայից և Դամասկոսից. այդ ամենի համար մայրս ընդամենը մի քանի ցենտ ստացավ:

Հայտարարության հաջորդ օրը կիրակի էր: Ասկյարները մտան բոլորի տները: Նրանք խուժում էին առանց դուռը թակելու, առանց թույլտվության: Ձևացնում էին՝ իբր հրացան ու ատրճանակ են փնտրում, բայց դրանց փոխարեն հափշտակում էին արծաթյա և ոսկյա գդալներ, գավաթներ ու սկիհներ:

Այդ երեկո հեծյալների մի ջոկատ անցավ մեր տան մոտով: Մենք վազեցինք դեպի պատուհանը և տեսանք, որ դրանք Աղջադաղի քրդերն են՝ քրդական ցեղերից ամենադաժանը: Առջևից գնում էր հանրահայտ Մուսա բեյը՝ այն ավազակապետը, որ մի քանի տարի առաջ դարանակալել էր ամերիկացի միսիոներներ դոկտոր Ռեյնոլդին և դոկտոր Նափին. նրանց կողոպտելուց հետո կապկպել էին և թողել ճանապարհի եզրին:

Քրդերն ուղղվեցին դեպի Հուսեյն փաշայի պալատի կողմը: Քիչ անց նրանք հետ եկան փաշայի զինվորների ուղեկցությամբ: Մենք հասկացանք, որ Մուսա բեյը մեզ կողոպտելու թույլտվություն է ստացել կառավարչից քաղաքից մեր դուրս գալուց հետո:

Կանայք այդ գիշեր մնացին տանը: Մայրիկն անցնում էր սենյակից սենյակ՝ նայելով պատից կախված իրերին, պահարանում շարված բազմազան հախճապակյա գավաթներին, ափսեներին, որ իրենն էին, երբ ինքը դեռ աղջնակ էր: Երկար ժամանակ նա նստած մնաց հայրիկի հագուստների առջև: Ես արկղից հանեցի խաղալիքներս ու լաց եղա. դրանցից մի քանիսը տատիկիս խաղալիքներն էին: Լուսինեն չէր լալիս: Նա մտորում էր Անդրանիկի և իր կորցրած ամուսնական ասեղնագործ քողի մասին: Արցունքը ցամաքել էր Լուսինեի աչքերում, ինչպես մայրիկինը: Փոքրիկ եղբայրներս՝ Հովնանն ու Մարտիրոսը, քույրիկներս՝ Սառան ու Արուսյակը, սկսեցին հեծկլտալ, երբ նրանց ասացինք, որ ստիպված են հրաժեշտ տալու իրենց տիկնիկներին ու օդապարիկներին:

Բացվեց վերջին օրվա առավոտը: Ես աննկատ դուրս եկա

տնից և վազեցի իմ ընկերուհի Մարիամենց տուն: Նրանք մեզնից մի քանի տուն ներքև էին ապրում: Մարիամենք հարուստ չէին: Մայրս 20 լիրա տվեց ինձ, որ տանեմ նրանց տամ՝ ճանապարհին զաբթիեներին կաշառելու համար: Բայց Մարիամը տանը չէր: Գիշերը զաբթիեները խուժել էին նրանց տուն, Մարիամին դուրս քաշել իր անկողնուց գիշերանոցով ու տարել անհայտ ուղղությամբ: Ջինվորներն ասացին, որ Ռահիմ բեյն իրենց փող է խոստացել, եթե Մարիամին բերեն իր մոտ: Մարիամի մայրը և փոքրիկ եղբայրները չոքել էին նրա դատարկ անկողնու առջև:

Տունդարձի ճանապարհին մի թուրք կանգնեցրեց ինձ: Նա ասաց, որ գնամ իր հետ, քանի որ ինչպես ես, այնպես էլ «բոլոր քրիստոնյա գեղեցիկ աղջիկները պետք է հանձնվեն թուրքերին կամ մորթվեն»: Ես դուրս պրծա նրա ձեռքից և ոտքերիս մեջ ինչքան ուժ կար, վազեցի տուն: Չեմ կարող մոռանալ այդ թուրք զինվորի հայացքը, երբ նա խոսում էր ինձ հետ: Առաջին անգամ էի տեսնում տղամարդու՝ ինձ հառված նման աչքեր: Երբ այդ մասին պատմեցի մորս, նա փաթաթվեց ինձ ու ասաց.

- Իմ խե՜ղճ աղջիկ...

Կանանց հնարավորություն էին տվել մինչև կեսօր հավաքվել հրապարակում: Նրանք գալիս էին ձիերով, գրաստներով և եզներ լծած սայլերով: Ոմանք միայն օթոցներ էին վերցրել, ոմանք՝ մանրմունր բաներ, մի սիրելի գորգ, հաց ու միրգ: Հայաստանում ամեն մի ընտանիք ապահովում էր իր տարվա ապրուստը: Կանայք այդ ամենը թողեցին, որովհետև չէին կարող իրենց հետ վերցնել:

Երբ տունը թողնել-դուրս գալու ժամանակը հասավ, ես նորից հիշեցի այն թուրք զինվորի դեմքի արտահայտությունը: Առաջին անգամ ըմբռնեցի, թե ինչ է նշանակում գերի լինել հարուստ թուրքերի հարեմում: Նրանց տները սովորաբար կառուցված էին լինում բարձունքի վրա և իշխում էին քաղաքին: Ես լսել էի, որ քրիստոնյա աղջիկներին փախցնում տանում էին այդ տների հարեմները, բայց դրա էությունը չէի գիտակցում: Լուսինեն տարիքով ավելի մեծ էր, ավելի շատ բան էր հասկանում, քան ես: «Երանի մեռնեի Անդրանիկի հետ»,- անվերջ կրկնում էր քույրս:

Մայրս ինչ-որ ծրագրի շուրջ էր մտմտում՝ կարծելով, թե կփրկի իր դստրիկներին թուրքական հարեմից կամ որ ավելի վատ էր՝ քրդերից ու ասկյարներից: Նա գնեց մուսուլմանական երկու չադրա: Չադրաների վրայից մայրիկը մեզ հագցրեց թուրք կանանց վերարկուներ: Ծածկված դեմքերով մենք կատարելապես նմանվեցինք թրքուհիների:

- Ես հաշտվել եմ մահվան հետ, բայց ձեզ, զավակնե՛րս, ավելի մեծ վտանգներ են սպասում,- ասաց մայրիկը: - Իսկ հիմա դուք կարող եք ազատ դուրս գալ փողոց. թուրքերը ձեզ մուսուլման կանանց տեղ կդնեն: Փորձեք գտնել օրիորդ Գրեհեմին՝ որբանոցի վարիչին: Գուցե կարողանա ձեզ թաքցնել, մինչև ինչ-որ ձևով կարողանաք փախչել դեպի հյուսիս, որտեղ ծովն է: Եվ եթե դուք Աստծո ողորմածությամբ ապահով տեղում հայտնվեք, հիշեք, որ Տերը միշտ ձեզ հետ է:

Հետո նա մեզ համբուրեց և կարգադրեց՝ գնացե՛ք:

Օրիորդ Գրեհեմը անգլուհի էր, եկել էր Մարզվանի ամերիկյան քոլեջից՝ Չմշկածագի որբերին գրել-կարդալ սովորեցնելու: Նա երիտասարդ էր ու գեղեցիկ: Թուրքերը հարգում էին նրան, և մայրս կարծում էր, որ մենք ապահով կլինենք նրա մոտ:

Մայրիկը հրապարակ գնաց Արուսյակի, Սառայի, Հովնանի ու Մարտիրոսի հետ, իսկ ես ու Լուսինեն խառնվեցինք թուրք կանանց, ովքեր եկել էին հրապարակ՝ դիտելու տեսարանը և միաժամանակ էժան գնով ակնեղեն, այլ թանկարժեք իրեր գնելու: Հայ կանայք գիտակցում էին, որ եթե չվաճառեն իրենց թանկարժեք զարդերը, ճանապարհին, միևնույն է, կողոպտվելու են:

Ես ու Լուսինեն որոշեցինք, որ ավելի լավ է սպասենք, մինչև մութն ընկնի, հետո գնանք Գրեհեմի որբանոց:

Շուտով նկատեցինք, որ հարուստ թուրքերն ու սպաները շրջում են հրապարակում՝ ցինիկաբար տնտղելով հայ աղջիկներին: Եթե աղջիկներից մեկնումեկը դուր էր գալիս նրանց, ապա բեյերն ու աղաները աշխատում էին համոզել աղջկա մորը, որպեսզի նա համաձայնի, որ իր դուստրը հրապարակավ իսլամ ընդունի, հետո գնա իրենց հետ, իսկ իրենք խոստանում էին փրկել նրանց ընտանիքը

տեղահանումից: Երբ մայրերը մերժում էին, թուրքերը ծեծում էին նրանց: Սպաները մայրերից մի քանիսին սպանեցին, քանզի նրանք կառչած էին մնում իրենց աղջիկներից:

Դեռատի շատ հայուհիներ տեղի տվեցին թուրքերի պահանջներին և համաձայնեցին կրոնափոխ լինել՝ ի սեր իրենց մայրերի, քույրերի ու եղբայրների: Երեկոյան մզկիթի խոստովանահորը բերեցին՝ վավերացնելու նրանց «կրոնափոխությունը»: Ավելի քան հիսուն աղջիկ դավանափոխ եղավ: Հենց որ բոլորը իսլամի երդում տվեցին, սպաները նշան արեցին զաբթիեներին, և վերջիններս աղջիկներին բաժանեցին մայրերից՝ առանձնացնելով հրապարակի մի մասում: Հետո հարուստ բեյերն սկսեցին տնտղել աղջիկներին: Ասկյարները աղջիկներին նրանց էին տալիս, ովքեր ավելի շատ փող էին առաջարկում, իհարկե, եթե սպան ի՛նքը չէր ցանկանում այդ աղջկան: Բարձրաստիճան զինվորականներին նախապատվություն էր տրվում:

Մեկը մյուսի հետևից ասկյարները դուրս էին քաշում այն աղջիկներին, ովքեր ճարահատյալ զոհել էին իրենց հավատքը՝ հարազատներին փրկելու համար: Ավա՜ղ... Հավատափոխ աղջիկներին տարան թուրքերի տների ուղղությամբ:

Ես ու Լուսինեն մոտեցել էինք մայրիկին և առիթ էինք փնտրում նրա հետ խոսելու: Մենք տեսանք ամեն ինչ: Եվ երբ նրանք տանում էին աղջիկներին, մենք նկատեցինք, որ մի զաբթիե իր թևերի վրա տանում է օրիորդ Գրեհեմին: Նա ուժգին թափահարում էր ոտքերը, փորձում էր ազատվել, բայց զաբթիեն շատ ուժեղ էր: Մենք հետո իմացանք, որ ասկյարները գնացել էին օրիորդ Գրեհեմի դպրոց՝ հայ աղջիկներին տեղափոխելու: Օրիորդ Գրեհեմը դիմադրել էր և վտարել նրանց: Սրանք հոխորտացել էին, թե նրա երկիրն այստեղ իրավասու չէ օգնելու, և քանի որ ինքն էլ քրիստոնյա է, իրե՛ն էլ պետք է տանեն:

Օրիորդ Գրեհեմին տարան Ռեհիմ բեյի տուն, ուր տեղափոխել էին նաև իմ ընկերուհուն՝ Մարիամին: Նրան չփորձեցին նույնիսկ համոզել կրոնափոխ լինել:

Ռեհիմ բեյը շատ ազդեցիկ դեմք էր. նա Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի մորաքրոջ տղան էր:

ԳԼՈՒԽ Գ
ՎԵՀԻԲ ԲԵՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ ժամանակ ես ու քույրս քննարկում էինք, թե ինչ ենք անելու այսուհետ՝ գնալու ենք հրապարա՞կ՝ մայրիկին միանալու (օրիորդ Գրեհեմին փախցրել էին. նա այլևս չէր կարող օգնել մեզ), թե՞ փորձելու էինք փախչել՝ օգտվելով մեր ծպտյալ վիճակից: Երկար ծանր ու թեթև անելուց հետո որոշեցինք քաղաքից դուրս գալ, գնալ մեր ծանոթ թուրքերից մեկի տուն. այդպիսով գուցե կարողանայինք օգնել մայրիկին: Մենք պատկերացում իսկ չունեինք, թե այդ ամենն ինչպես պետք է անենք: Կառչել էինք մի անորոշ հույսից, հավատում էինք, թե մեկը կարող է օգնել մեզ:

Երբ գիշերն իր թևերը տարածեց ամեն կողմ, մենք խուլ նրբանցքներով աննկատ հասանք մեր տուն: Առանց ուշադրություն գրավելու մեզ հաջողվեց մտնել պարտեզ: Տանը չհամարձակվեցինք ճրագ վառել կամ մնալ առաջին հարկում. չէ՞ որ ասկյարներն ամեն րոպե կարող էին տուն խուժել: Ամենահարմար տեղը, ըստ մեզ, ձեղնահարկն էր, որտեղ մի քանի արկղ կար՝ մայրիկի հին իրերով լեցուն: Փնտրեցինք և այնտեղ գտանք հին շորեր: Հագանք դրանք, ապա վերարկուն, որ մայրիկն էր տվել: Կարծում էինք՝ եթե թուրքերը մեզ

գտնեն, մեր հին շորերը կմոլորեցնեն նրանց, միայն թե կարողանա-յինք երեսներս ծածկած պահել:

Ո՛չ ես, ո՛չ էլ Լուսինեն աչք չէինք փակել վերջին երեք օրը: Տե-ղական իշխանությունները հայ կանանց երեք օր ժամանակ էին տվել՝ իրենց տները լքելու համար: Այնքան հոգնած էինք, որ լու-սաբացին մոտ քունը մեզ հաղթեց: Քնեցինք: Հանկարծ արթնացա, և աչքս ընկավ մի գարշելի գաբթիեի երեսին, որ կանգնել էր իմ գլխավերևում՝ դաշույնը ձեռքին: Նա քացով խփեց ինձ: Երեք թե չորս թուրք էլ իրենց խմբապետի հետ խուժել էին մեր սենյակները՝ արժեքավոր իրեր գտնելու հույսով: Նրանք հիմա բարձրանում էին փայտաշեն սանդուղքով, իսկ այն մեկը, որ մեզ գտել էր, գոռալով կանչում էր մյուսներին.

- Այստեղ փախստականներ կան, նրանց պետք է սպանե՛լ...

Զաբթիեի գոռոցը արթնացրեց Լուսինեին: Նա ճչաց...

Մինչ այդ թուրքերն ինձ կանգնեցրել էին, բայց Լուսինեի ճիչն զգաստացրեց նրանց, ինձ բաց թողեցին:

- Էդ մեկը տարիքոտ չի, - ասաց զաբթիեների գլխավորը, երբ հետ դարձավ ու նայեց Լուսինեին, - երիտասարդ աղջկա ձայն է...

Նրանք քացով հրեցին ինձ մի կողմ և հավաքվեցին Լուսինեի շուրջը: Նրան սանդուղքով իջեցրին առաջին հարկ, որտեղ մեր մահ-ճակալներն էին: Այստեղ մի լամպ գտան, վառեցին իրենց ձեռքի մարխով: Զաբթիեներն սկսեցին շոշափել Լուսինեի բարեմասնութ-յունները. քույրս կովում էր, ճչում էր անհույս: Ես հետևեցի նրանց և մտա սենյակ: Զաբթիեներից մեկը նկատեց, բռունցքով ուժգին հար-վածեց ինձ: Ընկա հատակին: Դատելով հագուստիցս՝ կարծեցին թե ծեր կին եմ: Նրանցից մեկն ասաց.

- Սվինով ծակծկիր այդ պառավին, եթե հանգիստ չմնա:

Ես ոչինչ անել չէի կարող: Ընկած հատակին, պատին կպած՝ լուռ սպասում էի:

Զաբթիեներից մեկը պատռեց Լուսինեի քողն ու վերարկուն: Երբ նրանք տեսան, որ Լուսինեն երիտասարդ է և շատ սիրուն, սկսեցին հոհոալ: Սրանց գլխավորը մի կողմ դրեց իր զենքը, սուրը դրեց սեղանին, Լուսինեին առավ իր թևերին: Քույրս այնքան ուժ-

գին էր դիմադրում, որ մյուսները օգնության փութացին՝ զսպելով Լուսինեին, որպեսզի սպան կարողանար համբուրել նրան: Ամեն համբույրից հետո սպան ցինիկաբար ծիծաղում էր, նրա հետ նաև՝ զաբթիեները: Հետո զաբթիեները մեկը մյուսի հետևից սկսեցին «փաղաքշել» Լուսինեին. նրանց անչափ զվարճացնում էր Լուսինեի համառ դիմադրությունը:

Երբ Լուսինեի վրայի բոլոր շորերը մեկ առ մեկ պատառոտեցին, և նրա ճիչերը հետզհետե ավելի ու ավելի նվաղեցին, ես այլևս չդիմացա. ծնկաչոք մոտեցա այդ տղամարդկանց և աղաչեցի բաց թողնել քրոջս: Ես հասկացա, որ այլևս հույս չկա, թե մենք կկարողանանք ազատվել այդ գազաններից, ուստի դիմեցի նրանց՝ թախանձելով. «Տարեք մեզ հրապարակ՝ մեր հարազատների մոտ: Եթե մեզ ձեռք չտաք, մենք ձեզ շատ փող կտանք»:

Նրանք համաձայնեցին: Մենք դուրս եկանք մեր հայրական տնից և նրանց հետևից քայլեցինք դեպի հրապարակ: Լույսն արդեն բացվել էր: Կանայք զբաղված էին իրար մեջ բաժանելով իրենց հետ վերցրած հացն ու միսը: Զաբթիեները Լուսինեին պահեցին, իսկ ես սկսեցի փնտրել մայրիկիս: Գտա. մի երեխայի էր խնամում, ում մայրը գիշերը մահացել էր:

- Ո՞ւր է Լուսինեն... նրան տարա՞ն... - հարցրեց մայրս:

Մայրիկն ինձ երկու լիրա տվեց: Զաբթիեները դրանք խլեցին ձեռքիցս և Լուսինեին հրեցին մեր կողմը: Քույրս հենց զգաց, որ զաբթիեներն իրեն բաց թողեցին, ուշագնաց եղավ:

Առաջին ցերեկն ու դրան հաջորդող գիշերը ոչ ոք չգիտեր, թե ինչ է լինելու: Զաբթիեներից մի քանիսը մեր հարցերին պատասխանում էին, թե փաշան հրամայել է կանանց տեղահանել: Ոչ ոք չգիտեր՝ ինչպես կամ երբ... Մայրերից երեքը, որոնց աղջիկներին թուրքերը հափշտակել էին նախորդ օրը, այդ գիշեր մեռան կսկիծից: Նրանցից մեկը ինքնասպանություն գործեց, երբ մյուս երեխաները քնած էին իր շուրջը: Այնքան մեծ բազմություն էր խոնվել հրապարակում, որ շատերը տեղ չէին գտնում պառկելու, իսկ ով փորձում էր կից փողոցն անցնել, ասկյարները նրան անմիջապես սպանում էին:

Հրապարակի կենտրոնում ստեղծել էին մի բեմահարթակ, որտեղ նահանգապետի նվագախումբը ամառային երեկոներին նվագում էր: Այդ նույն բեմահարթակի վրա ասկյարները հավաքել էին օրիորդ Գրեհեմի որբանոցի հայ երեխաներին, իսկ օրիորդին բռնի տարել էին. թե ուր, ոչ ոք չգիտեր: Բեմահարթակի վրա հավաքել էին 30 փոքրիկ աղջիկների և գրեթե նույնքան տղաների: Աղջիկներից ամենամեծը հազիվ 12 տարեկան լիներ:

Երեխաները լալիս, մղկտում էին դառնորեն: Ես ու Լուսինեն մորս պատվերով մոտեցանք երեխաներին: Նրանք ուտելու ոչինչ չունեին, բացի այն փշրանքներից, որ հայ գաղթական մայրերը բաժին էին հանում նրանց իրենց ունեցածից. թուրքերը երբեք չեն կերակրում իրենց գերիներին:

Այդ օրը՝ կեսօրին, ամբողջ վիլայեթի զինվորական հրամանատար գեներալ Վեհիբ բեյը, որ իր ձեռքի տակ մի ողջ զորամաս ուներ, հեծյալների թիկնախմբով, համիդիեների ուղեկցությամբ անցավ քաղաքի միջով: Նա գալիս էր Երզնկայից, որտեղ մասնակցել էր թուրքական բանակի գլխավոր հրամանատար Էնվեր փաշայի մոտ անցկացված ռազմական խորհրդակցությանը: Նա շարժվում էր դեպի Խարբերդ:

Վեհիբ բեյը շտաբից իր շքախմբով եկավ քաղաքային հրապարակ: Հարյուրավոր կանայք խոնվեցին նրա շուրջը: Գեներալին ուղեկցող սպաները սրերով ու մահակներով ծեծում ու նրանից հեռացնում էին գաղթական կանանց: Վեհիբ բեյը մոտեցավ բեմահարթակին և նայեց երեխաներին: Աբդուլլահ բեյը՝ ժանդարմների պետը, փաշայի կողքին էր: Նրանք ցածրաձայն խոսում էին:

Երբ Վեհիբ բեյը հեռացավ, սպաներից ոմանք սկսեցին հայ աղջիկներին հարցնել, թե նրանք արդյոք չէի՞ն ցանկանա որբերի հետ գնալ՝ նրանց խնամելու այնտեղ, որտեղ կառավարությունը կտեղավորեր: Այդ աղջիկները, ասացին սպաները, կփրկվեն տեղահանությունից և մահվան սարսափներից, գուցե և ավելի վատ բաներից, բայց նրանք նախ պետք է կրոնափոխ լինեն:

Շատ մայրեր մտածում էին, որ դա իրենց աղջիկներին հարեմներից փրկելու թերևս միակ ճանապարհն է: Մի քանի ավելի երիտա-

սարդ կանայք, որոնց ամուսինները սպանվել էին, այնքան հուսահատված, վախեցած էին, որ ուզում էին ընձեռված հնարավորությունը չկորցնել: Սակայն սպաները հայտարարեցին, որ այդ առաջարկը վերաբերում է միայն դեռատի աղջիկներին, և հրամայեցին՝ ովքեր կցանկանան օգտվել այդ առավելությունից, հավաքվեն բեմահարթակի մոտ:

Ավելի քան երկու հարյուր աղջիկ հավաքվեց. նրանց մայրերն ու հարազատները կպել ու պոկ չէին գալիս նրանցից: Ես չեմ կարծում, թե նրանցից որևէ մեկը իսկապես կցանկանար ուրանալ Քրիստոսին, սակայն նրանք հույս ունեին, որ իրենց կխնայեն, եթե դավանափոխ լինեն, և այդպիսով կփրկվեն կոտորածից, անապատում հափշտակվելուց կամ հարճ դառնալուց:

Մի վայելչակազմ համիդիե սպա՝ կոկիկ, թանկարժեք համազգեստ հագած, մոտեցավ բեմահարթակին՝ ընտրելու սրտի ուզած աղջիկներին: Նա ընտրեց 12 ամենագեղեցիկներին: Մի բարձրահասակ, սլացիկ, նրբագեղ աղջիկ, ում հայրը հարուստ վաճառական էր, պայման դրեց, որ իսլամ չի ընդունի, եթե իր երկու կրտսեր քույրերին չթողնեն միանալ իրեն: Սպան համաձայնեց: Այս երեք աղջիկները մայր չունեին, միայն՝ իրենցից փոքր եղբայրներ: Սրանց էլ սպաները միացրին որբերի խմբին: Քույրերը շատ ուրախ էին, որ փրկվեցին: Նրանցից մեկը Լուսինեի ընկերուհին էր: Նա ասաց. «Մեր Տեր Աստված գիտի՝ ինչու ենք այսպես վարվում: Մենք միշտ էլ գաղտնի աղոթելու ենք մեր Տիրոջը»:

Եսթեր Մկրտչյանը՝ դուստրը հայ մեծ գրող Պողոս Արթենի, որ ապրում էր մեր քաղաքում, նույնպես համաձայնեց կրոնափոխ լինել: Նրան էլ ընտրեցին: Եսթերը իմ խաղընկերուհիներից էր: Նրա մայրը անգլուհի էր, ամուսնացել էր Եսթերի հոր հետ, երբ վերջինս ճանապարհորդում էր Եվրոպայում: Եսթերն ընդամենը մեկ շաբաթ առաջ էր ամուսնացել երիտասարդ իրավաբան Վարդան Մկրտչյանի հետ: Երբ հորն ու ամուսնուն թուրքերը տարան, Եսթերը համարյա թե խելքը թոցրեց:

Երբ այդ 14 աղջիկները իսլամի երդում տվեցին, ասկյարները նրանց որբերի հետ տարան այն մեծ տունը, որտեղ ապրում էր Եսթերի ընտանիքը: Դա ամենամեծ տունն էր քաղաքում:

Հենց որ երեխաները և կրոնափոխ եղած աղջիկները տուն մտան, Եսթերը նրանց համար ճաշ պատրաստեց տանը մնացած սննդամթերքով: Մինչ երեխաները ճաշում էին, աղջիկներին կանչեցին և հավաքեցին տան մեկ այլ մասում, որտեղ նրանց սպասում էր մի ծեր մուսուլմանուհի՝ ձեռքին չադրաներ: Այս կինը աղջիկներին բացատրեց՝ քանի որ նրանք արդեն մուսուլման են, անպայման պետք է չադրա հագնեն և թույլ չտան, որ տղամարդիկ տեսնեն իրենց երեսը:

Երիտասարդ աղջիկներին հրամայեցին նստած մնալ սենյակում և սպասել նոր հրահանգների: Հանկարծ տան մյուս հարկաբաժնից երեխաների ձայներ լսվեցին: Քիչ անց մանկական ձայները վերածվեցին ճիչերի: Աղջիկները նետվեցին դեպի դուռը, բայց այն փակ էր:

Հանկարծ դուռը բացվեց, և Վեհիբ բեյն իր շտաբի պետի՝ Ֆարիդ բեյի և Խարբերդի ոստիկանության կոմիսար Ալի Ռիզա էֆենդու հետ ներս մտավ: Նրանց հետ էին նաև վայելուչ հագնված այն սպաներ, ովքեր ուղեկցում էին գեներալ Վեհիբին: Աղջիկները չոքեցին սպաների առջև և թախանձագին խնդրեցին ի սեր Ալլահի թույլ տալ երեխաների մոտ գնալ: Սպաները ծիծաղեցին: Այն քույրերը, որ մյուս երեխաների հետ բերել էին նաև իրենց փոքր եղբայրներին, աղաչեցին գեներալ Վեհիբին, որ ասի, թե ինչ է կատարվում փոքրիկների հետ: Վեհիբ բեյը չպատասխանեց, այլ մատնացույց արեց քույրերից բարձրահասակին և դիմեց իր շտաբի պետին.

- Այս մեկին ես կվերցնեմ. ուշադի՛ր հետևեք նրան:

Ֆարիդ բեյը կանչեց մի քանի ասկյարի, և գեղեցկուհի աղջկան տարան երրորդ հարկ, այն սենյակը, որ Վեհիբ բեյն էր զբաղեցրել: Իսկ Ֆարիդն ընտրեց Եսթերին: Զինվորները նրան էլ տարան մեկ այլ սենյակ: Ֆարիդ բեյը հետևեց նրանց, հետո ազատ արձակեց զինվորներին՝ հրամայելով մի պահակ կանգնեցնել իր, մեկն էլ՝ Վեհիբ բեյի դռան մոտ:

Առաջին հարկում Վեհիբ բեյի թիկնազորի զինվորներից ամեն մեկն ընտրեց մի աղջկա: Ընտրելու նախապատվությունը տրվում էր բարձրաստիճան սպաներին: Մնացել էին երեքը, որոնցից մեկը Վեհիբ բեյի ընտրած աղջկա քույրն էր: Նրանք էլ բաժին հասան ասկյարներին և մնացին նույն սենյակում:

Որքան ապրեցին այն երեք քույրերը՝ չեմ կարող ասել: Տասնչորս աղջիկներից միայն Եսթերին էր հաջողվել փրկվել և ողջ մնալ: Նա այս ամենը պատմեց մեզ երեկոյան իրենց տանը: Նախքան տնից փախչելը նա մտել էր այն սենյակը, որտեղ ասկյարներն էին մնացել, և տեսել էր աղջիկների դիակները:

Եսթերն ինքը երկար դիմադրել էր Ֆարիդ բեյին, աղերսել, որ իրեն ձեռք չտա: Բեյը սպառնացել էր սպանել Եսթերին: Եվ երբ աղջիկն ասել էր, թե ինքը կնախընտրեր մեռնել, բեյը բացել էր դուռը, ցույց տվել դռան հետևում կանգնած ասկյարներին և ասել.

- Ուրեմն այսպես. եթե դու հանգիստ չմնաս, ես քեզ սրա՛նց կհանձնեմ...

Ո՛չ ոք չի մեղադրի Եսթերին, նույնիսկ՝ Աստված. նա ընկրկեց՝ տեսնելով գազան ասկյարներին և հանձնվեց Ֆարիդ բեյին ու մնաց նրա հետ:

Սպանները աղջիկների հետ զվարճացան մինչև երեկո: Երբ Ֆարիդ բեյը դուրս եկավ սենյակից, Եսթերը նրան նորից խնդրեց, որ գոնե իրեն ասի, թե որտեղ են երեխաները, որպեսզի գնա նրանց մոտ: Բեյը սկզբում Եսթերին վստահեցրեց, թե որբերը ապահով տեղում են, և որ աղջիկները կարող են վերադառնալ նրանց մոտ ավելի ուշ: Բայց հետո այլևս կեղծելու հավես չուներ.

- Մենք անհավատների երեխաներով զբաղվելու ժամանակ չունենք,- ասաց նա,- մենք նրանց խեղդել ենք գետում:

Ֆարիդ բեյը ճշմարտությունն էր ասել. մենք գտանք ջրախեղդ արված երեխաներից մի քանիսի մարմինները, երբ օրեր հետո անցնում էինք այդ ճանապարհով: Ասկյարները տասական երեխա պարաններով կապել էին իրար, նետել Կարասու գետը՝ Եփրատի վտակներից մեկը, որը Զմշկածագից 10 մղոն հեռու էր: Իսկ մյուսներից հետ մնացող թուլակազմ փոքրիկներին թուրք զինվորները սպանել էին սվիններով կամ հրացանի խզակոթով՝ թողնելով ճամփեզրին:

Գետի երկայնքով մենք տեսանք երեխաների դիակներ, որոնց ջուրն էր ափ հանել:

Հենց Ֆարիդ բեյը հեռացել էր, Եսթերը նկատել էր, որ մյուս սպանները հավաքվում են ներքևի հարկում: Ինչ-որ նախազգացում հուշել

էր նրան անմիջապես փախչելու փորձ անել: Նրա շորերը պատառոտված էին, սակայն Եսթերը նույնիսկ ժամանակ չէր կորցրել մարմինը ծածկելու համար: Մի փոքր, խարխուլ սանդուղքով, որն անտեսվել էր թուրքերի կողմից, նա բարձրացել էր տանիք և թաքնվել այնտեղ:

Իսկ Վեհիբ բեյը և նրա սպաները գնացել էին շտաբ: Ասկյարների ձեռքն ընկան այն աղջիկները, որոնց սպաները թողել հեռացել էին: Եսթերը լսել էր, որ նրանք կռվում են ամենագեղեցիկ աղջկա համար: Աղջիկներին պղծելուց՝ իրենց անասնական կիրքը հագեցնելուց հետո ասկյարները բոլորին սրով սպանել էին:

Եսթերի պատմելով՝ ասկյարներին կարգադրված էր եղել՝ երիտասարդ աղջիկներից և ոչ մեկին կենդանի չթողնել. Վեհիբ բեյի և նրա սպաների գործողությունները վկաներ չպիտի ունենային:

Եսթերը դուրս էր սողացել տանիքից և մութ փողոցներով դանդաղ շարժվել դեպի հրապարակ: Նա գտել էր մայրիկիս և ընկել նրա թևերին:

Երբ լույսը բացվեց, զինվորներից մեկը նկատեց նրան ու ճանաչեց: Զաբթիեները նրան կրկին տարան իրենց հետ:

Կեսօրին ավելի շատ ասկյարներ եկան հրապարակ զաբթիեների և համիդիեների հետ, իսկ սպաները շրջեցին ժողովրդի մեջ՝ հայտնելով, որ մեկ ժամից պետք է շարժվենք: Ասացին, որ մեզ տանելու են Խարբերդ, բայց շուտով հասկացանք, որ մեր ճանապարհն ուղղված է դեպի Արաբկիր:

Մոտենում էր մեր հայրենի քաղաքում մնալու վերջին ժամը, քաղաք, որ դարերով եղել էր մեր գերդաստանի նախահայրերի քաղաքը, որի սահմաններից դուրս մեր հարևաններից շատ քչերը ոտք դրած կլինեին: Վերջին ժամն անցավ մայրերի ու երեխաների աղոթքներով: Այլևս չէր լսվում ո՛չ լացի, ո՛չ էլ ողբի ձայն: Առողջ ու դիմացկուն կանայք իրենց շուրջը հավաքեցին ծեր, տկար կանանց և ծծկեր երեխա ունեցող մայրերին: Ֆիզիկապես և ոգով առավել ուժեղ կանայք, բացի իրենց մասին հոգ տանելուց, փորձում էին օգնել նրանց, ովքեր դրա կարիքն ունեին:

Քաղաքից դուրս գալու ժամը հասավ: Մեր դրությունը փոքր-ինչ լավացավ նոր ժամանած թուրք ասկյարների առերես բարի վերա-

բերմունքից: Սկզբում նրանք աշխատում էին այնպես անել, որ մենք հնարավորինս հանգիստ լինեինք: Նրանց առաջարկով ծեր տատիկներից շատերին, որոնց դուստրերն ունեին մեկից ավելի երեխաներ, տեղավորեցին եզներով լծված սայլերում՝ ամեն մեկի գիրկը տալով մոր կրծքից պոկած նորածին թոռնիկին: Ասկյարներն ասացին, որ այս միջոցը կազատի երիտասարդ մայրերին մի քանի երեխա խնամելու հոգսից և թույլ կտա ծեր կանանց իրենց մենակ չզգալ, և ասկյարներն էլ, իբր, ուշադրություն կդարձնեն, որ բոլորը հանգիստ լինեն:

Երբ քաղաքից երեք ժամվա ճանապարհ էինք հեռացել, սայլերը հետ մնացին: Այն ասկյարները, որ ծեր կանանց հետ էին շարժվելու, շուտով միացան մեզ՝ առջևից գնացող քարավանին: Երբ հարցրինք, թե որտեղ մնացին տատիկներն ու երեխաները, ասկյարները լկտիաբար պատասխանեցին.

- Հոգս էին դարձել մեզ համար, ազատվեցինք նրանցից...

Սարսափելի շոգ օր էր, ստվերոտ տեղ չկար, ճանապարհն էլ՝ փոշոտ: Շատ կանայք ու երեխաներ ուժասպառ ընկան ճանապարհին: Ասկյարները ընկածներին ծեծում էին մահակներով, իսկ նրանք, ովքեր չէին կարողանում վեր կենալ ու քայլել մյուսների նման, մեռնում էին մահակների հարվածներից կամ ուղղակի սպանվում էին:

Ինչ էր մեզ սպասում ցանկացած պահի՝ պարզ դարձավ, երբ արդեն չորս ժամ ճանապարհ էինք անցել: Մենք հասանք մի վայր, որտեղ ծառեր և աղբյուր կային: Մեզ հետ քայլող ասկյարներն էլ էին հոգնել, ուստի հրաման տվեցին հանգստանալու և ջուր խմելու:

Մի կին ձեռքով ցույց տվեց հարթավայրի կողմը, որտեղ՝ ճանապարհից քիչ հեռու, նկատեցինք մարդկային ինչ-որ կերպարանք՝ գետնին նստած... Մերոնցից մի քանիսը շտապեցին այդ ուղղությամբ: Հայ կին էր: Կողքին դրված էին վեց տարբեր չափերի՝ մաքուր, սպիտակ կտորից արված պատանքներ, որոնք գետնին շարված էին փոքրից մեծ. պատանքների ներսը թափանցում էր արևի շողերից:

Մենք հարցեր չտվեցինք, քանզի հասկացանք, որ դրանցից յուրաքանչյուրում նրա երեխաներից մեկի մարմինն էր: Մոր դեմքը կիսով չափ ծածկված էր չադրայով, ապացույց, որ նա ուրացել էր իր Աստծուն զավակներին փրկելու հույսով: Ավա՜ղ...

Կինը ո՛չ խոսում էր, ո՛չ շարժվում, միայն նայում էր մեզ՝ անհուն տառապանք աչքերում:

Կանանցից մեկը չոքեց նրա կողքին, դեմքից մեղմորեն բարձրացրեց չադրան: Մենք ճանաչեցինք նրան. Մարգարիտն էր՝ Կամախի հոգևոր հովվի՝ պատվելի Մովսեսի կինը: Փոքրիկ քաղաք է Կամախը՝ Չմշկածագից 30 մղոն դեպի հյուսիս: Պատվելի Մովսեսը մի ժամանակ ուսուցիչ էր եղել Չմշկածագում: Նա ավարտել էր Խարբերդի քոլեջը, իսկ Մարգարիտը՝ Մեզրեի հոգևոր սեմինարիան: Նրանք, ովքեր ծանոթ էին այս ընտանիքին, սիրում ու հարգում էին նրանց: Հաճախ պատվելի Մովսեսն իր կնոջ և ավագ դստեր՝ Շիրինի հետ, որ իմ տարեկիցն էր, գալիս էր Չմշկածագ՝ մեզ այցելության և միաժամանակ եկեղեցում քարոզելու:

Բացի Շիրինից՝ նրանց ընտանիքում կային հինգ փոքրիկ աղջիկներ և մեկ տղա: Հիմա նրանք բոլորն էլ այստեղ էին՝ Մարգարիտի կողքին, պատանքների մեջ (պատանքների կտորը նա նախապես վերցրել էր տնից, երբ իրենց տեղահան էին անում հայրենի քաղաքից):

Երբ մեր սփոփանքի խոսքերը դժբախտ կնոջը ինչ-որ չափով հանեցին անզգայության վիճակից, նա սկսեց իր պատմությունը.

- Մենք հազար հոգի էինք: Թուրքերը մեզ ընդամենը մեկ ժամ տվեցին հավաքվելու և հեռանալու համար: Առաջին գիշերը քրդական ավազակախմբերը հարձակվեցին մեզ վրա. նախ տարան բոլոր տղամարդկանց: Մենք տեսանք, թե ինչպես էին սպանում մեր ամուսիններին՝ մեկ առ մեկ: Հետո նրանք մերկացրին բոլոր կանանց ու երեխաներին, նույնիսկ ամենափոքրերին՝ փող գտնելու հույսով: Նրանք առանձնացնում էին բոլոր սիրուն աղջիկներին և պղծում մեր աչքի առջև:

Ես թախանձելով խնդրեցի մեր պահակախմբի հրամանատարին պաշտպանել Շիրինին. նա մեր բարեկամն էր եղել Կամախում: Պահակախմբի պետը խոստացավ փրկել մեզ, եթե կրոնափոխ լինեի: Ի սեր Շիրինի՝ ես կատարեցի նրա պահանջը: Նա ստիպեց ելուզակներին, որ նրանք թույլատրեն մեզ հագնվել: Շիրինն ու ես քողով ծածկեցինք մեր դեմքերը:

Հրամանատարը կարգադրեց ասկյարներին ուղեկցել մեզ Խարբերդ և հանձնել կառավարչին: Երբ հեռացանք խմբից, քրդերն ու զինվորները, որ արդեն հոգնել էին աղջիկներ բռնաբարելուց, սկսեցին սպանել նրանց, ինչպես մյուսներին: Երբ մենք հասանք այստեղ, ասկյարներն սպանեցին իմ փոքրիկներին՝ նրանց գլուխներն իրար խփելով: Նրանք բռնաբարեցին Շիրինին, հետո կտրեցին նրա կրծքերը: Նա տանջամահ լինելով հոգին ավանդեց իմ աչքի առջև, իսկ ինձ կենդանի թողեցին՝ ասելով. «Դու կրոնափոխ ես եղել, դու մուսուլման ես»:

Մենք փորձեցինք Մարգարիտին մեզ հետ տանել, բայց նա հրաժարվեց:

- Ես պիտի գնամ իմ Տիրոջ մոտ, իմ երեխաների հետ,- ասաց նա,- այստեղ կմնամ, մինչև Աստված հոգիս առնի:

Մենք նրան թողեցինք իր զավակների անշնչացած մարմինների հետ:

Ուշ գիշեր էր, աստղերը, ինչպես միշտ, փայլում էին, երբ մենք հասանք Կարասուի ափերին: Զինվորները մեզ ասացին, որ կարող ենք գիշերել այդտեղ: Հեռվում տեսնում էինք Գվազիմ գյուղի մզկիթի մինարեթի լույսը. այստեղ էր, որ ասկյարները ողջակիզեցին հայրիկիս, Պողոսին և շատ հայերի...

Ողջ ճանապարհին զաբթիեներն սպանում էին այն կանանց ու երեխաներին, ովքեր ի վիճակի չէին խմբի հետ համաքայլ առաջ շարժվելու: Սիրուն աղջիկներին քաշում տանում էին ճանապարհից քիչ հեռու, իսկ երբ աղջիկները հետ էին գալիս, նրանց աչքերում արցունքներ էին երևում, դեմքերին՝ խոր վիշտ ու ամոթ:

Ես ու Լուսինեն ցեխ էինք քսել երեսներիս՝ տգեղ երևալու համար: Մեր հագին թուրք կնոջ վերարկու էր, գլխին՝ չադրա:

Մի պահ թվաց, թե գիշերը մեզ չեն անհանգստացնի, քանի որ մեզ հսկող թուրք պահակներն իրար գլխի էին հավաքվել և մեզնից հեռու էին: Բայց հանկարծ նորից աղջկա ճիչ լսվեց... Դա ահազանգ էր, որ պետք է արթուն ու զգոն լինենք:

ԳԼՈՒԽ Դ
ՔԵՄԱԼ ԷՖԵՆԴՈՒ ԱՆՈՂՈՔ ԺՊԻՏԸ

Գիշերը շրջակա քաղաքների թուրք բնակիչները թափվեցին մեր գաղթական՝ մեզնից արժեքավոր իրեր գնելու: Հայ կանանցից շատերն իրենց հետ վերցրել էին թանկարժեք ժանյակներ, ակնեղեն, ոմանք՝ արծաթյա իրեր ու գորգեր: Գաղթականների մի մասը սայլերով էր՝ ձիերին կամ էշերին լծած: Ասկյարները կանանց խորհուրդ էին տալիս հնարավորինս շատ ապրանք վերցնել իրենց հետ: Մենք հետո հասկացանք, թե ինչու... Ասկյարները հարուստ ավար էին ուզում ձեռք գցել:

Թուրքերն այդ գիշեր, շրջելով գաղթականում, սակարկում էին ոչ միայն իրերի, այլև դեռատի աղջիկների և մանկամարդ կանանց համար: Նրանցից մեկը ստիպում էր մայրիկին, որ իրեն հանձնի Լուսինեին: Մայրս մերժեց, իսկ նա ասաց.

- Ավելի լավ է ինձ տաս. ես բարի կլինեմ նրա նկատմամբ, իսկ նա կաշխատի իմ աղախինների հետ: Միևնույն է, ասկյարներն աղջկաղ կա՛մ կվաճառեն, կա՛մ էլ կգողանան, եթե չսպանեն: Ձեզանից ոչ ոք երկար չի ապրելու...

Այդ գիշեր թուրքերը շատ երեխաների գողացան: Ինը տարեկան աղջնակին հենց մեր աչքի առջև ճանկեցին տարան՝ ուշադրություն

չդարձնելով նրա ճիչերին: Երբ երեխայի հարազատները բողոքեցին, պատասխանը եղավ. «Ուրախ պիտի լինեք, որ ձեր աղջիկը փրկվեց սիրիական անապատից՝ ձեր վերջին հանգրվանից»:

Լույսը բացվեց: Մենք երջանիկ էինք, որ սարսափներով լի այդ գիշերն անցավ: Բայց մեկ էլ ավազախառն փոշու միջով Աղջադաղի քրդերը թափվեցին մեզ վրա: Ասկյարները հավանաբար գիտեին այդ մասին, քանի որ ամենևին չզարմացան. նրանք մեր քարավանից բավական հեռու էին՝ իրար գլխի հավաքված: Ամենայն հավանականությամբ, դա համաձայնեցված էր Հուսեյն փաշայի հետ դեռ այն ժամանակ, երբ Մուսա բեյն ալցելեց նրան Զմշկածագում՝ նախքան մեզ քաղաքից դուրս բերելը:

Քրդերի ձիերը սրընթաց արշավում էին՝ իրենց սմբակների տակ ճզմելով ահաբեկված կանանց ու երեխաներին: Քուրդ ձիավորները հայերին պատկանող ձիերն ու էշերը հափշտակելուց հետո իջան ձիերից և սկսեցին շրջել ժողովրդի մեջ՝ ընտրելով սիրուն աղջիկներին՝ առևանգելու համար: Ես ու քույրս ամուր կպանք մայրիկին. նա աշխատում էր թաքցնել մեզ: Քրդերից մեկը մոտեցավ մեզ և նկատեց ինձ: Ձեռքը գցեց և պատռեց չադրաս: Տեսնելով երեսիս կեղտն ու ցեխը՝ կոպտորեն մաքրեց ձեռքերով, թափով կանգնեցրեց ինձ, որ ավելի լավ տեսնի դեմքս: Երբ համոզվեց, որ դեռատի աղջիկ եմ, գոռաց: Մի քուրդ արագ շուռ եկավ և մոտեցավ մեզ: Ես նայեցի նրա դեմքին ու ճանաչեցի. Մուսա բեյն էր:

Բեյը ճանկեց ինձ, վայրագորեն պատառոտեց շորերս և մազերս հետ տվեց: Հետո ինչ-որ կարճ ու կտրուկ հրաման արձակեց. այդ ամենն այնքան արագ կատարվեց, որ ես հազիվ հասցրի ճչալ, իսկ բեյն ինձ գցեց իր ձիու գավակին, ինքն էլ թռավ նստեց թամբին, և ակնթարթներ անց նա արդեն քառատրոփ արշավում էր հարթավայրի միջով: Նրա հեծելախումբը հետևում էր մեզ. յուրաքանչյուրի թամբին՝ մի աղջիկ: Ես պայքարում էի ողջ ուժով՝ ազատվելու համար նրա ճանկերից: Ուզում էի ինձ նետել ձիու սմբակների տակ և այդպես ճզմվել, մեռնել, բայց բեյն իր երկաթյա ձեռքերով ինձ ամուր սեղմել էր ձիուն և սլանում էր գետափով դեպի արևմուտք:

Ես ճչում էի՝ մայրիկիս կանչելով, մյուս աղջիկների աղաղակները խառնվում էին իմ ճիչերին: Հեռվից դեռ լսվում էր մերոնց լացն ու ողբը: Ինձ թվաց՝ այդ ողբ-աղաղակի մեջ լսեցի մորս ձայնը: Հետզհետե նրանց ձայները մարեցին: Ես կորցրի գիտակցությունս:

Երբ ուշքի եկա, հասկացա, որ պառկած եմ գետնին առևանգված մյուս աղջիկների հետ: Քրդերն իրենց ձիերից իջել էին: Ոմանք զբաղված էին ճամբար դնելով, ոմանք էլ զվարճանում էին դեռևս ուժասպառ չեղած աղջիկների հետ: Մուսա բեյը չկար:

Իմ շորերը պատառոտված էին, մարմինս տնքում էր ձիու վրա երկար ցնցվելուց: Քրդերի հարձակման ժամանակ անհետացել էին կոշիկներս ու գուլպաներս, ոտաբոբիկ էի: Միաժամանակ հանգիստ պառկած մնացի՝ վախենալով, որ եթե շարժվեմ, ուշադրություն կգրավեմ, և ինձ կտանջեն, ինչպես մյուս աղջիկներին: Շուրջս նայեցի և տեսա ինձ ծանոթ մանկամարդ կանանց: Նրանց մեջ կային երիտասարդ մայրեր, որոնց երեխաները մնացել էին գաղթականությունում:

Գետնին՝ իմ կողքին, պառկած էր մի դեռատի աղջիկ՝ Մարիցան: Նրա մորը սպանել էին զաբթիեները Չմշկածագից դուրս գալուց անմիջապես հետո, առաջին օրվա երկար ու տաժանելի ճանապարհին: Մարիցան լուռ լալիս էր: Ես սողացի դեպի նա:

- Երբ ինձ հափշտակեցին, փոքրիկ Մարգարը գրկիս էր,- հեծկլտաց Մարիցան: - Քրդերը ծծկեր Մարգարին պոկեցին ինձանից և շպրտեցին գետնին: Նա մեռավ: Աչքերիս առջևից չի հեռանում երեսնիվայր ընկած նրա անշնչացած մարմինը:

Ժամեր անց Մուսա բեյը վերադարձավ: Նրան ուղեկցում էր ասկյարների խումբը: Նրանք գալիս էին արևմուտքից՝ Կարասու գետի ափին փռված գյուղերից, որտեղ հարուստ մուսուլմաններ էին ապրում: Երբ նրանք ձիերից իջան, Մուսա բեյը սկսեց մեզ ցուցադրել թուրքերին, որոնցից մի քանիսը, ըստ երևույթին, ունևոր գյուղացիներ էին: Նրանց մեջ կային նաև հարուստ բեյեր և աղաներ (ազդեցիկ քաղաքացիներ): Մուսա բեյը մեզ հրամայեց կանգնել: Ովքեր անմիջապես չէին հնազանդվում, նրա մտրակի հարվածներին էին արժանանում:

Երբ ես կանգնեցի, նա բռնեց ուսերիցս ու շպրտեց գետնին: «Դու հանգիստ պառկիր»,- ասաց նա: Այդպես վարվեց նաև երկու թե երեք աղջկա հետ:

Թուրքերը Մուսա բեյի ցուցադրած աղջիկներին կոպտորեն տնտղելուց հետո սկսեցին ընտրել: Ունևոր գյուղացու նմանվող թուրքերն ընտրում էին ֆիզիկապես ավելի ուժեղ հասուն կանանց, մյուսները՝ ամենասիրուններին, և իրար հետ վիճում էին լավագույնի համար:

Գյուղացի թուրքերը աղջիկներին տանում էին՝ դաշտերում որպես ստրուկ աշխատեցնելու համար, մյուսները՝ այլ նպատակների, հատկապես՝ իրենց հարեմների կամ տնային աշխատանքների համար, մի քանիսն էլ՝ Զմյուռնիայի ու Կոստանդնուպոլսի ստրկաշուկաներում որպես հարճ վաճառելու համար: Մուսա բեյը 10 մեջիթիե (մոտավորապես 8 դոլար) էր պահանջում յուրաքանչյուրիս համար: Գետնին պառկած՝ դողում էի ու դառնացած մտածում, թե թուրքերը ի՞նչ էժան են գնահատում քրիստոնյայի հոգին:

Իմ կողքին կանգնած Մարիցային մի ծեր թուրք տարավ: Մի ուրիշ թուրք էլ էր Մարիցային ուզում, բայց ծերունին Մուսա բեյին չորս մեջիթիե ավելի տվեց: Երկրորդ թուրքը հեռացավ՝ այլ աղջիկ ընտրելու: Այն թուրքը, որ գնեց Մարիցային, վախենում էր աղջկան իր ձիով տանելուց, ուստի ևս երկու մեջիթիե ավելացրեց, և Մուսա բեյը խոստացավ մի քուրդ ձիավորի հետ աղջկան ճանապարհել թուրքի տուն: Մուսա բեյը հրամայեց, և մի քուրդ թռավ իր ձիու թամբին, Մարիցային էլ նստեցրեց իր առջև, և շարժվեցին թուրքի կողքով: Նա այլևս լաց չէր լինում, ափերով փակել էր աչքերը:

Քիչ անց բոլոր աղջիկներին տարան՝ բացի ինձնից և մի քանիսից, որոնց Մուսա բեյը վաճառքի չէր հանել: Գյուղացիների գնած աղջիկներն զբաղվելու էին գյուղատնտեսական աշխատանքներով. սրանց բախտը բերեց, քանի որ երբեմն թուրք գյուղացին բարի է լինում և սիրալիր: Հարեմների համար գնված աղջիկները ենթարկվելու էին այնպիսի անտանելի տանջանքների և սեռական բռնության, որ գերադասելու էին մահը ապրելուց:

Երբ թուրքերն արդեն հեռացել էին իրենց մարդկային բեռներով, Մուսա բեյն ինչ-որ բան ասաց իր թիկնապահներին, և նրանցից մի

քանիսը մոտեցան մեզ: Մենք կարծում էինք, թե մեզ պահել են Մուսա բեյի համար, ուստի սկսեցինք ճչալ ու աղաչել: Արհամարհելով մեր արցունքները՝ քրդերը մեզ նստեցրին իրենց ձիերի թամբերին, իրենք էլ հեծան ձիերը և Մուսա բեյի առաջնորդությամբ սուրացին դեպի առաջ, բայց թե ուր, չգիտեինք:

Ինձ տանող քրդին աղաչեցի, որ ասի, թե ուր են տանում մեզ: Նա չպատասխանեց: Ուշ երեկոյան՝ երկու ժամ ճանապարհ անցնելուց հետո, հայտնվեցինք մի գյուղի ծայրին: Մտանք քարաշեն մի մեծ տան բակ, որը շրջապատված էր կիսաքանդ քարե պարսպով: Դա շատ հին տուն էր, և նախքան բակում կանգ առնելը ես ճանաչեցի այդ շինությունը. մեր դպրոցական դասագրքում նկարագրված էր այս ամրոցը, որը կառուցվել էր արաբների կողմից, իսկ հարյուր տարի առաջ սուլթանի հովանավորյալ մի հարուստ թուրք վերանորոգել էր այն:

Երբ քրդերը մեզ իջեցնում էին ձիերից, հիշեցի, որ հիմա այդ շենքը պատկանում է երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության ազդեցիկ անդամներից մեկին՝ Քեմալ էֆենդուն:

Այս վատահամբավ թուրքը հայտնի էր ողջ շրջանում քրիստոնյաների և հատկապես հայերի հանդեպ դրսևորած իր դաժանությամբ: Պատմում էին, թե ինչպես էր նա հափշտակում հայ գեղեցկուհիներին, տանում իր հարեմը, և այլևս նրանց մասին ոչ ոք ոչինչ չէր լսում:

Ամրոցի միայն մի մասն էր վերանորոգված բնակության համար: Քրդերը մեզ տարան շենքի այդ մասը: Ես փորձեցի մի բան ասել ինձ առաջնորդող քրդին, բայց նա կոպտորեն ցնցեց ինձ: Մեզ առաջնորդեցին մի փոքրիկ սենյակ, որտեղ թե՛ աղախիններ կային, թե՛ ծառաներ: Սրանք զրուցեցին մեզ հետ և մի լավ տնտղեցին մեզ: Մուսա բեյը նրանց ուղարկեց իրենց տիրոջն ասելու, որ ինքը ժամանել է:

Քիչ անց Քեմալ էֆենդին ներս մտավ: Նա բարձրահասակ, միջին տարիքի մարդ էր: Նրա հայացքն ընկավ ինձ վրա, և իմ մարմնով դող անցավ: Ես ցնցվեցի, երբ հիշեցի այն պատմությունները, որ պատմում էին նրա մասին: Այն դրվագները, որոնց ընթացքում Քեմալ էֆենդին մանրամասն տնտղում ու գնահատում էր մեզ, տանջալից

և անկարագրելի ծանր էին ինձ համար: Էֆենդին գոհ մնաց: Նա զրուցեց Մուսա բեյի հետ, հետո քրդերը դուրս գնացին՝ հետևելով իրենց առաջնորդին: Ես չգիտեմ, թե Մուսա բեյին ինչքան վճարեց Քեմալ էֆենդին:

Շուտով թուրք կանայք եկան մեր սենյակ և աշխատեցին մեր սիրտն առնել, մեզ հանգստացնել: Նրանցից մեկը գրկեց ինձ և ասաց, որ լաց չլինեմ և ինձ բախտավոր զգամ, որ ընկել եմ այնպիսի բարի մարդու մոտ, ինչպիսին Քեմալ էֆենդին է:

- Նա մեղմ և ուշադիր կլինի քո նկատմամբ. եթե դու հնազանդվես և սիրալիր լինես: Նա քեզ հետ էլ այնպես կվարվի, ինչպես իր կնոջ հետ:

Ես չգիտեի՝ ինչ կարգավիճակ ուներ այդ կինը, բայց ինձ այնպես թվաց, թե երիտասարդ ժամանակ էֆենդու հարճը եղած պիտի լիներ:

Մինչ այդ ինքս ինձ համզում էի, թե դեռ վերջնականապես չեմ կորցրել մորս, քույրերիս ու եղբայրներիս, սակայն այն, ինչ այդ կինը մեզ պատմեց Քեմալի մասին, ինձ զրկեց մերոնց վերստին տեսնելու որևէ հույսից: Ես ասացի, որ ինքնասպանություն կգործեմ, եթե չկարողանամ վերադառնալ հարազատներիս մոտ:

Ուշ երեկոյան Քեմալ էֆենդին կանչեց մեզ: Նա ընթրել էր և բարի էր թվում: Աղջիկներից մեկը, որ վերջերս էր հարսնացել, իրեն նետեց հատակին՝ Քեմալի ոտքերի առջև՝ արցունքն աչքերին աղերսելով ազատ արձակել մեզ: Քեմալ էֆենդու դեմքից իսկույն չքվեց բարի արտահայտությունը: Նա ներս կանչեց ծառաներից մեկին և ասաց, որ աղջկան հեռացնի:

- Բանտարկե՛ք սրան, մինչև կհասկանա, թե երբ է լացի ու ծիծաղի ժամանակը,- հրամայեց նա:

Ծառան հեծկլտացող աղջկան դուրս տարավ:

Հետո Քեմալը հարցուփորձ արեց մեր ընտանիքներից, ցանկացավ իմանալ մեր տարիքը, իսկ վերջում՝ թե մենք արդյոք պատրա՞ստ ենք ուրանալու մեր հավատքը և իսլամ ընդունելու: Աղջիկներից մեկը, ում անունը չգիտեի, բայց հաճախ էի տեսել նրան Զմշկածագի կիրակնօրյա դպրոցում, քաջություն չունեցավ

ընդդիմանալու. քրդերը բարբարոսաբար էին վարվել նրա հետ: Նա ողբում էր ու կրկնում.

- Այո՛, այո՛, Աստված մեզ մոռացել է, լքել է մեզ: Ես հավատարիմ կլինեմ Մուհամեդին, խնդրում եմ, է՛լ ինձ մի ծեծեք:

Քեմալը ժպտաց և ձեռքը դնելով աղջկա գլխին՝ ասաց.

- Խելոք ես, քեզ այլևս չեն պատժի, եթե այդպես շարունակես:

Երկրորդ աղջիկը չուրացավ իր կրոնը՝ քաջաբար ասելով.

- Դուք կարող եք սպանել ինձ, եթե ուզում եք,- ասաց նա,- և ես կգնամ իմ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մոտ:

Հենց աղջիկը վերջացրեց խոսքը, մի ծառա դուրս քաշեց նրան սենյակից: Ես նայեցի Քեմալ էֆենդու դեմքին. նա շարունակում էր ժպտալ այնքա՜ն մեղմ, այնքա՜ն փաղաքուշ, ասես այլ կերպ չէր էլ կարող լինել: Ես զգում էի, որ նա անհամեմատ ավելի դաժան է, քան մարդիկ պատմում էին նրա մասին:

Երբ Քեմալը սկսեց ինձ հետ զրուցել, նրա ձայնն ինձ շատ մեղմ թվաց (ես հիմա էլ հիշում եմ, թե ինչ զգացի այդ պահին. ասես մի վայրի գազան լիզում էր դեմքս):

- Իսկ դո՞ւ, աղջի՛կս,- ասաց նա,- խելո՞ք ես, թե ապուշ...

«Աստվա՜ծ իմ, փրկիր ինձ...»,- արդեն որերորդ անգամ մրմնջացի ինքս ինձ, և ինձ թվաց, թե ինչ-որ մեկը շշնջաց ի պատասխան: Ես լսեցի սեփական ձայնս՝ չհասկանալով, թե ինչ եմ ասում.

- Ես կվարվեմ այնպես, ինչպես ցանկանաք...

- Շատ լավ է, դու երջանիկ կլինես,- շարունակեց Քեմալը,- դու Ալլահին ընդունո՞ւմ ես որպես քո Աստված և Մուհամեդին՝ որպես նրա առաքյալը... Ուրեմն ես բարի կլինեմ քո նկատմամբ:

- Ես կանեմ դա, էֆենդի՛, և հնազանդ կլինեմ, եթե միայն փրկեք իմ հարազատներին, իմ ընտանիքը,- ասացի ես:

- Իսկ եթե չփրկե՞մ... - քմծիծաղ տվեց Քեմալը:

- Ուրեմն մահը կնախընտրեմ,- պատասխանեցի ես:

Էֆենդին ակնդետ և երկար նայեց ինձ, հետո պահանջեց, որ պատմեմ իմ ընտանիքի մասին: Ես պատմեցի մայրիկիս, իմ քույր Լուսինեի և մյուս քույր-եղբայրներիս մասին: Նա հրամայեց ինձ մոտենալ իրեն: Քեմալը ձեռքը դրեց ուսիս: Ես ձիգ կանգնեցի և

նայելով ուղիղ նրա աչքերին՝ խոստացա, որ եթե նա բերի մայրիկիս, քույրերիս և եղբայրներիս, ոչ միայն կուրանամ իմ հավատքը, այլև հլու-հնազանդ կծառայեմ նրան ցանկացած հարցում:

Եվ ամեն անգամ, երբ խոստումներ էի տալիս Քեմալին, միաժամանակ մրմնջում էի ինքս ինձ. «Աղաչում եմ, Տեր Աստված, ների՛ր ինձ»: Ինձ համար այլ ելք չկար (ես, իհարկե, վախենում էի՝ իսկ եթե հանկարծ մայրս, եղբայրներս ու քույրերս այլևս ողջ չեն, բոլորին սպանել են...). ի՞նչ էին իմ մարմինն ու հոգին՝ շատ չնչին բաներ հանուն նրանց զոհաբերելու համար:

Քեմալն ինձ մոտավորապես մեկ ժամ իր մոտ պահեց: Ամեն անգամ, երբ փորձում էր ձեռք տալ ինձ, ընկրկում էի, ինչը նրան զվարճացնում էր. ծիծաղում ու ծափահարում էր, իբր շատ զոհ է:

- Եթե Դուք իմ ընտանիքը չփրկեք, ավելի լավ է մեռնեմ, - կրկնում էի ես:

Երբեմն հուսահատվում էի. ինձ թվում էր, թե Քեմալը խաղ է անում ինձ հետ: Արցունքներս հազիվ էի զսպում, բայց չէի ուզում լաց լինել՝ գիտակցելով, որ դա նրան դուր չի գա: Հետո նա կարծես թե վճռեց. բարձրացավ և նայեց ինձ:

- Շա՛տ լավ, համաձայնեցինք: Ես կզբաղվեմ քո ընտանիքի ապահովությամբ. նախընտրում եմ սիրահոժար, քան թե խողկան կին ունենալ: Մենք վաղը կգնանք և կբերենք հարազատներիդ:

Ես երջանիկ կլինեի նույնիսկ իմ զոհողության դեպքում, միայն թե Քեմալը չժպտար այդ բառերն արտասանելիս, չժպտար իր անողոք ու նենգ ժպիտով...

Խնդրեցի, որ միասին գնանք հարազատներիս գտնելու, քանի դեռ ուշ չէ: Նա ասաց՝ ուշ չի լինի, կգնանք արևածագից հետո, և կարիք չկա այլևս հուզվելու, արցունքներ թափելու:

Երբ Քեմալ էֆենդին դուրս եկավ սենյակից, ներս մտավ այն աղախինը, որ եկածս պահին հանգստացնում էր ինձ և ուղեկցեց ինձ կանանց հարկաբաժին, որտեղ Քեմալի հարեմն էր:

Ես զգացի, որ հարեմի կանայք շատ են խղճում ինձ, բայց համարձակություն չունեն արտահայտվելու: Նրանք փորձեցին տրամադրությունս բարձրացնել. շատ հարցեր տվեցին մեր կրոնի մասին

և թե՝ ինչո՞ւ են հայերը նախընտրում մեռնել, քան ընդունել թուրքի կրոնը: Ես ուժ չունեի պատասխանելու նրանց հարցերին, որովհետև միտքս զբաղված էր այլ խնդիրներով՝ արդյոք կլուսանա՞, արդյոք ես ժամանակին կհասնե՞մ մերոնց, և, հատկապես, ի՞նչ է թաքնված Քեմալի առեղծվածային ժպիտի տակ:

Ինձ տեղավորեցին մի փոքրիկ սենյակում՝ հազիվ ամերիկյան խորդանոցի մեծությամբ: Նրանք ինձ ասացին, որ հաջորդ առավոտ իմամ է գալու՝ ընդունելու իմ երդումը: Նրանք չգիտեին, որ էֆենդին խոստացել է փրկել հարազատներիս և բերել ինձ մոտ:

Շատ ժամանակ չէր անցել, ինչ մենակ էի այդ սենյակում, երբ մի երիտասարդ, գեղեցիկ ստրկուհի սուսիկ-փուսիկ դուրս եկավ վարագուրված դռան հետևից և ձեռքերս առավ իր ափերի մեջ: Նա ասաց, որ ինքն ասորի է, որ իր հայրը վաճառել էր իրեն մանուկ հասակում: Զմյուռնիայից նրան ուղարկել էին Քեմալի տուն: Նա էֆենդու սիրելի հարճն էր: Նա ինձ հավատացնում էր, որ եթե կարիք ունենամ ապավինելու մեկին Քեմալի հարճը դառնալուց հետո, կարող եմ վստահել իրեն: Նա առերևույթ մուսուլման էր դարձել, սակայն հոգու խորքում քրիստոնյա էր մնացել: Նա շատ աղոթքներ չգիտեր, քանի որ փոքր էր եղել, երբ հայրն իրեն հարկադրված վաճառել էր Քեմալին: Ասորուհին ցանկանում էր, որ ես նոր աղոթքներ սովորեցնեմ իրեն:

Այն, որ կողքիդ մեկը կա, ում հետ կարող ես զրուցել և գիշերվա երկար ու տանջալից ժամերը մաշել, արդեն մխիթարություն էր: Ես ասացի ասորուհուն, որ խոստացել եմ կրոնափոխ լինել, որպեսզի կարողանամ փրկել մայրիկիս, քույրերիս ու եղբայրներիս, և նաև՝ թե Քեմալն ինչ է ինձ խոստացել: Հիշեցի Քեմալի ժպիտը և խոստովանեցի, թե ինչպես եմ վախենում այդ ժպիտից. թե ինչու՝ չեմ կարողանում բացատրել:

- Երբ Քեմալը ժպտում է, նշանակում է, որ չի ասում այն, ինչ մտածում է,- տխրությամբ ասաց ասորուհին: - Հաճախ, երբ դժգոհ է լինում ինձանից, ժպտում է ու գուրգուրում ինձ, իսկ դրանից անմիջապես հետո ծանր հարվածներ է տեղում մտրակով: Երբ քուրդ Մուսա բեյը քեզ բերեց այստեղ, եկավ էֆենդու մոտ և ասաց, որ մի քանի հայ աղջիկներ է փախցրել և ցանկանում է ամենագեղեցիկներին վաճառել նրան:

Էֆենդին ժպտաց և ասաց. «Լա՛վ վերաբերվիր ամենասիրուններին և բեր դրանց այստեղ»: Ես չեմ հավատում, որ Քեմալն իր խոստումը կատարի:

Վաղ առավոտյան էֆենդին մարդ ուղարկեց իմ հետևից: Քեմալը հարցրեց հարազատներիս մասին: Ես էֆենդուն ասացի, որ հնարավոր չի լինի գտնել նրանց այդքան ժողովրդի մեջ: Նա համաձայնեց, որ ես ուղեկցեմ իրեն: Մենք դուրս եկանք տնից. նա՝ ձիով, ես՝ ոտքով: Ջանում էի ցույց տալ Քեմալին, որ գոհ եմ մեր փոխհամաձայնությունից և ուրախ եմ, որ շահել եմ նրա պաշտպանությունը: Այդուհանդերձ ես հասկանում էի, որ նրա ժպիտի տակ թաքնված է մի դահճային մտադրություն՝ սպանել իմ հարազատներին, հենց կրոնափոխ լինեի: Այդ էր նրա նպատակը:

Քեմալը գիտեր բռնագաղթյալների այն քարավանի երթուղին, որտեղ իմ ընտանիքն էր: Գետի ծանծաղուտով շարժվեցինք դեպի հյուսիս: Քարավանը դեռ չէր հասել: Ստիպված հետ դարձանք՝ նրանց հանդիպելու համար: Երբ մոտեցանք ժայռոտ քարափին, ներքև նայեցի. գետի ջուրը արյունագույն էր դարձել մակերևույթին «ծփացող» դիակներից: Ճչացի, երբ տեսա այդ ամենը և թուլացած ընկա գետնին՝ ձեռքերով փակելով դեմքս: Բայց փակ աչքերով ասես տեսնում էի, թե ինչպես են հայերի մի խմբի տարել գետեզերք և դանակներով ու սրերով սպանել նախքան գետը թափելը, այլապես նրանց դիակները չէին կարող մղոններով գետի ջուրը արյունով ներկել:

Էֆենդին կշտամբեց ինձ.

- Քրիստոնյաները հասկանում են, որ իրենց Աստված չի կարող փրկել իրենց. նրանք արժանի են դրան: Հիմա ինչո՞ւ ես լալիս, փոքրի՛կս. չէ՞ որ դու արդեն որոշել ես մուսուլման դառնալ:

Ես չէի կարողանում նրա աչքերին նայել, բայց, չգիտեմ ինչպես, զգում էի, որ նրա աչքերում փայլում է այն անողոք ժպիտը: Ուժերս հավաքեցի և վճռականորեն պատասխանեցի.

- Ես սովոր չեմ արյուն տեսնելու, էֆենդի՛...

Մենք առաջ շարժվեցինք գետեզերքով՝ փնտրելով հայերի այն խմբին, որը գալու էր հարավից: Գետի ափերն ավելի ու ավելի էին բարձրանում, գետի հունը նեղանում էր, իսկ ջուրը դառնում էր ամբող-

ջովին արյունագույն: Հետո ես իմացա, որ զաբթիեները Երզնկայից 700 տղամարդու և պատանու են բերել գետափ պահակախմբի ուղեկցությամբ, սպանել ու լցրել գետը: Զաբթիեները դաշունահարել էին նրանց մեկ առ մեկ և հետո նետել Եփրատը՝ ա՛յն գետը, որը հիշատակված է Աստվածաշնչում, և որը սկիզբ է առնում Եդեմական այգուց:

Քեմալն իր ձիով դանդաղ բարձրանում էր ուղղաձիգ քարափով, իսկ ես քայլում էի նրա կողքով: Ներքևում գետն ասես կանչում էր ինձ, կանչում դեպի ապահով եզերք: Ես գիտակցում էի, որ Քեմալն ինձ սին հույսերով է սնում՝ խոստանալով պաշտպանել իմ ընտանիքը, հարազատներիս, և որ շուտով նա կձանձրանա կեղծ խաղից, և ես ստիպված կլինեմ զոհաբերել ամեն ինչ՝ բավարարելու նրա բոլոր պահանջները, և այդ ամենը՝ իզուր...

Ես սպասեցի, մինչև մոտեցանք քարափի եզրին: Հետո շատ անսպասելի նետվեցի ջուրը: Իմ հետևից լսեցի Քեմալի հայհոյանքները, երբ արդեն խառնվել էի գետի ջրերին: Երբ գլուխս դուրս հանեցի, տեսա, որ նա, քարափի գլխին ձիով կանգնած, նայում է ինձ:

Ի՜նչ ուրախ էի, որ այլևս չէի տեսնելու նրա ժպիտը...

Լողալ սովորել էի փոքր հասակում և հիմա ինքնամոռաց լողում էի դեպի հանդիպակաց ափը: Ապահով դուրս եկա գետափ: Շուտով ինձ փրկված զգացի: Ըստ երևույթին՝ Քեմալը զենք չուներ, ապա թե ոչ կկրակեր ինձ վրա: Առանց հետ նայելու ես վազեցի դեպի հարթավայր: Մտածում էի՝ տեսնես Քեմալը մարդ կուղարկի՞ ինձ փնտրելու: Ես ինձ թաղեցի ավազի մեջ, այնպես, որ քուրդ ձիավորները կամ զաբթիեները կողքովս անցնելիս չնկատեին ինձ: Այդ վիճակում մնացի այնքան ժամանակ, մինչև նկատեցի գետի մյուս ափով քայլող մեր ժողովրդի երկար քարավանը, որ դուրս էր եկել Չմշկածագից և հիմա մոտենում էր գետի ափին:

Ես այդ վիճակում մնացի մի ամբողջ ցերեկ ու գիշեր: Բռնագաղթյալներն իջան գետի ծանծաղուտ մասը: Նրանք անցան գետը, սակայն միայն հաջորդ առավոտ, օգտվելով սկսված իրարանցումից, ես կարողացա խառնվել նրանց: Մայրս այնքա՜ն ուրախացավ, որ երկար ժամանակ չէր կարողանում խոսել: Հետո պատմեց, որ Քեմալ էֆենդին եկել էր իրենց մոտ, զաբթիեների պետերից պահանջել, որ

գտնեն հարազատներիս և պատժեն իմ փախուստի համար: Մայրիկս կաշառել էր ասկյարներին, իսկ նրանք Քեմալին ասել էին, որ իմ մերձավորներն այդ խմբի մեջ չեն:

Գետի ծանծաղուտն անցնելուց հետո ժողովրդին ժամանակ չտվեցին հանգստանալու, այլ ստիպեցին առաջ շարժվել՝ Արաբկիրի ուղղությամբ: Փոքրիկ եղբայրներս՝ Հովնանն ու Մարտիրոսը, քույրիկներս՝ Արուսյակն ու Սառան, գրեթե ուժասպառ էին եղել: Նրանց ոտքերը ճաքճքել էին և արյունահոսում էին: Մայրիկն ու Լուսինեն երեխաների ոտքերը փաթաթել էին լաթերով: Տեղահանվածների մեջ ծծկեր երեխաներ չկային, որովհետև նախքան ծանծաղուտն անցնելը զաբթիեներն ստիպել էին մայրերին իրենց նորածիններին թողնել ափին, ապա միայն անցնել գետը: Մայրերը երեխաներին կերակրելուց հետո շարել էին գետափին կողք կողքի և անցել գետը: Ասկյարները մայրերին հավատացրել էին, թե մուսուլման կանայք մոտակա գյուղերից կգան կտանեն ու կխնամեն փոքրիկներին:

Անցավ մի քանի ժամ, բայց ոչ ոք չեկավ: Մենք հեռվից տեսնում էինք այդ վայրը, որտեղ մայրերը թողել էին իրենց զավակներին: Խաբված մայրերից մի քանիսը գետը նետվեցին՝ մյուս ափին թողած իրենց երեխաներին հասնելու համար: Նրանց գնդակահարեցին հենց ջրում: Դրանից հետո մեզ թույլ չտվեցին մոտենալ գետին նույնիսկ ջուր խմելու համար:

Այդ օրը՝ երեկոյան, մենք հասանք մի իջևանատուն, որպիսիք շատ կան Փոքր Ասիայի բոլոր ճանապարհներին: Այս իջևանատները դեռ հնուց պահպանվել են որպես քարավանների կանգառատեղի: Մեզ ասացին, որ կարող ենք հանգստանալ այդտեղ մեկ ցերեկ ու մեկ գիշեր: Բայց երբ մոտեցանք շենքին, ասկյարների մի խումբ եկավ և արգելեց մեզ շենքից ներս մտնել, իսկ մեզ հսկող պահակներին ասացին, որ իջևանատունն զբաղեցրել են շապինգարահիսարցի ճանապարհորդները, և որ նրանց պետք է ուղեկցեն Շապին-Գարահիսար՝ Տրապիզոնի նահանգի մեծ քաղաքներից մեկը: Շուտով պարզ դարձավ, թե ովքեր են այդ ճանապարհորդները: Դրանք կրոնափոխ եղած հայեր էին՝ այդտեղից 30 մղոն հարավ գտնվող Քիբան Մադենից: Հավատուրացների այդ խումբը իջևանատուն էր

հասել նույն առավոտ՝ նախորդ օրը կտրել-անցնելով 20 մղոն ճանապարհ:

Մեր քարավանը հսկող զաբթիեները և Քիբան Մադենից եկած ասկյարները շուտով բարեկամացան և խոսք ու զրույցի բռնվեցին: Նրանք արգելեցին մեզ մոտենալ իջևանատանը՝ ի զարմանս մեզ:

Քիչ անց մի բարալիկ, նրբիկ աղջիկ դուրս սողոսկեց իջևանատնից և ասկյարներից աննկատ՝ չորեքթաթ հասավ մեր գաղթականներին: Նա մերկ էր, ոտքերը դանակահարված էին ու կապտած: Մղկտալով պատմեց, որ ինքը նորահարս է, իր երիտասարդ ամուսնու հետ կրոնափոխ է եղել: Քիբան Մադենի մութասարիֆը խոստացել էր, որ իր քաղաքի բոլոր հայերի կյանքը կփրկի, եթե նրանք իսլամ ընդունեն: Ավելի քան չորս հարյուր հայ, հիմնականում՝ երիտասարդ զույգեր, համաձայնել էին: Հետո նրանց ասել էին, որ պետք է գնան Շապին-Գարահիսար: Հենց դուրս էին եկել քաղաքից, թուրք զինվորները խլել էին նրանց մոտ եղած ամեն ինչ: Այնուհետև ասկյարների մեծ մասը վերադարձել էր Քիբան Մադեն, խուժել հայերի տները և կողոպտել նրանց հարստությունը: Իսկ նրանք, ովքեր մնացել էին հավատափոխ եղած հայերի հետ, հինգական մարդ իրար կապելով՝ ստիպել էին նրանց քայլել մինչև վերոհիշյալ վայրը:

- Առաջին գիշերը,- պատմեց նորահարսը,- ճանապարհին բոլոր կանանց ստիպեցին մերկանալ և այդպես քայլել մինչև իջևանատուն: Ահավոր դեպքեր տեղի ունեցան այդ գիշեր. բոլոր կանայք պղծվեցին, իսկ նրանց ամուսինները, որ կապկպված էին, անկարող էին միջամտել իրենց աչքի առջև կատարվող վայրագություններին: Կատաղությունից և անզորությունից նրանք գոռում էին, իսկ թուրք զինվորները տեղնուտեղը սպանում էին նրանց:

Դեռատի նորահարսը եկել էր մեզ մոտ՝ իր մերկ մարմինը ծածկելու համար շոր խնդրելու: Մեր կանանցից շատերը տվեցին իրենց ներքնաշորերից: Նա նորից սողաց դեպի իջևանատուն՝ իր հետ տանելով շորեր նաև մյուս կանանց համար:

Նրանք դեռ չգիտեին, թե ինչ է գալու իրենց գլխին: Այլևս չէին հավատում ասկյարների խոստումներին, թե թույլ կտան իրենց հան-

գիստ ապրել Շապին-Գարահիսարում: Նորահարս կինն ասաց նաև, թե պահակները տրտնջում են, քանի որ ստիպված են քայլել մինչև Շապին-Գարահիսար, ինչ է թե «շուտ տված» քրիստոնյաների են այնտեղ հասցնելու:

Այդ գիշեր մեզնից մեկ տասնյակից ավելի աղջիկ երեխաների՝ 8-10 տարեկան, հափշտակեցին ու տարան իջևանատուն: Մենք այլևս չիմացանք, թե ինչ եղավ նրանց հետ:

Մայրս այդ գիշեր քնեց. նա շատ էր ուժասպառվել: Ես ու Լուսինեն հերթով հետևում էինք մեր քույրերի ու եղբայրների ապահովությանը՝ ծածկելով նրանց հողով ու լաթերով, այնպես, որ ժողովրդի մեջ գաղտագողի շրջող ասկյարները չնկատեն նրանց:

Լուսաբացից առաջ իջևանատան հայերին դուրս բերեցին: Հաջորդ օրը՝ մի քանի ժամ ճանապարհ անցնելուց հետո, մենք ճամփեզրին տեսանք դիակների կույտեր: Դրանք իջևանատան «կրոնափոխ» եղած հայերն էին: Քիչ հետո մենք հասանք մի ջրհորի, որը բերնեբերան լցված էր Շապին-Գարահիսար շարժվող մերկ կանանց դիակներով: Զաբթիեներն սպանել էին ամբողջ խմբին: Դա կատարվել էր միտումնավոր, որպեսզի բռնագաղթյալները չկարողանան օգտվել ջրից:

ԳԼՈՒԽ Ե
ՋԱԲԹԻԵՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

Խումբ-խումբ կանգնած՝ մենք սարսափած նայում էինք ջրհորին, երբ հանկարծ լսեցի կողքիս կնոջ հետևյալ խոսքերը.

- Աստված գժվե՛լ է, մեզ լքել է Աստված...

Ես շուռ եկա և տեսա Չմշկածագի քահանայի կնոջը:

Երբ մեր քաղաքի բոլոր տղամարդկանց կոտորեցին, պատվելիի կինը տանը մենակ մնաց՝ տիֆով անկողնային հիվանդ մոր, կրծքի երեխայի, երեքամյա աղջկա և հինգ տարեկան որդու խնամքի հոգսը ուսերին: Նա թախանձագին խնդրել էր թուրքերին, որ տնից իրենց չհանեն, բայց սրանք մերժել էին: Նրանք ստիպել էին ծեր կնոջը վեր կենալ և միանալ մյուսներին. թշվառ կինը հոգին ավանդեց հենց նույն օրը:

Տեղահանության առաջին օրերին պատվելիի կինն իրեն հպարտ ու քաջ էր պահում: Երկրորդ թե երրորդ օրը նրա տղան մեռավ: Պահակներն ստիպեցին մորը, որ իր նորածին երեխային էլ թողնի գետանցի մոտ: Եվ հիմա նրա փոքրիկ աղջիկը՝ վերջին երեխան էր հիվանդ. մայրը գրկած տանում էր նրան: Երբ անցնում էինք իջևանատան ճանապարհին ընկած դիակների մոտով, պատվելիի կինը հանկարծ ասես խելքը թոցրեց և սկսեց բղավել. «Աստված գժվե՛լ է,

ասում եմ ձեզ, գժվե՛լ է, գժվե՛լ...»: Նա սուր ճիչ արձակեց և խելակորույս սկսեց վազել ժողովրդի միջով. ճչում էր և անհասկանալի բաներ ասում: Մի կին փորձեց կանգնեցնել նրան, վերցնել երեխային գրկից, բայց մայրը կատաղի դիմադրում էր և է՛լ ավելի ամուր սեղմում երեխային իր կրծքին:

Ես լսել էի, որ որոշ հիվանդություններ, ինչպես, ասենք, ժանտախտը, տարածվում են մի հիվանդից մյուսը կայծակնային արագությամբ. այդպես էլ պատվելիի կնոջ խելագարությունը տարածվեց ժողովրդի մեջ: Նրա ճիչն ու ողբը ասես մեկ րոպեում իր մեջ առավ հարյուրավոր կանանց, որոնք, կիսացնոր, անկարող էին հասկանալ, թե ինչու իրենք պետք է տառապեն, ահավոր տանջանքներ կրեն թուրքերի ձեռքից:

Հիմնականում երեխատեր մայրերը խելագարվեցին: Նրանցից մի քանիսն իրենց երեխաներին գցեցին գետնին, ճչալով դուրս եկան շարքից և փախան դեպի անապատ: Ոմանք էլ վայրենացած վազում էին՝ երեխաներին իրենց հետևից քարշ տալով: Նրանց հարազատները ջանում էին սթափեցնել, դուրս բերել խեղճերին այդ վիճակից, բայց անզոր էին:

Կարծում եմ, որ ավելի քան 200 կին խելագարվեց այս հանկարծահաս հոգեկան պոռթկումից, որի սկիզբը դրեց ցնորված երեցկինը:

Մեր քարավանը հսկող զաբթիեները սկզբում չհասկացան, թե ինչ է կատարվում: Նրանք կարծեցին, թե ապստամբություն ենք բարձրացրել, ուստի հարձակվեցին մեզ վրա՝ աջ ու ձախ ճոճելով իրենց սրերն ու հրացանները, նույնիսկ կրակեցին: Մինչ զաբթիեները կհասկանային պատահածի էությունը, կանանցից շատերը զոհվեցին կամ մահացու վերքեր ստացան: Հետո պահակները մի լավ զվարճացան ու կուշտ ծիծաղեցին:

- Տեսե՛ք,- ասում էին ասկյարները,- ահա ձեր Աստված... Նա խելագարվել է...

Մենք ոչինչ չէինք կարող անել, միայն՝ կախել մեր գլուխները և կուլ տալ ծաղրանքի դառնությունը: Որոշ ժամանակ անց կանանցից ոմանք ուշքի եկան (նրանք սկսեցին գիտակցել կատարվածը. շատ խղճալի վիճակում էին), իսկ ցնորվածներին զաբթիեները քշեցին

դեպի անապատ՝ դատապարտելով նրանց սովամահության: Զաբթիեները խելագար մարդկանց չեն սպանում. իսլամն արգելում է:

Թուրքերն ասել էին, թե մեզ տանելու են Արաբկիր, սակայն շուտով մեզ քշեցին մեկ այլ ուղղությամբ, ինչպես հետո պարզվեց՝ դեպի Հասան Չելեբի՝ Արաբկիրից դեպի հարավ գտնվող մի քաղաք: Թուրք զինվորներից և ոչ մեկը մեզ ստույգ որևէ տեղեկություն չէր տալիս:

Զաբթիեները մեզ ստիպում էին քայլել մեկ շարքով՝ պահելով մեկ կամ երկու ընտանիք շարքի առջևում: Մեզ մոտ եղած ջուրը շատ քիչ էր, սակայն զաբթիեները մեզ թույլ չէին տալիս մոտենալ աղբյուրներին կամ գետակներին. ստիպում էին ջուր գնել շրջակա գյուղերից եկող քուրդ գյուղացիներից, որոնք երբեմն մեկ լիրա (5 դոլար) էին պահանջում մի բաժակ ջրի համար: Ջուր գնելու ուղարկում էինք տղաներին, իսկ քրդերը նրանց մի լավ ջարդուխուրդ անելուց հետո էին միայն ջուր տալիս: Ովքեր դրամ ունեին, գնած ջրից բաժին էին հանում չունեցողներին: Երբեմն քրդերը փողերը հավաքելուց հետո բաժակը շուռ էին տալիս՝ մեր աչքի առջև ջուրը թափելով գետնին:

Մեկ շաբաթ քայլելուց հետո մեզ սկսեցին է՛լ ավելի վատ վերաբերվել, քան առաջին օրերին: Երբ ծեր կանայք ու հիվանդները հետ էին մնում, զաբթիեները նրանց մեկը մյուսի հետևից սպանում էին: Նրանք ասում էին, թե հիվանդները գլխացավանք են իրենց համար: Եթե երեխաներն էին հետ մնում կամ դուրս գալիս շարքից՝ հանգստանալու համար, զաբթիեները նրանց բարձրացնում էին սվինների ծայրին, նետում վեր և ապա փորձում սվինով բռնել: Մայրերը տեսնում էին իրենց երեխաների սպանդով զվարճացող զինվորներին, բայց ծպտուն հանել չէին կարողանում. իրավունք չունեին: Մեր փորձից գիտեինք՝ որևէ ընդվզում ինքնասպանություն էր: Նրանք կանգնած պիտի դիտեին, մրմռալով տրորեին իրենց ձեռքերը կամ փակեին աչքերը՝ չտեսնելու համար զավակների տանջալից մահը:

Մեր ընտանիքն այս առումով բախտավոր դուրս եկավ, քանի որ մեր երեխաներից ոչ մեկը չհիվանդացավ: Թեև Հովնանը վեց տարեկան էր, սակայն կարծես հասկանում էր, թե ինչ է կատարվում: Իմ մորաքույրերից կրտսերը՝ Գեղանուշը, մեզ հետ էր քայլում: Զաբթիեներից մեկը նրան քաշեց-տարավ ճանապարհից հեռու: Գեղանուշը դիմադրում

էր, իսկ զաբթիեն նրան անողոքաբար ծեծում էր: Բռնաբարելուց հետո թուրքն իր դանակը խրեց նրա կուրծքը և այդ վիճակով քարշ տվեց մեր կողմը: Գեղանուշը ճչում էր վախից ու ցավից: Ես մինչ այդ երբեք այնքան հուսահատված չէի եղել, որքան այդ ժամանակ, երբ փորձում էի թեթևացնել նրա ցավն ու տանջանքը:

Զարդերի ու տեղահանության լուրը չէր հասել ճանապարհից դուրս գտնվող հայկական գյուղերին: Անցնում էինք մի այդպիսի գյուղի մոտով, որտեղ կանայք հենց այդ պահին լվացք էին անում տաշտերի մեջ՝ լվացքի համար նախատեսված վայրում: Նրանք կիսահագնված էին. դա սովորական բան էր թուրքական գյուղի համար: Մեզ հսկող զինվորները շրջապատեցին լվացք անող կանանց և նրանց էլ քշեցին մեր քարավանի հետ, իբր մերոնցից են: Հետո պահակներն ու ասկյարները հավաքեցին այդ գյուղի տղամարդկանց, ովքեր դեռևս տեղյակ չէին այդ ամենին և չէին հասկանում, թե ինչու են թուրքերը վիրավորում և նվաստացնում իրենց: Մենք բացատրեցինք եղելությունը:

Մինչ հանգստանում էինք ճամփեզրին, ասկյարները գյուղի բոլոր տները կողոպտելուց հետո դրանք կրակի տվեցին:

Հիմա մենք գտնվում էինք երկրի մի հատվածում, որտեղ շատ էին թուրքական ու քրդական բնակավայրերը: Երեկոները մի մեծ շրջան էինք կազմում՝ երիտասարդ աղջիկներին տեղավորելով շրջանի ներսում՝ նրանց զաբթիեների աչքից հնարավորինս հեռու պահելու համար, սակայն ամեն օր թուրք բարբարոսները մանկամարդ կանանց բռնությամբ տանում էին մոտակա գյուղում ապրող թուրքերին վաճառելու, իսկ մութն ընկնելուն պես ընտրում էին ամենագրավիչ կանանց և բռնաբարում:

Վերոնշյալ հայկական գյուղի վրա անակնկալ հարձակման հաջորդ գիշերը, երբ հազիվ էինք հավաքվել իրար գլխի, ժանդարմների մեծը հրամայեց, որ նույն գյուղի տղամարդիկ ներկայանան մեզնից քիչ հեռու տեղակայված վրանը. իբր ուզում է նրանց հետ ծանոթանալ: Մենք հույս ունեինք, որ այս տղամարդիկ կմնան մեզ հետ: Նրանք 72 հոգի էին, և միայն նրանց ներկայությունը մեզ ուժ էր տալիս. ինչ-որ չափով ապահով էինք զգում մեզ: Բայց կանխազգում էինք՝ վատ բան է խոստանում այդ «ծանոթությունը»: Տղամարդիկ իրենք էլ էին հասկանում,

ինչպես նաև՝ նրանց կանայք: Ամեն մեկը հրաժեշտ տվեց իր կնոջն ու զավակներին, մորն ու մյուս հարազատներին:

Լուսնի լույսի տակ թուրք սպայի վրանը նման էր մի սպիտակ կետի: Վրանի շուրջը վխտում էին ժանդարմներն ու զաբթիեները: Կանայք կախ էին ընկնում իրենց տղամարդկանց վզից, ինչքան որ համարձակվում էին: Տղամարդիկ փոքր խմբերով հեռանում էին, իսկ պահակները կանանց արգելում էին հետևել իրենց ամուսիններին կամ հարազատներին: Մենք նայում էինք նրանց հետևից՝ հույսներս հրաշքի վրա դրած:

Շուտով սարսափելի իրարանցում սկսվեց: Մեզ էին հասնում ճիչ-աղաղակների արձագանքները: Մարդկային ստվերներ էին վազում անապատի կողմը. մի մասը հալածում էր մյուսին: Միայն հալածողները վերադարձան: Հետո ամեն ինչ խաղաղվեց: Բոլոր տղամարդկանց սպանեցին...

Առաջին անգամ էր, որ թուրք սպաները վրան էին խփում: Մենք զարմացել էինք, քանի որ իրենց գիշերային կերուխումներից և սանձարձակ սեռական հաճույքներից հետո նրանք սովորաբար քնում էին բաց երկնքի տակ: Այդ օրվանից սկսած՝ մենք ահաբեկվում էինք, երբ թուրք զինվորները վրան էին խփում գիշերելու համար:

Տղամարդկանց կոտորածից հետո ջարդարարները մեզ հսկող պահակների հետ եկան մեր ճամբար, շրջեցին և ընտրեցին ունևոր խավին պատկանող կանանց՝ հրամայելով նրանց իրենց վրանը գնալ: Թուրք զինվորներն ասացին, որ սպան ցանկանում է խոսել նրանց հետ: Զաբթիեները տարան մորս և մեր բարեկամ ու հարևան կանանց, մոտավորապես՝ 200 հոգու: Նրանց հետ էր նաև մորաքույր Մարիամը, ում ամուսինը հարուստ դրամատեր էր:

Հենց կանայք հասան վրանին, սպան ասաց, որ իրենց մոտ եղած գումարը հանձնեն իրեն՝ «քրդերից ապահով լինելու համար»: Կանայք գիտակցում էին, որ իրենց դրամն այլևս չի վերադարձվի, իսկ առանց դրա նրանք շատ նեղություններ կքաշեին: Ոստի հրաժարվեցին՝ ասելով, որ փող չունեն: Այդ լսելով զաբթիեները հարձակվեցին կանանց վրա. պատառոտեցին նրանց շորերն ու սկսեցին փող փնտրել մարմնի բոլոր մասերում:

Կանանցից մեկին՝ մեծահարուստ Կարապետ Թուֆենկյանի քրոջը, ով տեղահանությունից առաջ Սվազից հյուր էր եկել մեր գյուղաքաղաք Չմշկածագ, անողոքաբար այնքան ծեծեցին, որ ստիպված խոստովանեց, որ պահած փող ունի: Նա աղաչում էր ասկյարներին դադարեցնել ծեծը: Սրանք հոհոացին, հրճվեցին այդ խոստովանությունից և փողերի տեղն իրենք գտան՝ դանակահարվածներով դաժանաբար ստուգելով բոլոր կասկածելի տեղերը:

Այս եղանակով ասկյարները խուզարկեցին յուրաքանչյուր կնոջ:

Մորաքույր Մարիամը շուտով մայր պիտի դառնար: Երբ ասկյարներն այդ նկատեցին, գցեցին նրան գետնին, սվիններով պատառոտեցին նրա շորերը՝ իրենց տգիտությամբ ենթադրելով, թե մեծ գումար պահած կլինի: Նրանց հուսախաբությունն այնքա՞ն մեծ եղավ, որ մի նոր կատաղությամբ հարձակվեցին մյուս կանանց վրա:

Այս վայրագությանը ենթարկված երկու հարյուր կանանցից մի փոքր խումբ կենդանի մնաց: Երբ նրանք սողացին դեպի ճամբար, դեպի իրենց հարազատների գիրկը, այնքան էին լացել ու ողբացել, որ չէին կարողանում խոսել, նույնիսկ ձայն չունեին բառ ասելու համար: Իմ խեղճ մայրն իր մոտ եղած ողջ գումարը տվել էր, բայց չէր ասել, որ իր ընտանիքի անդամների մոտ էլ փող կա: Նրա մարմնի դանակահարված մասերից արյուն էր հոսում: Երբ հասավ մեզ և տեսավ ինձ ու Լուսինեին, ուշաթափվեց: Մորս վերքերը լվացինք: Օգտագործեցինք մեր խմելու ջրի վերջին մնացորդը, որ աչքի լույսի նման պահում էինք նախորդ օրվանից:

Երբ մեզնից հափշտակած փողերը ասկյարներն ու զաբթիեներն արդեն բաժանել էին իրար մեջ, եկան մեզ մոտ՝ սպաների համար երիտասարդ կանայք ընտրելու: Լուսնի լույսն այնքան պայծառ էր, որ մեզանից ոչ ոք չէր կարողանում թաքցնել դեմքը: Լուսինեն նստած էր երեխաների մոտ՝ աշխատելով հանգստացնել նրանց, իսկ ես խնամում էի մայրիկին: Զաբթիեներից մեկը բռնեց Լուսինեի մազերից, ուժգին քաշեց և կանգնեցրեց:

- Խնայե՛ք ինձ, մայրս մեռնում է, խնայե՛ք,- բղավում էր Լուսինեն: Բայց զաբթիեն անողոք էր: Նա քարշ տվեց Լուսինեին: Ես չէի կարող զսպել ինձ. խելագարի պես վազեցի դեպի քույրս, կախ ընկա

նրանից՝ աղաչելով զաբթիեին, որ բաց թողնի քրոջս: Լուսինեն էլ էր դիմադրում: Զաբթիեն կատաղեց: Զազրելի հայհոյանքով դուրս քաշեց դանակը և խրեց Լուսինեի սիրտը, ապա արյունոտ դանակն այնպես շպրտեց, որ, քերծելով այտս, ընկավ քիչ հեռու: Դանակի սպին մինչ օրս այտիս է: Լուսինեն մահացավ իմ թևերի վրա, իսկ զաբթիեի ուշադրությունը գրավեց մի ուրիշ աղջիկ:

Մղկտացող մայրս իր ցավերից ու տառապանքից բոլորովին ուժասպառ էր եղել: Նա չտեսավ ու չիմացավ, թե ինչ կատարվեց: Իմ փոքր եղբայր Հովնանը և քույրս՝ Արուսյակը, այդ ամենը տեսան ու վազեցին դեպի ինձ. ես շվարած կանգնած էի՝ Լուսինեի անշնչացած մարմինը թևերիս: Լուսինեի մարմինը դրեցի գետնին ու սպասեցի: Մտածում էի՝ ինչպե՞ս եմ ասելու մայրիկիս:

Կանանցից մեկը ինքն էր ստանձնել մորս խնամքը: Ես փոքրիկներին հեռացրի և մի կնոջ խնդրեցի, որ հետևի երեխաներին, իսկ ես վերադարձա քրոջս դիակի մոտ: Ամեն ինչ անհավատալի էր թվում: Մատներիս վրա սկսեցի հաշվել մեր տան անդամներին՝ հայրս, մայրս, Պողոսը, Լուսինեն, Արուսյակը, Սառան, Մարտիրոսը, Հովնանը և իմ երկու մորաքույրերը: Հետո հաշվեցի՝ հայրս, Պողոսը, մորաքույր Մարիամը... և հիմա էլ՝ Լուսինեն, չկան, սպանված են:

Ես երկար ժամանակ ողբում էի Լուսինեի համար, հետո հասկացա, որ ինչ-որ բան պիտի անեմ: Վախենում էի, որ հանկարծակի ստացած հոգեկան հարվածը սպաներ մորս, ուստի ժամանակ էր պետք, որ նրան նախապատրաստեի այդ ցնցմանը: Մի քանի կնոջ օգնությամբ Լուսինեի մարմինը տարանք գաղթականյանից հեռու և թաղեցինք մեր ձեռքով փորած գերեզմանի մեջ, որ գերեզման էլ չէր, այլ ավազի մեջ արված մի ինչ-որ փոս: Ես փայտի կտորտանքներից մի քանի խաչ պատրաստեցի և դրեցի նրա ձեռքերի մեջ:

Առավոտյան մայրս մեծ ճիգով, մի կերպ կարողացավ ոտքի կանգնել ու քայլել: Մի քանի ֆիզիկապես ուժեղ երիտասարդ կանայք, առանց մեր խնդրելու, օգնեցին մայրիկին: Նրանք պատրաստ էին մորս օգնելու, եթե նույնիսկ մայրիկս չկարողանար քայլել: Մայրս պնդում էր, որ թույլ տանք իրեն ինքնուրույն քայլել՝ որոշ ժամանակ հենվելով իմ ուսերին:

Հենց սկսեցինք պատրաստվել օրվա տաժանակիր երթին, մայրիկը հարցրեց Լուսինեի մասին: Ես փորձեցի նրան հավատացնել, որ Լուսինեն վերջին շարքերում է և օգնում է մի հիվանդ կնոջ, բայց մայրս նայեց աչքերիս ու հասկացավ, որ ճիշտ չեմ ասում:

- Մի՛ վախեցիր, իմ փոքրիկ Արշալույս,- քնքշորեն ասաց մայրս,- մի՛ վախեցիր, ասա՛, ի՞նչ է պատահել... գողացե՞լ են, հափշտակե՞լ...

- Նրանք փորձեցին քաշել-տանել Լուսինեին, - ասացի ես,- բայց...

Ես լռեցի: Մայրիկը շարունակեց.

- Մահացա՞վ, սպանեցի՞ն... Եթե սպանել են, ավելի լավ, իմ Արշալույս...

Հետո արդեն համարձակվեցի և արագ-արագ պատմեցի, որ նրան սպանեցին, և որ նրա վերջին խոսքերը եղան. «Աստված ինձ փրկեց...»:

Օրվա ընթացքում մենք տեսանք այն զաբթիեին, որ սպանել էր Լուսինեին, նույնիսկ փոքրիկ Արուսյակը ճանաչեց նրան:

- Ահա այն մարդը, որ սպանեց իմ քրոջը,– գոչեց քույրս: Մայրս ձեռքի ափով փակեց իր աչքերը, որպեսզի չտեսնի դահճին:

Բոլորս ահ ու սարսափի մեջ էինք. չգիտեինք, թե ինչ է լինելու մեզ հետ Հասան Չելեբիում: Երիտասարդ կանանցից մի քանիսը, որոնց գիշերը տարել էին սպաների վրանը, մեզ ասացին, որ գիշերային սանձարձակ խրախճանքի ժամանակ սպաները նրանց ասել էին, թե Սվազից բարձրաստիճան բեյեր են գալու Հասան Չելեբի՝ հանդիպելու մեզ, և ինչ-որ բան է կատարվելու մեզ հետ: Մենք ահաբեկված էինք. զգում էինք՝ աղջիկներին հափշտակելու են:

Երբ քաղաքի համայնապատկերն ուրվագծվեց հեռվում, երիտասարդ կանայք սարսափից սկսեցին դողալ: Նրանցից շատերն ընկան ճանապարհին տանջանքից և ուժասպառությունից՝ չկարողանալով այլևս քայլել: Ասկյարները մտրակներով ստիպում էին նրանց վեր կենալ և շարունակել ճանապարհը: Այդ վիճակում մեզ հասցրին քաղաքի կենտրոն: Հարյուրավոր կանայք մերկ էին, հատկապես՝ նրանք, որոնց ասկյարները մերկացրել, ծեծել էին փողի համար: Զաբթիեներն արգելում էին մերկ կանանց ինչ-որ բանով իրենց մերկությունը ծածկել: Նրանք առանձնահատուկ հաճույք էին զգում և

միաժամանակ հետևում էին, որ կանայք չփորձեն իրենց մերկությունը ծածկելու համար մի շորի կտոր գտնել: Մերկ ու բոբիկ այս կանանց ստիպեցին քայլել Հասան Չելեբիի փողոցներով՝ ամոթից գլուխները կախ, մինչդեռ պատուհաններից կախված մուսուլմանները և փողոցներում հավաքված թուրք խուժանը ծաղր ու ծանակի էր ենթարկում մեզ:

Սվազից ժամանած թուրք պաշտոնյաները եկան քաղաքի հրապարակ՝ մեզ տնտղելու: Դրանց մեջ էին իրենց դաժանությամբ հայտնի Մուամեր փաշան՝ Սվազի կառավարիչը, Մուհիր էֆենդին՝ կառավարչի թիկնապահը, և նրա գլխավոր դահիճը՝ չերքեզ Քոռ Քյազիմը, նա, որ ղեկավարել էր 6000 հայերի կոտորածը Սվազի մոտերքում գտնվող Չամլիբել կիրճում: Նրանցից բացի մի կապիտան էլ կար և մի բժիշկ կամ դատավոր: Այս պաշտոնյաներից երկուսը՝ Մուամեր փաշան և նրա դահիճը, հայտնի էին Հայաստանում հայ քրիստոնյաների հանդեպ դրսևորած իրենց առանձնակի դաժանությամբ:

Թուրք պաշտոնյաները շրջապատված էին ասկյարների խիտ օղակով, որպեսզի ոչ ոք չկարողանար մոտենալ իրենց: Մեր շարքերում շրջելուց հետո մյուդիրը՝ շրջանի ղեկավարը, և ոստիկանապետը հավաքեցին 8 տարեկանից բարձր բոլոր տղա երեխաներին և տարան: Ոստիկանապետն ասաց, որ քաղաքագլուխը հատուկ վանք է հատկացրել դպրոցի համար. տղաները այնտեղ կմնան, մինչև նրանց մայրերը կգտնվեն, հետո միայն հնարավոր կլինի զավակներին հանձնել մայրերին: Իհարկե, մենք հասկանում էինք՝ դա կեղծ պատճառաբանություն է:

Ես շատ էի անհանգստանում եղբորս՝ Մարտիրոսի համար. նա շատ փոքր էր, նրան չտարան: Մոտավորապես 8-ից 15 տարեկան 500 տղա հավաքեցին: Սրանց նախ ուղեկցեցին քաղաքագլխի պալատ, հետո ասկյարները, բոլորին շարք կանգնեցնելով, տարան... թե ուր՝ ոչ ոք չիմացավ: Ամենափոքրերը լաց էին լինում, ճչում, կանչում իրենց մայրիկներին: Երկար ժամանակ մենք լսում էինք նրանց աղեկտուր ձայնը: Երբ հասանք Արաբկիր, մյուս բռնագաղթյալները մեզ ասացին, որ երեխաներին կոտորել են բլուրներից այն կողմ՝

Հասան Չելեբիի սահմաններից դուրս: Ասկյարները երեխաներին կապել էին իրար, յուրաքանչյուր խմբի մեջ՝ 10-15 երեխա, և ապա թրատել: Սվազից եկող բռնագաղթյալները, ովքեր Արաբկիր էին հասել այդ ճանապարհով, տեսել էին սպանված երեխաների մարմինները:

Հասան Չելեբիից դուրս գալուց առաջ չերքեզ դահիճ Քոռ Քյազիմը եկավ մեզ մոտ մի խումբ զաբթիեներով, ջոկեց տասներկու մանկահասակ աղջիկների՝ մեծ մասը 8-12 տարեկան:

Ասկյարներն ասացին, որ դահիճը շուտով գնալու է Կոստանդնուպոլիս և ցանկանում է իր հետ աղջիկ երեխաներ տանել՝ վաճառելու թուրք ազդեցիկ ընտանիքներին: Վերջիններս սովորություն ունեին գնելու գեղեցիկ, մանկահասակ հայուհիների, պահելու նրանց իրենց հարեմներում մինչև չափահաս դառնալը: Աղջիկները մեծանում էին որպես մուսուլման, ապա հանձնվում իրենց տերերի որդիներին կամ ազդեցիկ բարեկամներին:

Երբ երեկոյան դուրս եկանք Հասան Չելեբիից, մեզ միացավ Սվազից եկած՝ 3000 բռնագաղթյալներից բաղկացած մի մեծ խումբ: Նրանց նույնպես քշում էին Արաբկիր: Այս խեղճերին թույլ էին տվել հանգստանալ քաղաքից դուրս՝ սպասելով մեզ: Բռնագաղթյալների մեջ գթության քույրերի 20-հոգանոց մի խումբ կար: Կայմակամի հրամանով այս երանելի քույրերին, որոնց մեջ շատ եվրոպացիներ կային, կես գիշերին գիշերանոցով տնից հանել բերել էին: Երբ թուրք ասկյարները խուժել էին նրանց բնակարանները, աղջիկներին արգելել էին հագնվել:

Սվազից դուրս գալուց հետո նրանց մի կերպ հաջողվել էր հագուստ ձեռք բերել, բայց կոշիկ՝ ոչ: Նրանց ներբանները ճաքել էին, արյունոտվել: Այս քնքուշ ու փխրուն արարածներն իրենց կրթությունն ստացել էին ամերիկյան և եվրոպական դպրոցներում: Նրանց կուսանոցը սուլթանի որոշ զիջումների շնորհիվ ազատված էր տեղահանությունից, բայց տեղական իշխանություններն անտեսել էին դա: Փոխանակ հարգանք ունենալու սուրբ կույսերի հանդեպ՝ պահակները, ճիշտ հակառակը, նրանց հետ վարվել էին կոպիտ և անհարգալից: Նրանք մահ էին խնդրում, բայց նույնիսկ դա էր նրանց

մերժվում: Երկուսը՝ քույր Սառան և Եսթերը, որ եկել էին Ամերիկայից, ինքնասպան եղան: Նրանք ուրիշ զենք չէին ունեցել, բացի սեփական ձեռքերից. սարսափելի տանջանքներով ու չարչարանքներով վերջ էին տվել իրենց կյանքին:

Սվազից բռնագաղթածների մեջ կային նաև տղամարդիկ: Քաղաքի 25000 հայերին հայտարարված էր, որ պետք է տեղահանվեն: Այն խումբը, որ մեզ էր միացել, մեզնից առաջ դուրս բերվեց քաղաքից:

Երբ հասանք Արաբկիր, մեզ թույլ տվեցին հանգստանալ քաղաքի ծայրամասում: Արաբկիրի ու Սվազի միջև ընկած բազմաթիվ գյուղերի հայ բնակչությունն արդեն այստեղ էր: Նրանցից ոմանք դեռևս իրենց որդիների ու ամուսինների հետ էին, ոմանք էլ մեզ պատմում էին, թե ինչպես էին իրենց տղամարդկանց ճանապարհին սպանել աչքների առջև:

Արաբկիրի հայերին նույն ճակատագիրն էր սպասում: Քաղաքի ութ հազարից ավելի բնակչությանը քշել էին այնտեղ, որտեղ մենք էինք: Հինգ օր էր, որ մեզ հետ էին, բայց չգիտեին, թե ինչ վիճակում են իրենց տները:

Սվազից մի հատուկ պաշտոնյա եկավ՝ վերահսկելու Արաբկիրի տեղահանությունը: Նրան ուղեկցում էր զաբթիենների մի խումբ: Զորահրամանատար Խալիլ բեյն իր սպայակույտի հետ նույնպես ներկա էր: Նա գնում էր Կոստանդնուպոլիս՝ մի նոր բանակի հրամանատարությունն ստանձնելու:

Քաղաքի կենտրոնում մի մեծ շենք կար, որտեղ տեղավորված էին հայ առևտրականների խանութները: Երկրորդ հարկն ուներ բազմաթիվ սենյակներ, որտեղ անկացվում էին տարբեր հավաքներ: Այս շենքը քաղաքում վաղուց հայտնի էր որպես «ղասաբխանա»՝ սպանդանոց, որովհետև հենց այստեղ էին հավաքել և մորթել քաղաքի նշանավոր մարդկանց:

Լիազորված բարձրաստիճան պաշտոնյայի ժամանումից հետո ասկյարները Ղասաբխանայում ժողովի կանչեցին բոլոր տղամարդկանց, ինչպես նաև Սվազից եկած բռնագաղթյալներին: Հայ տղամարդիկ վախենում էին գնալ, բայց թուրքերը հավատացնում էին, թե այլևս կտտանքներ չեն լինելու, քանի որ բարձրագույն

իշխանության ներկայացուցիչն այնտեղ է: Երկու հազար տղամարդ գնաց, բայց երբ հասան Ղասաբխանա, բոլորին էլ կոտորեցին: Ասկյարները թաքնվել էին առաջին հարկում: Երբ հայերը բարձրացան երկրորդ հարկ, ասկյարները դռները փակեցին և սկսեցին կոտորածը: Եղան մարդիկ, ովքեր դուրս էին ցատկում պատուհաններից, բայց ներքևում սպասող ասկյարները նրանց դիմավորում էին սվիններով:

Ուշ երեկոյան սպանվածներին դուրս բերեցին: Հաջորդ առավոտյան նրանց դիակները դեռ կիտված էին փողոցում: Այդ նույն օրը բարձրաստիճան զինվորականն իր մոտ կանչեց այն աղջիկներին, ովքեր հաճախում էին Սվազի և Քոչհիսարի քրիստոնեական քոլեջներ ու դպրոցներ: Քոչհիսարը հայաբնակ գյուղ է՝ Սվազից հյուսիս: Հավաքվեցին տասնհինգից քսան տարեկան երկու հարյուր հայ աղջիկներ, բոլորն էլ՝ ունևոր ընտանիքների զավակներ: Ասկյարներն ասացին, որ բարձրաստիճան պաշտոնյան իբր կարգադրել է, որ նրանց ուղարկեն Սև ծովի ափին գտնվող միսիոներական մի դպրոց, և որ նրանք այնտեղ ապահով կլինեն:

Աղջիկներին խմբերով տարան Ղասաբխանա:

Պաշտոնյան նրանց ընդունել էր երկրորդ հարկի սենյակներից մեկում, որի պատերն ու հատակը ներկված էին արյամբ: Թուրք պաշտոնյան նրանցից պահանջեց ուրանալ քրիստոնեական հավատքը և իսլամ ընդունել: Միայն մի քանիսը համաձայնեցին, որոնց անմիջապես հեռացրին. թե ուր՝ ես չգիտեմ: Մյուսներին թողեցին սենյակում պաշտոնյայի և նրա սպաների հետ: Հենց որ սպաները հեռացան շենքից, ասկյարները թափվեցին սենյակ՝ իրենց մեջ բաժանելով աղջիկներին: Մի ամբողջ օր՝ ցերեկ ու գիշեր, ասկյարները մտնում ու դուրս էին գալիս այդ շենքից: Գրեթե բոլոր աղջիկները մեռան: Ողջ մնացածներին տարան այդտեղից զաբթիեների ուղեկցությամբ, քանի որ ասկյարներն էլ արդեն հոգնել էին:

ԲՌՆԱԳԱՂԹՅԱԼ ՆԵՐԻ ԵՐԿԱՐ ՁԳՎՈՂ ՔԱՐԱՎԱՆԸ, ՈՐՆ ԱՐԱԳ ՆՈՍՐԱՆՈՒՄ ԷՐ

Հայերի բռնագաղթը ներկայացնող ազդեցիկ լուսանկարներից մեկը, որտեղ երևում է Մամուրեթ ալ-Ազիզի ընդարձակ հարթավայրերով զարթիների հսկողությամբ անցնող հայերի քարավանը:

ԱՎՐՈՐԱՅԻ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՔԱՐՏԵԶ

Կցրարված սև գիծը ցույց է տալիս այն ճանապարհը, որով դեռապի Ավրորան երկու տարվա ընթացքում քայլելով անցավ 600 կմ:

ՍՊԱՍՈՒՄ ԷԻՆ՝ ԻՐԵՆՔ ԷԼ ՉԻՄԱՆԱԼՈՎ, ԹԵ ԻՆՉԻ

Իշխանությունների հրամանով ծաղկուն քաղաքներից մեկի հայ բնակչությունը հավաքվել է կառավարության շենքի առջև. նրանք սպասում են տեղահանման հրամանին:
Նրանց սպանեցին քաղաքից դուրս գալուց անմիջապես հետո:

ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ՄԻՋՈՎ

Իրենց տները թողած հինավուրց քաղաքի ծերերն ու երիտասարդները՝ անապատի ճանապարհին: Առաջին պլանում կանգնածը թորք զարթիև է՝ բոնագաղթյալներից գողացած գորգերը ուսին:

ԾԱՆՐ ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՃԱՄՓԵԶՐԵՐԸ

Սկզբում մահանում էին երեխաները, հետո՝ նրանց ծնողները, հորեղբայրներն ու հորաքույրները: Սգացող մայրերը փաթաթում էին փոքրիկներին իրենց հետ բերած սավանների մեջ, ապա իրենք էին պառկում նրանց կողքին՝ սովից մեռնելու: Սա սովորական տեսարան էր, որ հանդիպում էր անապատներում և բոնագաղթյալների անցած ավազոտ ճանապարհներին:

Չմշկածագ գյուղի Ագրակ և Շվոր թաղերը (Արևմտյան Հայաստան)

Չմշկածագ գյուղի Չոխուր թաղը (Արևմտյան Հայաստան)

Մարտիկյանների ընտանիքը՝ լուսանկարված 1906 թ. Զմիրկածագում (Արևմտյան Հայաստան)

Ամրոցա Մարդիգանյան (1929 թ.)

Կուրորածի տեսարան «Հոշոտված Հայաստան» ֆիլմի անհետացած հատվածից

Խաչելության տեսարանը «Հոշոտված Հայաստան» ֆիլմից

ԳԼՈՒԽ Զ
ԱՂՋԻԿՆԵՐ՝ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՐԵՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեր քաղաքի բռնագաղթյալներին տեղավորել էին Արաբկիրից դուրս գտնվող մի ճամբարում: Երրորդ օրը քաղաքը շրջապատող բլուրները հանկարծ սպիտակեցին Աղջադաղի քրդերի բազմությունից: Նրանք սպասեցին մինչև մութն ընկնելը և ապա ձիերով արշավեցին մեզ վրա: Հարյուրավոր քրդեր դրամ գտնելու հույսով կանանց խուզարկելուց հետո առանձնացրին երիտասարդ կանանց ու դեռատի աղջիկներին:

Քրդերի մի խումբ մոտեցավ ինձ: Ես աշխատեցի թաքցնել դեմքս, բայց ուշ էր արդեն: Նրանք տասը-տասներկու մանկամարդ կանանց ու աղջիկների հետ ինձ էլ առան իրենց ձիու թամբին և սուրացին հովտի միջով ու լեռների վրայով դեպի անապատ: Այստեղ նրանք մեզ բոլորովին մերկացրին: Իրենց երկար գավազաններով ծեծում էին այն աղջիկներին, ովքեր ճչում էին կամ դիմադրում: Մեզ այնքան ծեծեցին, մինչև մեր մարմինները մեր արյունից կաս-կարմիր դարձան: Սիրտս չափից ավելի լցված էր. մտածում էի վիրավոր, խեղճ մայրիկիս մասին: Այնքան ուժասպառ էի, որ չէի կարողանում լաց

լինել, չէի կարողանում կռվել, դիմադրել, երբ նրանք սկսեցին պահանջել իրենց «սոսկալի տուրքը», մի բան, որ թուրքերն ու քրդերը պահանջում էին իրենց կին գերիներից:

Երբ քրդերը հոգնեցին իրենց բարբարոս պահվածքից, մեզ կապեցին ձիերին. ձեռքներս՝ ձիու մեջքին, իսկ մեր ոտքերը կապած պարանի մի ծայրը՝ ձիու պարանոցին: Նրանք թողեցին մեզ այս վիճակում՝ վստահ լինելով, որ ո՛չ մենք, ո՛չ էլ ձիերը չենք կարող հեռանալ:

(Ամերիկա տեղափոխվելուց հետո հաճախ զարմանում էի, թե այս երկրում (կյանքն այստեղ այնքա՞ն տարբեր է իմ երկրի կյանքից) ամենուրեք ինձ հանդիպող բարի մարդիկ արդյոք կարո՞ղ էին երևակայել, թե ի՞նչ տառապանքներ ու չարչարանքներ կրեցի ես այդ գիշեր, երբ պառկած էի լուսնի լույսի տակ՝ ձեռքերս ամուր իրար կապած, իսկ ոտքերիս օղապարանը անհանգիստ կենդանու վիզը գցած:

Իսկապես, այս երկրում այնքա՞ն քիչ տառապանք կա: Թեև ես արդեն մի քանի ամիս է, ինչ ազատ եմ, այնուամենայնիվ, հավատս չի գալիս, որ կա մի երկիր, որտեղ մարդկանց չեն պատժում Աստծուն հավատալու համար:)

Լուսաբացին քրդերը եկան ձիերն արձակելու: Չեմ կարող չնշել, որ ամենաարյունարբու քրդին անգամ բնորոշ է գերիներին կերակրելը: Քրդերն անխնա կողոպտում էին, կոպիտ էին վարվում իրենց զոհերի հետ, հատկապես՝ քրիստոնյա կանանց, բայց նրանք չէին հափշտակում, չէին գողանում նրանց ուտելիքը: Եթե գերին ուտելու բան չուներ, նրանք նույնիսկ իրենց բաժինը կիսում էին նրանց հետ: Քուրդը նման է անգետ երեխայի, նա նման չէ թուրքին. անապատային այս ավազակներին չարագործությունների մղողը նրանց թուրք տերերն էին:

Երբ քրդերի տված հացը կերանք, ջուրը խմեցինք, մեզ բարձրացրին ձիերի թամբերին, և սլացանք դեպի հյուսիս: Թամբերի վրա ավելի շատ աղջիկ կար, քան քուրդ, այդ պատճառով հաճախ մեզ մի ձիուց մյուսն էին տեղափոխում, որպեսզի ձիերը կրկնակի բեռը հերթով կրեին:

Մենք չգիտեինք, թե մեզ ուր են տանում կամ էլ ինչի համար: Մի

քանի ժամվա ձիավարգից հետո ինձ տեղափոխեցին մեկ այլ քրդի հսկողության տակ: Սա բնավորությամբ բարի էր և սիրալիր զրուցում էր ինձ հետ, պատասխանում հարցերիս: Նա ասաց, որ մի բարձրաստիճան թուրք փաշա է Ակն եկել Կոստանդնուպոլսից և հատուկ հետաքրքրվում է հայ աղջիկներով: Այս փաշան, ասաց քուրդը, նույնիսկ դրամ է տալիս հայ աղջիկների դիմաց, եթե նրանք առողջ են և դուրեկան:

Ակն քաղաքը գտնվում էր Կարասու գետի ափին: Դեպի հյուսիս գտնվող քաղաքներից՝ Երզնկայից, Շապին-Գարահիսարից և Նիկսարից, հազարավոր հայ բռնագաղթյալների էին բերել Ակն: Այստեղ ասկյարները հատուկ ավազակախմբեր էին կենտրոնացրել՝ վերահսկելու քրիստոնյաների ջարդերը:

Բլուրներն ու հովիտները ծածկված էին անհամար դիակներով: Մենք տեսանք երկար խրամատներ, որոնք փորել էին բանտերից հատուկ այդ նպատակի համար ազատված թուրք բանտարկյալները: Շատ տեղերում երևում էին սպանված հայերի կիսաթաղ դիակներ: Բանտարկյալներն այնքան էին շտապել՝ իրենց գործն արագ ավարտելու և բանտից շուտ ազատվելու համար, որ բազմաթիվ դիակների վերջույթները դուրս էին մնացել ավազաթմբից. տեղ-տեղ պարզապես ավազ էին լցրել նրանց վրա:

Ակնում հարուստ հայ ընտանիքներ շատ կային: Այս քաղաքում էր Սամսունից, Տրապիզոնից, Մարզվանից եկող առևտրական քարավանների խաչմերուկը. այստեղ հանգստանալուց հետո նրանք ուղևորվում էին Խարբերդ ու Դիարբեքիր: Երկար տարիներ թուրք և հայ բնակիչները բարիդրացիական փոխհարաբերություններ են ունեցել: Տեղահանության և ջարդերի մասին տրված հրամանի՝ քաղաք հասնելու հաջորդ օրը Ակնի հարուստ հայ կանայք շտապեցին իրենց բարեկամ թուրք աղաների ու բեյերի կանանց մոտ և խնդրեցին միջնորդել իրենց համար: Այդ օրերին Ակնի հիվանդանոցում էր գտնվում մի ամերիկացի միսիոներ, ով աշխատում էր որպես թարգմանիչ ԱՄՆ դեսպանատանը: Նա կայմակամից թույլտվություն ստացավ դիմելու Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպան պարոն Հենրի Մորգենթաուին

քաղաքի քրիստոնյա բնակիչներին օգնելու խնդրանքով: Միաժամանակ հարուստ հայ կանայք իրենց ակնեղենը, տան արծաթեղենը և այլ արժեքավոր իրեր հանձնեցին թուրք պաշտոնյաների կանանց, ինչի դիմաց թուրքերը խոստացան չանհանգստացնել նրանց մինչև Կոստանդնուպոլսից պատասխան ստանալը:

Ամերիկացի դեսպանին Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը և Պատերազմի նախարար Էնվեր փաշան հավաստիացրել էին, որ Ակնի հայ համայնքին տեղահանության վտանգ չի սպառնում: Այդ լուրն ուրախացրեց Ակնի հայ բնակչությանը: Մի քանի օր անց քաղաքի արևմտյան կողմում գտնվող գյուղերից տեղահանված հայ գաղթականները հասան քաղաք: Նրանց տանում էին դեպի հարավ: Այս բռնագաղթյալները երեք օրվա ճանապարհ էին կտրել: Ջաբթիեները դաժանորեն տանջել էին նրանց: Ջինվորները կանանց հետ վարվում էին, ինչպես խաղալիքների: Քաղցից ու ծարավից մեռնում էին մարդիկ:

Ակնի հայերի սիրտը մղկտում էր, ճմլվում՝ տեսնելով տեղահանված ազգակիցների թշվառ վիճակը, բայց վախենում էին նրանց օգնել: Գիշերը տունուտեղից զրկված հայերին հավաքեցին քաղաքի կենտրոնում: Ջաբթիեներն ու ասկյարներն այնքան սանձարձակ էին իրենց պահում գաղթականների հանդեպ, որ դաժան կտտանքների ցավից բարձրացող նրանց ճիչերն ավելի էին մորմոքում քաղաքի բնակչությանը: Առավոտյան քահանան, այլևս չդիմանալով, գնաց կենտրոն՝ հացով, ջրով և աղոթքներով: Քաղաքի կայմակամը հենց այդպիսի մի առիթի էր սպասում: Նա զինվորներին ուղարկեց քահանային իր մոտ բերելու: Հրամայեց բերել նաև քաղաքի քսան երևելի հայ առևտրականների: Երբ քաղաքի հայ մեծամեծները տեղ հասան, ասկյարները հարձակվեցին քահանայի վրա և սկսեցին տանջամահ անել նրան: Ասկյարները քաշում էին նրա մազերը, աքցաններով ջարդում ոտքերի ու ձեռքերի մատները՝ բացականչելով. «Դո՛ւ սրանց խորհուրդ տվեցիր, որ դիմադրեն մեզ, այնպես չէ՞... Դու հացի մեջ թաքցրած զենք տարար նրանց, այնպես չէ՞...»:

Տերհայրը ցավից գոռում էր և հրաժարվում այդ մեղադրանքներից: Հայ առևտրականները, կանգնած սենյակի մի կողմում, դի-

տում էին այդ ահավոր տեսարանը: Խորամանկորեն կայմակամը ասկյարներին կանգնեցրել էր հայերից որոշ հեռավորության վրա: Մինչ հայ քահանայի տանջանքներն ու կտտանքները շարունակվում էին, և նրա ճիչերը հետզհետե փոխվում էին տնքոցների, հայերն այլևս չդիմացան. նետվեցին տանջողների վրա՝ ոչ թե նրանց վրա հարձակվելու, այլ գութ հայցելու այդ սուրբ մարդու համար: Ասկյարները հենց դրան էին սպասում: Հարձակվեցին հայերի վրա և բոլորին կոտորեցին:

Կայմակամը հաղորդեց Կոստանդնուպոլիս, որ այլևս անկարելի է ենթարկվել Ներքին գործերի նախարարության հրամաններին, այսինքն՝ թույլատրել հայերին մնալ Ակնում, քանի որ հայերն ապստամբել են և հարձակվել ասկյարների վրա, և որ ինքը ստիպված է եղել սպանել նրանցից քսանին: Թալեաթ բեյն ուղարկեց իր հայտնի պատասխանը, որ հիմա այրում է յուրաքանչյուր հայի սիրտ, որտեղ էլ նա գտնվելիս լինի: Այդ պատասխանը բոլորն են լսել: Ահա Թալեաթ բեյի հեռագիրը.

«Ինչ էլ քրիստոնյաների հետ անեք, զվարճալի է...»:

Թալեաթի այս պատասխանից հետո կայմակամը հայտարարություն արեց՝ հայերը երկու ժամում պատրաստվեն տեղահանության: Կանայք ասացին նրան. «Ախր մենք մեր ոսկին, թանկարժեք ակնեղենը տվել ենք ձեր կանանց: Նրանք խոստացել են պաշտպանել մեզ: Մենք ոչինչ չենք արել, չենք չարաշահել ձեր վստահությունը: Մեր տղամարդիկ չեն բռնացել, չեն հարձակվել ձեր զինվորների վրա»: Բայց սպաները կարևորություն չտվեցին նրանց թախանձանքին: «Ինչ էլ որ լիներ, մենք տիրանալու էինք ձեր թանկարժեք իրերին և ողջ ունեցվածքին»,- ամբարտավանորեն պատասխանեցին նրանք:

Երկու ժամ անց քաղաքի բոլոր հայերին հավաքեցին: Ասկյարները դարձյալ հարձակվեցին մանկամարդ կանանց վրա: Վերջիններիս տարան մի վանք, որտեղ դաստիարակվել էին հայ աղջիկներից ոմանք:

Հայերն ունեին գրաստներին ու ձիերին լծված սայլեր: Քաղաքապետը հայտարարել էր, որ գաղթականները կարող են ճանապարհ ընկնել իրենց սայլերով:

Ասկյարները կանանց պարաններով հինգ-հինգ իրար կապեցին և վառելափայտի նման նետեցին սայլի մեջ: Էշերին ու ձիերին քշեցին տարան, իսկ տղամարդկանց ստիպեցին քաշել կանանցով բեռնավորված սայլերը: Ասկյարները թույլ չէին տալիս ամուսիններին կամ եղբայրներին ու որդիներին խոսել կանանց հետ՝ հաշվի չառնելով վերջիններիս լացն ու ողբը:

Քաղաքից մեկ ժամ հեռանալուց հետո բոլոր տղամարդկանց սպանեցին, իսկ կանանց արձակեցին և սկսեցին տանջել: Ժամեր անց սպանեցին նաև նրանց:

Կայմակամն իր սպաներին ուղարկել էր վանք, որտեղ բանտարկել էին երիտասարդ կանանց: Սպաներն իրենց հետ բժիշկներ էին տարել՝ զննելու և ջոկելու առողջներին: Թուրքերը պահանջել էին կույս աղջիկներին զատել ամուսնացածներից: Հարսնացուներին ու մանկամարդ կանանց ուղարկելու էին Կոստանդնուպոլիս՝ որպես հարճ վաճառելու, իսկ մյուսներին՝ որպես ծառա: Կույսերին ասել էին, որ նրանք կարող են փրկել իրենց կյանքը, եթե ուրանան իրենց կրոնը և իսլամ ընդունեն: Մի քանիսն այնքան ընկճված էին, որ ընդունեցին առաջարկը: Մի իմամ կրկնեց իսլամական երդումը, և հավատուրացներին ուղարկեցին դեպի անհայտություն՝ դառնալու ինչոր մեկի կինը կամ ավելի վատ բան:

Մի արտակարգ գեղեցիկ կույս՝ հայ համայնքի ազդեցիկ դեմքերից մեկի՝ շրջանի կողմից ընտրված թուրքական խորհրդարանի պատգամավորի դուստրը, գրավեց սպաներից մեկի ուշադրությունը: Նա աղջկան ասաց. «Քո հայրը, մայրը, եղբայրը և երկու քույրերդ սպանված են, չկան նաև քո երկու հորեղբայրներն ու պապդ: Ես ցանկանում եմ քեզ ազատել նրանց կրած տանջանքներից, այն անհայտ ճակատագրից, որ սպասում է բոլոր այս աղջիկներին: Հիմա լսի՛ր ինձ. դարձի՛ր թուրք բարի աղջիկ և կլինես իմ կինը, ոչ թե իմ հարճը ու երջանիկ կապրես իմ տանը»:

Այն պատասխանը, որ տվել է աղջիկը, թուրքերը մինչ օրս հիշում են: Ես այնքան եմ խոսել այդ մասին, որ այդ պատմությունը տարածվել է ու հայտնի դարձել ողջ շրջանում: Հայ աղջիկը հանգիստ նայել է թուրք սպայի աչքերին և պատասխանել. «Հայրս չի մեռել,

մայրս չի մեռել, իմ եղբայրը և քույրերս, հորեղբայրներս ու պապս ողջ են: Ճիշտ է, որ դուք սպանել եք նրանց, բայց նրանք ապրում են երկնքում: Ես կապրեմ նրանց հետ: Ես արժանի չեմ լինի իմ հարազատներին, եթե հավատարիմ չմնամ նրանց և իմ Աստծուն: Ես չեմ կարող միանալ իմ հարազատներին Երկնքում, եթե ամուսնանամ մի մարդու հետ, ում չեմ սիրում: Դա Աստծուն դուր չի գա: Վարվե՛ք ինձ հետ այնպես, ինչպես կամենում եք»:

Ասկյարները հեռացրել են աղջկան, և ոչ ոք այլևս չի իմացել, թե ինչ է եղել նրա հետագա ճակատագիրը: Իրենց հավատքը չուրացած մյուս կույսերին հանձնեցին ասկյարներին՝ վաճառելու համար հարուստ աղաներին ու բեյերին: Եվ այսպես, ոչ ոք կենդանի չմնաց Ակնի հայ քրիստոնյաներից, բացի մի քանիսից, որոնց թուրք հարուստները պահեցին իրենց հարեմներում: Սա մահից էլ վատ էր:

Ինձ ու մի քանի աղջկա գողացան քրդերը: Նրանք մեզ տարան քաղաքի կենտրոն: Նրանց խնդրեցինք, որ մեզ հեռու պահեն թուրք տղամարդկանցից ու կանանցից, քանի որ մերկ էինք: Նրանք հաշվի չառան մեր խնդրանքը. տարան մի մեծ շենքի բակ, որը, իմ կարծիքով, կառավարական շենք էր եղել: Այստեղ մենք տեսանք հարյուրավոր հայ կանանց, որոնց հափշտակել էին Երզնկայի և Սվազի բռնագաղթյալների խմբերից: Նրանցից մի մասն արդեն մի քանի օր այդտեղ էր: Նրանցից շատերը մեզ պես մերկ էին: Ոմանք ցնորվել էին: Բոլորը սպասում էին փաշայի հետ հանդիպելուն. նա նախորդ օրը եկել էր Ակն:

Շուտով մենք իմացանք, որ դա Կոստանդնուպոլսի այն նույն չարագործ Քյամիլ փաշան է: Նա այդ ժամանակ շատ ծեր էր՝ մոտավորապես 80 տարեկան, բայց քայլում էր ձիգ ու խրոխտ: Շատ տարիներ առաջ, երբ նա Հալեպի կառավարիչն էր, քրիստոնյաների հանդեպ կիրառած իր դաժանությունների համար «մեծ համբավ» էր ձեռք բերել: Ասում էին, որ նա է կազմակերպել հայերի ջարդերը 1895 թվականին և միայն Անգլիայի պահանջով է հեռացվել իր պաշտոնից: Հանգստի գնալուց հետո, որպես փոխհատուցում իր կատարած աշխատանքի, նրան նշանակել էին բարձր պաշտոնի Կոստանդնուպոլսում:

Քյամիլ փաշայի հետ ժամանել էր նաև Բուխարեդդին Շաքիր բեյը՝ Թալեաթ բեյի և Էնվեր փաշայի գաղտնի գործակալը:

Քյամիլը Կոստանդնուպոլսից մի զորագունդ էր բերել և տեղավորել քաղաքի մոտակայքում, որը հետագայում հայտնի դարձավ որպես «դասաք թաբուրի» (մսագործների զորագունդ), որովհետև նա մասնակցել էր իմ ժողովրդի ավելի քան 50000 զավակների սպանդին:

Քյամիլ փաշան և Բուխարեդդին Շաքիրը եկան այն շենքը, որտեղ մենք էինք: Նրանք տեղավորվեցին մի մեծ սենյակում՝ սեղանի շուրջ: Մեզ քսան-քսան դուրս էին բերում և տանում այդ սենյակը: Նույնիսկ ամբողջովին մերկ կանանց ստիպում էին ուղիղ կանգնել, երեսները՝ դեպի սեղանը: Փաշան ու բեյը մեզ նայում էին անասնական հայացքով: Այն, ինչ արեցին ինձ հետ և ինձնմանների՛...

- Նորին գերազանցություն սուլթանն իր հոգու ողջ բարությամբ ցանկանում է գթասիրտ լինել ձեր դավադիր Հայաստանի օրիորդների նկատմամբ, - ասաց Բուխարեդդին Շաքիր բեյը, իսկ Քյամիլը լուռ հետևում էր մեզ, - շատերից միայն ձեզ ենք ընտրել և արժանի համարել Նորին գերազանցության օրհնանքին ու ողորմածությանը: Ձեզ տանելու ենք իսլամական մեծ քաղաքներ, որտեղ ձեզ կտեղավորենք վերջերս բացված դպրոցներում՝ կայսերական խնամքի ու պաշտպանության ներքո: Դուք այնտեղ կսովորեք այնպիսի բաներ, որոնք ձեզ համար օգտակար կլինեն, միայն թե մոռացե՛ք անհավատների կրոնը: Ձեզ հետ բարյացակամ կվարվեն, կամուսնացնեն ձեզ, եթե առիթը ներկայանա. կապրեք մուսուլմանական բարի ընտանիքներում, որտեղ միայն ձեր վարքագիծը կլինի ձեր հանդեպ դրսևորվելիք վերաբերմունքի չափանիշը:

Սրանք էին այն խոսքերը, որոնք մոտավոր ճշտությամբ ես կարողացա հիշել և վերարտադրել: Ոչ մի աղջիկ չպատասխանեց: Մենք մեր փորձից գիտեինք, թե որքանով էին վստահելի թուրքերի խոստումները, և, իհարկե, հասկանում էինք, որ այդ խոստումների տակ ինչ է թաքնված՝ հավատուրացություն:

- Նրանք, ովքեր ցանկանում են մուսուլման դառնալ, պետք է արտահայտեն իրենց կամքը, - շարունակեց բեյը:

Թեև ինձ համար անհասկանալի էր, սակայն միաժամանակ ես չէի կարող մեղադրել այն աղջիկներին, ովքեր համակերպվեցին: Փաշան ու բեյը այլևս ոչինչ չասացին: Նրանք իրենց սառն ու խայթող հայացքներով այրում էին մեզ: Նրանք լուռ սպասում էին: Ահավոր լարվածություն էր: Աղջիկների կեսը չոքեց, մի մասն էլ ընկավ ավելի ուժեղ աղջիկների թևերին, և լաց լինելով համաձայնեցին:

Բուլսարեդդին Շաքիրը ասկյարներին ձեռքով նշան արեց. նրանք աղջիկներին տարան մեկ այլ սենյակ: Նրանց մասին մենք այլևս ոչինչ չլսեցինք: Քյամիլը դեռ շարունակում էր սառը լռությամբ նայել նրանց, ովքեր մերժել էին իր պահանջը: Բեյը նույնպես լուռ էր: Հետո նա ձեռքը նորից բարձրացրեց, և ասկյարները սկսեցին մեզ անգթորեն ծեծել մտրակներով: Հարվածներին չդիմանալով՝ ընկանք հատակին: Ասկյարները շարունակեցին մեզ մտրակահարել դանդաղ, ռիթմիկ հարվածներով: Ես մինչև հիմա մարմնիս վրա դեռ զգում եմ այդ դաղող համաչափ մտրակահարվածները, որոնք թուրքերը գործադրում էին՝ բանտարկյալներին մահվան դուռը հասցնելով: Մի աղջիկ ճչալով գութ հայցեց և տվեց Ալլահի անունը: Նրան տարան մեկ այլ սենյակ: Մի ուրիշ աղջիկ չէր կարողանում բառեր արտաբերել. բառերը կորչում էին կոկորդում: Նա պարզել էր ձեռքերը դեպի փաշան ու բեյը՝ մտրակահարվածներն ընդունելով ափերին ու դաստակներին այնքան ժամանակ, մինչև թուրքերը հասկացան, որ աղջիկը տեղի տվեց: Նրան էլ դուրս տարան: Ոմանք նվաղում էին ցավից, բայց հարվածները չէին դադարում:

Երկու անգամ կորցրի գիտակցությունս: Երկրորդ անգամ ուշքի չեկա, մինչև մտրակահարումը չդադարեց: Ինձ և մյուս աղջիկներին, ովքեր հավատարիմ էին մնացել իրենց հավատքին, թողեցին բակում: Այնտեղ մոտավորապես 400 երիտասարդ կին կար: Ինձ հետ եղողների թիվը 25-ից ավելի չէր, մյուսներին տանջելով ստիպել էին հավատափոխ լինել: Ոչ ոք չի կարող ասել, թե ինչ եղան նրանք: Ասում էին, թե Քյամիլը և Բուլսարեդդին Շաքիրը ավելի քան հազար հայ աղջիկ ուղարկեցին Բոսֆորի վրա գտնվող Քյամիլի կալվածքները, որտեղ նրանց խնամել էին մինչև առողջության և գեղեցկության վերականգնումը՝ միաժամանակ ոչնչացնելով նրանց հոգին:

Հետագայում նրանց բաժանել էին հարուստ փաշաների և բեյերի ընտանիքներին, որոնք Քյամիլի քաղաքական համախոհներն էին. այդ թվում էին նաև Բոլսարեդդին Շաքիրը և Վանի վիլայեթի նահանգապետ Ջևդեթ բեյը:

Շենքի բակում մեզ պահեցին չորս օր: Միայն մի կտոր չոր հաց էին տալիս: Կանանցից երեքը վերքերից մեռան: Հաճախ թուրք տղամարդիկ և կանայք գալիս էին բակ՝ դիտելու և ծաղրելու մեզ: Թուրք երեխաներին հրահրում էին, որ մեզ վրա քարեր նետեն:

Չորրորդ օրը զաբթիեները մեզ դուրս բերեցին և միացրին հազարից ավելի կանանց ու երեխաների մի մեծ քարավանի, որոնց քշել բերել էին Բայբուրդից: Այս խմբի բոլոր կանայք միջին տարիքի էին կամ շատ ծեր, իսկ երեխաները՝ շատ փոքր:

Երբ գաղթականների խումբը հասավ Ակն, բոլոր աղջիկներին ու երիտասարդ կանանց առանձնացրին, որպեսզի նրանց ճակատագիրը որոշեն Քյամիլ փաշան ու Շաքիր բեյը: Մեծ տղաներին գողացել էին չերքեզները: Ծծկեր երեխաներ գրեթե չկային. նրանք կա՛մ մեռել էին իրենց մայրերին կորցնելուց հետո, կա՛մ թուրք ասկյարները սպանել էին նրանց:

Այս խմբի հետ յոթ ժամ քայլելուց հետո մեզ կանգնելու հրաման տրվեց. պիտի սպասեինք Սվազից ու Երզնկայից եկող բռնագաղթյալների ավելի մեծ խմբերի, որոնք պետք է միանային մեզ այս նույն վայրում: Միասին պիտի շարժվեինք դեպի Դիարբեքիր:

Բռնագաղթյալների այս երկու քարավաններն էլ պետք է անցնեին մոտակա Տիվրիկ լեռնային կիրճով: Երզնկայի գաղթականները այդպես էլ մեզ չհասան. կիրճում նրանց վրա էր հարձակվել «Ղասաբ թաբուրին» և բոլորին կոտորել: Այդ խմբի մեջ կային 4000 կին ու երեխա: Հենց այդ կոտորածից հետո Սվազի բռնագաղթյալները հասան կիրճի բերան՝ հակառակ կողմից:

«Ղասաբ թաբուրի» զինվորներն այնպես էին հոգնել Երզնկայից եկած գաղթականներին այդքան կարճ ժամանակում կոտորելուց, որ Սվազից եկած գաղթականներին սպանում էին հենց այնպես, զվարճանալու համար: Իսկ նրանց թիվը հասնում էր 11 հազարի՝ տղամարդ, կին և երեխա:

Գնդի մի մասը սպասում էր Տիվրիկ կիրճի ոլորանում: Երբ քարավանի առջևից քայլող գաղթականները նկատեցին շարքով կանգնած զինվորներին, սարսափը պատեց նրանց: Ուշադրություն չդարձնելով պահակների վրա՝ հայերը հետ դարձան՝ փախչելու, սակայն հանդիպեցին «Ղասաբ թաբուրի» գնդի մարդասպաններին, որոնք թաքնվել էին նրանց հետևում: Սրանք երկու կողմից փակեցին փախուստի ճանապարհը: Ժողովուրդն ընկավ թակարդը: Մինչ բարբարոսները երկու կողմից սեղմում և փակում էին ճանապարհը, հազարավոր կանայք, երեխաներին գրկած, տղամարդկանց օգնությամբ մագլցում էին նեղ կապանն ի վեր: Տղամարդիկ զինված ասկյարների դեմ կռվում էին ձեռքերով ու փայտերով: Գաղթականների խմբին ուղեկցող պահակներն ու զաբթիեները շրջապատեցին ժայռերի ստորոտները՝ արգելելով կանանց փախուստը դեպի վեր: «Ղասաբ թաբուրին» կոտորեց բոլոր տղամարդկանց: Եղան տղամարդիկ, որ, իրենց մեռած ձևացնելով, թաքնված մնացին հարազատների դիակների տակ՝ փրկելով իրենց կյանքը:

Հետո ասկյարների մի մասը բարձրացավ այնտեղ, որտեղ կծկված թաքնվել էին կանայք: Նրանք երեխաներին խլում էին մայրերի գրկից և շպրտում ներքև՝ իրենց ընկերներին, որոնք փորձում էին նրանց օդում որսալ իրենց սվինների վրա: Ծծկեր երեխաներին և մանկահասակ աղջիկներին այս հրեշային ձևով վերջ տալուց հետո ասկյարները միաժամանակ զվարճանալու համար կանանց հրում էին ժայռից ներքև՝ ծակծկելով նրանց սվիններով կամ հրացանափողերով: Հուսահատության դուռը հասած կանայք ինքնակամ իրենց նետում էին ժայռից՝ սվիններից ազատվելու համար: Երբ կանայք թավալգլոր հասնում էին ժայռի ստորոտին, այնտեղ սպասող թուրք զինվորները հարվածում էին նրանց քարաբեկորներով կամ սվիններն այնպիսի դիրքով էին պահում, որ կանայք ընկնեն դրանց վրա: Շատերը, եթե անվնաս հասնում էին ժայռի ստորոտին, ասկյարները ստիպում էին նրանց կրկին մագլցել ժայռն ի վեր, որպեսզի նորից ցատկեին ներքև՝ ուղիղ սվինների վրա:

«Ղասաբ թաբուրին» այսպես զվարճացավ մինչև մութն ընկնելը: Նրանց հրաման էր տրված գիշերն անցկացնելու Չար-Ռահյայում մի

գյուղում, որտեղից մինչև Տիվրիկի կիրճ երեք ժամվա ճանապարհ էր: Այսպիսով, երբ մարդասպանների գունդը հոգնեց սպանելու «զվարճանքից», երգելով, զինվորական շարքերով հեռացավ: Նրանցից ոմանք իրենց հրացանափողերի, սվինների վրա տանում էին մանկահասակ երեխաների դիակներ՝ որպես «հիանալի հուշանվեր»: Ասկյարները դուրս քաշեցին դիակների տակ թաքնված՝ կենդանի մնացած մի աղջկա և ստիպեցին քայլել իրենց հետ դեպի Չար-Ռահյայի բարաքները:

Տասնմեկ հազար բռնագաղթյալներից միայն 300 մարդ ողջ մնաց: Նրանք շարունակեցին քայլել զաբթիեների չդադարող մտրակահարվածների տակ, մինչդեռ զաբթիեների պարտականությունն էր նրանց պաշտպանելը: Այս խումբը միացավ մեզ մեր կանգառում:

ԳԼՈՒԽ Է
ՄԱԼԱԹԻԱ՝ ՄԱՀՎԱՆ ՔԱՂԱՔ

Տիվրիկ կիրճի ահավոր կոտորածից յոթ օր անց բռնագաղթյալներից նրանք, ովքեր դիմացան գաբթիեների գազանություններին, հասան Մալաթիա, որը հայտնի է դեպի երկինք ցցված իր մինարեթներով: Մալաթիան հարյուրհազարավոր հայ գաղթականների հավաքակայաններից էր, իսկ նրանց վերջին հանգրվանը՝ սիրիական անապատը: Երբ երևացին երկինք մխրճված մինարեթները, հույսի մի շող արթնացավ իմ մեջ. ես պիտի փնտրեմ ու գտնեմ մորս, իմ հարազատներին:

Քաղաքին մոտենալիս մենք անցանք այն ճանապարհով, որտեղով անթիվ-անհամար հայեր էին ոտքով անցել: Ճանապարհին, որպես ծաղր Քրիստոսի խաչելության և որպես զգուշացում Մալաթիա հասած քրիստոնյա աղջիկներին, թուրքերը 16 հայուհու գամել էին կոպիտ փայտե խաչերին: Ես չգիտեմ, թե որքան ժամանակ էր անցել խաչելությունից, բայց անգղերն արդեն «ճախրում էին» նրանց գլխավերևում:

Աղջիկներին խաչել էին ողջ-ողջ: Նրանց ոտքերն ու ձեռքերը երկաթյա սեպերով ամրացված էին փայտին: Փչում էր անապատի

քամին՝ նահատակ աղջիկների վարսերը տարուբերելով և դրանցով մերթ ընդ մերթ ծածկելով նրանց մերկ մարմինները:

- Նայե՛ք, տեսե՛ք, - ամբարտավան հրճվանքով ասացին մեզ զաբթիեները, - իմացեք, թե ինչ կլինի ձեզ հետ Մալաթիայում, եթե հլուհնազանդ չլինեք:

Մալաթիայի մոտակայքում և հենց քաղաքում ավելի քան քսան հազար գաղթական կար, որ սպասում էր ճանապարհ ընկնելուն... Քրդերն իրենց գիշատիչ առաջնորդներով ու փոքրաթիվ ջոկատներով, քաղաքից դուրս դարանակալած, սպասում էին կողոպուտի: Այդտեղից քիչ հեռու՝ բլուրների հետևում, դիրքավորվել էին արաբ ձիավորների ավազակախմբեր, որոնք գիշերները հարձակվում էին հայերի վրա և գողանում առողջ, ուժեղ կանանց ու աղջիկներին՝ դաշտերում աշխատեցնելու համար: Թուրք բեյերն ու աղաները, այստեղ-այնտեղ երևացող «արժանապատիվ» փաշաներն իրենց թիկնապահներով շրջում էին և ստուգում քաղաքին մոտեցող գաղթականների յուրաքանչյուր խմբի. վավաշոտ աչքերով տնտղելով՝ ջանում էին հայտնաբերել իրենց թարմությունն ու գեղեցկությունը դեռևս թաքցնող աղջիկներին:

Սվազից, Թոքատից, Ակնից, Երզնկայից, Կերասունից, Սամսունից և հյուսիսային մեծ ու փոքր բազմաթիվ քաղաքներից տեղահանել և դեպի Մալաթիա էին քշել հայերին, ովքեր դարեր շարունակ ապրել էին այդ տարածքներում և իրենց տուն ու տեղը ստեղծել: Այս շրջանի բոլոր գետերն արյան գույն էին ստացել, հովիտները դարձել էին բաց գերեզմանոցներ, որտեղ հազարավոր դիակներ անթաղ էին մնացել: Լեռնանցքները փակվել էին դիակներով: Հարեմ ունեցող յուրաքանչյուր հարուստ թուրք պահում էր մեկ կամ ավելի, երբեմն քսան հարճ՝ բոլորն էլ հայ, բոլորն էլ գողացված ճանապարհից:

(Ինձ միշտ հետաքրքրել է, թե Ամերիկայի այս բարի ժողովուրդն ի՞նչ գիտի հայերի մասին: Երբեմն ինձ թվում է, թե ամերիկացիները կարծում են՝ մենք քոչվոր ժողովուրդ ենք կամ ցածրակարգ մի ժողովուրդ: Մենք, իսկապես, բոլորից տարբերվող ժողովուրդ ենք: Իմ ժողովուրդն առաջինն էր, որ քրիստոնեություն ընդունեց: Դա մարդ-

կային ազնվագույն ցեղ է... Նրա գրականությունն ավելի հին է, քան աշխարհի շատ ու շատ ժողովուրդներինը:

Գյուղատնտեսությամբ զբաղվող հայեր քիչ կան: Հիմնականում բոլոր հայերն էլ մեծ ու փոքր առևտրականներ, տնտեսագետներ, դրամատերեր կամ ուսուցիչներ են: Միայն իմ քաղաքում ավելի քան քսան առևտրականներ և ուսուցիչներ կային, որոնք իրենց կրթությունն ստացել էին ամերիկյան քոլեջներում: Հարյուրավոր հայեր հաճախել էին եվրոպական համալսարաններ: Անձամբ ես կրթություն եմ ստացել Մարզվանի ամերիկյան քոլեջում և մասնավոր ուսուցիչների մոտ: Շատ հարուստ հայեր կային: Թուրքերի մեջ քչերն էին կրթված և մեծ կարողության տեր):

Քսան հազար հայ քրիստոնյաների լցրել էին իրար գլխի քաղաքից դուրս գտնվող գաղթականներում, հանրային հրապարակներում կամ տներում, որոնք հատուկ առանձնացված էին այդ նպատակի համար: Ես կարծում եմ, որ բռնագաղթյալների կեսից ավելին ունևոր ընտանիքներից էր: Այս աղջիկները կրթվել ու դաստիարակվել էին կա՛մ Եվրոպայում, կա՛մ մեր քաղաքների միսիոներական քոլեջներում, ինչպես նաև Սվազի, Մարզվանի, Խարբերդի անգլիական, ֆրանսիական, շվեյցարական, գերմանական դպրոցներում: Նրանք սովորել էին գրականություն, երաժշտություն և արվեստ:

Ես ուզում եմ պատմել, թե ինչ պատահեց մի խումբ դպրոցական աղջիկների հետ Մալաթիայում: Այս եղելությունն ինձ պատմել է այդ աղջիկներից մեկը:

Մալաթիայից քիչ հեռու գտնվում էր Քըրքգյոզ փոքրիկ քաղաքը, որտեղ գերմանական դպրոց կար: Այստեղ սովորում էին շրջանի բազմաթիվ հայ աղջիկներ գերմանացի ուսուցիչների ղեկավարությամբ: Դպրոցում, որպես կանոն, հարուստ հայերից գանձված ուսման վարձից վճարվում էր նաև աղքատ աղջիկների ուսման համար: Այդ դպրոցում սովորում էր ավելի քան 60 աշակերտուհի, երբ սկսվեց հայերի տեղահանությունն ու կոտորածը: Քանի որ դպրոցը գերմանացիների հովանավորությամբ էր գործում, աշակերտներն իրենց ապահով էին զգում: Հոգեպես

հանգիստ էին նաև նրանց ծնողները՝ համոզված լինելով, որ իրենց երեխաները պաշտպանված են: Սակայն քաղաքի կայմակամը՝ Ազիզ բեյը, ասկյարներ ուղարկեց աղջիկներին Մալաթիա տանելու՝ տեղահանության կամ ավելի վատ բանի համար: Դպրոցի տնօրենը՝ տիկին Ռոթը, հրաժարվեց դարպասը բացելուց: Նա հայտարարեց, որ Էյմեն էֆենդին՝ Գերմանիայի հյուպատոսարանի շրջանային գործակալը, փոխհատուցում կպահանջի, եթե բռնություն գործադրվի դպրոցի աշակերտների հանդեպ:

Տիկին Ռոթը տարիքն առած գերմանուհի էր: Հաջորդ օրը նա գնաց Մալաթիա՝ Էյմեն էֆենդու հետ խորհրդակցելու: Էֆենդին տիկին Ռոթին հասկացրել էր, որ Թուրքիան Գերմանիայի դաշնակիցն է, և քանի որ Թուրքիան հայերին հայտարարել է որպես անհավատարիմ, անվստահելի ժողովուրդ, հետևաբար Գերմանիան պետք է պաշտպանի սուլթանին, ուստի իր սանուհիներին պարտավոր է հանձնել զինվորներին:

Յուրաքանչյուր աղջիկ մեկ գրաստ ունենալու իրավունք ուներ (դպրոցի ուսուցիչներն էին գնել նրանց համար): Ռոթի սանուհիները ճամփա ընկան դեպի արևմուտք՝ դեպի Մեզրե, որտեղ, ինչպես իշխանությունները խոստացել էին, աղջիկների խնամքը հանձնվելու էր դերվիշական մի «սրբավայրի»:

Տիկին Ռոթն անձամբ գնաց Ազիզ բեյի մոտ և խնդրեց իր աղջիկների ապահովության համար: Նա Ազիզ բեյին ասել էր. «Ամաչում եմ, որ գերմանուհի եմ, քանի որ Էյմեն էֆենդին մասնակից է նման չարագործության՝ Գերմանիայի համաձայնությամբ»:

Նա Ազիզ բեյին առաջարկել էր իր ողջ ունեցվածքը, ամբողջ դրամը, այն ամենը, ինչ ինքն ուներ Քըրքգյոզում՝ փոխարենը խնդրելով, որ նա թույլ տա իր սանուհիներին իր հետ տուն վերադառնալ: Տիկին Ռոթը շատ հարուստ էր. նա ուներ ավելի քան հազար լիրա, թանկարժեք իրեր, որ ավելին արժեին: Ազիզ բեյն ընդունել էր այդ կաշառքը և տիկին Ռոթին երկու զինվորի ուղեկցությամբ ճամփել աղջիկների հետևից:

Երկու օր անց տիկին Ռոթը զինվորների հետ մոտեցավ Թոքմա գետին՝ Քյոմուրհան գյուղի մոտ: Հարթավայրում նկատվող հետ-

քերը ցույց էին տալիս, որ իրենց փնտրած աղջիկների խումբը քիչ առաջ անցել է այդ ուղղությամբ: Հանկարծ տիկին Ռոթը նկատեց, որ իրենց կողմն է վազում մերկ, ահաբեկված, սարսափից ցնորված մի աղջիկ: Երբ նա մոտեցավ տիկին Ռոթին, ճանաչեց նրան և ճչաց. «Ուսուցի՛չ, ուսուցի՛չ, փրկե՛ք ինձ, փրկե՛ք ինձ...»:

Մարթան (այդպես էր նրա անունը)՝ Ջեյթունի հարուստ ընտանիքի զավակ էր: Իրեն նետեց ուսուցչուհու ոտքերի առջև: Փաթաթվելով տիկին Ռոթի ոտքերին՝ կրկնում էր. «Փրկե՛ք ինձ, փրկե՛ք ինձ...»: Տիկին Ռոթն իր հետ բերած կոնյակի շիշը հանեց և մի կում խմեցրեց աղջկան, փորձեց հանգստացնել նրան: Դպրոցական աղջիկներին ուղեկցող պահակներից երկուսը մոտեցան: Երբ Մարթան տեսավ նրանց, ահ ու սարսափից ուշագնաց եղավ: Ջաբթիները փորձեցին տանել աղջկան, բայց տիկին Ռոթը դիմադրեց և թույլ չտվեց: Տիկին Ռոթին ուղեկցող ասկյարները համոզեցին զաբթիներին աղջկան թողնել ու հեռանալ: Երբ տիկին Ռոթը երկրորդ անգամ ծնկի եկավ Մարթայի առջև, աղջիկն արդեն մահացել էր: Նրա վերքերն ու կապտուկները, գլխից պոկված մազերը վկայում էին, թե ինչպես էր աղջիկը դիմադրել վայրենի զաբթիներին: Տիկին Ռոթը նետվեց առաջ: Ճիչերն ու աղաղակներն ավելի ու ավելի հաճախ էին լսվում գետեզերքի կողմից: Երբ մոտեցավ գետին, տեսավ ավազի վրա նստած երկու զաբթիեի, որոնք փայտի սրած ծայրերով ծակծկում էին մինչև արմունկները հողի մեջ թաղված մերկ աղջկա ուսերը: Այդ շրջանի զաբթիեների համար սա հաճելի ժամանց էր: Աղջկան պատժելու, ստորացնելու համար նրան թաղել էին հողի մեջ: Նա ցավից ու վախից ճչում էր, իսկ դա շատ էր զվարճացնում զաբթիեներին: Ցանկության դեպքում զաբթիեները աղջկան հանում էին հողից և կրկին թաղում: Մարթան էլ էր այդպիսի տանջանքներից փախել: Տիկին Ռոթի հրամանով նրան ուղեկցող զինվորները ազատեցին աղջկան: Տիկին Ռոթն աղջկան թողեց երեք զինվորի հսկողությանը, իսկ ինքն անցավ գետը: Նա պարզ լսում էր գետի մյուս ափից եկող ճիչերն ու աղաղակները: Երբ զաբթիեները տիկին Ռոթին լաստանավով անցկացնում էին գետի հակառակ կողմը, հանկարծ սկսեցին բարձր հոհոալ: Թիավարողները լաստանավի ուղղությունը փոխեցին՝ խուսափելու համար ջրի երեսին լողացող

երկու զանգվածից, որ նրանց զվարճանալու առիթ էին տվել: Տիկին Ռոթը տեսավ իր աղջիկներից երկուսի դիակները, որոնք լողում էին հոսանքն ի վար: «Նայի՛ր, նայի՛ր այնտեղ», - բացականչեց ծիծաղից թուլացող զաբթիեներից մեկը՝ ձեռքը մեկնելով դեպի դիակները, - ձեր Քրիստոս այս երկուսին էլ է մոռացել:

Ափ դուրս գալով՝ տիկին Ռոթը 60-ից ավելի իր սանուհիներից գտավ միայն տասնյոթին: Վերջիններս ողջ էին մնացել, որովհետև զաբթիեները պարզապես ձանձրացել, հոգնել էին մարդ սպանելուց: Այդ տասնյոթ աղջիկները փրկվել էին նաև իրենց պակաս գեղեցիկ լինելու պատճառով: Տիկին Ռոթը բոլորին հետ տարավ Մալաթիա: Կայմակամը նրանց տեղավորելու հարցը թողեց տիկին Ռոթին: Նրանք շարունակում էին ապրել բռնագաղթվելու մշտական ահ ու սարսափի մեջ:

Այդ օրերին ինձ դուրս բերեցին քաղաքից:

Նրանք, ովքեր ծանոթ էին տիկին Ռոթին, պատմում էին, որ նա հրաժարվել էր ընդունել Էյմեն էֆենդուն, երբ վերջինս այցելել էր նրան և նրա ողջ մնացած սանուհիներին: Ասում էին, որ նա Էյմեն էֆենդուն գրություն էր ուղարկել՝ ասելով, որ ինքն այդ ամենից հետո այլևս գերմանացի չէ և պաշտպանություն չի հայցում, բացի այն պաշտպանությունից, որ նա կարող է գնել ոսկով, իսկ դրամական միջոցներ նա կարող է ստանալ իր հարազատներից:

Քաղաքի բոլոր հրապարակները և բոլոր ազատ տները լցված էին գաղթականներով՝ հյուծված, այտուցված ոտքերով, սովից ու ծարավից մեռնող: Մեր ամբողջ խմբի համար մնացել էր ընդամենը 10 բոքոն հաց: Ջրհորների մոտով անցնելիս մենք ջուր էինք խնդրում թուրքերից, իսկ նրանք թքում էին մեր երեսին: Զաբթիեները թուրք խուժանին հրահրում էին, որպեսզի մեզ քշեն: Ամեն օր հազարավոր բռնագաղթյալներ էին հասնում հյուսիսից: Քաղաքում ոչ ոք չէր հետաքրքրվում կամ փորձ անում հոգ տանելու նոր ժամանածների մասին: Մեր խմբի տղամարդկանցից մի քանիսը մեզ առաջնորդեցին մի մեծ շենք, որ նախկինում զինվորական բարաք էր եղել, սակայն այնտեղ արդեն հազարավոր հայեր էին ապաստան գտել: Մենք հազվադեպ էինք համարձակվում

դուրս գալ փողոց, որովհետև թուրք, քուրդ ու արաբ խուժանը հավաքվում էր փողոցում ու քար նետում մեզ վրա: Եթե փողոց դուրս եկողն ինձ նման դեռատի աղջիկ էր լինում, թուրքերը նրան տանում էին իրենց խանութները կամ վատահամբավ տները:

Մալաթիա գալու հաջորդ օրն էր: Ես շատ անհանգիստ էի մորս համար: Ամեն տեղ մորս էի փնտրում՝ հուսալով, որ նա և Չմշկածագի հայերը գուցե խառնված լինեն այլ բռնագաղթյալներին: Ես գիշերով դուրս եկա քաղաքի փողոցները՝ անցնելով մի տեղից մյուսը, որտեղ գաղթականներ կային: Ոչ մի տեղ չհանդիպեցի մեր քաղաքի բնակիչներին: Երբ լույսը բացվեց, չկարողացա մեր բարաքի ճանապարհը գտնել: Հարթավայրերում լույսը շուտ է բացվում: Թափառելով հասել էի քաղաքի այն մասը, որտեղ գաղթականներ չկային:

Մալաթիայի փողոցները շատ նեղ էին: Ողջ գիշեր գետաքարերով սալահատակված փողոցներով քայլելուց սաստիկ հոգնել էին մերկ ոտքերս: Այնպես էի ուժասպառ եղել, որ ասես տասնհինգ տարեկան չլինեի, տարիքով լինեի: Գիտակցում էի՝ եթե թուրքերն ինձ հայտնաբերեին, կորած էի, գուցե և ընդմիշտ:

Հանկարծ հասկացա, որ հայտնվել եմ մի շենքի պատերի տակ, որի վրա ծածանվում է ամերիկյան դրոշը: Կարծես թեթևություն իջավ վրաս: Ամերիկյան դրո՛շը... ինչ սքանչելի է հայի աչքի համար: Տարիներ շարունակ այդ դրոշը իմ ժողովրդի համար եղել է խաղաղության և փրկության հույս: Մենք այնքա՛ն շատ էինք լսել այդ հիանալի երկրի մասին: Հայերը միշտ հավատացել են, որ Միացյալ Նահանգները պատրաստ է օգնելու կարոտյալներին:

Երբ փողոցում այլևս մարդ-մուրդ չերևաց, դուրս եկա իմ թաքստոցից և ուղղվեցի դեպի մուտքը: Թակեցի դուռը: Թուրք տղամարդիկ արդեն մտել էին այդ փողոց ու լրտեսում էին ինձ. հավանաբար իմ պատառոտված շորերն էին մատնել ինձ: Ճչացի ու հրեցի դուռը: Դուռը բացվեց, և ես ընկա մի կնոջ գիրկը, ով փութով ինձ ներս մտցրեց: Այնքան վախեցած էի, որ չէի կարողանում բացատրել իմ վիճակը: Թուրքերը հավաքվել էին դռան մոտ: Ես կարծեցի, թե ինձ կտանեն: Նրանցից մեկը ներս մտավ: Նրան հետևեց երկրորդը, երրորդը, և այսպիսով բոլորը լցվեցին բակ ու փորձեցին ինձ բռնի ուժով տանել:

Ինձ ընդունող կինը, որ թրքուհի չէր, առաջ եկավ ու կանգնեց իմ և թուրք խուժանի միջև:

- Ի՞նչ եք ուզում, ինչո՞ւ եք այստեղ, - հարցրեց թուրքերեն:

- Այս աղջկան պետք է մեզ տաք, նա փախել է, - ասացին նրանք:

Ես ցնցված էի, այդ համարձակ կինը թույլ չտվեց թուրքերին ինձ մոտենալ:

- Դուք իրավասություն չունեք, - ասաց նա:

Երբ թուրքերը փորձեցին բռնի ուժով ինձ տանել, կինը կանգնեց իմ դիմաց և ասաց.

- Դուք պետք է հիշեք, որ աղջիկն իմ հյուրն է:

Թուրքերից մեկը վրա բերեց.

- Աղջիկը հայ է, փախել է իր ճամբարից: Նա քաղաքում ազատ շրջելու իրավունք չունի: Կայմակամը հրամայել է կալանավորել բոլոր քրիստոնյաներին, ովքեր դուրս են եկել իրենց համար նախատեսված շենքերից: Հանգստանալուց հետո նրանք պետք է շարունակեն իրենց ճանապարհը:

- Ձեր կայմակամի հրամանն ինձ համար նշանակություն չունի. աղջկան ես վերցնում եմ իմ պաշտպանության տակ: Չհամարձակվե՛ք ինձ՝ ամերիկացուս, ձեռք տալ,- ասաց իմ նոր բարեկամը: Թուրքերը փնթփնթացին, դժգոհեցին, սպառնացին վրեժ լուծել և հեռացան:

Երիտասարդ կինն ասաց, որ ինքը օրիորդ Մակ-Լայնն է, ամերիկացի միսիոներ է: Շենքը պատկանում էր Մալաթիայում ԱՄՆ հյուպատոսին. նա իր հիվանդ կնոջը տարել էր Խարբերդ: Օրիորդ Մակ-Լայնը հյուպատոսի բացակայության օրերին ամերիկյան դրոշը բարձրացրել էր տանիքի վրա: Նա փորձել էր համոզել թուրք պաշտոնյաներին բռնագաղթյալների հանդեպ կիրառած իրենց դաժանություններին սահման դնել, սակայն արդյունքն աննշան էր եղել: Օրիորդ Մակ-Լայնը եղել էր Նյու Յորքի հանրահայտ վիրաբույժ-միսիոներ դոկտոր Քլերենս Աշերի և նրա կնոջ՝ տիկին Աշերի աշակերտը: Այս ամուսինները Հայաստանում հայտնի էին հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած իրենց գթասրտությամբ: Ի դեպ, Վանում տեղի ունեցած ջարդերի ժամանակ տիկին Աշերը զոհվեց:

Այդ օրը՝ երեկոյան, կայմակամի կողմից ուղարկված զինվորների մի ջոկատ եկավ հյուպատոսի բնակարանը և պահանջեց, որ օրիորդ Մակ-Լայնն ինձ հանձնի իրենց: Նա կրկին մերժեց: Ասկյարները հայտարարեցին, որ իրենք հրաման ունեն աղջկան բռնի ուժով տանելու: Օրիորդ Մակ-Լայնը խնդրեց, որ իրեն ուղեկցեն կայմակամի մոտ, որպեսզի խնդրի նրան աղջկան իրեն հանձնել: Այստեղ զինվորները համաձայնեցին: Ինձ մենակ թողեցին տանը և գնացին:

Երբ օրիորդ Մակ-Լայնը վերադարձավ, նրա աչքերն արցունքով էին լցված: Եկել էին նաև ասկյարները: Կայմակամը ասել էր, որ ես պետք է միանամ գաղթականներին: Նրանք ասացին, որ ինձ կտանեն մի շենք, որտեղ տեղավորել են իսլամ ընդունած մի խումբ կանանց իրենց երեխաների հետ: «Այդ խումբը, - ասել էր կայմակամը, - ապահով կլինի, մինչև հասնեն պետության կողմից առանձնացված վայրը»:

Օրիորդ Մակ-Լայնն այլևս ոչինչ չէր կարող անել: Նա համբուրեց ինձ: Զինվորներն ինձ տարան կրոնափոխ եղած կանանց շենքը:

«Հավատափոխ եղած» կանայք գրեթե բոլորն էլ հայ էին, Մալաթիայի և Սվազի միջև ընկած քաղաքներից էին: Նրանցից և ոչ մեկը իրականում չէր ուրացել իր հավատքը: Նրանք կարծում էին, թե ճիշտ են արել, քանի որ բոլորը մայրեր էին: Նրանք ուզում էին փրկել իրենց երեխաների կյանքը, բայց չգիտեին, թե ինչ է սպասում իրենց: Բեյերն ասել էին, թե կառավարությունը հոգ կտանի նրանց մասին:

Բռնագաղթյալների այս խմբին կերակրում էին թուրքերը՝ նրանց տալով հաց, ջուր և մի կտոր չորացած հին խմորեղեն: Մեզ թույլ չէին տալիս դուրս գալ տանից, բայց մեզ չէին անհանգստացնում: Շուտով առիթը ներկայացավ, և ես համոզվեցի, որ կայմակամն ինչ-որ չափով մտածել էր իմ ապահովության մասին՝ թույլ տալով ինձ միանալ այդ խմբին:

Մալաթիայում հավաքված հայերի որոշ խմբերի տղամարդկանց չէին սպանել: Մի օր ասկյարներն այս տղամարդկանց հավաքեցին և ասացին, որ քաղաքապետը ցանկանում է բոլորին ցուցակագրել, որպեսզի հողաբաժանում կատարվի նրանց միջև, երբ հասնեն իրենց վերջնական բնակավայրին հարավում: Այնքան լուրջ էին ասում այդ

ամենը, որ հայերը հավատացին: Շատերը գնացին առանց պիջակների: Նրանց տարան այն շենքը, որտեղ ինձ առաջին օրը տեղավորել էին, և որտեղից նախորդ օրը շատ գաղթականների էին տարել:

Գրեթե երեք հազար տղամարդ էր հավաքվել: Դրսում զինվորները գրավել էին իրենց տեղերը դռների ու պատուհանների հետևում: Նրանք կողոպտեցին հայ տղամարդկանց ունեցած դրամն ու արժեքավոր իրերը, այն ամենը, ինչ նրանք կարողացել էին փրկել քրդերից, և հետո սկսեցին կոտորել նրանց: Երբ դիակների կույտն այնքան բարձրացավ, որ ասկյարներն այլևս չէին կարողանում հասնել կենդանի մնացածներին առանց կոշիկներն արյունոտելու, գործի դրեցին հրացանները: Կենդանի մնացածներին գնդակահարեցին:

Այդ երեկո թուրք զինվորները մտան բոնագաղթյալների բոլոր ճամբարները և հավաքեցին 5 տարեկանից բարձր երեխաների, կարծեմ՝ ութ կամ ինը հազար երեխա: Նրանք խուժեցին նաև այն շենքը, որտեղ ես էի «կրոնափոխ» հայերի հետ: Հակառակ քաղաքապետի բոլոր խոստումներին՝ տարան բոլոր տղաներին ու աղջիկներին: Երբ մայրերը ամուր փաթաթվում էին իրենց փոքրիկներին և թախանձագին աղերսում զինվորներին երեխաներին չբաժանել իրենցից, ասկյարները ծեծում էին խեղճերին: «Եթե նրանք հիմա մեռնեն, ձեր Աստված այլևս նեղություն չի կրի հոգալու նրանց մասին մինչև նրանց մեծանալը», - լկտի քրքիջով ասում էին ասկյարները:

Նրանք երեխաներին տարան քաղաքից դուրս, որտեղ սպասում էր Աղջադաղի քրդերի մի ավազակախումբ: Ասկյարները երեխաներին հանձնեցին քրդերի «խնամքին»: Քրդերը երեխաներին ոչխարի հոտի պես քշեցին դեպի Թոքմա գետը: Գետափին երեխաներին վերցնում և շպրտում էին ջուրը: Աղջնակներին տարան քաղաք, որպեսզի մեծացնեն որպես մուսուլման:

ԳԼՈՒԽ Ը
ՀԱՋԻ-ՂԱՖՈՒՐԻ ՀԱՐԵՄՈՒՄ

Տղամարդկանց կոտորելուց հետո Մալաթիայում սպասող բռնագաղթյալներին հրամայեցին պատրաստվել ճանապարհ ընկնելու:

Վաղ առավոտյան մեզ հավաքեցին քաղաքից դուրս: Գաղթականների մեծ մասը կանայք ու երեխաներ էին, հատուկենտ տղամարդիկ էին երևում: Թուրքերն ասացին, որ մեզ տանելու են Դիարբեքիր, որն այդտեղից հարյուր մղոն հեռավորության վրա էր: Շատ քչերը հույս ունեին կենդանի մնալ, քանի որ այդ ճանապարհին խիտ բնակեցված թուրքական, չեչենական և քրդական գյուղեր էին՝ իրենց մոլեռանդ մուսուլման բնակիչներով: Ճանապարհամերձ մեծ քաղաքների բնակիչներն ավելի դաժան էին գաղթականների նկատմամբ, քան ասկյարները: Թե երբեմն ինչպիսի՜ դաժանությամբ էին այս վայրերի մոլեռանդ թուրքերը վարվում մեր ժողովրդի հետ, անհնար է նկարագրել:

Երբ մեր երկար ձգվող քարավանը դուրս եկավ Մալաթիայից, այնտեղ կային 15 հազար ծեր և երիտասարդ կանայք: Անձնական իրեր կամ ուտելիք շատ քչերն ունեին: Այդուհանդերձ շատերն իրենց գոյությունը կարողացան պահպանել դրամի միջոցով: Եվ նրանք

պատրաստ էին իրենց ունեցած միջոցները կիսելու չունեցողների հետ: Հենց փողն էր միակ վստահելի երաշխիքը ճանապարհին քաղցից չմեռնելու և թուրքերի սպանելու կրքից պաշտպանվելու:

Հավատափոխ եղածների խմբին (ինձ էլ էին թույլատրել միանալ նրանց) կանգնեցրել էին շարքի առջևում՝ հատուկ պահակախմբի հսկողության տակ: Զաբթիեները պաշտպանում էին փոքրաթիվ այլ խմբերի: Այդ շրջանի զաբթիեների մեծ մասն ընդգրկվել էր Միջագետքի բանակում: «Հավատուրացների» խումբը, որի կազմում մոտավորապես 200 հոգի էր, լավագույնս պաշտպանված էր: Մյուսներին ամբողջությամբ հանձնել էին քրդերի, թուրք ու չեչեն գյուղացիների «ողորմածությանը»:

Հունիսի վերջին օրերն էին. շատ շոգ էր: Մի քանի տասնյակ մեծահասակ կանայք՝ շոգից ու ծարավից ուժասպառ, մնացին կես ճանապարհին: Միակ բանը, որ մենք խնդրում էինք գյուղացիներից, ջուրն էր: Իմ խմբի երկու քույրիկների մորը անողոքաբար ծեծեցին հետ մնալու համար, մինչդեռ խեղճ կինն իր դուստրերի հետ հարյուրավոր մղոններ էր անցել ու հասել Մալաթիա: Նա ընկավ և այլևս չկարողացավ վեր կենալ: Ասկյարները չթողեցին կնոջն ուշքի բերել: Նրա դուստրերին թույլ տվեցին միայն հրաժեշտի համբույրներով ծածկել մոր տանջված դեմքը՝ թողնելով նրան ճամփեզրին:

Քույրերից մեկը նորահարս էր՝ բայց արդեն այրիացած: Նա տեսել էր իր ամուսնու ու հոր սպանությունը Քանգալ քաղաքում՝ Սվազի ճանապարհին: Այստեղ քրդերը փորձել էին սպանել նրա մորը, որովհետև նա շատ ծեր էր: Աղջիկը մոտ կանգնած սպային խնդրել էր, որ փրկի մորը: Սպան ասել էր՝ միայն այն դեպքում, եթե նա ուրանա իր կրոնը: Քույրերը երկուսն էլ համաձայնել էին և հիմա, իրար գրկած, քայլում էին: Նրանք չէին համարձակվում իրենց շուրջը նայել, նույնիսկ այնտեղ, որտեղ ընկած էր իրենց մայրը: Երբ այլևս չէր լսվում նրանց խեղճ մոր ողբն ու հառաչանքները, ես մոտեցա քույրերին և խնդրեցի, որ թույլ տան իրենց հետ մնալ: Ես հասկանում էի, թե ինչ ապրումներ ունեին այդ աղջիկները: Ինքս ինձ մտածում էի՝ հրաշք կլիներ, եթե իմ մայրը, իմ փոքրիկ եղբայրներն ու քույրերը

կենդանի լինեին: Մի ասկյար Մալաթիայում ինձ ասել էր, որ Չմշկածագի բռնագաղթյալները շաբաթներ առաջ անցել են այս նույն ճանապարհով և շարժվում են դեպի Դիարբեքիր:

- Հնարավոր է, - ասաց նա, - նրանք դեռ Դիարբեքիրում լինեն, երբ դուք հասնեք այնտեղ... եթե, իհարկե, երբևիցե հասնեք...

Քաղաքից հեռանալուց մի քանի ժամ անց մեզ հրամայեցին կանգ առնել: Դա ահազանգ էր մեզ համար, քանի որ նման կանգառները սովորաբար նշանակում էին նոր աղետներ: Այս մեկն էլ բացառություն չեղավ: Հենց կանգ առանք, թուրք գյուղացիները թափվեցին մեզ վրա և սկսեցին կողոպտել:

Մայրամուտից առաջ լսվեց ահավոր գոռում-գոչյուն: Նայեցինք դեպի արևմուտք. բլուրներից մեր կողմն էին արշավում մի խումբ հեծյալներ: Քուրդ ելուզակներ էին. ձիավարելու ձևից արդեն ճանաչում էինք նրանց: Գյուղացիները վախեցած աղաղակեցին. «Քերիմ բե՛յն է՝ Ջաբարի ընկերը, հարկավոր է ցրվել»: Թուրք գյուղացիները մագլցեցին բլուրն ի վեր՝ հավանաբար վախենալով, թե քուրդ ավազակապետ Քերիմին դուր չի գա իրենց արարքը. նրա բաժին զոհերին իրենք արդեն կողոպտել էին:

Քերիմ բեյի՝ Ջաբարի բարեկամ լինելու հանգամանքն ինքնին հավաստում էր, որ ավազակապետն ու նրա խումբը իրավունք ունեին «ժամանելու»: Ջաբար էֆենդին շրջանի զինվորական պարետն էր, նշանակվել էր Կոստանդնուպոլսի իշխանությունների կողմից տեղահանության ընթացքում հայերին ճնշելու և հալածելու համար: Նրա խոսքն օրենք էր, իսկ այդ օրենքը միշտ դաժան էր: Քերիմ և Մուսա բեյերից բոլոր քուրդ ցեղապետերը վախենում էին. երկուսն էլ Աղջադաղի քրդերից էին: Քերիմ բեյն իր ավազակախմբի հետ իշխում էր գյուղական շրջանների վրա և հաճախ ապստամբում թուրքական իշխանության դեմ: Որպեսզի նրան դարձնի իր դաշնակիցը, Ջաբար էֆենդին նրան էր հանձնել հայ գաղթականների քարավանների «ապահովությունը» Մալաթիայից մինչև սիրիական անապատ:

Հարյուրավոր հեծյալներ կային Քերիմի ավազակախմբում: Նրանք շատ հեռվից էին գալիս և այժմ հոգնած էին, շատ էին հոգնած՝ գիշերով

իրենց ճանապարհը շարունակելու համար: Բայց այդ հոգնածությունը բնավ չէր խանգարում անմիջապես սկսելու իրենց վայրենի խրախճանքը, ինչը մի քանի օր մեզ ահ ու սարսափի մեջ պահեց: Հազիվ էին քրդերն իրենց ձիերը ոտնակապ գցել, երբ մխրճվեցին մեր քարավանի շարքերի մեջ ու սկսեցին իրենց տուրքը հավաքել: Ցավի, վշտի ճիչեր ու աղաղակներ բարձրացան՝ գութ հայցող, և գիշերը լցվեց հայ կանանց հառաչանքներով ու տնքոցներով: Մղձավանջային հերթական գիշերը...

Այդ գիշեր ես այնպիսի զարհուրելի բաների ականատես եղա, որոնց մասին անկարող եմ պատմել նույնիսկ հիմա, երբ Ամերիկայում եմ և ապահով. անցյալի մղձավանջներն ինձ հանգիստ չեն տալիս:

Մի խումբ քրդեր այնպիսի դաժանությամբ էին տանջում երիտասարդ մի աղջկա, որ նրան մոտ կանգնած կանայք չդիմացան և ողջ խմբով խելակորույս հարձակվեցին քրդերի վրա՝ փրկելու նրան: Մի պահ քրդերը խելագար կանանց ոտքերի կոխան դարձան, իսկ աղջիկն իսկույն անհետացավ:

Երբ քրդերն ուշքի եկան, դուրս քաշեցին իրենց սուր դանակները, նետվեցին խիզախ կանանց վրա և բոլորին էլ ծակծկեցին, սպանեցին: Կարծում եմ՝ այդ խմբում հիսուն կին կար: Քրդերը սպանվածների դիակները իրար վրա կիտեցին ու կրակի տվեցին: Մինչ քրդերից մի քանիսը բորբոքում էին կրակը, մյուսները փնտրում էին իրենց ճանկերից դուրս պրծած աղջկան, բայց այդպես էլ չկարողացան գտնել: Այդժամ, անհաջողությունից կատաղած, նրանք ճանկեցին մեկ այլ աղջկա և քարշ տվեցին դեպի խարույկը, ուր լցնում էին կանանց մարմինները: Երբ նա ճգնում էր դուրս պրծնել, բռնեցին ու նետեցին կրակի բոցերի մեջ, մինչև...

Այրվող դիակների ճենճահոտը դեռ շարունակում էր տարածվել, երբ քրդերը մոտեցան մեր խմբին, բայց ասկյարները նրանց հետ դարձրին: «Մյուսների հետ կարող եք անել այն, ինչ սրտներդ ուզի, բայց սրանք իրենց կրոնն ուրացել են, սրանք պաշտպանված են»,- ասաց պատասխանատու թուրք սպան: Բայց սրան չէր բավարարում սոսկ դիտողի դերում լինել այն ժամանակ, երբ քրդերը ուզածի պես զվարճանում էին: Քիչ անց այդ նույն սպայի վրանից հինգ ասկյար

դուրս եկավ՝ հրամանատարի համար երիտասարդ աղջիկներ տանելու: Նրանք պատառոտում էին այն կանանց քողերը, որոնց կազմվածքը հուշում էր, որ այդ կինը երիտասարդ պիտի որ լինի: Նրանք ճանկեցին դարենդեցի մի աղջկա: Դարենդեն Սվազ տանող քաղաքներից էր: Աղջիկը շատ գեղեցիկ էր: Երբ աղջկան քարշ էին տալիս սպայի վրանը, ասկյարներից մեկը ճանաչեց նրան:

- Բա՜հ, - խոնչաց նա, - սա մեզ պետք չի, սա կույս չի...

Աղջկան հրեցին մի կողմ և շարունակեցին իրենց «որոնումը»: Բայց դրանից հետո ո՛ր աղջկան ուզում էին տանել, գոռում էր. «Ես էլ կույս չեմ»: Նմաններին խփում էին և հրում մի կողմ:

Շուտով ասկյարները հասկացան, որ այս սիրուն որսերն իրենց պարզապես խաբում են: Նրանք մոտեցան մի քանի տարեց կանանց և բռնեցին նրանցից երեքին: Կանանցից մեկին նրանք ստիպեցին ծնկի գալ, ապա ասկյարներից երկուսը կնոջ գլուխը երկու ձեռքով հետ տարան, մինչև նրա երեսը դարձավ դեպի աստղերը: Մի երրորդ ասկյար իր բութ մատներով սեղմեց նրա ակնագնդերը՝ ասելով.

- Եթե այստեղ կույս աղջիկ չկա, նշանակում է՝ Ալլահի կամքով այս կնոջ աչքերը կարող եմ հանել:

Աղեկտուր վայնասուն բարձրացավ: Իմ տարիքի մի աղջիկ, որ իր բաց գույնի վարսերով տարբերվում էր մյուսներից (ես ճանաչում էի նրան), ճչալով գետնին ընկավ, փաթաթվեց կնոջ ակնագնդերը սեղմող ասկյարի ոտքերին և բացականչեց.

- Մայրի՛կս է, մա՛յրս... խնայեք նրան, ի՛նձ տարեք, ես դեռ կո՛ւյս եմ, կո՛ւյս եմ...

Ասկյարները բռնեցին աղջկան՝ հոհոալով իրենց հաջողության վրա: Երբ աղջկան բարձրացրին, նա ձեռքերը պարզեց դեպի մայրը, որ ընկած էր գետնին:

- Մայրի՛կ,- հեծկլտաց աղջիկը, - համբուրի՛ր ինձ, համբուրի՛ր ինձ...

Թշվառ կինը ճիգով, մի կերպ ոտքի կանգնեց, թևերը տարածեց դեպի աղջիկը, բայց... Նրա աչքերը վնասվել էին, խեղճ կինը չկարողացավ տեսնել իր աղջկան: Վերջինս խնդրեց, աղաչեց, որ թույլ տան մոտենալ մորը:

- Ես կգա՛մ, ես կգամ ձեզ հետ և հնազանդ կլինեմ, միայն թե թույլ տվեք մորս համբուրել, - ողբում էր աղջիկը: Բայց ասկյարները նրան քարշ տվեցին ու տարան:

Դժբախտ մայրը կանգնել էր՝ իր շուրջը հավաքված կանանց հենված, որոնք փորձում էին հանգստացնել նրան: Հետո հանկարծ կինը կոացավ, երկատվեց ու փլվեց գետնին: Մենք խոնարհվեցինք նրա վրա. նա արդեն մեռած էր: Նստեցինք մոր դիակի մոտ մինչև աղջկա վերադարձը: Լուսինը թեքվել էր արևմուտք, կեսգիշերն անց էր, երբ աղջիկը վերադարձավ՝ դեմքը մեզանից թաքցնելով, հետո փաթաթվեց մոր շալով: Նա նստեց մոր դիակի մոտ մինչև առավոտ, մինչև նորից չսկսվեց մեր անվերջանալի երթը:

Գիշեր չկար, որ այսպիսի բռնություններ չկատարվեին: Բռնագաղթի ճանապարհին բոլոր քարավաններն արժանանում էին նման վայրագությունների: Երբեմն ես հաշվում էի այդ վայրերով մեզանից առաջ անցած գաղթականների դիակները, այնքան ժամանակ, մինչև կորցնում էի հաշիվը: Դիակներ՝ ճամփեզրին, մղոններո՛վ դիակներ...

Տասնմեկերորդ օրը հասանք թուրքական Շիրո քաղաք, որտեղ Դամասկոս գնացող քարավանները գիշերում էին մի մեծ իջևանատանը և ապա շարժվում դեպի հարավ: Այդ օրերին ավելի շատ քարավաններ էին գալիս, քան սովորաբար: Հիմա նրանք ընդամենը հասնում էին Դամասկոսի երկաթուղուն և վերադառնում: Շիրոյում թուրքեր էին բնակվում. դա նրանց հայրենի քաղաքն էր: Նրանց մի մասը առևտրով էր ապրում, մյուս մասը բարձրաստիճան իշխանավորներ էին, որ թոշակի էին անցել Կոստանդնուպոլսում: Դա մեծ քաղաք չէր, ավելի ճիշտ հարուստ աղաների բնակավայր էր:

Մենք կանգ առանք քաղաքի մերձակայքում: Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, թուրք սպան քաղաքից դուրս եկավ: Քերիմ բեյը դիմավորեց նրան, և տեղի ունեցավ մի կարճ խորհրդակցություն: Դրանից հետո քրդերն սկսեցին հավաքել ամենագեղեցիկ աղջիկներին: Նրանք աղջիկներին պոկում էին իրենց հարազատներից, քարշ տալիս դեպի պահակատուն և հանձնում պահակներին: Եվ այսպես մի քանի ժամ քրդերը երիտասարդ կանանց քաշում-տանում էին քա-

ղաքից եկած սպաների մոտ: Թուրք սպան ընտրեց հարյուրին: Հետո կրոնափոխ եղածներին հրամայեցին միանալ հեծկլտացող աղջիկներին. բոլորին տարան քաղաք:

Քաղաքի փողոցները լեփ-լեցուն էին թուրքերով ու արաբներով: Նրանք մեզ ծաղրուծանակի էին ենթարկում, անվայել ու անպատիվ շարժումներ անում, մինչ մենք անցնում էինք փողոցներով: Հավատափոխների շարքերում կային հազարավոր տարեց կանայք, որոնց դուստրերը իսլամ էին ընդունել՝ իրենց մայրերին փրկելու համար: Երբ թուրք խուժանը նկատեց նրանց, լկտիաբար սկսեց ծաղրել: Մի անգամ պահակների թողտվությամբ թուրքերը վրա տվեցին այս խմբին: Նրանք բռնեցին տարեց կանանցից չորսին, մերկացրին և ուսերին դրած՝ ցնծության աղաղակներով և գոռում-գոչյունով տարան: Մենք այլևս չիմացանք, թե հետո ինչ եղավ այդ դժբախտների հետ: Ես կարծում եմ՝ թուրք ամբոխը նրանց այս ու այն կողմ շպրտեց, մինչև տանջվելով մահացան:

Մեզ տարան մի մեծ շենք, որը պատկանում էր Հաջի-Ղաֆուրին: Մեքքա ոտքով ուխտի գնացած բարեպաշտ մուսուլմանին էին «հաջի» կոչում: Հաջի-Ղաֆուրը կրոնապաշտ մարդ էր համարվում: Նրա տանը մեզ լցրին քարաշեն մի մեծ, դատարկ սենյակ, որտեղ սովորաբար միասապատ ուղտեր էին պահում:

Հաջի-Ղաֆուրը մի քանի ասկյարի հետ ներս մտավ: Հավատափոխների մեր խումբը քրդերի հսկողությամբ հավաքվել էր սենյակի մի անկյունում: Հաջի-Ղաֆուրն իր ծառաներին հրամայեց ջոկել սիրուն աղջիկներին ու կանանց: Ընտրյալները երեսունն էին, ես էլ՝ նրանց մեջ: Մեզ դուրս հանեցին և տեղավորեցին տան երկրորդ հարկի մի ավելի փոքր սենյակում: Հաջի-Ղաֆուրի ճաշակը չբավարարած աղջիկների ճակատագիրն ինձ անհայտ մնաց: Ասկյարներից մեկն ասաց, որ նրանց վերադարձրել էին և միացրել տեղահանված հայերի խմբերին:

Մեզ՝ ընտրյալներիս, տարան բաղնիք, հետո շորեր բերեցին մեզ համար: Աղջիկներ կային, որ գրեթե մերկ էին. նրանց հագուստը մաշված ու քրքրված էր: Թուրք կանայք ու սևամորթ ստրկուհիները հետևում էին մեզ լողանալիս, իսկ հետո դուռը փակեցին, գնացին:

Մեկ ժամ անց ոտնաձայներ լսեցինք: Դուռը բացվեց, և վիթխարահասակ սևամորթ ստրուկը՝ հետևը գցած մի քանի այլ սևամորթների, մեզ դուրս կանչեց: Վախից կուչ եկած՝ չէինք համարձակվում ո՛չ հարց տալ, ո՛չ էլ ընդդիմանալ նրանց հրամաններին: Մենք հետևեցինք ստրուկներին, անցանք դահլիճների միջով, բարձրացանք սանդուղքով և մտանք գորգերով ծածկված, լապտերներով ու մոմերով պայծառ լուսավորված ընդարձակ մի սրահ: Այնտեղ՝ բարձերով բեռնված բազմոցին, նստած էր Հաջի-Ղաֆուրն իր խավի մի խումբ թուրքերի հետ. բոլորն էլ՝ միջին տարիքի: Նրանց երեսից չարություն էր թափվում:

Կրոնափոխ եղածների խմբից ընտրվածները կանգնեցին մի կողմ, իսկ մյուսներին ծառաներից մեկն ասաց.

- Հաջի-Ղաֆուրի կամքն է, որ հրաժարվեք ձեր կրոնից, իսլամ ընդունեք՝ արժանանալով Ալլահի ողորմածությանը: Այդ դեպքում կփրկվեք:

Թուրքերը ցնծագին բացականչություններով հավանություն տվեցին ասվածին: Այդ նույն րոպեին մի չալմայավոր մոլլա եկավ իր սպասավորի հետ՝ աղոթքի համար նախատեսված կարպետով, նրա հետևից՝ սևամորթ ծառան՝ ձեռքին եզան կաշվից մտրակ: Կարպետը փռելով հատակին՝ մոլլան սպասեց: Թուրքերը մատնացույց արեցին կուչ եկած աղջկան, և ծառան քաշելով սպայի մոտ բերեց նրան:

- Ի՞նչ ես ասում, - հարցրեց սպան:

- Իմ Տերը Քրիստոսն է, Նրան եմ ապավինում, - պատասխանեց աղջիկը:

- Սևամորթ ստրուկի մտրակը շաչեց նրա ուսերին: Երբ նա գթասրտություն էր հայցում, մոլլան հանեց կոշիկները, քայլեց ծիսական կարպետի վրայով և երեսը դարձրեց դեպի Մեքքա: «Մեծ է Ալլահը, չկա ուրիշ Աստված Ալլահից բացի», - միալար կարդաց մոլլան: Սևամորթը աղջկան հրեց դեպի կարպետը: Նա պատրաստ պահել էր մտրակը՝ նորից հարվածելու համար, եթե աղջիկն անմիջապես ծնկի չգար:

Աղջիկն էլ դեմքը դարձրեց դեպի Մեքքա և ծնկի իջավ: Նրա մարմնի վրա արդեն բաց վերքեր էին առաջացել, որոնք արյունահոսում էին: Մտրակի սարսափից նա դողում էր: Միակ ելքը երդումը

կրկնելն էր. «Չկա ուրիշ Աստված, բացի Ալլահից, և Մուհամեդը նրա առաքյալն է»:

Երբ վերջին կինը արտասանեց այդ սրբապիղծ բառերը, մոլլան ծալեց կարպետը և հեռացավ սենյակից: Հաջի-Ղաֆուրը՝ արդեն ժպտերես, հրամայեց մեզ բոլորիս կրկին կանգնել հյուրերի դիմաց:

Բոլորն «ուրացան» իրենց հավատքը, բացի ինձանից. թուրքերը թյուրիմացաբար կարծել էին, թե ես ավելի վաղ եմ հավատափոխ եղել, թե չէ ինձ էլ չէին թողնի մնալ այդ խմբում: Օրենքը և Հաջի-Ղաֆուրի կրոնապաշտությունը հիմա թույլ էին տալիս մեզ հետ վարվել այնպես, ինչպես կամենային: Մեկ առ մեկ նրանք մեզ տնտղեցին, ջոկջկեցին ըստ ճաշակի: Նախ ընտրեց Հաջի-Ղաֆուրը, ապա միայն՝ նրա հյուրերը: Յուրաքանչյուր թուրքի հասնում էր 5-6 աղջիկ: Ինձ և այն երկու քույրերին, որոնց մայրը Սվազի ճանապարհին մեռավ, թողեցին Հաջի-Ղաֆուրի համար:

Քույրիկներն այդ օրը շատ հանգիստ էին: Այն ժամանակվանից, երբ մեզ բերեցին Հաջի-Ղաֆուրի տուն, նրանք լուռ էին, նույնիսկ չէին լալիս:

Հաջի-Ղաֆուրի հյուրերն իրենց ընտրած աղջիկներին տարան: Երբ նրանք գնացին, Հաջի-Ղաֆուրը նորից մեզ կանչեց: Նախ երկու քույրերից ավագի հետ խոսեց: Նրա բառերը սարսափազդու էին. աղջկան հարցրեց այնքա՜ն ցածրաձայն ու մեղմ, բայց և այնքա՜ն դաժան ու նենգ, թե կամենո՞ւմ է արդյոք ապրել իր տանը, տրվել իրեն մարմնով ու հոգով և լինել հնազանդ ու սիրալիր:

Աղջիկը ակնթարթ իսկ չսպասեց, պատասխանեց.

- Ես հրաժարվեցի իմ Աստծուց՝ մայրիկիս փրկելու համար, բայց իզուր... Մորս կյանքից զրկեցին: Ես նորից ինձ նվիրել եմ իմ Աստծուն և երբեք չեմ ուրանա Նրան:

Հաջի-Ղաֆուրը նշան արեց սևամորթ ստրուկին: Սա աղջկան դուրս տարավ: Քույրը կանգնած էր այնտեղ: Հաջի-Ղաֆուրի հայացքը հանդիպեց նրան:

- Իսկ դո՛ւ, փոքրիկս, - ասաց նա դարձյալ այնպե՜ս փաղաքուշ, այնքա՜ն մեղմաձայն, ինչպես քիչ առաջ՝ կրկնելով այն նույն հարցերը, ինչ տվել էր քրոջը:

Աղջիկը խոսեց հանգիստ, բայց նույնքան վճռական, ինչպես իր քույրը:

- Նա իմ քույրն է: Մենք միասին ականատես եղանք մեր մոր սպանությանը: Հիմա դու քույրիկիս հեռացրիր, կարող ես ինձ էլ սպանել, ես երբե՛ք չեմ ենթարկվի քեզ:

Մենք ահաբեկված դիտում էինք այդ տեսարանը: Հաջի-Ղաֆուրի աչքերը նեղացան ու փայլատակեցին:

- Լա՜վ ես խոսում, փոքրիկս,- ասաց նույն մեղմությամբ, կարծես խոսելիս լիներ իր սիրելի դստեր հետ,- հավանաբար լավ կլիներ սպանեի քեզ՝ որպես նախազգուշացում մյուս փոքրիկներին:

Սևամորթ ստրուկը մտրակը ձեռքին կանգնած էր այնտեղ: Հաջի-Ղաֆուրը ձեռքով նշան արեց: Երկու ուրիշ ծառաներ առաջ եկան, աղջկան մերկացրին, և մտրակի հարվածներ տեղացին նրա մերկ մարմնին:

Ես փակեցի աչքերս, որպեսզի չտեսնեմ, բայց չէի կարող չլսել մտրակի շաչյունը, որ վերքեր էր բացում նրա մերկ մարմնի վրա էլի՛ ու էլի՛, մինչև կորցրի մտրակահարվածների հաշիվը: Հետո հանկարծ զգացի, որ հարվածների ձայնն այլևս չի լսվում: Բացեցի աչքերս և տեսա, որ ծառաներից մեկը բարձրացրել է աղջկա մարմինն ու տանում է: Նա այլևս չկար...

Մեզնից և ոչ ոք այդ խիզախությունը չունեցավ: Բոլորս խոստացանք հնազանդ լինել Հաջի-Ղաֆուրին: Մեզ դուրս բերեցին մեկ այլ դռնից և տարան կանանց հարկաբաժին ու հանձնեցին արդեն մեզ սպասող թուրք կանանց:

ԳԼՈՒԽ Թ
ՀԱՐՁԱԿՈՒՄ ՎԱՆՔԻ ՎՐԱ

Հարեմի կանայք հեռացան, բացի երեքից. նրանք մեզ առաջնորդեցին երկար, նեղ և ճրագով թույլ լուսավորված միջանցքով: Մենք անցանք վարագույրներով ծածկված դռների միջով, մի շարք սալահատակված փոքր սենյակների կողքով. դրանք կանանց ննջարաններն էին: Վերջապես հասանք մի փայտե դռան: Կանանցից մեկը դուռը բացեց և մեզ ներս հրավիրեց: Նրանցից մեկը բարակ մոմ վառեց:

Սենյակը դատարկ էր, լուսամուտ չուներ: Հատակին գորգեր էին փռված՝ նախատեսված քնելու համար, սակայն չկար ո՛չ մութաքա, ո՛չ էլ օթոց: Կանայք մեզ կարգադրեցին հանվել: Մենք հնազանդորեն կատարեցինք նրանց ասածը, որից հետո նրանք առանց որևէ բառ փոխանակելու վերցրին մեր զգեստները, մոմը, դուռը փակեցին մեզ վրա ու հեռացան:

Ողջ գիշեր սպասեցինք. ինչին՝ մենք էլ չհասկացանք: Վախենում էինք քնել, եթե նույնիսկ կարողանայինք: Երբ լսեցինք մոտակա մինարեթից մուսուլմաններին աղոթքի կանչող ազանի ձայնը, հասկացանք, որ լուսացել է: Շուտով հարեմն արդեն ոտքի վրա էր: Մենք դողում էինք և սպասում դռան բացվելուն:

Վերջապես հսկա սևամորթ ծառան դուռը լայն բացեց՝ լուսավորելով սենյակը հարեմի մյուս սենյակների պատուհաններից թափանցող լույսով: Աղախիններից մեկը, որ նախորդ գիշեր ընդունել էր մեզ, ներս մտավ նրա հետևից:

Յուրաքանչյուրիս համար այդ կինը բերել էր տնային հագուստ, հողաթափեր և գուլպաներ: Հասարակ հագուստ էր՝ կարված սատինից ու վուշից: Թեպետ ես ուզում էի մի բանով ծածկել մարմինս, սակայն չէի կարողանում թաքցնել զզվանքս թուրքական ատելի հագուստի հանդեպ: Կինը դա նկատեց և կարծես թե ինձ հասկացավ:

- Դու շատ շուտով ավելի գեղեցիկ հանդերձներ կստանաս... քո նշանդրեքից հետո...

Իմ նշանդրեքի՞ց հետո...

Երբ կնոջ օգնությամբ հագնվեցինք, նա մեզ հրամայեց հետևել սևամորթ ծառային:

- Այն, ինչ հիմա դուք կտեսնեք, Հաջի-Ղաֆուրի ցանկությունն է: Դա կօգնի ձեզ որպես ուղեցույց՝ հարեմում ձեր վարքագիծը դրսևորելու համար, - ասաց նա:

Ստրուկը մեզ առաջնորդեց մի ավելի մեծ սենյակ, որտեղ հուզված կանայք, խռնված լուսամուտի առջև, դուրս էին նայում:

Պատուհանի մոտ կանգնած սևամորթը նայեց դուրս և մեզ հրամայեց ավելի մոտենալ: Փեղկերը բացվում էին դեպի ընդարձակ բակը, որի երկայնքով փոքր շատ լուսամուտներ կային: Մի պահ ես ոչինչ չնկատեցի, բացի քարակերտ մռայլ պատից: Հետո աչքերս ակամա բարձրացրի վեր՝ դեպի ավելի բարձր պատուհանը: Ճչացի ու հետ քաշվեցի:

Անհնազանդության համար պատժված աղջկա դիակը ոտքերից կախել էին լուսամուտն ի վար. նրա թևերը կախ էին ընկել, իսկ մազերը թափվել էին դանդաղ ճոճվող գլխի շուրջը: Աղջկա ճիչերը խլացրել էր բերանակապը:

Մեր աղջիկներից մեկը՝ Լուսաբերը, որ ողջ գիշեր լաց էր եղել, հիստերիկ վիճակում ընկավ ծնկների վրա և այդպես էլ մնաց: Ստրուկը նրան բարձրացրեց և ստիպեց, որ նայի: Երբ սևամորթը հասկացավ, որ նա համարյա խելքը թռցրել է, պառկեցրեց սենյա-

կի անկյունում դրված թախտին: Երկու սևամորթ աղջնակներ փորձեցին հանգստացնել նրան: Մյուս կանայք նույնպես հավաքվեցին Լուսաբերի շուրջը: Ստրուկը հեռացավ նախորդ օրը մեզ ուղեկցած աղախնի հետ:

Հարեմի կանայք կարծես թե ցանկանում էին բարի լինել մեր հանդեպ. թրքուհիներն ավելի տարիքով էին, քան կրոնափոխ եղածները: Հաջի-Ղաֆուրի կանանցից երկուսը դրանց մեջ չէին, քանի որ նրանց կացարաններն ավելի հեռու էին: Ես չգիտեի՝ ինչ կապ կար Հաջի-Ղաֆուրի և այս կանանց միջև՝ հարեմակա՞ն թե ազգակցական: Գրեթե բոլոր երիտասարդ կանայք հայ էին, որոնց բռնի բերել էին այստեղ: Նրանք շատ էին կարեկցում մեզ:

Ուտելիքը բերեցին մեր սենյակ: Բոլորս միասին կերանք: Ես վճռել էի հնարավորինս քաջ լինել, հավատալ ու աղոթել, որ կփրկվեմ այս դժոխքից:

Հարեմի բոլոր աղջիկներն անցել էին այս փորձությունը, ինչպես մենք նախորդ գիշեր՝ Հաջի-Ղաֆուրի ներկայությամբ: Հարեմում ութ հայ աղջիկներ կային. բոլորն էլ հավատափոխ էին եղել իրենց հարազատներին փրկելու հույսով: Նրանք համաձայնել էին գնալ Հաջի-Ղաֆուրի տուն, երբ հասել էին Քիլայիկ: Աղջիկներից միայն մեկը գիտեր, թե ինչ է պատահել իր ընտանիքի հետ: Նա տեսել էր մոր սպանությունը, քրոջ առևանգումը Մալաթիայից դուրս գալուց անմիջապես հետո:

Չորս օր մնացի կանանոցում: Հաջի-Ղաֆուրն ինձ չէր կանչում: Երրորդ օրը՝ առավոտյան, նորեկ աղջիկներից մեկը եկավ մեզ մոտ՝ լուռ ու ամոթահար, աչքերը խոնարհած: Նույն օրը հարեմի ստրուկները հանեցին նրա հասարակ շորը՝ էնթարեն, և բերեցին ժանեկազարդ մի շքեղ զգեստ: Սա էր «նշանված» լինելու վկայությունը:

Մեզ թույլ չէին տալիս դուրս գալ կանանց հարկաբաժնից: Ամեն գիշեր մեզ ստիպում էին կրկնել իսլամական աղոթքներ: Ես սովորեցի այդ բառերը բարձրաձայն արտասանել, սակայն մտքումս թարգմանում էի քրիստոնեական աղոթքների բառերով: Հարեմի գլխավոր աղախինը՝ մեծահասակ մի թրքուհի, այնքա՞ն բարի էր, որքան հնարավոր էր: Նա ամեն օր առիթ էր գտնում «մեզ ջերմացնելու»՝

ասելով՝ եթե ուզում ենք ապրել և երջանիկ լինել, պետք է դուր գանք Հաջի-Ղաֆուրին:

Հարեմի կանանցից մի քանիսը մեզ պատմեցին այն աղջիկների մասին, որոնց բերել էին հարեմ, բայց նրանք այլևս չէին երևացել տիրոջ հետ «նշանվելուց» հետո: Երբ այս բաների մասին պատմում էին մեզ, մեր աչքի առջև հառնում էր պատուհանից կախված մարմինը. դա էր Հաջի-Ղաֆուրի հնազանդեցնելու եղանակը:

Մեզ այլևս չփակեցին առանց պատուհանի մութ սենյակում: Մի անգամ Հաջի-Ղաֆուրի կանանցից մեկը եկավ հարեմ՝ մեզ տեսնելու: Նա բաղդադցի միջին տարիքի կին էր: Մի ժամանակ հավանաբար շատ գեղեցիկ էր եղել, բայց, իմ կարծիքով, շատ անսիրտ էր ու սառը: Նա մեզ կանգնեցնում էր իր դիմաց, հարցուփորձ անում՝ լսելու համար յուրաքանչյուրիս գլխին եկած փորձությունների մասին: Նրա նպատակն էր մեզ ծուղակը գցել, որպեսզի խոստովանեինք, որ ներքուստ Ալլահին չենք ծառայում:

Հարեմում հայ աղջիկներից մեկը փերեցի էր: Փերի գյուղը գտնվում էր Չմշկածագի և Խարբերդի միջև: Գիշերները նա պատմում էր ինձ իրենց գյուղի ջարդերի մասին և այն մասին, թե ինչպես թուրքերը խնայել էին իրեն, որովհետև նա իսլամ էր ընդունել մինչև Մալաթիա հասնելը: Այստեղ նրան փախցրել էին, տարել նախ մի բեյի տուն, ապա ուրիշ հայ աղջիկների հետ՝ Քիլայիկ և վերջապես բերել ուղիղ Հաջի-Ղաֆուրի ապարանք: Նա անցել էր «նշանդրեքի» արարողությունը և արժանացել քիչ թե շատ բարեհաճ վերաբերմունքի թուրքերի կողմից:

Արուսյակ էր այդ դեռատի աղջկա անունը, Արուսյակ Վարդազարյան: Նրա հայրը՝ Հովհաննեսը, մեծ հողատարածքներ ուներ: Արուսյակն իր կրթությունն ու դաստիարակությունը ստացել էր Կոստանդնուպոլսում: Այստեղ նա ծանոթացել էր Նյու Յորքում բնակվող պարոն Քլիվլենդ Դոջի հետ, ով այնքա՜ն շատ բան է արել Թուրքիայի կրթական համակարգի համար (Ամերիկայում հաստատվելուց հետո ես իմացա, որ պարոն Քլիվլենդ Դոջը եղել է հայերի լավագույն բարեկամը ողջ աշխարհում):

Արուսյակը ներքուստ շարունակում էր քրիստոնյա մնալ: Նա հույս չուներ, թե կարող է երբևէ ազատվել հարեմից: Նա ինձ ասաց,

որ Հաջի-Ղաֆուրը հայ աղջիկներին պահում է մինչև ձանձրանալը կամ ավելի սիրուն աղջիկներ ստանալը: Ձանձրանալուց հետո նա «հին» հարճերին ուղարկում էր իր բարեկամներին կամ վաճառում թուրք գյուղացիներին: Արուսյակը ձգտել էր դուր գալ Հաջի-Ղաֆուրին, որպեսզի իրեն չվաճառի՝ առանց այն էլ թշվառ իր վիճակը վատթարացնելով, որովհետև երբ աղջիկն ընկնում էր ստրկավաճառ շուկաներ, նրա ապագան հասարակաց տներն էին՝ ասկյարների և զաբթիեների համար ստեղծված:

Հինգերորդ օրվա երեկոյան սիրտս դող ընկավ, ծնկներս թուլացան, երբ մի փոքրիկ սևամորթ ստրկուհի եկավ ինձ ասելու, որ Հաջի -Ղաֆուրն իրեն ուղարկել է իմ հետևից:

Աղախինները հավաքվեցին շուրջս՝ իրենց զարմանքն արտահայտելով, թե ես ինչո՞ւ չեմ ուրախանում, սակայն երբ տեսան այտերիս թափվող արցունքը, դադարեցրին իրենց կատակները և բացականչեցին. «Վերջապե՜ս, բախտավոր լինես...»: Հասել էր տառապանքներիս ժամը:

Երբ ինձ հագցնում ու զարդարում էին, ես փակում էի աչքերս և աղոթում ոչ թե փրկվելու համար, դա անհնար էր, այլ ուժ ու զորություն էի խնդրում Աստծուց. ես համոզված էի՝ Տերը կօգնի և ապավեն կլինի ինձ: Հարեմի կանանցից մեկն ինձ հետ իջավ նեղ միջանցքով, և մենք անցանք այն դռնով, որով հինգ օր առաջ ներկայացա Հաջի-Ղաֆուրին:

Սենյակը պայծառ լուսավորված էր: Հենց դռան մոտ վիթխարի սևամորթը կանգնած սպասում էր: Սենյակի խորքում, մութաքայի վրա նստած, Հաջի-Ղաֆուրն իր նարգիլեն էր ծխում: Երբ չրխկոցով դուռը փակվեց իմ հետևից, ես կանգ առա, իսկ Հաջի-Ղաֆուրը բարձրացրեց գլուխը և չռած աչքերը հառեց երեսիս: Նա ձեռքի շարժումով ինձ նշան արեց, որ մոտենամ և նստեմ իր ոտքերի մոտ՝ մութաքայի վրա: Անկախ իմ կամքից՝ ես ընկրկեցի և ձեռքերով փակեցի աչքերս: Ակնթարթ անց զգացի, որ սևամորթի ձեռքն ամուր բռնեց իմ թևը: Ես փորձեցի ազատվել նրա ձեռքից, հավաքել ուժերս և առաջ գնալ: Գիտակցում էի, որ ապրելուս հույսը կախված է իմ հնազանդությունից:

Սևամորթն է՛լ ավելի ամուր սեղմեց ձեռքս: Նա մոլտաց. «Լավ աղջիկ լինես, քեզ համար ավելի լավ կլինի»: Ես աչքերս չէի բարձրացնում: Գնացի ու նստեցի Հաջի-Ղաֆուրի ոտքերի մոտ դրված մութաքայի վրա:

Կարիք չկա պատմելու այդ մղձավանջային գիշերվա մասին:

Հաջորդ օրը Արուսյակին վճռականապես ասացի՝ ինչ էլ լինի, ես պե՛տք է փախչեմ Հաջի-Ղաֆուրի տնից. այստեղ մնալը նշանակում է է՛լ ավելի շատ տառապել և կորցնել հույսի վերջին նշույլը, թե երբևէ կհանդիպեմ մորս Դիարբեքիրում, որտեղ տարագրյալներից վալին դրամ էր վերցնում և թույլ էր տալիս մնալ քաղաքի մոտակայքում, իսկ եթե այդ խեղճերն այլևս վճարելու փող չէին ունենում, նրանց ուղարկում էին սիրիական անապատ:

Ես փորձեցի սիրաշահելով համոզել Հաջի-Ղաֆուրին, որպեսզի մարդ ուղարկի Դիարբեքիր՝ գտնելու և փրկելու իմ հարազատներին կամ որևէ լուր բերելու: Նա իր գթասրտությանն ինձ չարժանացրեց: «Դու հիմա թուրք աղջիկ ես, - ասաց նա, - պետք է անցյալում թողնես անհավատների հետ ունեցած բոլոր հարաբերություններդ»:

Արուսյակը սարսափեց՝ լսելով փախչելու իմ մտադրության մասին, քանի որ լավ գիտեր այն ահավոր հետևանքների մասին, որ սպառնում էր ինձ բռնվելու դեպքում: Այն հարճերը, ովքեր փորձել էին փախչել, վաճառվել էին հասարակաց տներին, որտեղ էլ շատ շուտով գտել էին իրենց վախճանը: Այդուամենայնիվ, երբ ես նրան հասկացրի, որ ցանկացած ռիսկի կդիմեմ՝ Հաջի-Ղաֆուրի տանը չմնալու համար, նա խոստացավ օգնել ինձ: Հենց այդ գիշեր, երբ մենք մենակ էինք սենյակում, նա ինձ պատմեց հետևյալը. «Հարթավայրերից դեպի արևմուտք՝ դեպի Եփրատ գետը, մի վանք կա, որ դարեր առաջ կառուցել են հռոմեական կաթոլիկ եկեղեցու դոմինիկյան հայրերը: Նրանք Հայաստան էին եկել որպես միսիոներ: Դարեր շարունակ կրոնական հալածանքի ենթարկված հայ փախստականներն ապաստան էին գտել այդ վանքում: Եվ բազում ուսուցիչներ են այդ վանքից գործուղվել Սիրիա և նույնիսկ Քուրդիստան»:

Ալբուստանցի մի մարդ՝ ծպտյալ քահանա, թուրքի անվան տակ գնում-գալիս էր Կովկաս՝ հույս ունենալով օգնություն ստանալ ռուս-

ներից գաղթականների համար: Այս մարդը Արուսյակին պատմել էր վանքի մասին դեռևս Մալաթիայում եղած ժամանակ: «Շատ հայ աղջիկներ են ապաստան գտել այդ վանքում,- ասել էր քահանան, - քանի որ վանքի հայրերին չէին նեղացնում: Այդ վանք-ապաստարանը բավական հեռու էր քրիստոնյա գաղթականների քարավանների ճանապարհներից: Շատ տարիներ առաջ, ասել էր քահանան, վանքի հայրերը փրկել էին մի հանրահայտ ցեղապետի կյանքը, և դրանից հետո առասպելներ էին հյուսվել այդ մասին, մի բան, որ հեռու էր պահում քուրդ ավազակախմբերին վանքի վրա հարձակվելուց: Այս կամ այն պատճառով թուրքերը նույնպես շրջանցում էին այդ վանքը:

Արուսյակն ինձ վստահեց նաև իր գաղտնիքը. նա էլ էր հաճախ ծրագրել փախչել այդ տնից և հասնել վանք: Նա վստահ էր, որ այնտեղ ինքն ապահով կլիներ գոնե ժամանակավորապես: Սակայն ամեն անգամ քաջությունը չէր ներել: Հիմա նա ոգևորված էր, քանի որ ես վճռել էի փախչել. ավելի լավ էր մեռնել, քան մնալ Հաջի-Ղաֆուրի ստրուկը:

Ենջասենյակի պատուհանները բարձր էին, բայց ճաղապատ չէին, քանի որ դրանք բացվում էին դեպի բակ: Արուսյակը գիտեր, որ բակից նախասրահ, այնտեղից էլ դեպի փողոց տանող ճանապարհ կա: Հաճախ հարեմի ծառաները դուրս ու ներս էին անում այդտեղով:

Մի երեկո Հաջի-Ղաֆուրը կարգադրեց մի ցանկահարույց աղջկա բերել իր մոտ: Կանանոցում դեռ քնելու ժամը չէր: Ես ու Արուսյակը «պլստացինք». պատուհանից իջանք բակ և դուրս եկանք փողոց: Մեր դեմքը ծածկել էինք քողով, հագել էինք թուրք կնոջ հողաթափեր. այդ կերպարանքով մեզ տեսնողը կկարծեր, թե թուրք աղջիկներ ենք կամ հարեմի ստրկուհիներ, որ շտապում ենք տուն՝ խուսափելու համար հանդիմանությունից:

Երբ հասանք քաղաքի դարպասներին, վախեցանք, թե թուրքերը մեզ կկանգնեցնեն, սակայն դարպասները պաշտպանող ասկյարները քաղաքի մոտ հանգրվանած հայ գաղթականների քարավանից մի քանի աղջիկ էին գողացել և մեզ նկատելու ժամանակ չունեին: Շուտով քաղաքի սահմաններից հեռացանք, մնացինք մեն-մենակ խավարում:

Թեթև հողաթափերը մեր ոտքերը չէին պաշտպանում սուր ավազահատիկներից: Մենք վախենում էինք ամեն մի ստվերից, ինչպես դարանակալ քրդից:

Արուսյակը կարծում էր, թե մինչև վանք 20 մղոնից քիչ ավելի է:

Երեք օր քայլեցինք: Թափառական գյուղացիների ու քրդերի վախից ցերեկը թաքնվում էինք ավազուտներում, իսկ գիշերը քայլում էինք, ինչքան կարող էինք: Ո՛չ հաց ունեինք, ո՛չ էլ ուտելու որևէ բան: Գիշերները, երբ գյուղի շները քնած էին, մենք համարձակվում էինք մոտենալ գյուղի ջրհորին:

Չորրորդ օրը Արուսյակը սկսեց տանջվել ծարավից. նախորդ գիշերվանից ջուր չէինք խմել: Երբ ես հուզմունքից լաց եղա, Արուսյակն իր լեզուն թացացրեց իմ արցունքներով: Վերջապես նա այլևս չկարողացավ քայլել և փուլ եկավ գետնին: Հեռվում երևում էր արաբական մի գյուղ: Արաբները քրդերի նման չէին: Եթե նրանք որպես վարձկան չէին աշխատում թուրք փաշաների մոտ, դաժան չէին հայերի նկատմամբ: Արուսյակի կյանքը փրկելու համար ես թողեցի նրան և շտապեցի այդ գյուղ:

Արաբ կանայք հավաքվեցին շուրջս: Ես հաց ու ջուր խնդրեցի: Կանայք խղճացին ինձ, խղճացին նաև արաբ տղամարդիկ, որ նույնպես մոտեցել էին մեզ: Նրանք բերեցին մի դդում լիքը սառը ջուր և մի կտոր հաց: Կանանցից մի քանիսը եկան ինձ հետ, որտեղ Արուսյակն էր ընկած:

Ջուրը Արուսյակին վերակենդանացրեց և ուժերը տեղը բերեց: Ես նույնպես սրտապնդվեցի: Մեր հագի պատառոտված քրջերը տեսնելով՝ արաբ կանայք մեզ զգեստ և սանդալներ տվեցին: Նրանք ասացին, որ վանքը մի քանի մղոն է գյուղից հեռու և ցույց տվեցին ամենակարճ ճանապարհը: Մի արաբ տղա ընկերացավ մեզ, որպեսզի ճանապարհամերձ գյուղերի բնակիչները չվնասեին մեզ: Տղան մեզ պաշտպանեց նաև չեչեններից. եթե նա չլիներ, չեչենները մեզ գերի կվերցնեին: Երբ որոշ հեռավորությունից երևացին վանքի մոխրագույն պատերը, ես ու Արուսյակը ծնկի իջանք և փառք տվեցինք մեր Փրկչին: Երբ արաբ տղան տեսավ, որ մենք աղոթում ենք «անհավատների» Քրիստոսին և խաչակնքում, հետ դարձավ և վազեց գյուղ: Մենք շա՜տ երախտապարտ էինք նրան...

Գրեթե երեկո էր: Վանականներն աղոթում էին: Մենք սպասեցինք դարպասի մոտ, մինչև նրանցից մի քանիսը մեզ լսեցին և ներս ընդունեցին: Վանականները շատ բարի էին: Նրանք հավաքվեցին մեր շուրջը և լսեցին մեր պատմությունը: Հետո մեզ տարան մի փոքր մատուռ, ծնրադրեցին մեր շուրջը, մինչ վանահայրը գոհության աղոթք ասերգեց:

Երբ աղոթքն ավարտվեց, վանականներից մեկը մեզ առաջնորդեց վանքի այն մասը, որ բաժանված էր գլխավոր մասնաշենքից: Ապշած մնացինք, երբ այնտեղ տեսանք ավելի քան 50 հայ աղջիկների և այրիացած հարսների. նրանք էլ մեզ պես ապաստան էին գտել վանականների մոտ: Գրեթե բոլոր աղջիկներն ու երիտասարդ կանայք Վանից էին՝ Հայաստանի ամենամեծ քաղաքից, կամ էլ հարակից շրջաններից: Ոմանք Բիթլիսից էին, որտեղ թուրքերն իմ ժողովրդի հազարավոր զավակների էին կոտորել մեկ ժամվա ընթացքում՝ կենդանի թողնելով միայն աղջիկներին ու մանկամարդ կանանց՝ թուրքերի հաճույքների համար: Մի քանիսը փախել էին Դիարբեքիրից:

Հայ հոգևորականները և նրանց արաբ բարեկամները այդ աղջիկներին բերել էին վանք՝ ապահովության համար: Նրանք եկել էին մեկ-մեկ կամ խմբերով, կանգնել դարպասի մոտ և օգնություն խնդրել այնպես, ինչպես՝ ես ու Արուսյակը: Վանականները ներս էին թողել նրանց՝ անտեսելով անխուսափելի վտանգը:

Մեզ բոլորիս զգուշացրել էին շենքից դուրս չգալ, որովհետև թափառական քրդերն ու ասկյարները պատահաբար կարող էին նկատել ու հայտնաբերել, որ վանքը դարձել է վտանգից փախչող գաղթականների ապաստարան: Վանականներն աղոթում էին մեզ հետ օրը երկու անգամ: Նրանք կերակրում ու խնամում էին տկարներին: Արուսյակը շատ ուրախացավ, երբ վանահայրը նրան ասաց. «Աստված գիտի, աղջի՛կս, որ դու առերես ես ուրացել, գիտի նաև, որ դու քո հոգու խորքում հավատարիմ ես մնացել Տիրոջը»: Երբ ծեր վանահայրն Արուսյակի հետ առանձին ծնրադրել և աղոթում էր, հատկապես աղաչեց, որ Աստված ների Արուսյակին իր մեղավոր արարքի համար՝ Ալլահին աղոթելու համար:

Երկու շաբաթ մենք հանգիստ ապրեցինք վանքում: Հանկարծ մեր խաղաղ կյանքն ավարտվեց...

Մի գիշեր, երբ վանքի բնակիչները վաղուց քնած էին, արթնացան անասելի աղմուկ-աղաղակից, դարպասներին տեղացող հարվածներից: Մեր պատուհաններից երևում էր բակը, բայց դարպասը՝ ոչ: Մենք, վախից կուչ եկած, հավաքվել էինք իրար գլխի: Հետո նկատեցինք, որ վանականների մի փոքրիկ խումբ շտապ հագնվել և ծեր վանահոր առաջնորդությամբ, մոմերի լույսի տակ բակի միջով դանդաղ առաջ է շարժվում: Երբ նրանք անհետացան մեր տեսադաշտից, աղմուկն ու աղաղակը միանգամից լռեց, ապա լսվեցին ձայներ, որոնք պահանջում էին դարպասները բացել:

Երբ վանականները մերժեցին, կրկին աղմուկ-աղաղակ բարձրացավ, և մենք տեսանք, թե վանականներն ինչպես են հետ-հետ քաշվում բակի միջով: Մի ակնթարթ հետո տարօրինակ կերպարանքով չեչենների հրոսակախումբը խուժեց վանքի բակ, հետո դեպի շենքի դռները: Երբ վանականները հրաժարվել էին բացել երկաթե դարպասները, նրանք մագլցել էին պատն ի վեր և ցած թռել բակ: Չեչեններն ավելի վայրենի, ավելի դաժան են, քան քրդերը: Նրանք անընդմեջ պատերազմ են մղում կա՛մ քրդերի, կա՛մ արաբների, կա՛մ էլ թուրքերի դեմ: Ձարդերի ժամանակ թուրքերը նրանց խաղաղեցնելու համար թույլ էին տալիս կողոպտել հայ գաղթականներին, հափշտակել հայ դեռատի աղջիկների, որքան կամենային: Անցյալում էլ թուրք փաշաների ու բեյերի համար չեչենները եղել են գեղեցիկ աղջիկների հափշտակիչներ: Նրանք նույնիսկ չէին վարանում գողանալ սեփական ժողովրդի աղջիկներին՝ Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի շուկաներում վաճառելու համար:

Վանականները փորձեցին փակվել վանքի մատուռի մեջ: Ծերունի վանահայրը պատուհանների երկաթյա ցանցերի հետևից չեչենների առաջնորդին խնդրում, աղաչում էր, հիշեցնում, որ նույնիսկ քրդերը հարգանքով են վերաբերվել վանքին: Բայց չեչենների առաջնորդը ինչ-որ ձևով տեղեկացել էր, որ հայ աղջիկներ են թաքնված վանքում և պահանջում էր, որ մեզ որպես փոխհատուցում հանձնեն իրենց վանականների կյանքի դիմաց:

Վանականները հրաժարվեցին բացել մատուռի դռները և հայտնել մեր թաքստոցի տեղը: Բայց մատուռի դռները փայտից էին, չդիմացան, երբ չեչենները փորձեցին իրենց ուժը: Մենք լսեցինք վանականների աղեկտուր ճիչերը: Նրանք գոռում էին, գթասրտություն հայցում, աղոթում Աստծուն, և այդ ամենը խառնվում էր չեչենների գազանային ոռնոցներին: Կարճ ժամանակ անց դադարեցին ճիչերը, այլևս աղոթքներ չէին լսվում, բացի ավազակային գոռում-գոչյունից:

Մեզ համար փրկություն չկար: Չեչենները խուժում էին բակի այս ու այն կողմ, տակնուվրա անում վանքի սենյակները: Շենքից դուրս գալու միակ ելքը, որ վանականներն առանձնացրել էին մեզ համար, միջանցքներն էին կամ պատուհանները, որոնք ուղղակի բացվում էին դեպի բակ: Մենք լսեցինք, թե ինչպես է չեչենների ոհմակը խորտակում այն դուռը, որը բացվում էր դեպի նկուղային հարկի սենյակները: Մենք ահաբեկված հավաքվեցինք մի անկյունում. սարսափից դողում էինք և այլևս չէինք աղոթում: Չեչենները քարե աստիճաններով բարձրացան: Նրանք անիծում էին իրենց չար բախտը, որ չէին կարողանում մեզ գտնել: Նրանցից մեկը հրեց այն դուռը, որտեղ մենք հավաքվել էինք իրար գլխի: Լուսնի լույսը պատուհաններից ներս էր ընկել: Ավազակախումբը նկատեց մեզ: Մենք ճչացինք: Մի ակնթարթում չեչենների հրոսակախումբը խուժեց ներս:

Նրանք սարսափազդու նշաններ էին անում միմյանց: Ես ու Արուսյակը, ծնկի եկած, իրար գրկել էինք: Չեչենների մեկը մի ձեռքով բռնեց մազերիցս, մյուսով՝ Արուսյակին և քարշ տվեց աստիճաններով ներքև: Մյուսները կա՛մ քարշ էին տալիս նույն ձևով, կա՛մ տանում էին՝ ուսերին գցած: Մատուռի քարե սանդուղքներից աջ ու ահյակ ընկած էին վանականների դիակները: Բոլորին դուրս էին քշել մատուռից, սրախողխող արել լուսնի լույսի տակ: Չեչենները մեզ քարշ տվեցին դեպի վանքի դարպասը: Հետո իրենց ձիերը բակ բերեցին՝ նպատակ ունենալով գիշերն այնտեղ թողնել, որից հետո դարձան մեզ:

Յուրաքանչյուր չեչեն տերն էր այն աղջկա կամ աղջիկների, որոնց ի՛նքն էր գերի վերցրել կամ քարշ տվել բակի երկայնքով:

Ոմանք գոհ չէին իրենց բաժին հասած աղջիկներից՝ նրանց գեղեցկությունը համեմատելով մյուսներին բաժին ընկածների հետ: Նրանք սկսեցին կռվել, քաշքշել իրար ամենասիրուների համար: Արուսյակի թևը կոտրվել էր: Չեչեններից մեկը, նկատելով, որ ես ու Արյուսակը նույն մարդուն ենք բաժին ընկել, Արուսյակին պոկեց նրանից՝ ուշադրություն չդարձնելով ցավից ճչացող աղջկան: Նա հնազանդեցրեց Արուսյակին՝ ոլորելով նրա ջարդված թևը, մինչև աղջիկն ուշագնաց եղավ:

Երբ լույսը բացվեց, չեչեններն սկսեցին մեր դեմքերը զննել՝ որոշելու համար մեր գեղեցկության աստիճանը: Ընտրեցին ամենագեղեցիկներին, իսկ մյուսներին սպանեցին: Կոտրած թևի պատճառով Արուսյակին էլ սպանեցին: Հետո մեզ «բարձեցին» ձիերին ու քշեցին դեպի Դիարբեքիր:

ԳԼՈՒԽ Ժ
ԴԻԱՐԲԵՔԻՐՆ ՈՒ ՍՐԱԽԱՂԸ

Ավազուտ սարահարթից բացվեց Դիարբեքիրի համայնապատկերը: Դիարբեքիրը մի ժամանակ հայերի մայրաքաղաքն էր եղել: Երկու օր անընդմեջ մենք, չեչենների ձիերին «բարձված», առաջ էինք շարժվում՝ կանխազգալով, որ մեզ նոր փորձություններ են սպասում այս հինավուրց քաղաքում, որը դարեր շարունակ եղել է ամենասքանչելի քրիստոնեական բնակավայրերից մեկը:

Երբ չեչենները հասան սարահարթի ծայրին, մեր առջև հառնեցին քաղաքի պարիսպները, ցածր տանիքների ֆոնին այստեղ-այնտեղ բարձրացող մինարեթները: Քաղաքից ոչ հեռու հոսում էր գեղեցիկ, կապուտաչյա Տիգրիս գետը: Այդժամ, ինչքան աչքս կտրեց, նայեցի ու տեսա, որ Տիգրիսի ջրերով ողողված անծայրածիր հարթավայրերը հյուսիսից, արևելքից և արևմուտքից ծածկվել են դեպի հարավ շարժվող հարյուրհազարավոր հայ բռնագաղթյալների քարավաններով: Նրանցից ոմանք քայլել էին հարյուրավոր մղոններ: Գրեթե բոլորին, որոնց ապրելու իրավունք էին «բաշխել», բերել հասցրել էին Դիարբեքիր: Իսկ նրանց, որոնց չէին հասցրել կոտորել քաղաքում կամ քաղաքի պարիսպներից դուրս, ստիպեցին շարունակել

ճանապարհը դեպի հարավ՝ դեպի սիրիական ու արաբական անապատներ:

Իմ ժողովրդի ավելի քան մեկ միլիոն զավակի՝ կին, երեխա և ծերունի, մեր երկրի բոլոր կողմերից քշել էին դեպի Դիարբեքիր: Մեկ միլիոնից, ինչպես լսել էի, միայն հարյուր հազարը հասավ Տիգրիսի ափին գտնվող այս հնամենի բնակավայրը: Դիարբեքիր հասած գաղթականների կեսից ավելիին սպանեցին: Միայն երիտասարդ կանայք ու երեխաները փրկվեցին. կանայք անհետացան հարեմներում, իսկ երեխաներին տեղավորեցին դերվիշական մենաստաններում (դաքիե)՝ իսլամի ոգով դաստիարակելու համար, որպեսզի չափահաս դառնալուց հետո վաճառեին որպես ստրուկ:

Դիարբեքիրի վալին՝ Նաիլ փաշան, անողոք հրեշ էր: Քաղաքի ներսում շատ դարեր առաջ կառուցված բազմաթիվ հին ամրոցներ կային (դրանցից մեկը կառուցվել էր դեռևս Մուհամեդի օրոք), որոնցից երկուսը թուրքերը վերածել էին խոշոր բանտերի: Այդ տարիներին ավելի քան 3000 ռուս ռազմագերիների Կովկասից ոտքով բերել հասցրել էին Դիարբեքիր՝ այդ բանտերում տանջելու համար: Նաիլ փաշան ռուս ռազմագերիներին մերկացնում և հրամայում էր առանց սնվելու աշխատել իր համար կառուցվող շենքի վրա:

Երբ բռնագաղթյալների հսկայաթիվ խմբերը հասան Դիարբեքիր, Նաիլ փաշան ռուս ռազմագերիներին խցկեց բանտերից մեկում: Այնպիսի վիճակ ստեղծվեց, որ գերիների համար գիշերը պառկելու տեղ չմնաց: Մյուս բանտերը նա լցրեց դեռևս ողջ մնացած հայ տղամարդկանցով, ովքեր ուղեկցում էին իրենց կանանց: Այս մարդիկ Հայաստանի հյուսիսային գյուղերից էին:

Երբ բանտերը լցվեցին հայ տղամարդկանցով, նա ասկյարներին հրամայեց կոտորել բոլորին: Քաղաքից դուրս՝ բաց դաշտում, կանայք սպասում էին իրենց տղամարդկանց: Նրանց պարզապես քշում էին դեպի հարավ՝ առանց նույնիսկ տեղեկացնելու, թե ինչ եղավ իրենց ամուսինների, որդիների և եղբայրների ճակատագիրը:

Ինչքան շատ ռուս ռազմագերիներ էին բերում, Նաիլ փաշան այնքան շատ հայ գաղթականներ էր լցնում բանտերն ու կոտորում: Ռուս գերիներին ստիպում էր հայերի դիակները տեղափոխել, արյան

հետքերը մաքրել և օրվա դաշտային կամ շինարարական աշխատանքներից հետո միայն հանգստանալ: Նաիլ փաշայի զինվորները մեծ հաճույքով էին պատմում, թե ինչպես են հայ երեխաների դիակները խառնում ցեմենտի հետ և լցնում կառուցվող շենքի պատերի արանքը՝ որպես շաղախ:

Մենաստանից մեզ առևանգող չեչենները որոշեցին քաղաք մտնել հարավային դարպասից, որտեղ պարիսպը մոտենում էր գետեզերքին: Սակայն երբ նրանց ձիերը մոտեցան դարպասին, հսկիչ ասկյարները նրանց ասացին, որ վալին հրամայել է այլևս ոչ մի գաղթական չբերել քաղաք, մինչև ներսում եղածների հարցը լուծի, այսինքն՝ կոտորի կամ քշի դեպի անապատ:

Հետագայում միայն ես հասկացա, թե ինչու էր քաղաքը լցված գաղթականներով, այն դեպքում, երբ նրանցից շատերը տեղավորվել էին քաղաքից դուրս գտնվող ճամբարում: Վալին խոստացել էր նրանց պաշտպանել բռնագաղթից, քանի դեռ նրանք կաշառելու փող ունեին:

Կաշառք տվողներին փաշան թույլ էր տալիս քաղաք մտնել և գրավել լքված տները: Երբ գաղթականների փողերը վերջացան, «պաշտպանությունն» էլ դադարեց: Նրանց հեռացնում էին քաղաքից փոքրաթիվ խմբերով, իսկ քաղաքի դարպասների մոտ սպասող՝ նախապես զգուշացված չեչենները կոտորում էին նրանց:

Երբ չեչենները համոզվեցին, որ մեզ հետ չեն կարող քաղաք մտնել, հրամայեցին շրջանաձև նստել գետնին, որպեսզի մեզ հսկելը հեշտ լիներ: Վանքում եղած 200 աղջիկներից միայն քսանյոթն էր ողջ մնացել: Աղջիկներից երեքը ինձնից տարիքով փոքր էին: Մեզնից և ոչ մեկը 20 տարեկան չկար, թեև ոմանք արդեն ամուսնացած էին դեռևս կոտորածից առաջ:

Ավազակախմբի առաջնորդը նախ ինքը գնաց քաղաք, իսկ մեզ երկրորդ և երրորդ օրը նստած պահեցին այրող ավազի վրա՝ կիզիչ արևի տակ: Չեչենները սնվում էին հացով, հատապտուղներով, իսկ իրենց կերածի թերմացքը մեզ էին տալիս, հատկապես՝ երբ նրանց դուր չէր գալիս ուտելիքը: Օրվա մեջ միայն մեկ անգամ էին մեզ թույլ տալիս ջուր խմել: Երկրորդ օրը աղջիկներից մեկի մոտ դողէրոցք

սկսվեց: Նա ջուր էր խնդրում: Երբ չեչենը ապտակեց նրան, աղջիկը ցույց տվեց իր լեզուն, որ սկսել էր ուռչել: Երբ չեչենը նկատեց այդ, կանչեց իր ընկերներին: Վերջիններս, վախենալով, թե դա գուցե վարակիչ հիվանդություն լինի, նույնիսկ ուշադրություն չդարձրին ջուր խնդրող աղջկա աղաչանքներին, նրան տարան մեզնից մոտավորապես 100 մ հեռու և այնտեղ էլ թողեցին, որպեսզի մյուսները չվարակվեն: Մի անգամ խեղճ աղջիկը փորձեց ոտքի կանգնել և վերադառնալ մեզ մոտ: Չեչենների մեկը մոտեցավ նրան և հարվածեց հրացանի խզակոթով: Աղջիկը չէր կարողանում ոտքի կանգնել, մեր աչքի առջև թավալվում էր ավազի վրա: Քիչ անց այլևս չշարժվեց...

Այդտեղ երկու օր սպասելուց հետո՝ երեկոյան, քաղաքի հարավային դարպասի մոտ նկատելի իրարանցում սկսվեց, և շուտով գաղթականների մի մեծ հոսք, բոլորն էլ՝ կին, «դուրս հորդեց» դեպի դաշտավայր: Նույն օրը չեչենների հեծյալ խմբեր էին հավաքվել այդ շրջանի գյուղերից և քաղաքի մոտ դիրքավորվել: Անշուշտ, մենք գիտեինք, թե չեչեն ձիավորներն ինչի համար էին եկել: Նրանց նախազգուշացրել էին, որ մի խումբ գաղթականներ արտաքսվելու են քաղաքից:

Թուրքերն իրենք հազվադեպ էին մասնակցում կանանց ու երեխաների զանգվածային կոտորածներին: Կոստանդնուպոլիսը չէր հանձնարարել հնազանդ կանանց սպանություն, ուստի այդ գործը հանձնել էին քուրդ ու չեչեն ավազակախմբերին:

Ես կարծում եմ՝ այդ խմբի մեջ կային ավելի քան 2000 կին ու երեխա:

Մինչև մայրամուտ մարդկային հոսքն սկսեց հորդալ դարպասից, և դա շարունակվեց մինչև մութն ընկնելը: Չեչենները նրանց սեղմեցին մի մեծ շրջանի մեջ՝ քաղաքի պարսպից մոտավորապես մեկ մղոն հեռավորությամբ, մեզանից՝ կես մղոն: Երբ լուսինը բարձրացավ, մենք պարզ լսում էինք կանանց ու երեխաների աղաղակներն ու ճիչերը. չեչեններն սկսել էին իրենց սև գործը: Ողջ գիշեր շարունակվեցին կանանց ճիչերն ու վայնասունը, երբեմն այնքան մոտ, որ մեզ թվում էր, թե փրկվելու համար վազում են դեպի մեզ: Հետո լսվում էր չեչենների ձիերի սմբակների դոփյունը: Լսվում էին սուր, ականջ ծակող ճիչեր, և ապա սմբակների ձայնը հեռանում ու թուլանում էր:

Գաղթականներին հսկող չեչենները չէին նեղացնում մեզ. նրանք մեզ փրկում էին մի այլ բանի համար: Այդ գիշեր չկարողացանք քնել:

(Երբեմն նույնիսկ հիմա ես չեմ կարողանում քնել, թեև այլևս ընդմիշտ ապահով եմ: Հայ կանանց աղաղակներն ու ճիչերը մինչ օրս ինձ հանգիստ չեն տալիս, հատկապես՝ գիշերները: Թեև ես շրջապատված եմ բարեկամներով, սակայն անկարող եմ փակել ականջներս և չլսել նրանց մահալուր, սահմոկեցուցիչ ճիչերը:)

Երբ հարթավայրի վրա տարածվեց վաղ առավոտի մոխրագույն մառախուղը, մահասվյուռ աղաղակներն ու հոգեծվատ բղավոցները հասան իրենց գագաթնակետին: Հետո ամեն ինչ խաղաղվեց... Մենք քաղաքից շատ հեռու էինք՝ լսելու համար մինարեթներից եկող ազանի ձայնը, բայց գիտեինք, որ այդ լռությունը նշանակում է, որ մուսուլմանների համար աղոթքի ժամ է: Նույնիսկ իրենց ոճրագործության բարձրակետում չեչենները բնազդաբար լսեցին ազանի կանչը, դադարեցրին իրենց վայրագ գործողությունները և ծնրադրեցին՝ երեսները դեպի Մեքքա: Հիշում եմ, ինչպե՜ս էի զարմացել այդ առավոտ, երբ չեչեն ելուզակները շշնջում էին իրենց աղոթքը՝ գթություն հայցելով և փառաբանելով իրենց Ալլահին:

Ես մտածում էի, թե ինչպես կզգար իմ Քրիստոս, եթե իր ժողովուրդն աղոթեր Աստծուն գիշերային նման նախճիրից հետո: Ես այդ օրվանից ավելի շատ սիրեցի Հիսուսին, և առավել զորացավ իմ հավատքը:

Երբ արևը բարձրացավ և իր շողերը տարածեց հարթավայրի վրա, հայ կանանց ու երեխաների հսկայական խմբից ողջ էր մնացել ընդամենը 300 հոգի: Կանանց մի փոքրաթիվ խումբ, իրար գլխի հավաքված, շարժվում էր այս ու այն կողմ: Չեչեն ոճրագործները, գիշերային նախճիրից և կողոպուտից հետո՝ արդեն ցերեկով, սպանվածների՝ այս ու այն կողմ ընկած մարմիններն էին ստուգում՝ վստահ լինելու համար, որ արժեքավոր ոչինչ չի վրիպել իրենց աչքից:

Առավոտյան չեչենները «հաճելի» ժամանակ անցկացրին դեռատի աղջիկների հետ, որոնց «թույլ էին տվել» այդ գիշեր կենդանի մնալ: Մենք տեսնում էինք, թե ինչպես էին մոտենում փրկվածների փոքրաթիվ խմբերին և քարշ տալիս նրանցից մի քանիսին իրենց հետ:

Երբ հոգնած չեչենները դադարեցրին իրենց վայրագությունները, նկատեցի, որ մեզանից քիչ հեռու՝ դաշտավայրի մի տափարակի վրա, նրանք սկսեցին պատրաստվել մի «զվարճալի» ժամանցի, որով «փառաբանվում» էին վայրենի չերքեզ ցեղերը: Այդ զվարճալի ժամանցը, ինչպես հետո իմացա, չեչենները հաճախ էին կազմակերպում, քանի դեռ իմ ժողովուրդը շարունակում էր իր գոյությունը:

Չեչեններն իրենց երկար ու բարակ սրերը, որոնց շեղբերը ներմուծվում էին Գերմանիայից, ամուր խրում էին ավազի մեջ՝ մոտավորապես կես մետր դուրս թողնելով շեղբերը: Երբ մենք տեսանք այդ նախապատրաստությունը, բոլորս էլ գլխի ընկանք, թե ինչ է լինելու: Մեր շրջանի հայ մայրերը, եթե նրանց երեխաները չարություն էին անում, սաստում էին՝ ասելով. «Խելո՛ք մնացեք, թե չէ չեչենը կգա ու կտանի ձեզ»: Իսկ երբ երեխան հարցնում էր, թե չեչենն իրեն ինչու պիտի տանի, մայրը պատասխանում էր. «Չեչենները վայրենի ավազակներ են, իրենց թրերի սրությունը փորձում են հայ աղջիկների ու տղաների պարանոցների վրա»:

Սիրտս կտոր-կտոր էր լինում նախորդ գիշերվա մղձավանջից և այն սարսափազդու տեսարանից, որին ականատես եղա այդ առավոտ, երբ լույսը բացվեց: Ինձ մոտ նստած կանայք նույնպես դողում էին. նրանք նախընտրում էին մեռնել, քան նոր բարբարոսությունների ականատես դառնալ: Մենք աղաչեցինք հսկիչ չեչեններին մեզ տեղափոխել, տանել ուրիշ տեղ, որպեսզի չտեսնենք այդ սրերի մահացու շեղբերը, բայց նրանք միայն հոհոացին և ասացին, որ պետք է դիտենք և շնորհակալ լինենք, որ իրենց պաշտպանության տակ ենք:

Երբ արդեն երկար շարքով սրերը ցցված էին ավազի մեջ, չեչենները վազեցին դեպի հայ աղջիկները: Նրանք խմբից դուրս քաշեցին մոտավորապես 15-20 աղջկա (ճիշտ թիվը չկարողացա որոշել): Նրանցից յուրաքանչյուրին կանգնեցրին երկու սրերի միջև՝ մի չեչենի հսկողությամբ: Աղջիկները լաց էին լինում, աղաչում, բայց վայրագ չեչեններն ուշադրություն չէին դարձնում նրանց վրա:

Երբ աղջիկներին, ինչպես կարգն է, տեղավորեցին զույգ սրերի միջև, չեչենների ոմանք թռան ձիերի թամբերին և հավաքվեցին տափարակի հեռավոր մասում: Հենց ազդանշան տրվեց, առաջին ձիավորը սրընթաց վարգեց սրերի շարքի երկայնքով, ճանկեց աղջիկներից մեկին, օդ բարձրացրեց և շպրտեց ներքև՝ դուրս ցցված սրերից մեկի շեղբին՝ առանց դանդաղեցնելու ձիավարգը:

Դա մարզական խա՛ղ էր, մրցո՛ւմ...

Յուրաքանչյուր չեչեն ձգտում էր մեկից ավելի աղջիկ որսալ. ու նրանց նետել սրերի վրա այնպես, որ զոհը սպանվեր միանգամից: Միայն վարպետները կարողացան ճանկել մեկից ավելի աղջկա: Նրանցից մի քանիսը, թեև որսացին երկրորդ աղջկան, սակայն վրիպեցին սրի ծայրին նետելիս: Ձարդված ոսկորներով և արյունահոս վերքերով աղջկան ստիպում էին կրկին կանգնել սրաշեղը սրերի մեջտեղում՝ երկրորդ փորձի համար: Աղջիկը աղաչում էր, որ չեչենը այնպես նետի իրեն, որ սուրսայր շեղբը միանգամից վերջ տա իր տանջանքներին:

Այդ նույն ժամանակ Դիարբեքիրի ոստիկանությունը տեղի հրեաներին դուրս էր հանել տներից և ստիպել, որ հավաքեն մորթված հայերի դիակները: Հրեաներն իրենց հետ բերել էին սայլեր ու էշեր՝ երկուական պարկերով: Սայլերն ու պարկերը լցրեցին դիակներով ու տարան Տիգրիսի ափ: Այստեղ սպասող թուրքերը հարկադրեցին նրանց «բեռները» թափել գետը: Սա հրեաների կրած հալածանքների ձևերից մեկն էր: Մուսուլմանները հրեաներին չէին սպանում, բայց հարկադրում էին կատարել նման ահավոր գործեր, ինչից իրենք հաճույք էին ստանում:

Երեկոյան չեչենների առաջնորդը վերադարձավ քաղաքից: Իր մարդկանց հետ քաշվեց մի կողմ. ինչ-որ բանից գրգռված՝ խոսում էին: Երբ մթնեց, մեզ բարձրացրին ձիերի թամբերին և հեռացան քաղաքի հարավային դարպասով:

Չեչենների առաջնորդը դարպասի մոտ կանգնած ժանդարմ սպաներին ցույց տվեց քաղաքից իր հետ բերած մի գրություն, և մեզ թույլ տվեցին քաղաք մտնել: Մենք, անցնելով քաղաքի մութ ու նեղ փողոցներով, հասանք համեմատաբար բարձր մի շենքի, որի

երկաթե դարպասով մտնում էիր տան բակը. այն բավականին հեռու էր փողոցից: Երկաթե դարպասի մոտ կանգնած թուրք պահակը ճոռացնելով բացեց դարպասը: Ավազակներն իջան ձիերից, մեզ էլ ցած բերեցին: Առաջնորդը մեզ նշան արեց ներս մտնել, ինքն էլ վեցհոգանոց ավազակախմբով մտավ, և դարպասը փակվեց: Չեչենների մի քանիսը մտան տուն: Բոպեներ անց նրանք դուրս եկան մի օտարերկրացու ուղեկցությամբ, ում համազգեստից գլխի ընկա, որ նա գերմանացի զինվոր է:

Ծառաները հետևեցին նրանց վառվող լապտերներով, որոնց լույսի ներքո գերմանացի զինվորը նայեց մեր դեմքերին և տնտղեց մեզ ցինիկաբար: Աղջիկներից միայն ութը դուր եկավ նրան: Ես նրանց մեջ էի: Մեզ քշեցին շենքից ներս և դուռը փակեցին մեզ վրա: Մենք լսեցինք, թե ինչպես են չեչենները մյուս աղջիկներին հավաքում և դուրս բերում փողոց:

Թե՛ զինվորը, թե՛ ծառաները օտարերկրացի էին՝ գերմանացի: Մեզ տարան սալահատակված մի սենյակ, որը նախկինում հավանաբար ծառայել էր որպես ձիերի ախոռ:

Մենք արդեն կորցրել էինք ժամանակի զգացողությունը: Ինձ թվում էր՝ կես գիշերն անցել է, երբ զինվորն ու ծառաները եկան մեզ մոտ: Նախքան «ախոռից» մեզ դուրս բերելը նրանք բոլորովին մերկացրին մեզ: Վախվորած և ամոթահար՝ մենք մտանք մի սենյակ, որտեղ երեք տղամարդ էր նստած՝ գերմանացի սպայի համազգեստով: Զինվորները ողջունեցին նրանց: Սպաները կարծես թե գոհ մնացին մեզ զննելուց հետո: Մենք ջանում էինք մեկս մյուսի թիկունքում թաքնվել կամ թևերով ծածկել մեր մերկությունը, սակայն գերմանացի զինվորը կոպտորեն մեզ անջատեց իրարից: Սպաները ծիծաղեցին մեր շփոթվածության վրա և զինվորին կարգադրեցին հեռանալ:

Սպաներն իրար հետ նույնպես գերմաներեն էին խոսում: Նրանք փորձում էին մեզ սիրաշահել: Շատ էին զվարճանում, երբ մենք թախանձում էինք նրանց խնայել մեզ, թույլ տալ հագնվել և բարեգութ լինել՝ ի սեր Աստծո:

Գրեթե երկու շաբաթ ես գերի մնացի այդ տանը: Սպաներից գլխավորը՝ Ավգուստ Վալսենբուրգը, միջին տարիքի մարդ էր,

միանգամայն ճաղատ: Հետո ես շատ բան իմացա նրա մասին: Նա Վան քաղաքում կապեր ուներ գերմանական «*Օրիենտալ Հանդելզելշաֆթ*» առևտրական ընկերության հետ: Վալսենբուրգը բանակի պահեստային սպա էր, զորակոչվել էր ծառայության՝ թուրք սպաներին օգնելու և Վանում կազմավորելու մի նոր բանակ: Նա մասնակցել էր հայերի կոտորածներին Վան քաղաքում: Նրան հրամայել էին ներկայանալ Հալեպում մի գերմանացի գեներալի, ում անունը չեմ հիշում: Հալեպում գերմանացի հրամանատարը կազմակերպում էր թուրք զինակոչիկների հավաքագրումը Միջագետքի բանակի համար: Երբ Վալսենբուրգը հասել էր Դիարբեքիր, լուր էր ստացվել Կովկասյան ճակատում ռուսների առաջխաղացման մասին, ուստի հեռագրով նրան հրամայվել էր սպասել Դիարբեքիրում: Մյուս երկու սպաները լեյտենանտ էին, որ ուղեկցել էին նրան Վանից՝ նույնպես սպասելով նոր հրահանգների:

Նրանք այդ օրերին Դիարբեքիրում եղած միակ գերմանացի սպաներն էին: Վալին շատ սիրալիր ու բարեհաճ էր նրանց նկատմամբ: Հատուկ բնակարան էր առանձնացրել գերմանացիների համար, ուր բերեցին մեզ որպես գերիների: Նրանց համար այդ տուն գեղեցիկ հայուհիներ էին բերում քրդերն ու չեչենները: Երբ ձանձրանում էին աղջիկներից, գերմանացի սպաները նրանց կա՛մ հետ էին ուղարկում գաղթական, կա՛մ վաճառում թուրքերին:

Գերմանացի սպան ինձ հասկացրեց, որ հնազանդ լինեմ և ենթարկվեմ: Ես իմ ողջ ուժով պայքարում էի նրա դեմ, ասացի, որ սպանի ինձ: Դա զվարճացրեց նրան: Այստեղ իմ գերի եղած ժամանակ կյանքումս առաջին և վերջին անգամ ճաշակեցի մի բան, որն Ամերիկայում կոչում են «վիսկի»: Դառն էր ու զզվելի: Սպաներն իրենց հետ մի քանի շիշ վիսկի էին բերել Վանից: Նրանք շատ խմեցին, գազազեցին: Մի գիշեր նրանք հավաքեցին մեզ բոլորիս այն սենյակում, որտեղ ճաշում էին: Ստիպեցին մեզ նստել սեղանի շուրջ և խմել այդ զզվելի վիսկին: Նրանք զվարճանում էին, երբ նկատում էին, որ այդ հեղուկը մեզ վրա վատ է ազդում: Վանքից հափշտակված աղջիկներից ձանձրանալուց հետո մեկը մյուսի հետևից հեռացնում էին նրանց՝ նորերին ընդունելով: Կարծում եմ՝ ինձ պահեցին միայն այն

պարզ պատճառով, որ ես համառորեն ընդդիմանում էի, երբ նրանցից մեկը փորձում էր մոտենալ ինձ. կապիտանը միշտ ձեռքերն իրար էր զարկում և բարձրաձայն ծիծաղում, երբ ես դիմադրում էի:

Այդ տանը մի աղջիկ կար, ում շատ վաղուց էին բերել, ինձանից էլ շատ առաջ: Նա հատկապես դուր էր եկել ենթասպաներից մեկին: Այդ աղջիկն ինձ պատմեց, թե ինչպես մի գիշեր, երբ սպաները չափից ավելի վիսկի էին խմել և գազան դարձել, բերել էին տվել մի քանի աղջկա, կողքի կանգնեցրել և ատրճանակից կրակել նրանց վրա՝ թիրախ ընտրելով կրծքերը: Հետագայում ես լսեցի, որ այդ «զվարճությունը» թուրքերը կիրառել են Վանի վիլայեթում հայերի կոտորածների ժամանակ:

Վերջապես մի օր սպաներին Դիարբեքիրը լքելու հրաման եկավ: Ես իմացա, որ նրանք Խարբերդ են մեկնելու: Սպաները պատրաստ էին և հենց հաջորդ օրը լքեցին քաղաքը: Նրանք հասցրել էին հավաքել շատ գորգեր և թանկարժեք իրեր, որոնք գնել էին հայերին կողոպտած քրդերից ու չեչեններից: Այդ ամբողջ կողոպուտը նրանք շատ խնամքով տեղավորել էին արկղերի մեջ, պահ տվել վալիին, որպեսզի հարմար պահի քարավանի միջոցով այն հասցվեր Ռաս ուլ-Այնի երկաթուղային կայարան:

Գերմանացի սպաները շատ էին շտապում, այնպես որ ժամանակ չունեին մեզ վրա ուշադրություն դարձնելու: Երբ նրանք տնից դուրս եկան, ծառաները, ավանակներ նստած, հետևեցին տերերին: Այսպիսով մենք մնացինք այդ տանը բոլորովին մենակ:

Մեր ազատության համար շատ ուրախ էինք, սակայն սարսափելի վախենում էինք, թե ուր որ է մեզ կհայտնաբերեն թուրք ժանդարմները: Երկար փնտրելուց հետո մենք գտանք այն մութ սենյակը, որտեղ ծառաները թաքցրել էին մեր շորերը: Այստեղ իրար վրա կիտել էին նաև այն բոլոր աղջիկների հագուստները, որոնց բերել էին այդ տուն: Ամեն մեկս մի բան գտանք և ծածկեցինք մեր մերկությունը:

Մի ամբողջ գիշեր ու ցերեկ մենք անցկացրինք հայտնաբերվելու մշտական ահ ու սարսափի մեջ: Վախից չէինք համարձակվում փողոց դուրս գալ, իսկ այդ տանը մնալն էլ անտանելի էր: Քաղաքում

օտարերկրացի շատ միսիոներներ կային, այդ թվում՝ ամերիկացի, բայց նրանք ապրում էին քաղաքի տարբեր թաղամասերում, և մենք որևէ կերպ չէինք կարող նրանց մոտ հասնել:

Թուրք ժանդարմները եկան գերմանացիների հեռանալու երրորդ օրը: Չեմ կարծում, թե նրանք մարդ-մուրդ էին փնտրում այդ տանը, պարզապես եկել էին տեսնելու, թե գերմանացիներն արդյոք ինչ-որ բան թողե՞լ են:

Մենք նրանց տեսանք, երբ բակի դարպասից ներս էին մտնում: Այդ տանը մի տեղ չկար, որ հնարավոր լիներ թաքնվել. մենք ընդամենը կարող էինք կուչ գալ մի անկյունում և մի քանի րոպեով հետաձգել մեր գերի ընկնելը: Ժանդարմները մեզ նկատեցին դեռ բակից և հարայ-հրոցով խուժեցին վեր:

Երբ դուրս վազեցի այն սենյակի միջով, որտեղ ապրում էր գերմանացի սպաներից մեկը, նկատեցի սեղանին թողած նրա դանակը: Թոցրի դանակը և պահեցի հագուստիս տակ: Չմշկածագի մեր տնից տեղահանվելուց ի վեր առաջին անգամ էի ձեռքս դանակ վերցնում կամ ինչ-որ զենք:

Ինչպես բոլոր աղջիկները, ինձ էլ մի ժանդարմ ծուղակի մեջ գցեց սենյակի մի անկյունում: Նա բռնեց թևերս, քարշ տվեց մի ուրիշ սենյակ: Այդ պահին մի թուրք սպա տեսավ ինձ: Նա կազնեցրեց ժանդարմին, ինձ ազատեց նրա ճանկերից և հրամայեց մեկ ուրիշին գտնել իր համար: Սպան ինձ հրեց մի սենյակ:

Երբ սպան փորձեց թևերս ոլորել, ես դանակով նետվեցի վրան: Աստված ինձ ուղղորդեց և ուժ տվեց ձեռքիս, քանի որ առանց երերալու սպանեցի նրան: Սպան ընկավ ոտքերիս մոտ: Շենքի մյուս հարկաբաժիններում և բակում ժանդարմներն զբաղված էին իրենց «որսած» աղջիկներով, այնպես որ ինձ հաջողվեց աննկատ դուրս գալ փողոց: Շուրջս նայեցի, ոչ ոքի չտեսա, բացի մի թրքուհուց, ով դուրս եկավ հանդիպակաց տներից մեկից: Մի պահ մտքովս անցավ՝ հիմա ուր որ է ինձ կբռնեն: Ամուր սեղմեցի դանակի կոթը, որ դեռ պահում էի հագուստիս տակ:

Այդ թուրք կինը բարի դուրս եկավ. խղճաց ինձ և ներս մտնելով իր տան դարպասից՝ ձեռքով ինձ նշան արեց իրեն հետևելու: Ես

վախեցա, բայց և հավատացի նրան: Թրքուհին փակեց դուռը և գրկեց ինձ: Նա ասաց, որ իր սիրտը շատ է ցավում ինձ համար ու իմ ժողովրդի, և որ ինքը պատրաստ է ինձ օգնելու: Նա չհամարձակվեց ինձ տուն տանել, այլ թաքցրեց բակում մինչև մութն ընկնելը, մինչև ես կկարողանայի քաղաքից դուրս սողոսկել և միանալ գաղթականներին:

Օրվա ընթացքում նա ինձ ուտելիք բերեց: Մութն ընկնելուն պես եկավ, հրաժեշտ տվեց և երեք լիրա դրեց ափիս մեջ: Դա այն ամենն էր, ինչ նա կարող էր անել ամուսնուց գաղտնի՝ վերջինիս կատաղությունից խուսափելու համար: «Կգնա՛ս ոչ թե հարավային, այլ հյուսիսային դարպասով, - ասաց կինը, - բոլոր այն գաղթականներին, որոնց դուրս են բերում հարավային դարպասից, կոտորում են, իսկ հյուսիսային դարպասի մոտ հավաքվածները գուցե ողջ մնան: Բայց մթով մի՛ գնա գաղթականների մոտ, քանի որ կարող ես ընկնել կոտորածի ալիքի մեջ: Թաքնվի՛ր քաղաքից մեկ մղոն հեռու գտնվող Քարաջա լեռնանցքի ժայռերի մեջ: Եթե հայերին թույլ տան անցնել այդ քարքարոտ ճանապարհով, նշանակում է, որ նրանց թույլ են տվել ապրել ևս մեկ օրվա ճանապարհ»:

Ես աննկատ հասա հարավային դարպասին: Ինձ ոչ ոք չկանգնեցրեց: Ժանդարմները հսկում էին դարպասները, բայց այնքան էլ զգոն չէին: Ես վազեցի դեպի հարթավայր և շարժվեցի այն ուղղությամբ, որ ինձ հուշել էր իմ թրքուհի բարեկամը, մինչև չհասա ժայռերին, որոնց միջով անցնում էր ցածր բլուրներով պատված մի ճանապարհ. այն երիզում էր քաղաքը հյուսիսից: Այս ճանապարհով էին անցնում Դիարբեքիրից դեպի հարավային անապատներ քշվող բռնագաղթյալների քարավանները:

Գիշերը ես մնացի ժայռերի մեջ: Առավոտյան որոշեցի շարժվել այնպիսի ճանապարհով, որ հեռու մնայի ասկյարների, քրդերի ու չեչենների խուզարկու աչքերից. նրանք վխտում էին քաղաքին հարակից հարթավայրում: Այնտեղ ես կարող էի սպասել մինչև գաղթականների քարավանի երևալը:

Ես քայլում էի քարակույտերի մեջ բացված մի նեղ կածանով, երբ տեսա մի խումբ զաբթիեների, որ գալիս էին դեպի ինձ: Չէի կար-

ծում, թե որևէ մեկի կիանդիպեմ այդ ամայի վայրում: Ակամա ճչացի, նախքան կկարողանայի ինձ զսպել: Զաբթիեները լսեցին ճիչս: Ես վազեցի դեպի ժայռերը՝ դրանց հետևում թաքնվելու համար: Դուրս քաշեցի դանակը, որ դեռ պահում էի հագուստիս տակ, այն մտադրությամբ, որ ավելի լավ է ինքնասպանություն գործեմ, քան ընկնեմ զաբթիեների ձեռքը: Բայց ես վախենում էի, որ դա Աստված չի ընդունի: Մինչ զաբթիեները փնտրում էին ինձ քարերի մեջ, ես ծնկի իջա և խնդրեցի իմ Աստծուն կողմնորոշել ինձ՝ արդյոք Նա ինձ կմեղադրի՞, եթե անձնասպան լինեմ, նախքան զաբթիեները կգտնեին ինձ. «Տե՛ր իմ, ճանապարհ ցույց տուր, ասա՛, գա՞մ Քեզ մոտ, թե սպասեմ, մինչև Դո՛ւ ինձ կկանչես»:

Ես հասկացա, որ Տերն ինձ լսեց և պատասխանեց. Նա ինձ ասաց, որ մի կողմ նետեմ դանակը, և ես կատարեցի Տիրոջ խոսքը: Դա Աստծո կամքն էր, քանի որ քիչ հետո Տերն ինձ առաջնորդեց դեպի մորս գիրկը, որպեսզի մեկ անգամ էլ լինեի նրա հետ... նախքան... թուրքերը կսպանեին մայրիկիս:

ԳԼՈՒԽ ԺԱ
«ԻՇԻՄ ՅՈՐՔ, ՔԵՖԻՄ ՉՈՐՔ»*

Ես դանակը մի կողմ նետեցի և ոտքի կանգնեցի: Զաբթիենները շուտով ինձ գտան: Ես հնազանդվեցի ճակատագրիս և չփորձեցի խուսափել նրանից:

Զաբթիեներին ասացի, որ դուրս եմ եկել քաղաքից և ուզում եմ միանալ հարազատներիս, և եթե նրանք ինձ չանհանգստացնեն, ես նեղություն չեմ տա նրանց: Հույսս դրել էի բարի թրքուհու տված երեք լիրայի վրա (անգլիական երեք ֆունտ ստեռլինգ): Ես հասկանում էի, եթե փողը տայի նրանց, նրանք կխուզարկեին ինձ ավելին գտնելու հույսով, իսկ չգտնելու դեպքում հավանաբար ինձ սպանեին: Ես զաբթիեներին վստահեցրի, որ նրանց համար դրամ կհավաքեմ իմ հարազատներից, եթե թույլ տան ինձ միանալ այն խմբին, որը ենթակա չէր կոտորածի:

- Գուցե բոլորին էլ սպանեն կամ չսպանեն՝ մենք չգիտենք: Դու արի մեզ հետ, մեզ փող տուր, և քեզ թույլ կտանք, որ ապրես,- ասաց նրանցից մեկը:

---

* Իմ գործը չէ, քեֆս էլ տեղն է:

Կարճ ճանապարհ գնալուց հետո նկատեցի, որ դեպի մեզ է շարժվում մի մեծ քարավան: Զաբթիեները կանգ առան: Նրանց խոսակցությունից հասկացա, որ նրանք գալիս էին մեզնից քիչ հեռու գտնվող գյուղից, որպեսզի միանան բռնագաղթյալներին ուղեկցող պահակներին:

Շուտով գաղթականների խումբը մոտեցավ մեզ: Զաբթիեներն ինձ ասացին, որ սպասեմ շարքի սկզբում, և երբ վերադառնան, փողը պատրաստ լինի, թե չէ ինձ կտանեն ու կսպանեն: Նրանք եկան մի քանի ժամ հետո, ես տվեցի նրանց երեք լիրան, նրանք ինձ նեղություն չտվեցին:

Բռնագաղթյալների այն խումբը, որին ես միացա, բաղկացած էր Էրզրումի և Էրզրումի վիլայեթի փոքր քաղաքների բնակիչներից: Սիրտս ուրախությունից թրթռաց, երբ գաղթականների մեջ հայ տղամարդկանց տեսա: Բռնագաղթի սկզբից ի վեր առաջին անգամն էր, որ տեղահանվածների մեջ տղամարդ էի տեսնում: Անչափ ուրախացա այն կանանց համար, որոնց ամուսիններն ու հայրերը դեռ քայլում էին իրենց կողքով: Երբ զաբթիեներն ինձ տարան և խառնեցին այդ խմբին, կանայք ինձ գրկաբաց ընդունեցին: Նրանց այնպես թվաց, թե ես իրենց խմբի աղջիկներից եմ, ում փախցրել էին նախորդ գիշեր: Երբ ասացի նրանց, որ փախել եմ Դիարբեքիրից, ուրախացան: Կանանցից մեկը, ում 16 տարեկան դստերը թուրքերը փախցրել էին, ինձ ասաց. «Դարձի՛ր իմ աղջիկը, քայլիր ինձ հետ»: Նրա մյուս՝ վեց տարեկան աղջիկ երեխան քայլում էր մոր կողքից:

Ավելի քան երկու հազար մարդ կար այդ խմբում. այդքանն էր մնացել քառասուն հազար հայերից, որ տեղահանվել էին Էրզրումից և շրջակա գյուղերից: Էրզրումը գտնվում է Դիարբեքիրից 150 մղոն դեպի հյուսիս: Էրզրումի և շրջակա գյուղերի հայ բնակիչներին երկու ուղղությամբ էին քշել դեպի Դիարբեքիր: Առաջին խմբերը եկել էին Երզնկա-Մալաթիա ճանապարհով՝ քայլելով մոտավորապես 300 մղոն, մյուս խմբերը՝ Խնուսի ու Բիթլիսի վրայով՝ անցնելով 250 մղոն: Բռնագաղթյալների երկու քարավանների ողջ մնացածները հասել էին Դիարբեքիր գրեթե միաժամանակ: Բիթլիսի վրայով եկածներին մի քանի օր պահել էին ճանապարհին հանդիպող քաղաքներում:

Էրզրումից տեղահանված հայերի միակ բարեկամը նյույորքցի ազնվագույն պատվելի Ռոբերտ Ստեփլտոնն էր՝ ԱՄՆ հյուպատոսի տեղակալը: Դոկտոր Ստեփլտոնն իր տան մեջ հնարավորինս հավաքել ու պահել էր հայ աղջիկներին, իսկ երբ թուրքերը եկել էին նրանց բռնի տանելու, ցույց էր տվել իր դռան վրա ծածանվող ամերիկյան դրոշը և հրամայել էր հեռանալ: Գաղթականների այն խմբում, որին ես միացա, շատ մայրեր կային, ովքեր ուրախ էին, որ իրենց դուստրերը ապահով ձեռքերում են՝ պաշտպանված դոկտոր Ստեփլտոնի կողմից: Սակայն հիմա նրանք անհանգստանում էին՝ արդյոք իրենց աղջիկների կյանքին դեռ վտանգ չի՞ սպառնում:

Շատ ամիսներ հետո ես իմացա, որ այդ ազնվագույն պատվելին իր խոսքը չէր դրժել. պաշտպանել էր աղջիկներին, մինչև ռուսները գրավել էին Էրզրումը և աղջիկներին վերցրել իրենց հոգածության ներքո:

Բռնագաղթյալների այն քարավանը, որտեղ կային 75.000 տղամարդ, կին և երեխա, անցել էր Երզնկայի վրայով: Նրանցից միայն 500-ը հասավ Դիարբեքիր: Ճանապարհին բոլոր գեղեցիկ դեռատի աղջիկներին և կանանց քրդերն ու զաբթիեները հափշտակել էին ու վաճառել թուրքերին: Տասը տարեկանից ցածր աղջիկներին, որ գեղեցիկ ու առողջ չէին, կա՛մ սպանել էին, կա՛մ վաճառել թուրքերին: Վերջիններս այս աղջիկներին խնամում, մեծացնում էին որպես հարճ կա՛մ իրենց, կա՛մ էլ Կոստանդնուպոլսի հարուստ թուրքերի հարեմների համար: Բազմաթիվ մանկամարդ կանայք, որոնց չէին հափշտակել, բռնագաղթի ճանապարհին ենթարկվեցին անասելի չարչարանքների ու մեռան: Բոլոր տատիկներին և հիվանդ կանանց թողնում էին ճանապարհի եզրին կամ անմիջապես սպանում: Այսպիսով գաղթականներից միայն հինգ հարյուրն էր հասել Դիարբեքիր:

Մյուս քարավանում եղել էր 50.000 տղամարդ, կին և երեխա՝ մեծ մասը Էրզրումի վիլայեթի փոքր քաղաքներից: Այդ խմբում կային հարուստ ընտանիքներ, ուսուցիչներ, վաճառականներ, բանկիրներ և պրոֆեսորներ: Այս խմբից Դիարբեքիր էր հասել 1500 հոգի, 300-ը՝ տղամարդ:

Երբ գաղթականների այս երկու քարավանները Դիարբեքիրի մատույցներում հանդիպեցին իրար, ճանաչեցին միմյանց և շատ ուրախացան: Թուրքերը թույլ տվեցին նրանց միանալ: Եվ այսպես

նրանք մնացին քաղաքի դարպասների մոտ 11 օր: Քանի որ նրանց բոլորին արդեն կողոպտել էին, և նրանք այլևս ոչինչ չունեին վալիին տալու որպես կաշառք, վերջինս թույլ չտվեց նրանց քաղաք մտնել: Ամեն երեկո՝ մութն ընկնելուն պես, թուրքերը հարձակվում էին այդ գաղթականների վրա: Նրանք ուտելու բան չունեին. վալին նրանցից յուրաքանչյուրին տալիս էր մեկական բլիթ՝ երկու օրվա համար, երբեմն էլ քաղաքի միսիոներներն էին փորձում որևէ բան գաղտնի հասցնել այդ խեղճ մարդկանց՝ վերջիններիս ջուր տանող թուրքերին կաշառելու միջոցով:

Այն գիշեր, երբ թաքնվել էի ժայռի հետևում, Դիարբեքիրում գաղթականներին ասել էին, որ նրանց հաջորդ օրը տանելու են Ուրֆա: Կանայք թախանձել էին թուրք սպաներին, որ թույլ տան մի քանի օր էլ մնալ հանգստանալու, որովհետև նրանցից շատերի ոտքերն այտուցվել էին, շատերի այտուցները պայթել էին՝ պատճառելով անտանելի ցավեր: Նույնիսկ տասնմեկ օրվա հանգիստը չէր թեթևացրել նրանց վիճակը: Թուրքերը թույլ չտվեցին:

Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, քարավանը դուրս եկավ Դիարբեքիրից, ես էլ՝ նրանց հետ: Իմ առջևում դեպի Ուրֆա տանող երկար ու տաժանելի ճանապարհն էր, իսկ դրանից այն կողմ՝ 200 մղոն ևս՝ սիրիական անապատը (եթե, իհարկե, ճանապարհին ինձ չառևանգեին):

Այն Ջատկի առավոտից ի վեր, երբ ինձ հափշտակեցին իմ տնից (շաբաթներ էին անցել), ես առաջին անգամ դեպի Ուրֆա շարժվող բռնագաղթյալներից տեղեկացա, թե ուր էին տարել իմ հարազատներին, որոնց թուրքերը մեծահոգաբար թույլ էին տվել ողջ մնալ: Գաղթականներին ուղեկցող թուրք զինվորները նրանց ասել էին, թե ովքեր հասնեն Դամասկոսի երկաթուղու մոտ գտնվող Հալեպ քաղաք, նրանց այնտեղից կուղարկեն Դեր Զոր անապատ՝ աշխատելու ռազմական ճանապարհների շինարարության վրա: Բայց քանի որ շատ քիչ տղամարդիկ հասան Դեր Զոր, ուստի առողջ կանանց ստիպեցին աշխատել այդ նպատակի համար:

Մարդը ամենածանր պահին անգամ չի կորցնում փրկվելու հույսը: Բռնագաղթյալ հայերից շատերը բարեկամներ, զավակներ, եղբայրներ ունեին Ամերիկայում, որ ժամանակին թողել էին մեր եր-

կիրը և մեկնել Միացյալ Նահանգներ: Ամեն գիշեր նրանք աղոթում էին Աստծուն և սպասում, թե Ամերիկայից իրենց օգնություն կհասնի նախքան իրենց լիակատար բնաջնջումը: Նույնիսկ լուրեր էին պտտվում, թե օգնությունն արդեն ճանապարհին է, թե Ամերիկայի բարի մարդիկ դրամ, սննդամթերք ու հագուստ են ուղարկում և փորձում են ստիպել թուրքերին գթասիրտ լինել գաղթականների նկատմամբ: Այս հույսն էր, որ հազարավոր մարդկանց կենդանի պահեց:

Մեր քարավանը շարժվում էր շատ դանդաղ, որովհետև մեծամասնության ոտքերն այտուցվել էին: Երբ հասանք քարքարոտ նեղ կածանին, որտեղ օրեր առաջ զաբթիեներն ինձ հայտնաբերել էին, մարդկանց անհամար տանջանքներին ավելացավ մեկն էլ. շատերի այտուցված ներբանները պայթել էին, արյուն էր հոսում: Այս խեղճերն այդ վիճակով պետք է քայլեին սուր-սուր քարերով ծածկված արահետով: Մղոնից ավելի հարկադրված քայլեցինք այդ արահետով, որից հետո դուրս եկանք բաց դաշտ: Երբ հեռացա գերմանացիների տնից, ինձ հետ վերցրել էի մի զույգ սանդալ՝ կաշվե ներբաններով: Այդ սանդալը տվեցի այն կնոջը, ով խնդրել էր ինձ միասին քայլել: Նրա ոտքերն արյունոտվել էին: Քարավանում ոչ մեկի ոտքին ո՛չ կոշիկ կար, ո՛չ տրեխ, ո՛չ էլ հողաթափ: Ոմանք իրենց ոտքերը փաթաթել էին պատառոտված հագուստի կամ լաթի կտորներով:

Դիարբեքիրին մոտ գտնվող բաց դաշտում տեղավորված ժամանակ ոմանք իրենց մարմնի գաղտնի մասերում պահած ժանյակները վաճառել էին ավանակ կամ սայլ գնելու համար: Նրանց ասել էին, որ սայլերը կամ ավանակները կարող են օգտագործել մինչև Ուրֆա հասնելը: Ոմանք ժանյակները Դիարբեքիրում փոխանակել էին հացով, որպեսզի կարողանային պահպանել իրենց գոյությունը այդ երկար ու դաժան ճանապարհին: Բայց երբ հասան քարքարոտ կածանին, մեծ դժվարության դեմ առան. ճանապարհը նեղ էր, սայլերը չէին անցնում: Մի քանի թուրք գյուղացիներ, որ եկել էին այդ ճանապարհով, նկատեցին գաղթականների ծանր կացությունը: Համոզվելով, որ նրանք չեն կարողանալու սայլերն անցկացնել այդ կածանով, առաջարկեցին մեզ ուղեկցող զաբթիեներին, որ թույլ տան գնել մեր էշերն ու սայլերը: Զաբթիեները համաձայնեցին, բայց փող պահանջեցին: Այսպիսով

գյուղացիները զաբթիեների ախորժակը բավարարելուց հետո վրա պրծան և խլեցին գաղթականների անասուններն ու սայլերը:

Նրանք թույլ չտվեցին սայլերի մեջ մնացած՝ մեզ պատկանող իրերն ու հացի կտորները վերցնել՝ պատճառաբանելով, թե իրենք զաբթիեներից գնել են այն ամենը, ինչ կար սայլերի մեջ:

Սայլերից մեկում կային ինը տարեկան երկվորյակ աղջնակներ, որոնց մորը սպանել էին Դիարբեքիրում: Երեխաների խնամքն ստանձնել էր նրանց մորաքույրը: Նա երեք անգամ կաշառել էր ասկյարներին, որպեսզի երեխաներին ձեռք չտան, իսկ այդ պահին այլևս ոչինչ չուներ տալու: Նա երեխաներին թաքցրել էր սայլում՝ ենթադրելով, թե կարող է փրկել նրանց, ազատել տանջալից ճանապարհից: Թուրք գյուղացիները թույլ չտվեցին մորաքրոջը վերցնել երեխաներին: Թուրքն ասաց, որ սայլերն ու երեխաները հիմա արդեն իրեն են պատկանում: Կինը գժվեց, խելագար ճչաց: Նա ձեռքերով հարձակվեց թուրք գյուղացու վրա: Մոտիկ կանգնած մի հայ տղամարդ և մի քանի կին նետվեցին դեպի թուրքը, որ մենակ էր մնացել: Երեք զաբթիեներ վազեցին կռվի վայրը, բայց կանայք ու տղամարդիկ չնահանջեցին: Զաբթիեները վախեցան օգնել թուրք գյուղացուն: Նրանք համոզեցին թուրքին, որ մորաքույրն իրավունք ունի վերցնելու իր զարմուհիներին:

Թեպետ մեր քարավանում մոտավորապես 2000 բռնագաղթյալ կար, սակայն ուղեկցող զաբթիեները հազիվ տասնմեկը լինեին: Դիարբեքիրում թուրքական զինվորական հրամանատարությունը զորակոչի ենթակա թուրք տղամարդկանց հավաքագրում, ուղարկում էր հյուսիս՝ բանակի շարքերը համալրելու, հետևաբար գաղթականներին ուղեկցող զաբթիեները թվով քիչ էին, թե չէ կօգնեին թուրք գյուղացուն հայ աղջնակներին հափշտակելու գործում:

Հաջորդ գյուղում զաբթիեները որոշեցին ձեռք բերել լրացուցիչ ուժեր, որպեսզի հնարավորություն ունենային օգտվելու իրենց տրված սովորական հաճույքից: Հասանք մի գյուղ, և նրանք մեզ հանգստանալու հնարավորություն տվեցին: Զաբթիեները երկար ժամանակ զրուցում էին գյուղացիների հետ: Գյուղապետը եկավ՝ իր հետ բերելով քսան-երեսուն թուրքի: Նրանցից յուրաքանչյուրը

ուսին գցած մի հրացան ուներ, բազկին՝ բրդյա կարմիր թևակապ: Երբ մենք շարժվեցինք, զաբթիեները այդ թուրքերին մեզ վրա պահակ նշանակեցին:

Երկրորդ օրը ճանապարհին հանդիպեցինք մի խումբ թուրք հեծյալների, ովքեր ուղեկցում էին հարմարավետ, լավ ծածկված մի քանի կառք. այդպիսիք ունենում էին միայն հարուստ թուրքերը: Այդ կառքերում նստած էին 40 թուրք խանումներ (հարուստ թուրք տիկիններ), որ զինվորների ուղեկցությամբ շարժվում էին դեպի Էրզրում՝ միանալու այնտեղ ծառայող իրենց բարձրաստիճան ամուսիններին: Նրանք եկել էին Դամասկոսից, Բեյրութից ու Հալեպից: Երբ մեր քարավանը մոտեցավ նրանց, խանումների կառքերը կանգ առան: Ուղեկցող զինվորները հրամայեցին մեր պահակներին նույնպես կանգ առնել: Հետո մենք տեսանք, որ կառքերից մի քանիսում մանկահասակ հայ աղջիկներ կան՝ ութից տասներկու տարեկան. նրանց նուրբ, հմայիչ արտաքինից կարելի էր ենթադրել, որ նրանք բոլորն էլ հարուստ ընտանիքի զավակներ են: Նրանցից մի քանիսը վարագույրների հետևից թափահարում էին իրենց փոքրիկ ձեռքերը՝ հասկացնելով մեզ, որ իրենք հայ են: Յուրաքանչյուր կառքում վեցից տասը աղջիկ կար: Խանումների կառքերի դասավորությունն այնպիսին էր, որ կարծես մեր տեսադաշտից թաքցնում էին աղջիկների կառքերը:

Փոքրիկ աղջիկները մեզ պատմեցին, որ իրենք Ուրֆայից են ու Հալեպից, որ նրանց ծնողներին ու հարազատներին կոտորել են, իսկ իրենց հանձնել այդ խանումներին, ովքեր, ինչպես իրենք էին հասկացել, նպատակ ունեին հայ աղջնակներին տեղավորելու Էրզրումի մուսուլմանական դպրոցում, որպեսզի հետագայում՝ չափահաս դառնալուց հետո, վաճառեին հարուստ թուրքերին: Խանումները, իհարկե, մտադիր էին մի մասին որպես աղախին պահել իրենց մոտ, ոմանց էլ անմիջապես վաճառել տեղ հասնելուն պես:

Թուրք տիկինները կառքերից իջան և զաբթիեներից հետաքրքրվեցին, թե արդյոք մեր քարավանում գեղեցիկ աղջիկներ չկա՞ն: Զաբթիեները չցանկացան սիրուն հայուհիներին խանումներին հանձնել՝ մտածելով, թե սրանք հազիվ թե վճարեն տարածի դիմաց, ուստի պատասխանեցին՝ չկան:

Թրքուհիներից մեկը այնուամենայնիվ նկատեց մոր փեշին կպած մի փոքրիկ աղջկա և պահանջեց, որ բերեն իր մոտ: Մոտիկից տեսնելով նրա սիրունիկ դեմքը՝ զինվորներից մեկին հրամայեց աղջկան նստեցնել իր կառքը: Մայրը զավակին ամուր սեղմեց իր կրծքին: Խանումը կողքի զինվորի օգնությամբ փորձեց մորից պոկել երեխային: Խելակորույս մայրը ուժգին հարվածեց թուրք տիկնոջը: Զինվորը բռնեց թշվառ մորը և հարցրեց խանումին.

- Սրան ի՞նչ անեմ:

Խանումը պատասխանեց.

- Նավթ կա՝ դրան վառենք:

- Չէ՛, չեմ կարծում, - ասաց զինվորը:

Խանումը ձեռքը մեկնեց զինվորին, վերջինս իր ատրճանակը դրեց նրա ափի մեջ: Թրքուհին մոտեցավ երեխայի մորը և սառնասրտորեն գնդակահարեց նրան, ապա բռնեց փոքրիկ աղջկա ձեռքը և ուղղվեց դեպի իր կառքը: Երեխան փորձում էր համբուրել մորը, բայց խանումը ցնցեց աղջկան և քարշ տվեց իր հետևից:

Մեր քարավանում էր վանեցի խոշոր գիտնական Աբուլհայաթյանի կինը: Նա փախել էր Դիարբեքիր, երբ Վանում ջարդեր էին սկսվել: Նրա ամուսինը Զևդեթ բեյի բարեկամն էր: Երբ զինվորներին հրաման տրվեց կոտորել հայերին, պատմեց ինձ տիկին Աբուլհայաթյանը, նրա ամուսինը գնաց Զևդեթ բեյի մոտ և բողոքեց: Զևդեթը պատասխանել էր. «Իշիմ յո՛ք, քեֆիմ չո՛ք»:

Այդ դեպքից հետո, երբ թուրքական կանոնավոր բանակի ասկյարներին ուղարկում էին հայերին կոտորելու, նրանք միմյանց ասում էին. «Իշիմ յո՛ք, քեֆիմ չո՛ք» (ի դեպ, այս արտահայտությունը շատ տարածված էր ողջ Թուրքիայում):

Այդ նույն ճանապարհով, որով հիմա անցնում էր մեր քարավանը, մոտավորապես 1000 մղոն ոտքով անցել էր իմ ժողովրդի 400.000 բռնագաղթյալ զավակ: Նրանց մի մասն այժմ ձուլվում էր անապատին՝ առանց հացի ու ջրի (Աստված տա, որ ես շուտով վերադառնամ այդ անապատ, որտեղից փրկվեցի, և դրամով ու սննդով օգնեմ այնտեղ գուցե հրաշքով կենդանի մնացած իմ ազգակիցներին):

Երբ գիշերում էինք այս կամ այն գյուղի մոտակայքում, մեզ հսկող

զաբթիեները հրավիրում էին գյուղի ժանդարմներին ու նրանց բարեկամներին և առաջարկում դեռատի, սիրուն աղջիկներ գնել մեկ գիշերվա համար: Նրանց մայրերն ու հարազատները չէին համարձակվում նույնիսկ ընդդիմանալ, քանի որ զաբթիեները տեղում սպանում էին նրանց: Երբեմն այդ գյուղերում հանդիպում էին նաև հարուստ թուրքեր: Սրանք ջոկում էին մանկահասակ աղջիկների և փողով առնում: Նրանք իրենց դուր եկած երեխաներին խլում էին մայրերի գրկից, իհարկե՝ զաբթիեներին վճարելուց հետո: Այս երեխաներին մուսուլման էին դարձնում և նրանց չափահաս դառնալուց հետո աշխատեցնում դաշտերում:

Բոնագաղթի ճանապարհին մի քանի օրվա ընթացքում ծնվեց երեք երեխա: Նոր ծննդաբերած կանանց թույլ չտվեցին հանգստանալ ո՛չ ազատվելուց առաջ, ո՛չ էլ հետո: Հղի կանանց ստիպում էին քայլել խմբի հետ մինչև երեխայի ծնվելը: Երբեմն հարազատները ծննդկանին հեռացնում էին խմբից, բայց երբ զաբթիեները նկատում էին դա, ստիպում էին ծննդկանին մենակ թողնել: Զաբթիեներն ասում էի, որ այդ մայրերն արժանի չեն խնամքի, որովհետև մի նոր անհավատի էին լույս աշխարհ բերելու:

Նման իրավիճակները զաբթիեներին միշտ էլ զվարճացնում էին: Երբ նրանցից մեկն ու մեկը գլխի էր ընկնում, որ շուտով նոր երեխա է ծնվելու, անմիջապես կանչում էր իր ընկերներին: Միասին կանգնում էին խեղճ կնոջ մոտ՝ ստիպելով նրան ոտքի վրա մնալ մինչև վերջին րոպեն, իսկ մինչ այդ հոհոում էին և անպատկառ կատակներ անում: Հենց երեխան ծնվում էր, մայրը պարտավոր էր անմիջապես ոտքի կանգնել և միանալ քարավանին: Եթե ծննդկանն ի վիճակի չէր լինում քայլելու, զաբթիեները նրան թողնում էին կես ճանապարհին, իսկ խմբին ստիպում էին առաջ շարժվել:

Սովորաբար զաբթիեներն սպանում էին նորածիններին: Իմ աչքի առջև առաջին երկու նորածիններին նրանք խլեցին իրենց մայրերի գրկից և գնդակի պես վեր նետեցին ու բռնեցին: Այս տեսարանը մի քանի անգամ կրկնելուց հետո նորածիններին շպրտեցին մի կողմ և շարունակեցին ճանապարհը: Մայրերը մղկտում էին, նրանք տեսան այդ ամենը, բայց ինչ... անզոր էին և հարկադրված

էին շարունակելու ճանապարհը: Երրորդ նորածնին չկարողացան սպանել: Երեխան ծնվեց երեկոյան՝ մի գյուղում մեր կանգ առնելուց հետո: Զաբթիեներն զբաղված էին իրենց ձիերով և չնկատեցին: Նորածինը մի անուշիկ տղա էր: Հորը սպանել էին: Մայրը և՛ ուրախ էր, և՛ տխուր: Անսահման ուրախ էր, որովհետև իր առաջնեկն էր: Նոր մայրացած կինը խնդրում էր Աստծուն, որ ողորմած լինի և պահպանի իր երեխային, բայց ավա՜ղ... Այդ կինն այնքան հյուծված էր թերսնումից, որ չկարողացավ կերակրել երեխային. կաթ չուներ: Փոքրիկը քաղցից մեռավ մոր գրկում:

Երբ հեռացանք այդ շրջանի գյուղերից, ծարավը սկսեց տանջել մեզ: Զաբթիեները ձիերի թամբերից կախված մեծ տիկերով ջուր էին տանում, բայց ոչ մի կաթիլ մեզ չէին տալիս: Օրերով քայլում էինք ծարավից տոչորված: Պատահում էր՝ հանդիպում էինք ջրհորի կամ աղբյուրի մոտակայքում ապրող թուրքերի, բայց նրանք միշտ էլ արգելում էին մեզ ջրհորին մոտենալ՝ յուրաքանչյուր բաժակ ջրի համար պահանջելով վճարել: Թուրքերը հրացաններով, մահակներով հսկում էին ջրհորները: Մեր խմբում ոչ ոք թուրքերին կամ զաբթիեներին տալու այլևս ոչինչ չուներ: Երբեմն մեր կանայք համարձակվում էին մոտենալ թուրքերի տներին, ծնկի էին գալիս նրանց առջև և աղաչում-պաղատում էին իրենց մի կում անգին ջուր տալ: Երբեմն էլ թուրքերն իրենք էին թույլ տալիս մեզ մոտենալ ջրհորին, երբ հավատում էին, որ մենք իսկապես այլևս ոչինչ չունենք իրենց տալու: Գյուղերից մեկում գյուղապետը, որ Մեքքա էր գնացել ու հաջի դարձել, մեզնից փող պահանջեց կամ կարպետ, կամ էլ երեք ուժեղ տղամարդ՝ արտերը հերկելու և գյուղատնտեսական այլ աշխատանքներ կատարելու համար: Մենք ջրի խնդրանքով դիմեցինք զաբթիեներին, բայց նրանք մերժեցին մեզ՝ պաշտպանելով թուրքերի պահանջը՝ վճարել ջրի համար: Այդ օրը առնվազն 30 մարդ մեռավ ծարավից: Կանանցից մի քանիսի լեզուն այտուցվել էր, չէին կարողանում խոսել: Կանայք խորհրդակցում էին՝ գուցե խմբերով նետվեն ջրհորը, սակայն նաև գիտակցում էին, թե այդ քայլը քանի՜ կյանք կխլեր մեզնից:

Վերջապես էրզրումցի մի ուսանող՝ Հարություն Եգարյանն ասաց, որ ինքը պատրաստ է իր կյանքը զոհաբերելու և դիմելով խմբի տղա-

մարդկանց՝ հարցրեց, թե էլ ո՛վ է պատրաստ... Խմբից երկու տղամարդիկ, ովքեր կորցրել էին իրենց կանանց ու երեխաներին, առաջ եկան և ասացին, որ պատրաստ են: Կանայք գրկեցին նրանց ու համբուրեցին: Հարությունը կանգնած էր ինձ մոտ: Ես լաց էի լինում նրա համար: Նա նկատեց ու ասաց.

- Մի՛ լացիր ինձ համար, փոքրի՛կ աղջիկ, ամեն մի հայ պետք է ուրախ լինի իր կյանքը մեր ժողովրդին նվիրաբերելու համար:

Հետո նա համբուրեց ինձ: Ինձ թվաց՝ դա Աստծո համբույրն էր:

Այդ երեք տղամարդիկ համաձայնեցին մնալ և թուրքերի համար աշխատել դաշտերում, և որպես փոխհատուցում թուրքերը մեզ թույլ տվեցին խմել ու ջրի պաշար վերցնել մեզ հետ:

Երբ հասանք Սևերեկ քաղաք, որ գտնվում է Ուրֆայի ճանապարհին, մենք ջրի երես չէինք տեսել արդեն չորս օր: Երեք բաց ջրհորներ կային Սևերեկի մոտ, որոնք սնվում էին մի արհեստական լճից, որը՛ լեցուն էր ջրով: Մեր կանանցից մի քանիսի բերանը, կոկորդը այնքան էին չորացել, որ իրենք իրենց անմիջապես նետեցին լիճը և խեղդվեցին, մյուսները, չսպասելով լճին հասնելուն, ցատկեցին ջրհորի մեջ: Ջրհորները բերնեբերան լցվեցին կանանց մարմիններով: Թուրքերը, որ դուրս էին եկել մեզ դիմավորելու, դուրս քաշեցին կանանց: Նրանք, ովքեր կարողացել էին զսպել իրենց, խոնվեցին ջրից դուրս բերվածների շուրջը և սկսեցին խոնավացնել իրենց պապակ լեզուները՝ ծծելով նրանց շորերը:

Սևերեկից դուրս գալուց հետո դողերոցք սկսվեց գաղթականների շրջանում: Շատ-շատերը մահացան և մնացին ճանապարհին: Զաբթիեներն սկսեցին որոշ տարածություն պահպանել մեզնից, և երբ որևէ կին կամ տղամարդ հետ էր մնում, անմիջապես գնդակահարում էին:

Դողերոցքից մարդկանց կոկորդն այնքան էր չորացել, որ երբ հասանք հաջորդ բնակավայր, տղամարդիկ, արհամարհելով թուրքերի ու զաբթիեների հրացանները, թափվեցին ջրհորերի վրա: Դրանից հետո զաբթիեները զգուշացան մեզ համառորեն հալածելուց, սակայն շատերը հատուցեցին դրա համար «Շեյթան դերեսիում»՝ Սատանի կիրճում, ուր մենք հասանք Դիարբեքիրից դուրս գալու 23-րդ օրը:

Երբ մեր քարավանը մտավ այդ կիրճը, զաբթիեները բաց թողեցին իրենց ձիերը և բարձրացան կիրճից վեր՝ կրակ բացելով մեզ վրա: Մենք ընկել էինք թակարդը: Ո՛չ կարող էինք հետ դառնալ, ո՛չ էլ առաջ գնալ: Զաբթիեները բոլոր տղամարդկանց հավաքեցին մի տեղում: Վաղ առավոտից սկսեցին կրակ բացել կիրճի բարձունքից, և մինչև երեկո որևէ տղամարդ կենդանի չէր մնացել:

Գիշերը զաբթիեները ցած իջան բարձունքից և դանակներով ու սվիններով հարձակվեցին կանանց վրա: Նրանք նախ հավաքեցին տարեց կանանց և բոլորին սպանեցին: Երբ լուսինը լուսավորեց կիրճը, նրանք երիտասարդ կանանց տարան՝ այլանդակելու և զվարճանալու համար: Զաբթիեները միանգամից չէին սպանում կանանց. նախ կտրում էին մատները, ձեռքերը, կրծքերը, հանում աչքերը: Երբ լույսը բացվեց, ողջ էին մնացել միայն նրանք, ովքեր կարողացել էին թաքնվել քարերի ու ժայռերի հետևում, նաև նրանք (նրանց մեջ՝ նաև ես), ովքեր գեղեցիկ ու դեռատի լինելու շնորհիվ փրկվեցին՝ հետագայում թուրքերին վաճառվելու նպատակով: Հաջորդ օրվա ընթացքում ես հաշվեցի՝ Դիարբեքիրից դուրս եկած 2000 բռնագաղթյալներից մնացել էր 160 հոգի: Ըստ իմ լսածի՝ այս վայրում կոտորածների ողջ ընթացքում թուրքերը սպանել էին իմ ժողովրդի ավելի քան 300.000 զավակի:

Հիմա, երբ արդեն շատ քիչ էինք մնացել, զաբթիեներն ստիպում էին մեզ ավելի արագ քայլել, և քանի որ բոլորս էլ դեռատի աղջիկներ էինք, թուրքերն է՛լ ավելի դաժան դարձան մեր հանդեպ: Ես շատ ուրախացա այդ առավոտ, երբ նորից գտա այն կնոջը, ով ինձ առել էր իր թևերի տակ: Այժմ մենք միասին էինք քալլում: Նա գիշերը թաքնվել էր և փրկել նաև իր փոքրիկ աղջկան: Բայց մեր ուրախությունը երկար չտևեց. փոքրիկ աղջիկը դողէրոցք ունեցավ: Հաջորդ օրը նա այլևս չէր կարողանում քայլել: Երբ զաբթիեն հայտնաբերեց հիվանդ երեխային, հրամայեց նրան թողնել ճամփեզրին: Մայրն աղջկան ցած դրեց, բայց չէր կարողանում հեռանալ: Աղջիկը, ձեռքերը մորը պարզած, լաց էր լինում: Մի զաբթիե մոտեցավ՝ սվինը պատրաստ պահած՝ մորը սպանելու համար: Այդ րոպեին ես մի կողմ քաշեցի նրան և սկսեցի մխիթարել: Յուրաքանչյուր քայլափոխի նա հետ էր շրջվում, նայում իր զավակին, մինչև մեր տեսադաշտից կորավ երեխայի կուչ եկած մարմինը:

ԳԼՈՒԽ ԺԲ
ՄԻԱՑՈՒՄ, ՀԵՏՈ՝ ՇԵՅԽ ՋԻԼԱՆԸ

Ջաբթիեները գրեթե կարիք չունեին մեզ հսկելու, քանի որ մեր խմբում շատ քիչ մարդ էր մնացել: Դժոխային գիշերներ էին... Բազում օրեր մեզ հետ քայլելով՝ նրանք ձանձրացել էին սովորական դաժանություններից: Այն թուրքերը, որոնց հավաքագրել էին գյուղերից որպես պահակ, հատկապես դաժան էին: Ժամանակն ու առիթը ներկայացել էին, որպեսզի ցույց տային իրենց ատելությունը քրիստոնյաների հանդեպ, ատելություն, որ մուսուլմանները տածում էին «անհավատների» հանդեպ:

Երբ մոտեցանք Ուրֆային, մեզ միացավ բռնագաղթյալների մի նոր քարավան, որտեղ մոտավորապես հինգ հազար հայ կար: Նրանց տեղահանել էին Մարաշի «սանջակից»՝ Ամանոսի հյուսիսային գավառից, որի մեջ էին մտնում Զեյթունը, Ալբիստանը և Մարաշ քաղաքները: Գրեթե բոլոր գաղթականները Մարաշից էին, քչերը՝ Զեյթունից: Հայերի տեղահանությունը Մարաշից սկսել էր ավելի ուշ, քան Փոքր Ասիայի մյուս վայրերից: Երբ Հեյդար փաշան հրաման արձակեց տեղահանության մասին, որոշ հայեր, որ զենք ունեին, դիմադրեցին: Նրանք հրաժարվեցին թողնել իրենց տները

կամ ենթարկվել զաբթիեներին, եթե պատերազմի ավարտից հետո նրանք չերաշխավորեին, որ կվերադառնան իրենց օջախները:

Հեյդար փաշայի ձեռքի տակ շատ քիչ ասկյարներ կային: Նա լուր ուղարկեց Հալեպ՝ լրացուցիչ ուժերի համար, որպեսզի հայերին տեղահանելու իր հրամանն ի կատար ածեր: Գերմանացի այլ սպաների հետ եկավ նաև մի հրետանային սպա՝ կապիտան Շապենը: Վերջինս կազմավորեց զաբթիեների մեծաքանակ ջոկատ և նրանց սովորեցրեց գնդացրի գործածությունը: Կապիտան Շապենն անձամբ առաջնորդեց զաբթիեներին, գերմանացի սպաներին և նրանց օգնականներին հայերի տների վրա հարձակվելիս: Այն հայերը, ովքեր դիմադրեցին, Շապենը գնդացրային կրակ բացեց նրանց թաղամասի վրա: Մարաշից և շրջակա քաղաքներից 14 հազար հայ՝ տղամարդ, կին և երեխա, տեղահանվեցին զաբթիեների հսկողությամբ և կապիտան Շապենի հրամանատարությամբ: Անհայտ պատճառներով այդ բռնագաղթյալներին ուղղակի անապատ և այնտեղից էլ Բաղդադ չտարան, ինչպես մյուս գաղթականներին, այլ պահեցին գաղթականներում մի քանի օր, երբեմն շաբաթներ՝ գրեթե առանց ջրի և սննդի: Նրանց տեղաշարժում էին մի քանի մղոն և նորից դադար տալիս: Շատ շաբաթներ անցան, մինչև նրանք հասան Ուրֆայի մատույցներին: Երբ հանդիպեցին մեզ, տեղահանված 14 հազար հայերից ողջ էր մնացել երեք թե չորս հարյուրը: Եվ նրանց մեջ ո՛չ մի տղամարդ... միայն կանայք ու աղջիկներ:

Կապիտան Շապենը, երեք շաբաթ մնալով բռնագաղթյալների հետ, վերադարձավ Հալեպ: Նա իր հետ տարել էր 15 տարեկան օրիորդ Չիլինգարյանին, ով նոր էր վերադարձել Գերմանիայից: Ծնողները նրան ուղարկել էին մասնավոր դպրոց՝ կրթություն ստանալու: Ամռան արձակուրդներին նա նոր էր տուն վերադարձել, երբ բռնագաղթը սկսվեց: Աղջիկը շատ գեղեցիկ էր: Նրանք, ովքեր մոտիկից ծանոթ էին օրիորդ Չիլինգարյանին, ինձ ասացին, որ նա մրցանակների էր արժանացել երաժշտության ասպարեզում: Նրա ծնողները ցանկացել էին, որ իրենց դուստրը երգչուհի դառնար և Թուրքիայից դուրս քրիստոնյա աշխարհին ծանոթացներ մեր ժողովրդի սքանչելի բալլադներին ու քնարական երգերին: Կապիտան

Շապենը աչքի տակ պահեց աղջկան և գիշերը նրան տարավ իր վրանը: Հետո նա մի զաբթիեի կցեց օրիորդին՝ նրան հատուկ պահպանելու և հսկելու համար, մինչև ինքը կտաներ հայ գեղեցկուհուն իր հետ: Կապիտան Շապենն իր հետ տարավ նաև տիկին Սարաֆյանին՝ դոկտոր Տիգրան Սարաֆյանի կնոջը: Դոկտոր Սարաֆյանը ուսանել էր Շվեյցարիայում: Այդ տարիներին նա ամենահայտնի բժիշկն էր կենտրոնական Թուրքիայում: Տիկին Սարաֆյանը շվեյցարուհի էր: Նա Տիգրան Սարաֆյանին հանդիպել ու սիրահարվել էր Շվեյցարիայում, երբ նա դեռևս մի սովորական ուսանող էր: Երկու տարի առաջ շվեյցարուհին եկել էր Մարաշ՝ ամուսնանալու իր սիրած տղամարդու հետ: Կապիտան Շապենը տիկին Սարաֆյանին էլ էր տարել իր վրանը: Երբ Շապենը սկսեց տեղահանել մարդկանց, դոկտոր Սարաֆյանը բողոքեց կապիտան Շապենի այդ քայլի դեմ: Գերմանացի սպան հրամայեց գնդակահարել բժշկին:

Երբ կապիտան Շապենը և նրա ուղեկցորդները որոշեցին վերադառնալ Հալեպ, զաբթիեներ ուղարկեցին շրջակա գյուղերը՝ ավանակներ բերելու՝ յուրաքանչյուրի դիմաց առաջարկելով մի գեղեցիկ աղջիկ: Իսկ երբեմն մեկ էշին փոխանակում էին երկու կամ երեք ոչ այնքան գրավիչ աղջիկներով: Այսպիսով նրանք հավաքեցին մեծ քանակությամբ ավանակներ՝ հավանաբար բանակի կարիքները հոգալու համար:

Մարաշ քաղաքի հայ բռնագաղթյալներից ողջ մնացածներին միանալու հաջորդ օրը մեր առջև հայտնվեց Ուրֆա քաղաքը: Մեզ հրամայված էր ճամբարել մի արհեստական լճի մոտակայքում. նման լճեր հաճախ էին հանդիպում մուսուլմանական քաղաքներից դուրս: Զաբթիեների ղեկավարները գնացին քաղաք՝ նոր հրահանգներ ստանալու: Շուտով երկար, սպիտակ բաճկոններ հագած թուրքեր եկան մեզ տեսնել-տնտղելու նպատակով: Երբ նրանք նկատեցին, որ մեր ամբողջ խմբում միայն երիտասարդ կանայք են՝ իրենց մանկահասակ աղջիկ երեխաներով, այդ մասին լուրեր տարածեցին Ուրֆայով մեկ, և քիչ հետո փոքր խմբերով տասնյակ թուրքեր եկան մեր գաղթականյան:

Նրանք ջանում էին համոզել զաբթիեներին, որպեսզի թույլ տան իրենց համար կին, երեխա ջոկել ու տանել: Զաբթիեները

չէին համաձայնում, եթե նրանց դիմաց թուրքերը չվճարեին այն բարձր գինը, որ տրվում էր քրիստոնյա կանանց: Նրանք թուրքերին հասկացրին, որ մեզ այսքան երկար ճանապարհ բերել հասցրել են, որպեսզի շահ ունենան, որ իրենք մեզ թույլ են տվել ապրել միայն այն պարզ պատճառով, որ ցանկացել են Ուրֆայի շուկայում «լավ գնով» վաճառել:

Թուրքերը չէին ցանկանում բարձր գին վճարել, իսկ զաբթիեներն էլ չէին ցանկանում ցածր գնով մեզ վաճառել: Զաբթիեներն ասացին, որ Ուրֆայում հայ աղջիկների համար լավ շուկա կա, և իրենք կխնդրեն կառավարչին, որպեսզի թույլ տա իրենց հայուհիների համար բարձր գին վճարողներ գտնել: Թուրքերը հուսահատ վերադարձան քաղաք:

Երեկոյան՝ մայրամուտից անմիջապես հետո, այդ նույն թուրքերը նորից եկան: Այս անգամ նախ նրանք բաց արին արհեստական լճի ջրարգելները՝ հեղեղելով դաշտավայրը և մեր իջևանատեղը: Նույնիսկ զաբթիեները խառնվեցին իրար: Սարսափելի իրարանցման մեջ մենք հնարավորինս արագ վազեցինք դեպի դաշտավայրի ավելի բարձր տեղերը: Այդ խառնաշփոթի մեջ թուրքերը խուժեցին մեր շարքերը և գողացան մեր աղջիկներից մի քանիսին՝ ամենասիրուններին: Մենք անկարող էինք ազատել նրանց, որովհետև թուրքերը զինված էին մահակներով և դաժանաբար հարվածում էին այն մայրերին, ովքեր փորձում էին ազատել իրենց զավակներին թուրքի ճանկերից: Զրի վտանգից ազատվելուց հետո նորից հավաքվեցինք իրար գլխի: Տագնապահար զաբթիեները, երբ խելքի եկան, թուրքերն արդեն հեռացել էին՝ իրենց հետ տանելով 15-20 աղջկա:

Ավելի ուշ ես իմացա, թե ինչ ճակատագրի արժանացան այդ օրը հափշտակված մեր աղջիկները... Հեյդար փաշան բռնագրավել էր հայկական հինավուրց մի վանք և այն վերածել «բռնագաղթյալ երեխաների պետական դպրոցի»: Ամերիկայում հաստատվելուց հետո միայն ես իմացա, որ երբ օտար դեսպանները բողոքել են սուլթանին հայ երեխաների անվերջանալի հափշտակումների դեմ, սուլթանի ներկայացուցիչ պաշտոնյաները պատասխանել են, թե կատարվածը կառավարության կողմից արված բարի գործ է. թուրքական կա-

ռավարությունը ցանկանում է հանգիստ և լավ պայմաններ ստեղծել աղջիկների համար «պետական դպրոցներում» ինչպես Ուրֆայում, այնպես էլ մյուս քաղաքներում:

Բայց ահա թե ինչ էր նշանակում Ուրֆայի «պետական դպրոցը». Հեյդար փաշան մի բեյի գլխավորությամբ իր ասկյարներին ուղարկել էր գրավելու այդ վանքը, որը մի խոշոր քարաշեն կառույց էր: Նրանք շրջապատել էին վանքը և ստիպել վանականներին, նրանց հետ նաև հայ բողոքական և կաթոլիկ հայրերի կողմից սիրված-հարգված հայր Անտոնին ու հայր Շիրաջյանին անցնել երկշարք կանգնած զինվորների միջով: Ասկյարները, աքցանի մեջ առնելով վանականներին, տանում են քաղաքի պարսպից դուրս: Այստեղ նրանք կանգ են առնում և հարցնում, թե վանականներից ո՞վ է պատրաստ իսլամ ընդունելու՝ ուրանալով իր հավատքը: Երբ բեյը լռում է, հայր Անտոնը սկսում է բարձր երգել մի հին երգ, որի խոսքերը պատկանում էին սուրբ Թովմաս Աքվինացուն: Բոլոր վանականները սկսում են ձայնակցել նրան: Մինչ նրանք երգում էին, ասկյարները գնդակահարում են նրանց մեկիկ-մեկիկ: Բոլորը սպանվում են:

Դրանից հետո Հեյդար փաշան մաքրազարդում է վանքը բոլոր մասունքներից և կրոնական խորհրդանիշներից, հափշտակում է, օրինակ, այն նիզակը, որը ծակել էր Հիսուսի կողը խաչելության ժամանակ: Սրանք բոլորը շատ թանկ էին իմ ժողովրդի համար: Թե ինչ պատահեց այս և այլ սուրբ մասունքների հետ հետագայում, ես չգիտեմ: Ասում են, թե այդ ամենը տարել են Դամասկոս, տեղավորել մի մզկիթում՝ ծաղրուծանակի առարկա դարձնելով:

Վանքը կողոպտելուց հետո Հեյդար փաշան բոնագաղթյալ հայուհիների մի մեծ խմբի (բոլորը՝ կիրթ և ազնիվ ընտանիքների զավակներ) բանտարկում է այդ վանքում: Հետո նա հափշտակել է տալիս 10-12 տարեկան աղջիկ երեխաների և նույնպես փակում վանքում, ամենաահավոր սպառնալիքներով նրանց բռնի հավատափոխ անում: Նա պարտադրում էր մեծ աղջիկներին, որ փոքրերին դաստիարակեն իսլամի ոգով:

Հետագայում այս նույն վանքն էին գալիս մեծահարուստ թուրքեր Փոքր Ասիայի տարբեր կողմերից և սրտները ուզածի չափ

մանկահասակ աղջիկներ էին գնում իրենց հարեմների համար: Այստեղ խեղճ երեխաները հասակ էին առնում որպես հնազանդ ստրուկներ:

Մենք սպասում էինք քաղաքից դուրս, մինչ զաբթիեները կտեղավորեին մեզ ըստ իրենց ծրագրի: Այդ րոպեին ես տեսա քաղաքի դարպասից դեպի մեզ շարժվող մի խումբ ձիավոր համիդիեների և քուրդ ձիավորների, որոնց հետևից շարժվում էին բեռնավորված գրաստներ ու սայլեր, ինչը խոսում էր երկար «ճանապարհորդության» մասին: Դա հեծյալների մի ողջ զորագունդ էր, որը երկար շարքով ձգվել էր դաշտավայրով մեկ:

Երբ զորագունդը մոտեցավ, և մեր միջև տարածությունը հազիվ 100 յարդ լիներ, ես նկատեցի, որ մի խումբ կանայք ու երեխաներ, էշ, ջորի նստած, գալիս են զորագնդի երկու շարքերի միջով: Ես անմիջապես հասկացա, որ նրանք հայեր են: Դա մի արտասովոր տեսարան էր: Այդ օրերին իմ հետաքրքրասիրությունը բթացել էր: Այնքա՜ն շատ արտասովոր իրադարձություններ էին կատարվում շուրջս անվերջ, որ ես կորցրել էի հետաքրքրասիրությունս այն ամենի հանդեպ, ինչն ինձ չէր վերաբերում: Բայց այս դեպքում ինչ-որ բան ինձ ստիպեց ուշադիր հետևել այս տարօրինակ խմբին:

Ես նստածս տեղից վեր կացա և գնացի դեպի մեր ճամբարի ծայրը՝ դիտելու անցնող ասկյարներին: Առաջին շարքերն անցան: Հայ կանայք ավելի մոտեցան: Հանկարծ կարծես աշխարհը փուլ եկավ իմ գլխին, աչքերս շաղվեցին: Ես վազեցի ձիերի արանքով՝ ճչալով, ինչքան ձայն ունեի.

- Մայրի՜կ, մայրի՜կ, մայրի՜կ...

Մայրս լսեց, փոքրիկ Հովնանը լսեց, Մարտիրոսն ու Սառան նույնպես լսեցին: Մայրս ավանակից սահեց ցած, երբ ես վազեցի դեպի նա: Երբ փորձեցի իմ թևերի մեջ առնել մորս, փարվել նրա կրծքին, իմ փոքրիկ քույրերն ու եղբայրները կառչեցին փեշերիցս: Մայրս բռնեց ձեռքերս և դրեց իր թևերի տակ: Նրա աչքերը փակ էին, նա դեռ հանգիստ էր ու լուռ: Ես ձայն տվեցի, որպեսզի խոսի ինձ հետ, մի բան ասի: Մի ահավոր վախ ինձ պատեց: Խենթացե՞լ էր արդյոք մայրս, կորցրե՞լ էր խոսելու ունակությունը...

Ես ճչացի այս անգամ տառապալից ձայնով: Մայրս բացեց աչքերը:

- Համբերի՛ր, աղջիկս,- ասաց նա մի թանկագին, քաղցր մեղմությամբ, ինչով նա շատ սիրելի էր դարձել մեր բարեկամներին:

- Համբերի՛ր, աղջիկս: Հենց հիմա ես խոսում էի Աստծո հետ: Շնորհակալ եմ, որ իմ աղոթքները տեղ հասան:

Ես համբուրեցի Հովնանին, Մարտիրոսին ու Սառային, հետո դարձա և նորից նայեցի մորս դեմքին. փոքրիկ Արուսյակը նրանց հետ չէր: Մայրս հասկացավ իմ հայացքի իմաստը:

- Արուսյակն այլևս չկա... Մի օր նա հոգնեց ու չկարողացավ մեզ հետ քայլել: Ասկյարը նրան նետեց անդունդը:

Մի համիդիե սպա մոտեցավ մեզ՝ իմանալու, թե ինչ է պատահել, թե ինչու են մայրս ու երեխաներն իջել գրաստներից և խանգարում են հեծյալներին: Մայրս բացատրեց նրան, որ ես իր աղջիկն եմ, և ահա գտել է ինձ: Նա խնդրեց սպային ինձ թույլ տալ, որ միանամ իրենց քարավանին: Սպան բարի գտնվեց, թույլ տվեց և խոստացավ մի ավանակ ճարել ինձ համար:

Բացի մեզանից՝ մեզ հետ կային չորս հայ աղջիկներ իրենց տարեց մայրերի հետ, մի քանի մեծահասակ կանայք՝ դեմքերին անսահման տառապանք: Ճանապարհին մայրս պատմեց հետևյալը. երբ ինձ մի քանի շաբաթ առաջ խլեցին մայրիկիցս, Չմշկածագի մեր ժողովրդից, մայրս ասկյարների հարվածներից ստացած վերքերից ընկած մնացել էր ճամփեզրին: Բայց իր զավակների ճակատագրով անհանգստացած՝ մայրս ուժ էր գտել և ոտքի կանգնել: Բարի մարդիկ հոգացել էին նրա մասին ու մխիթարել: Հաջորդ օրը, երբ քարավանը շարժվել էր, մեր բարեկամները մորս տարել էին իրենց թևերի վրա, մինչև նա կարողացել էր առանց օգնության քայլել:

Մայրս անցել էր Մալաթիան, Քիլայիկը, Դիարբեքիրը և հասել էր Ուրֆա: Այդ քարավանում մնացել էր 18 հոգի այն 4000 բռնագաղթյալներից, ովքեր մի քանի շաբաթ առաջ դուրս էին եկել Չմշկածագից: Ուրֆայում ապրում էր հորեղբայրս՝ Իբրանոս Մարդիգանյանը: Նա շատ տարիներ առաջ, երբ ես դեռ լույս աշխարհ չէի եկել, Չմշկածագից տեղափոխվել էր Ուրֆա: Հորեղբայրս շատ էր

հարստացել, առևտրական կենտրոններ էր հիմնել Պարսկաստանում և Կոստանդնուպոլսում:

1895-96 թվականների համիդյան ջարդերի ժամանակ հորեղբայր Իբրանոսին իր թուրք ազդեցիկ բարեկամները և՛ Կոստանդնուպոլսում, և՛ Ուրֆայում խորհուրդ էին տվել կրոնափոխ լինել, մուսուլման դառնալ և փրկել կյանքը: Նա առերևույթ կատարել էր նրանց խորհուրդը, և որպես պարգևատրում նրան շնորհել էին պետական բարձր պատասխանատու պաշտոն՝ հասցնելով հասարակական բարձր դիրքի: Նա ընդունել էր թուրքական անունը և դարձել Իբրահիմ աղա, սակայն ներքուստ մշտապես աղոթել էր իր Աստծուն և մնացել քրիստոնյա:

Մայրիկը հիշել էր նրան, երբ բռնագաղթյալների հետ հասել էր Ուրֆա: Մայրս գիտեր, որ նա պաշտպանում է թուրքերի քաղաքականությունը, հետևաբար վերջիններս նրան չէին դիտում որպես հայի: Մայրիկս խնդրել էր մեզ ուղեկցող զինվորներից մեկին, որ նա մի գրություն տանի քաղաք՝ հավատացնելով, որ եթե այդ գրությունը գաղտնի տեղ հասցնի, կպարգևատրվի: Սա գրությունը տարել հասցրել էր Իբրահիմ աղային: Նամակում մայրս օգնություն էր խնդրել իր ընտանիքի համար և նաև մի քիչ դրամ՝ թուրք զինվորին:

Մայրիկի նամակը շատ էր վշտացրել Իբրահիմ աղային: Նա լուր էր ուղարկել մայրիկիս, որ կօգնի իրեն: Իբրահիմ աղան անմիջապես այցելել էր Հեյդար փաշային և ձեռք բերել նրա թույլտվությունը մայրիկին ու երեխաներին իր տուն տեղափոխելու: Իբրահիմ աղայի տանը մայրիկս գտավ չորս հայ աղջիկների: Վերջիններիս մայրերին տեղահանել էին Ուրֆայից, բայց նախքան քաղաքից հեռանալը մայրերը խնդրել էին Իբրահիմ աղային պաշտպանել իրենց դուստրերին: Նա չէր կարող մերժել, թեև վտանգում էր իր կյանքը, և ստիպված աղջիկներին թաքցրել էր հարևանների չար աչքից: Մի քանի տարեց կանայք կային այդ տանը, որոնց պահում էր նկուղային հարկում: Իբրահիմ աղան նրանց տուն էր տարել փողոցից, երբ ասկյարների աչքից հեռու էին մնացել:

Ավելի քան մեկ ամիս մայրիկս քույր-եղբայրներիս հետ ապահով ապրել էր հորեղբորս տանը: Հետո մի օր Հեյդար փաշան հրավիրում

է Իբրահիմ աղային կառավարական շենք: Հորեղբայրս ծանր սրտով է վերադառնում այնտեղից: Հեյդար փաշան ասել էր նրան, որ ապահով չէ այլևս իր հարազատներին իր տանը պահելը, իբրև թե բարձրաստիճան սպաներ կան Ուրֆայում, և եթե հանկարծ բացահայտվի, որ գաղթական հայեր են իր պաշտպանության տակ, բոլորին կսպանեն, և ինքը՝ Իբրահիմ աղան էլ կտուժի:

Բայց Հեյդար փաշան հայտնել էր նաև, որ ինքը մայրիկի, երեխաների և մյուս բռնագաղթյալների համար, որոնց մասին Իբրահիմ աղան տեղեկացրել էր այդ օրը, թույլտվություն ձեռք կբերի Հալեպի զինվորական ընդհանուր հրամանատարից, որպեսզի նրանք վերադառնան հյուսիս՝ իրենց տները, ասկյարների հսկողությամբ և պաշտպանությամբ: Ասկյարները գնում էին Մուշ՝ միանալու ռուսների դեմ պատերազմող թուրքական բանակին: Այս ամենի համար Հեյդար փաշան պահանջել էր 1000 լիրա, որը հավասար է 5000 դոլարի: Բացի այդ, եթե մայրիկն ու մյուս կանայք ապահով տեղ հասնեին և իշխանություններից թույլտվություն ստանային իրենց քաղաքում մնալու, ապա Իբրահիմ աղան դրա դիմաց պարտավոր էր վճարել ևս 1000 լիրա, իսկ թույլտվությունը կապահովեր Հեյդար փաշան ինքը:

Հորեղբայրս այլ ելք չուներ, պետք է համաձայներ: Չորս աղջիկները ո՛չ տուն ունեին, ո՛չ էլ հարազատներ իրենց քաղաքում. բայց նրանք էլ պիտի մայրիկի հետ գային կամ միանային գաղթականներին ու ընկնեին թուրքերի ձեռքը: Մայրիկը համաձայնել էր նրանց պահել մեր տանը՝ Չմշկածագում, եթե, իհարկե, տեղ հասնեինք ողջ ու անվնաս:

Մուշում մի զորագունդ էր համալրվում: Թուրքերը նահանջել էին Կովկասյան ճակատից ռուսների նախնական առաջխաղացման ժամանակ: Ջևդեթը՝ Վանի նահանգապետը, համախմբում էր իր բանակները՝ գրոհելու համար ռուսական թևի վրա, որն արդեն հասել էր Վան: Ասկյարներն արդեն զբաղեցրել էին Մուշի՝ հայերին պատկանող բոլոր տները: Համիդիե սպաները հավատում էին, որ ավելի լավ կլիներ մեզ տեղավորել քաղաքից դուրս, մինչև կարգադրություն կլիներ մեր ճանապարհը շարունակելու համար: Մայրիկի

հույսը Հեյդար փաշայի փաստաթուղթն էր՝ ապահովել զինվորական ուղեկցորդներ Մուշից դեպի Զմշկածագ: Հեյդար փաշան խոստացել էր նաև հեռագրել Մուշի իշխանություններին՝ երաշխավորելու համար մեր ապահովությունը:

Մենք կանգ առանք Մուշից մի քանի մղոն հեռու գտնվող Քուրդմեյդան գյուղում՝ Անդոկ լեռան ստորոտում: Շատ հայեր կային այս գյուղում: Տեղահանությունից առաջ այստեղ մի եկեղեցի կար: Բոլոր հայերին կոտորել էին, իսկ նրանց տներր գրավել էին այն գաղթականները, որոնց թուրքական իշխանությունները բերել էին Բալկաններում կորցրած իրենց նահանգներից: Մենք տեղավորվեցինք այդ լքված եկեղեցում, մինչև նոր կարգադրությունը հասներ՝ մեր տներ ուղևորվելու համար: Համիդիե սպաները կանչեցին Քուրդմեյդանի գյուղապետին և զգուշացրին, որ մենք «գտնվում ենք Բարձր Դռան հովանավորության ներքո»:

Գյուղացիները մեր նկատմամբ բարի էին: Առհասարակ բնակչությունը շատ էր վախենում, երբ լսում էր, որ ինչ-որ բան «պաշտոնական» է կամ պետական: Օրերն անցնում էին, իսկ քաղաքից ոչ մի լուր չկար: Մենք սկսեցինք անհանգստանալ: Մայրս անչափ ուզում էր տեսնել Զմշկածագի մեր տունը:

- Եթե դու և այս երեխաները չլինեիք,- ասում էր մայրս ինձ,- ես կնախընտրեի մեռնել իմ տան շեմին, եթե միայն Աստված օգներ և բախտ ունենայի մեկ անգամ էլ տեսնելու մեր տունը:

Իմ խե՜ղճ, թանկագին մայրիկ...

Մենք չէինք համարձակվում մենակ քաղաք գնալ և հետաքրքրվել, թե ինչ է լինելու մեզ հետ: Միայն պետք է սպասեինք:

Մի երեկո՝ նամազից հետո, քաղաքի փողոցները հանկարծ լցվեցին ձիավորներով: Մի քանի թուրք կանայք, որոնք եկեղեցու մոտակայքում էին կանգնած, խուժեցին եկեղեցի ձիերի սմբակների տակ չճզմվելու ահից:

- Շեյխ Զիլանն է, - ասացին նրանք:

Շեյխ Զիլանը բելլիք ցեղից էր: Նրան իր հազարավոր քրդերի հետ կանչել էր նահանգապետը՝ թուրքերի կողմից ռուսների դեմ կռվելու համար:

«Հոշոտված Հայաստան» ֆիլմի գովազդային պաստառը (հոնվար, 1919 թ.)

— 5 —
DAYS BEGINNING SUNDAY

ALHAMBRA

MOTION PICTURE PALACE OF THE INTERMOUNTAIN WEST

— PRICES —
CHILDREN—All Shows 10c
ADULTS—Matinee 10c
ADULTS—Evenings 20c

THE GREATEST FILM SENSATION OF THE AGE

AURORA MARDIGANIAN

(HERSELF) IN

"THE AUCTION OF SOULS"

Based on Facts, Not Fiction. A film that will stack the blood of America as no novel book. From the book, "RAVISHED ARMENIA," substantiated by official reports of Viscount Bryce, the British investigator, Henry Morgenthau, the American Ambassador, and the American Board of Foreign Missions.

An amazing story of the love twenty-year-old survivor of 500,000 young Armenian girls. An epoch in screen sensations. Based on facts more astonishing than the greatest creations of fiction. No other human being alive today can claim a quarter of the vivid experiences this girl has survived with a mind capable of recounting.

SPECIAL ADDED FEATURE
"When a Feller Needs a Friend"
A Briggs Comedy
"The Photograph Gallery"

Remember, when you were a kid, how your mother dragged you to the photographer every few months, how she dolled you all up like a story—exhibited you to all the neighbor women—and how your blood boiled—how you hated it—See this Briggs comedy and be a kid again.

Aurora Mardiganian

The Armenian beauty who escaped to America after two years of unspeakable adventures in the hands of Kurdish robbers, slave markets and Turkish Harems. Although the newspapers have given her every pages of space the National Committee chose the screen as the most vivid medium of bringing home to the American people what their Christian sisters endured in enslaved Armenia. The resultant screen epic has been truly called
"THE AUCTION SOULS"

FIRST TIME ANY CITY AT THESE PRICES

Doors Open Today at 4:30

HITHERTO SHOWN TO ADULTS ONLY AT
$10.00 PER SEAT
NOW RELEASED FOR PUBLIC EXHIBITION AT
POPULAR PRICES

A Great Film at the SOISSON 3 Days Starting Monday, Mar. 1

This most astonishing present-day film of fact was produced by Fred. W. S. Selig, for the National Motion Picture Comm. of the American Comm. for relief in the near East and

hitherto shown to Adults only at $10.00 per seat

In the Ritz-Carlton, New York, Bellevue-Stratford, Phila. Blackstone Hotel, Chicago, and Symphony Hall, Boston.

Now Released for Public Exhibition at Popular Prices

It presents the pictured true story of the sole survivor of half a million Armenian Girls

Aurora Mardiganian, Herself

She is the Armenian beauty who escaped to America after two years of unspeakable adventure in the hands of Kurdish robbers, slave markets and Turkish Harems. Although the newspapers have given her every pages of space the National Committee chose the screen as the most vivid medium of bringing home to the American people what their Christian sisters endured in enslaved Armenia. The resultant screen epic has been truly called

"Auction of Souls"

From the Book "RAVISHED ARMENIA" on the Martyrdom of Christian Armenia, which is Aurora Mardiganian's own story, substantiated by facts from the official reports of Viscount Bryce, the British Investigator, Henry Morgenthau, the American Ambassador and the American Board of Foreign Missions.

Thousands of People. Facts, Not Fiction.

Christian Women Sold Into Turkish Harems As Low as 85c Each

Aurora Mardiganian Will Appear IN PERSON at Each Showing of the Picture

«Հոշոտված Հայաստան» ֆիլմի ազդագրերը

. . The First National Exhibitors' Circuit, Inc.
has official permission to present

"Auction of Souls"

Produced by W. N. Selig for the American Committee for Relief in the Near East

From the Sensational Book "Ravished Armenia"

Aurora Mardiganian herself appears in the film
and re-enacts all of her unspeakable adventures

Miss Mardiganian is the sole survivor of half a million Christian Armenian girls and the film shows truthfully and without exaggeration what she went through during two years in Turkish Harems and in the hands of Turkish Soldiers and roving bands of Kurds, before escaping to America.

At the **PALACE** Theatre
MON., TUE., WED. OCT. 6-7-8

«Հոշուրված Հայաստան» ֆիլմի նյույորքյան ցուցադրության գովազդային պաստառներից մեկը

THE AMERICAN COMMITTEE
FOR ARMENIAN AND SYRIAN RELIEF

ANNOUNCES

"RAVISHED ARMENIA"

THE STORY OF AURORA MARDIGANIAN

The Christian Girl Who Survived the Great Massacres

will be presented by the Committee in connection with its national appeal for funds with which to rescue and save the lives of the Armenian Refugees who now are crying for bread, medicine and help, from the wastes of the deserts in Asia Minor. It will be shown simultaneously in many cities.

It is the verdict of many noted experts in the production of the most spectacular and absorbing motion pictures that

"RAVISHED ARMENIA"

THE STORY OF THE GIRL WHO SURVIVED

is the greatest motion picture achievement in theme, human interest, seriousness of purpose and thrilling development of dramatic conception ever attempted.

Those who are privileged to see it will also help

SAVE A LIFE

Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կազմակերպության կողմից հրապարակված դրամահավաքի կոչը, որը հորդորում էր ներկա գտնվել «Հոշոտված Հայաստան» ֆիլմի ցուցադրությանը

«Հոշուրված Հայաստան» ֆիլմի գովազդային պաստառը՝ տպագրված «American weekly» շաբաթաթերթի 1919 թ. հունվարի 12-ի համարում

Ավրորա Մարդիգանյանը որդու՝ Մայքլ Սեղալ Հովանյանի հետ

Ավորոա Մարդիգանյանն իր ամուսնու՝ Մարտին Հովանյանի և որդու՝ Մայքլ Սեդալ Հովանյանի հետ (հունիս, 1944 թ.)

Լոս Անջելեսի «County cemetary» գերեզմանատունը, որտեղ ամփոփված է Ավրորա Մարդիգանյանի աճյունը

Ավրորայի վերջին հանգրվանը Լոս Անջելեսի «County cemetary» գերեզմանատունը. թվակիր մարմարյա ցուցանակը դրված է 1994 թվականի մահացած 2200 անհայտ և անգերեզման աճյունների ամփոփման վայրում

Շեյխ Զիլանի անունը տարածված էր ամենուրեք: Նա իր հեծյալների խմբով երկար տարիներ ասպատակել և հիմա էլ ասպատակում, կողոպտում էր շրջակա գյուղերը: Ասում էին, որ նախքան պատերազմը նա հաճախ իր ցեղախմբով ներխուժում էր Պարսկաստանի սահմաններից ներս և նույնիսկ ռուսական Կովկաս, հափշտակում կանանց՝ Թուրքիայի եվրոպական մասի ստրկաշուկաներում վաճառելու համար:

Զիլանի հրոսակախումբն արշավում էր դեպի Մուշ: Մութն ընկնելուց հետո մուտքը քաղաք արգելված էր: Այդ մասին նրանք գիտեին, ուստի որոշել էին գիշերը իջևանել Քուրդմեյդանում: Շեյխի մարդկանցից մի քանիսը տեսան եկեղեցին և որոշեցին այն որպես ախոռ օգտագործել Զիլանի և նրա թիկնապահների ձիերի համար: Նրանք ջարդեցին դուռը և խուժեցին ներս: Բոլորս կուչ էինք եկել մի անկյունում: Բայց անհնար էր քրդերից թաքնվել: Երբ նրանք նկատեցին մեզ, աղմուկ-աղաղակ բարձրացրին: Շուտով եկեղեցին լցվեց վայրի ցեղի ելուզակներով:

Մայրիկը ցույց տվեց Հեյդար փաշայի նամակները: Սա որոշ չափով վախ ներշնչեց քրդերին, և նրանք կանչեցին իրենց գլխավորներից մեկին: Սա եկավ և նամակն ուշադրությամբ կարդաց, հետո ստուգեց մեզ՝ ասելով.

- Այստեղ փաշան գրում է, որ ձեր մեջ մի հայ կին կա՝ իր երեք աղախիններով և երեք երեխաներով, որոնց անձեռնմխելիությունն ու ապահովությունը երաշխավորված են: Դա մենք նկատի կունենանք, թեև փաշայի խոսքը պարտավորեցնող չէ շեյխ Զիլանի համար: Բայց փաշայի գրության մեջ ոչինչ ասված չէ հինգ կանանց մասին, ովքեր բավական մեծ են երեխա կոչվելու համար և շատ երիտասարդ՝ աղախին լինելու համար: Սրանց մենք կվերցնենք, քանի որ փաշան նրանց նկատմամբ պարտավորություն չունի: Նրանք չհավատացին, որ ես մորս երեխան եմ: Նրանք ինձ և այն չորս աղջիկներին, որոնց մայրս բերել էր Իբրահիմ աղայի տնից, իրենց հետ տարան, միաժամանակ մայրիկին ստիպեցին ազատել եկեղեցին և ապաստան գտնել կից բակում: Նրանք մեզ գյուղից դուրս տարան, որտեղ իրենց գլխավոր ճամբարն էր:

Քրդերը մեր ձեռքերը ձիերի պախուրցներով կապեցին մեջքերիս, հետո բոլորիս միացրին իրար՝ պարան անցկացնելով մեր թևերի միջով: Շուտով շեյխ Ջիլանն անձամբ եկավ մեզ տեսնելու: Մենք նրան շատ դուր եկանք, երբ զննեց մեր դեմքերը: Ջիլանը մեզ համար անհասկանալի հրահանգներ տվեց և հեռացավ: Ողջ գիշեր նստած մնացինք հատակին, քանի որ մեզ այնպես էին կապկպել, որ հնարավոր չէր պառկել: Քրդերը նայում էին մեզ հետաքրքրությամբ՝ պտտվելով մեր շուրջը, և հաճախ նրանցից մեկն ու մեկը քացով խփում էր մեզ՝ ստիպելով, որ դեմքով շրջվենք դեպի ինքը: Ուրիշ ձևով նրանք չէին նեղացնում մեզ:

ԳԼՈՒԽ ԺԳ
ՀՈՎՎԻ ԿԱՆՉԸ

Վաղ առավոտյան մեզ, ձիերին կապած, տարան քաղաք: Խմբի առջևից գնում էր ինքը՝ շեյխ Ջիլանը, նրա հետևից՝ մի քանի թիկնապահ: Չորս ձիավորներ մեզ հասցրին քաղաքի կեղտոտ ու հետամնաց թաղամասերից մեկը և այնտեղ հանձնեցին մի դաժան քրդի: Շուտով մենք իմացանք, որ նա Մուշ քաղաքի վատահամբավ ստրկավաճառ Բեքրան աղան է:

Տասը հազար քնքուշ, նրբագեղ հայ աղջիկներ՝ քրիստոնյա հարգարժան ընտանիքների դուստրեր՝ ուսանողուհիներ, երիտասարդ ուսուցչուհիներ, նույն սարսափն էին ապրել, ինչ ես ապրեցի այն պահին, երբ հասկացա, որ գերի եմ ընկել այդ ահավոր ստրկավաճառի ձեռքը: Երկար տարիներ նրա հարկի տակ «ծաղկում» էր ստրկավաճառությունը, սակայն երբևէ նրա առևտուրն այնքան շահութաբեր չէր եղել, որքան հիմա, երբ հնարավորություն էր ստացել այդքան շատ հայ աղջիկների վաճառքով զբաղվելու:

Գիշերը Բեքրանը մեզ տեղավորեց ավանակների ախոռում: Առավոտյան նրա համալը՝ ծառան, եկավ անասուններին կերակրելու: Երբ ավարտեց իր աշխատանքը, մեզ հրամայեց հետևել իրեն:

Բեքրանը մեզ սպասում էր սելամլըքում*: Ես ցնցվեցի, երբ տեսա նրան: Նա մի քայքայված, չորացած ծերունի էր՝ դժնի հայացքով: Մի սևամորթ կին էր սպասարկում նրան: Իրենց հին սովորության համաձայն՝ նա նստած էր հատակին: Սելամլըքը դատարկ էր ու թափթփված. չորս բոլորը կեղտ էր ու ապականություն: Բեքրանի վրայից կախ ընկած վերարկուն, թեև թանկարժեք գործվածքից էր, սակայն արդեն մաշված էր ու քրքրված: Ենթադրվում էր, որ Բեքրանը պիտի որ շատ հարուստ լիներ. չէ՞ որ անօգնական հայերի վաճառքից հսկայական շահույթ էր ստանում:

Մենք ծնկաչոք ընկանք նրա ոտքերի առջև այնպես, ինչպես մուսուլմանուհիներն էին անում՝ թախանձելով, որ նա լսի մեր աղաչանքը: Ես այնքան շատ էի տառապել, որ կարծում էի, թե կարող եմ համոզել այս ծերուկին, որ ինձ թույլ տա միանալ մայրիկիս: Բայց Բեքրանը բառ իսկ չարտաբերեց: Նա աչքերը սահեցրեց մեր վրայով, և ես զգացի նրա հայացքի ծանրությունը: Բեքրանը նշան արեց, և նրա համալը մեկիկ-մեկիկ մեզ բարձրացրեց, որպեսզի իր տերը գնահատի մեր հասակը, մեր կազմվածքը և գրավչությունը: Հետո Բեքրանը նորից նշան արեց, և համալը ներքին բակի միջով մեզ առաջնորդեց քարաշեն մուտքով մի ընդարձակ սենյակ, որտեղ շատ աղջիկներ կային, հիմնականում՝ հայուհիներ: Նրանց մեջ էին երկու չեչենուհի և մի ռուս աղջիկ՝ բերված Կովկասից:

Շուտով համալը կրկին մտավ սենյակ՝ բերելով մեզ համար թուզ ու հաց: Ո՛չ ես և ո՛չ այն չորս աղջիկները, որ դեռ Ուրֆայից գտնվում էին մորս խմբի մեջ, չկարողացանք ուտել: Մյուս աղջիկներից շատ քչերը կերան: Բոլորն էլ վերջերս էին ընկել Բեքրանի ճանկը և չափազանց ստորացված ու ընկճված էին: Համալը, երբ նկատեց, որ մենք՝ վերջին եկածներս, չկերանք, ասաց.

- Դա լավ է, մենք ժամանակ չենք կորցնի ձեր լվացվելու վրա: Հետո նա ստիպեց մեզ բակի աղբյուրի ջրով հնարավորինս լավ մաքրվել նախորդ գիշերվա փոշուց և ախոռի կեղտից:

Մինչ մենք բակում լվացվում-մաքրվում էինք, երկու ծառա եկավ

* Սելամլըք՝ տղամարդկանց հարկաբաժին թուրքական պալատում

ու միացավ համալին: Նրանք մեզ շարք կանգնեցրին: Այն աղջիկները, ովքեր մինչ մեզ բերելն արդեն այդտեղ էին, փրկեցին մեզ համալի և նրա մարդկանց մտրակի հարվածներից՝ զգուշացնելով, թե ինչ պետք է անենք:

Մեզ տարան շենքի հետնամասում գտնվող մի սենյակ, որտեղ, բացի անկյունում փռված մի կարպետից և մի քանի մութաքայից, ուրիշ ոչինչ չկար: Մեզ թույլ տվեցին նստել հատակին, որտեղ ցանկանայինք, բացի այն անկյունից, որտեղ մութաքաներ էին դրված: Շուտով Բեքրան աղան ներս մտավ և նստեց մութաքաների վրա: Ողջ առավոտ իրար հետևից եկան գնորդները: Հենց որ գնորդներից մեկն ավարտում էր Բեքրանի հետ խոսելը, համալը ձեռքերը զարկում էր իրար և մեզ հրամայում շրջան կազմել գնորդի շուրջը: Շատ աղջիկներ վաճառվեցին՝ յուրաքանչյուրը մի քանի ցենտով: «Շուկան» առատ էր «ապրանքով», այնպես որ բարձր գին չէին կարող պահանջել: Երբ աղջիկներից մեկը վաճառվում էր, գնորդը սպասում էր, որ ծառան գար ու տաներ նրան:

Երկրորդ օրը՝ երեկոյան, սենյակ մտավ մի հաճախորդ, ում նկատմամբ Բեքրան աղան խոր հարգանք էր ցուցաբերում: Հագուկապից երևում էր, որ հարուստ մարդու ծառա է: Մնացած աղջիկներից նա ջոկեց երեքին. ես դրանց մեջ էի: Մինչ մենք, նրա կողքին կանգնած, սպասում էինք, նա սակարկում էր Բեքրանի հետ: Վերջապես համաձայնության եկան: Ինձ վաճառեց մեկ մեջիթիեով՝ 85 ցենտով:

Դրսում մի կառք էր սպասում: Ինձ և երկու աղջիկների տեղավորեցին այդ կառքում ու տարան քաղաքից դուրս՝ գյուղական մի տուն, որն զբաղեցնում էր Վանի նահանգապետ Ջևդեթ բեյը՝ թուրքական բանակի հրամանատարը. նա ռուսների դեմ ձեռնարկված ռազմական գործողություններն էր ղեկավարում:

Մեզ անմիջապես տարան կանանոց, որտեղ բազմաթիվ երիտասարդ հայուհիներ կային: Մայրամուտից առաջ եկավ գլխավոր սպասավորը և մեզ մեկիկ-մեկիկ հարցրեց, թե արդյոք պատրա՞ստ ենք մեր կրոնը ուրանալու և մուսուլման դառնալու: Գլխավոր սպասավորը բացատրեց, թե մեզնից միայն նրանք կարող են մնալ ամենազոր

մարդու՝ Զևդեթ բեյի խնամքի և հոգածության ներքո և վայելել նրա հովանավորությունը, ովքեր ինքնակամ իսլամ կընդունեն:

Զևդեթ բեյը բոլոր թուրքերից ամենաանմարդկայինն էր, մի հրեշ, որն իր կիրառած դաժան միջոցների մեջ խտրություն չէր դնում: Սակայն, այդուհանդերձ, ինչպես մեզ բացատրեցին, նա ցանկանում էր պահպանել Աբդուլ Համիդի կողմից հրապարակված ֆեթվայի* կետերը, որոնք դեռ գործում էին Թուրքիայում: Այդ հոդվածով արգելվում էր հայ և մյուս քրիստոնյա աղջիկների ստրկացումը, եթե, իհարկե, նրանք արդեն ուրացել էին իրենց կրոնը և իսլամ ընդունել:

Ես չգիտեի, թե գլխավոր սպասավորն ինչ կաներ ինձ հետ, եթե ես հրաժարվեի իսլամից: Ես վախենում էի, որ պատիժը լիներ մահը կամ անմիջապես հասարակաց տուն ուղարկվելը: Բայց չէի կարող ուրանալ իմ Քրիստոսին՝ Նրան այսքան հավատարիմ մնալուց հետո: Այդժամ դիմեցի մեր Տիրոջը՝ ի՞նչ անեմ... Տիրոջ պատասխանը եղավ հստակ և ուղղակի, այնպես, ինչպես այն ժամանակ Դիարբեքիրի ճանապարհին՝ ժայռերի մեջ, երբ պատրաստվում էի գործի դնել ձեռքիս դանակը: Ինձ թվաց, թե հայր Ռուբենը՝ մեր քահանան, կանգնել է իմ առջև. ես տեսնում էի նրան և նույնիսկ զգում նրա ձեռքն իմ ուսին: Ամեն ինչ եղավ ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ նա ինձ ասաց. «Միշտ հավատա՛ քո Աստծուն և հավատարի՛մ մնա Տիրոջը»: Հետո դառնալով խալֆային՝ գլխավոր սպասավորին, ասացի.

- Ես չեմ ուրանա Հիսուսին:

Աղջիկներից մեկը, ում ինձ հետ բերել էին Զևդեթ բեյի մոտ, նույնպես հրաժարվեց իր հավատքն ուրանալուց, թեև կարող էր այդպիսով իր կյանքը փրկել: Երրորդ աղջիկը շա՛տ էր տառապել ու տանջվել, նրա սիրտն ու հոգին ճզմված էին. այլևս չկարողացավ դիմադրել, համաձայնեց: Խալֆան նրան տեղափոխեց մեկ այլ սենյակ: Քիչ հետո մեզ՝ հավատափոխ չեղածներիս, դուրս կանչեցին, տեղավորեցին տարբեր սայլերի մեջ և տարան... թե ուր, անհայտ էր: Ինչ եղավ մուսուլման դարձած հայ աղջկա ճակատագիրը՝ ես չիմացա: Ինձ տարան

* Ֆեթվա - մուսուլմանների հոգևոր առաջնորդի արձակած որոշումը

Ահմեդ բեյի՝ Մուշ քաղաքի հարուստ թուրքերից մեկի տուն՝ որպես նվեր Ջևդեթ բեյից:

Ես երբեք չեմ մոռանա ինձ տիրած այն հոգեկան տագնապը, երբ մտա Ահմեդ բեյի տան բակը: Բոնազաղթը սկսվելուց հետո երկու անգամ ինձ հափշտակել էին և որպես գերի տարել թուրքերի տները ու թողել տանտիրոջ ողորմածությանը: Սակայն այդ պահին ես զգացի, որ իմ ապագան ավելի մռայլ է լինելու, քան երբևէ: Եվ դա գուցե այն պատճառով, որ Ահմեդ բեյի տունը գտնվում էր քաղաքից դուրս՝ բաց դաշտում, և ասես բանտ լիներ: Ահմեդի կանանոցում 24 աղջիկ կար՝ յուրաքանչյուրն իր տառապանքի հիշողություններով, նրանցից մի քանիսինն ավելի ահավոր՝ քան իմը:

Ահմեդ բեյն ինքը շատ ծեր էր, սակայն աղջիկներից ոմանք արդեն նրա ցանկությունների զոհն էին դարձել: Մյուսներին Ահմեդը բաժին էր հանել իր երկու որդիներին:

Ահմեդ բեյը պատկանում էր մոլեռանդ թուրքի այն տեսակին, որին ես դեռ չէի հանդիպել: Նրան հետաքրքրում էին ոչ այնքան երիտասարդ կանայք, որքան այն երեխաները, որ պիտի ծնվեին իր որդիներից, երեխաներ, որոնց թուրքական բարբարոս արյունը պիտի խառնվեր հայկական ազնիվ արյանը՝ բարելավելով և ամրացնելով իր ցեղը:

Հաջորդ օրը Ահմեդ բեյը հրամայեց ինձ իր մոտ տանել: Ես խնդրել էի, որ ինձ հագուստ տան, բայց կանանոցին կցված պատասխանատու ծառան հրաժարվեց և հարեմի մյուս աղջիկներին էլ թույլ չտվեց:

- Ո՛չ, դու չես ստանա, մինչև Ահմեդ բեյը չհայտնի իր ցանկությունը, - եղավ պատասխանը:

Ահմեդ բեյն ինձ հետ խոսեց սիրալիր, մեղմ, բայց մի այնպիսի՜ մեղմությամբ, որ ավելի ցավոտ էր, քան ֆիզիկական տանջանքը:

- Դու կլինես իմ սիրելի կանանցից մեկը,- ասաց նա, - որովհետև քեզ ուղարկել է ինձ մոտ Նորին գերազանցություն Ջևդեթ բեյը: Նա նշան արեց, և սևամորթ ստրկուհին ներս մտավ՝ մի շքեղ զգեստ ձեռքին. այդպիսի հանդերձ հագնում էին արտոնյալ դասի թրքուհիները:

- Սա՛ և դեռ շատ ուրիշ զարդեր, նաև իմ սիրալիր վերաբերմունքն ու քնքշանքը քոնը կլինեն, եթե հնազանդ լինես և հարգալից, - ասաց

Ահմեդը: - Սակայն դու նախ պիտի ուրանաս քո Քրիստոսին և ընդունես Ալլահին ու նրա առաքյալ Մուհամեդին:

Ես նրան ասացի, որ հոգնել եմ իմ կրած չարչարանքներից, սակայն մայրս ինձ հանձնել է Աստծո խնամքին, և ես չեմ լքի իմ Տիրոջը:

Ահմեդը գազազեց: Նրա ողջ «քնքշությունը» փոխվեց կատաղության: Նա զայրույթից դողում էր, հայհոյում ինձ և իմ ժողովրդին, պախարակում իմ կրոնը: Լսելով այդ լուտանքները՝ ես լաց էի լինում ամոթից, իսկ նա շարունակում էր դաժանաբար: Ես աղաչեցի, որ ազատ թողնի ինձ, որպեսզի կարողանամ միանալ մորս խմբին: Ես նրան պատմեցի այն նամակի մասին, որ մորս տվել էր Ուրֆայում ապրող Հեյդար փաշան: Բայց նա ինձ չէր լսում:

Սևամորթ ստրկուհուն ուղարկեցին Ահմեդի որդուն կանչելու: Նա անմիջապես եկավ: Անունը Նազիմ էր:

- Սա այն աղջիկն է, Նազի՛մ, - ասաց Ահմեդը, - ում անձամբ Ջևդեթ բեյն է ինձ ուղարկել: Ես նրան քեզ համար եմ ընտրել, որդի՛ս... Տես ի՞նչ սիրուն է ու դեռատի: Բայց նրա ոգին պետք է կոտրել: Կանչել եմ քեզ, որ տեսնենք, թե ինչ ենք անելու սրա հետ:

Ահմեդի տղան դիմեց ինձ, բայց ես չարձագանքեցի: Հետո բռնեց ձեռքս, քաշեց ինձ դեպի իրեն և դեմքս բարձրացրեց, որպեսզի կարողանա նայել աչքերիս մեջ:

- Հանձնի՛ր նրան ինձ, հա՛յր, ես կփորձեմ համոզել, որ նա երջանիկ կլինի այս տանը,-ասաց Նազիմը:

Ստրկուհին ինձ առաջնորդեց մի սենյակ, որի պատուհանները նայում էին ներքին բակին: Սենյակում մի բազմոց կար: Խնդրեցի ստրկուհուն, որ հագուստ թողնի՝ մերկությունս ծածկելու համար, բայց նա դա չէր կարող անել առանց թույլտվության: Երբ ստրկուհին հեռացավ, Նազիմը դուրս եկավ տղամարդկանց հարկաբաժնից, անցավ ներքին բակը և եկավ ինձ մոտ:

Նա նույնպիսի քնքշությամբ, ինչպես և իր հայրը, սկսեց խոսել ինձ հետ. դա ինձ ցավ էր պատճառում: Նազիմը համոզում էր ինձ իսլամ ընդունել, որպեսզի հետո դառնամ իր «հարսնացուն»: Ապա ավելացրեց, որ իմ տառապանքներն անտանելի կդառնան, եթե հրաժարվեմ, իսկ համաձայնելու դեպքում կապրեմ շքեղության մեջ:

Ես հասկանում էի, որ հնարավոր չէ խույս տալ: Եվ նորից մայրիկիս հիշեցի, ում կարոտն ինձ հանգիստ չէր տալիս: Ես Նազիմին ասացի՝ քանի դեռ մայրս գաղթականի կարգավիճակում է, թափառական և մահվան է դատապարտված, իմ «հարսնացու» լինելու մասին խոսք անգամ լինել չի կարող: Եթե նա ազատի մորս, բերել տա ինձ մոտ, ես կհարցնեմ մայրիկիս՝ ի՞նչ է կարծում, կյանքս փրկելու համար ուրանա՞մ հավատքս... Եթե մայրս համաձայնի, որ ճիշտը հավատափոխ լինելն է, այդժամ ես կզոհեմ իմ հոգին հանուն իմ և մայրիկիս կյանքի, հանուն այն բանի, որ մայր ու աղջիկ ապրենք կողք կողքի՝ իրար սփոփելով:

- Դու չպիտի մոռանաս, որ ստրկուհին չի կարող պայմաններ թելադրել, - ասաց նա՝ ինձնից հեռանալով:

Ժամեր անցան: Ես, կծկված բազմոցի վրա, սպասում էի: Դրսից լսվող ամեն ոտնաձայնից սարսափում էի. մտածում էի՝ ահա գալիս են իմ հետևից, ի՞նչ չարչարանքներ են ինձ սպասում... Վերջապես մի զինվոր հայտնվեց, որ Ահմեդ բեյի անձնական ծառան էր, մոտեցավ ինձ: Նա կոպտորեն ոտքի կանգնեցրեց ինձ, քարշ տվեց իր հետևից բակի միջով դեպի փողոցի դարպասը: Պարտեզի պատից այն կողմ երևացող զաբթիեների խմբի մեջ տեսա մայրիկիս, փոքրիկ Հովնանին, Մարտիրոսին և Սառային՝ եղբայրներիս ու քույրերիս: Նրանց հետ էին նաև մորս խմբի մյուս գաղթականները: Ես Նազիմին հայտնել էի մայրիկիս գտնվելու վայրը և խնդրել էի ինձ մոտ բերել նրանց: Նա կատարել էր իմ խնդրանքը...

Ես փորձեցի պոկվել և նետվել դեպի իմ հարազատները: Կողքիս կանգնած զաբթիեն բռնեց ինձ: Մայրս ծնկի էր եկել՝ ձեռքերը երկինք կարկառած: Սառան, ձեռքերը պարզած, վազեց դեպի ինձ:

- Արշալո՛ւյս, Արշալո՛ւյս... մի թող, որ նրանք մեզ սպանեն,- հեծկլտում էր Սառան:

Զաբթիեն իր մտրակի ծանր բռնակը բարձրացրեց և թափով իջեցրեց Սառայի գլխին: Հարվածն այնքան ուժգին էր, որ Սառայի փոքրիկ մարմինը թավալգլոր ընկավ ճանապարհից դուրս: Նա այլևս չշարժվեց: Հարվածը ջարդել էր քույրիկիս գլուխը:

Մայրս այդ տեսավ, տեսան Մարտիրոսն ու Հովնանը: Մայրս փուլ եկավ գետնին և մնաց այդպես անշարժ: Զաբթիեներից մեկը բարձրացրեց մորս և մտրակով հարվածեց: Ես զաբթիեների ղեկավարի ոտքերն ընկա, աղաչեցի.

- Խնայե՛ք մորս, խնայե՛ք եղբայրներիս, - բղավում էի, - ես կանեմ այն, ինչ ցանկանաք, ես կնվիրվեմ Ալլահին, միայն նրա ողորմածությունը կհայցեմ, միայն թե հարազատներիս կյանքը խնայեք:

- Այնպես կլինի, ինչպես ցանկանում է Նազիմ բեյը, - ասաց զաբթիեն:

Ես ոչինչ չէի հասկանում: Միայն կառչել էի զաբթիեից և աղաչում-պաղատում էի նրան բարեգութ լինել: Ես փորձեցի մոտենալ և հպվել մորս, բայց զաբթիեն քացով խփեց ինձ ու գետնին շպրտեց: Հետո հանկարծ ես հասկացա, թե նրանք ինչու դադարեցրին իրենց վայրագությունը. Նազիմ բեյը դուրս էր եկել տնից: Երբ տեսա նրան, ծնկի եկա նրա ոտքերի առջև, աղաչեցի գթալ հարազատներիս.

- Ես թուրք կդառնամ, ես Ալլահին կաղոթեմ, ես հնազանդ կլինեմ, միայն խնայեք մորս, - թախանձում էի ես:

- Շա՛տ լավ, բայց դու ոչ միայն մուսուլման պիտի դառնաս, այլև մուսուլմանի դուստր: Այդպես է՛լ ավելի լավ կլինի: Հը՛, ի՞նչ կասի պառավը...

Զաբթիեներից մեկը նորից ցնցեց մորս և ոտքի կանգնեցրեց, ապա, բարձրացնելով մտրակը, գոռաց.

- Կրկնի՛ր իսլամի երդումը՝ շահադան, արա՛գ...

- Մայրի՛կ, աղաչում եմ, Աստված կների քեզ, հայրիկն էլ՝ երկնքում, նա կհասկանա քեզ, - համոզում էի ես:

Մայրս շատ թույլ էր, խոսելու ուժ չուներ, միայն նրա շրթունքները մրմնջացին. «Սուրբ Գրիգորի Աստվա՛ծ, թող քո կամքը լինի...»:

Զաբթիեի ծանր մտրակն ուժգին իջավ, և մայրս փռվեց գետնին: Ես փորձում էի մոտենալ նրան, բայց զաբթիեները չթողեցին: Ես պայքարում էի, սակայն նրանք շատ ամուր էին բռնել ինձ: Կրկին ու կրկին մտրակի հարվածներ էին տեղում մորս գլխին: Մարտիրոսը ճչաց և փորձեց պաշտպանել մայրիկին իր թույլ ու փոքրիկ ձեռքերով: Երկրորդ զաբթիեն ճանկեց եղբորս և մտրակի բռնակի մի

հարվածով սպանեց նրան: Երբ Մարտիրոսին շպրտեցին մի կողմ, նրա անշնչացած մարմինն ընկավ համարյա իմ ոտքերի առջև: Հովնանը փաթաթվել-կախվել էր մորս հարվածող զաբթիեից, բայց նա այնքա՞ն թեթև էր, որ զաբթիեն նույնիսկ չէր զգում նրան: Տեղում էին մտրակի հարվածները, մինչև մորս խոշտանգված մարմինը փովեց գետնին: Ես հասկացա, որ մայրս այլևս չկա... Հետո զաբթիեն քաշեց դանակը և խրեց փոքրիկ Հովնանի կուրծքը:

Հավիտենություն թվացող երկու կամ երեք րոպե անցավ: Բայց այդ մի քանի րոպեների ընթացքում աշխարհը դատարկվեց ինձ համար: Ես մնացի բոլորովին մենակ. չկար մայրս, չկար քույրս՝ Սառան, չկային Մարտիրոսն ու Հովնանը: Նրանց մարմիններն ընկած էին իմ ոտքերի առջև: Մայրս ու Հովնանը մահացան՝ դեմքերը դեպի ինձ, ուղիղ աչքերիս մեջ նայելով:

(Ես պահել եմ նրանց հայացքը իմ աչքերի մեջ: Ես տեսնում էի նրանց ամեն օր, ամեն գիշեր, նույնիսկ ամեն ժամ, նույնիսկ հիմա, երբ նայում եմ այս նոր աշխարհին: Ես ժամերով փակում եմ աչքերս, որպեսզի մի պահ այդ տեսարանը հանգիստ թողնի ինձ:)

Ես սթափվեցի, երբ լսեցի, թե ինչպես Նազիմ բեյը հրաման տվեց զաբթիեներին: Նրանցից մի քանիսը վերցրին իմ հարազատների դիակներն ու տարան, չգիտեմ թե ուր: Մյուսներն ինձ բարձրացրին, բայց ես ի վիճակի չէի քայլելու: Զաբթիեներն ինձ նորից տարան այն սենյակը, որտեղ բազմոցն էր դրված: Երկու օր՝ գիշեր ու ցերեկ, ոչ ոք չայցելեց ինձ, բացի սևամորթ ստրկուհուց: Այդ օրերին անվերջ լաց էի լինում, արցունքներս հոսում էին հեղեղի պես, և ես դեմն առնել չէի կարողանում: Այդ եղավ պատճառը, որ աչքերս սաստիկ տկարացան:

Երրորդ օրը Նազիմ բեյն իր հոր հետ իմ սենյակ եկավ: Ահմեդն սկսեց խոսել անտանելի սիրալիր.

- Ինչ եղել, եղել է, փոքրի՛կս, ժամանակն է, որ մտածես ապագայիդ մասին: Նազիմը ցանկանում է քեզ. դա մեծ պատիվ է քեզ համար: Նա պատժեց քեզ համառությանդ համար, բայց կարող է նաև ներել և տեղ տալ քեզ իր սրտում: Այդպես պետք է լինի: Քո ժողովուրդը չկա: Ոչ ոք չկա, որ քեզ սխալ խորհուրդներ տա. դու

պե՛տք է ընդունես Ալլահի բարեգթությունը և ապրես արդարության մեջ:

- Ես ուզում եմ մեռնել, սպանե՛ք ինձ... Ես երբեք չեմ լսի ո՛չ քո որդուն, ո՛չ քո Ալլահին,- ասացի ես:

Նրանք տեղափոխեցին ինձ շենքի մյուս ծայրում գտնվող մի բանտախուց՝ երկաթյա ցանցապատ պատուհանով, որ նայում էր բակին: Այստեղ ո՛չ բազմոց կար, ո՛չ մութաքա, միայն դատարկ պատերն էին ու չոր հատակը: Լուսամուտը պատի վերին մասում էր, այնպես որ ես ոչինչ չէի տեսնում երկնքի ծվենից բացի: Դա այն նույն երկինքն էր, որ իմ հոշոտված Հայաստանի ողբերգությունների ականատեսը եղավ:

Օրեր ու գիշերներ իրար հետևից եկան ու անցան: Ամեն առավոտ սպասավորներն ինձ համար բերում էին հաց, հատապտուղներ ու կաթ: Այդ ընթացքում ամեն օր մի խոջա՝ հոգևոր ուսուցիչ էր գալիս՝ հարցնելու համար, թե արդյոք պատրա՞ստ եմ իսլամ ընդունելու: Բայց ամեն օր Աստված ինձ իր սրտում ավելի մեծ տեղ էր տալիս, ավելի էր սիրում, քանի որ ես պահպանեցի իմ Տիրոջ հետ խոսելու խիզախությունս:

Եվ ահա մի գիշեր, երբ արդեն բազում օրեր էին անցել (ես կորցրել էի դրանց հաշիվը), Աստված ինձ հասավ իմ բանտախցի պատուհանից: Ինձ արթնացրեց բակում սկսված իրարանցումը (սովորաբար գիշերները բակը խաղաղ էր լինում): Շուտով հասկացա, թե ինչ է կատարվում. Ահմեդի ոչխարի հոտը լեռնային արոտավայրերից վերադարձել էր երևի պատերազմական դրության պատճառով, և հիմա ներս էին անում դարպասից:

Ես լսեցի, թե ինչպես դարպասը փակվեց: Հետո ոչխարների անհանգիստ մայունից բացի լսեցի հովվի սուլոցը, որով նա փորձում էր հանգստացնել ոչխարներին: Վեր թռա տեղիցս, սիրտս սկսեց ուժգին բաբախել ու թրթռալ: Շունչս պահած ականջ դրեցի ու սպասեցի: Հովիվը կրկնեց իր կանչը: Ես վստահ էի և հետո համոզվեցի, որ դա այն նույն յուրահատուկ կանչն էր՝ սուր և հատու, որ հայրս միշտ սովորեցնում էր իր հովիվներին, այն կանչը, որ դեռ մանկուց ժառանգաբար անցել էր հովվին իր հորից, երբ ոչխարի հոտը արածեց-

նում էր Մամուրեթ ուլ-Ազիզի լայնարձակ արոտավայրերում: Երբ ես երեխա էի, մեր հովիվները ծիծաղում էին վրաս, երբ փորձում էի նմանակել նրանց կանչը: Մի օր անչափ ուրախացա, երբ ինձ հաջողվեց այնքա՜ն լավ սուլել, որ հանկարծ ոչխարի հոտը թողեց արածելը և շարժվեց դեպի ինձ:

Ես վստահ էի, որ ոչ մի օտար հովիվ չէր կարող սուլել այդ կանչը, եթե նա Չմշկածագից չլիներ: Ահմեդի ոչխարի հոտը հոգնած էր ու անհանգիստ: Անծանոթ հովիվը շարունակում էր մնալ հոտի հետ՝ մերթ ընդ մերթ կրկնելով իր կանչն ավելի ու ավելի մեղմ: Ես մոտեցա պատուհանին, դեմքս հնարավորինս մոտեցրի երկաթե ձողերին և կրկնեցի կանչը: Նույնիսկ ինձ թվաց, թե ոչխարներն ինչ-որ արտակարգ բան զգացին: Հանկարծ բոլորը լռեցին: Նորից սուլեցի, այս անգամ՝ ավելի համարձակ: Հովիվն իսկույն արձագանքեց: Ես հովվի ազդանշանում նույնիսկ նրա զարմանքը որսացի:

Մի քանի փորձ անելուց հետո արդեն կարողանում էի բարձր ցատկել և բռնել լուսամուտի երկաթե ճաղերից, մարմինս բարձրացնել այնքան, որ դեմքս հասներ պատուհանագոգից վեր: Հաճախ այսկերպ մի ակնթարթ կարողանում էի տեսնել բակը: Բայց այնքան ուժեղ չէի, որ կարողանայի պահել ինքս ինձ մի քանի վայրկյանից ավելի:

Հովվին մի ակնթարթ տեսնելու հույսով փորձեցի մեկ անգամ էլ: Վեր ձգվելիս կրկին սուլեցի: Մի քանի անգամ փորձեցի, մինչև նրա ուշադրությունը կենտրոնացրի իմ պատուհանի կողմը: Երբ ինձ հաջողվեց հասկացնել հովվին, որ այդ պատուհանի հետևում բանտարկյալ կա, նա ինձ պատասխանեց ճիշտ իմ լուսամուտի տակ՝ երեք անգամ սուլելով:

Չէի համարձակվում ձայն տալ նրան: Ջզեստիցս պատռեցի մի մեծ կտոր, կլորացրի գնդակի նման և նետեցի դուրս: Նա հասկացավ և կամացուկ սուլեց: Ես հույս ունեի, որ նա կհասկանա դա՝ որպես նշան իմ բանտարկության, և կազատի ինձ: Դժվար էր հավատալ, որ մի հայ հովիվ ողջ է մնացել, բայց դա այդպես էր:

Առավոտյան, երբ ոչխարի հոտը դուրս տարան, հովիվը նորից սուլեց իմ պատուհանի տակ: Հասկացա, որ նա փորձում է գրավել

ուշադրությունս: Ես պատասխանեցի նույնպիսի մեղմությամբ: Այդ օրն իմ հոգում ծնված հույսը ինձ արիացրեց: Ներքուստ զգում էի, որ փրկությունս մոտ է, թեև չէի կարողանում բացատրել՝ ինչու:

Նույնիսկ չփորձեցի քնել հաջորդ գիշեր: Ոչխարի հոտը վաղ վերադարձավ: Հովիվը սուլեց: Մի ժամ հետո ես կրկին լսեցի այդ կանչը: Հովիվը դեռ բակում էր: Գրեթե կեսգիշեր էր, երբ պատուհանի երկաթե ճաղերին թխկթխկոց լսեցի: Դուրս նայեցի. ներքևում՝ լուսնի լույսի ներքո, ուրվագծվեց ինձ շա՜տ հարազատ մի կերպարանք. մեր Ծեր Վարդապետն էր, այն Վարդապետը, ով Ջատկի առավոտը եկել էր մեր տուն՝ իր չարագույժ մարգարեությամբ, որն իրականություն դարձավ: Աստված էր ուղարկել նրան ինձ համար, որ լսի ու հասկանա իրեն ծանոթ կանչը:

Մեր բարի Վարդապետը շշնջաց.

- Ո՞վ կա այդտեղ, ո՞վ է Մամուրեթ ուլ-Ազիզից...

- Ես եմ՝ Արշալույսը՝ Մարդիգանյանների դուստրը՝ Չմշկածագից: Դու մեր վաղեմի բարեկամ Ծեր Վարդապետն ես, իսկ ես քո այնքա՜ն սիրելի Արշալույսը:

Բարի Վարդապետը փորձեց խոսել, բայց նրա ձայնն այնպե՜ս դողաց, որ չհասկացա, թե ինչ ասաց: Ես արագ-արագ պատմեցի, թե ինչպես էի գերի ընկել Ահմեդի ձեռքը և ինչու եմ այժմ այս բանտախցում:

Արցունքները հոսեցին Ծեր Վարդապետի աչքերից, երբ ասացի, որ իմ բոլոր հարազատներն սպանված են: Ես նրան հարցրի, թե ինչպես է ինքը փրկվել:

- Ծեր Վարդապետն արժանի չէր մորթվելու, - ասաց նա, - շատ էր պետք Ահմեդին. ե՛ս էի վարժեցրել նրա ոչխարի հոտը, որ միայն ինձ ենթարկվի: Ահմեդը մոռացել է, որ հայ եմ, քանի որ ծնկներս ծալում եմ Ալլահին աղոթելու ժամանակ և այդպես երկարաձգում օրերս:

Հետո նա ինձ ասաց.

- Համբերի՛ր, մի ճամփա կգտնեմ քեզ ազատելու:

ԳԼՈՒԽ ԺԴ
ԱՆԴՐԱՆԻԿ ՋՈՐԱՎԱՐԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ

Անցել էր երկու գիշեր: Ծեր Վարդապետը նորից եկավ: Ամեն գիշեր լսում էի ինձ ծանոթ ազդանշանը և արձագանքում: Երրորդ գիշերը նրա դեմքը կրկին երևաց պատուհանի շրջանակի մեջ:

- Պատրա՛ստ եղիր, փոքրի՛կս, ես շուտով քեզ կազատեմ, - քնքշորեն շշնջաց Ծեր Վարդապետը: Նա իր հետ մի պողպատյա ձող էր բերել, որի միջոցով պիտի իրարից հեռացներ պատուհանի երկաթյա ճաղերը, որոնք շատ հին էին. երևի հարյուր և ավելի տարիների պատմություն ունենային:

Ես ծնկաչոք աղոթում էի, երբ լսեցի Վարդապետի շշնջոցը.

- Արի՛, փոքրիկս, տո՛ւր ձեռքդ Ծեր Վարդապետիդ, նա կբարձրացնի քեզ:

Երկաթյա ճաղերն այնքա՜ն էին հեռացել իրարից, որ Վարդապետը կարողացավ կիսով չափ ներս մտցնել ձեռքերը: Ես բռնեցի նրա ձեռքերից, նա ինձ վեր քաշեց, մինչև կարողացա կառչել երկաթյա ճաղերից և մարմինս դեպի վեր ձգել: Մի րոպե հետո պատուհանից ցատկեցի ներքև՝ հովվի բերած կոճղին, այնտեղից էլ՝ ամուր գետնին: Մակաղած ոչխարներն սկսեցին իրար անցնել ու անհանգիստ

մայել, երբ ընկա նրանց մեջ, բայց Ծեր Վարդապետը սուլեց, և ոչխարները հանգստացան:

- Մենք պետք է արագ հեռանանք, դարպասը բաց է: Մինչև արևածագ դու պետք է լինես այն հեռավոր վայրում, որ ես քեզ ցույց կտամ: Այնտեղ քեզ այլևս ոչ ոք չի գտնի, - ասաց Ծեր Վարդապետը և արագ հեռացավ բակի միջով:

Երբ դուրս եկանք դարպասից, Ծեր Վարդապետն ինձ փաթաթեց իր վերարկուի մեջ. եղանակն արդեն ցրտել էր: Մենք անցանք դաշտերի միջով և ուղղվեցինք դեպի հեռվում երևացող ցածրադիր բլուրները:

Ծեր Վարդապետը քիչ էր խոսում: Նա շատ էր ծերացել, խնայում էր իր ուժերը: Փորձում էր հնարավորինս արագ ինձ հեռացնել այդ վայրերից, մինչև լույսը կբացվեր:

Երբ հասանք բլուրներին, հովիվն ինձ ցույց տվեց մի ճանապարհ: Հանձնարարեց այդ ճանապարհով գնալ այնքան, մինչև հասնեի իր քուրդ բարեկամի խրճիթին:

- Հապա դո՛ւ, Վարդապե՛տ, դու չե՞ս գալու ինձ հետ: Ահմեդ բեյը չի՞ կասկածի քեզ, երբ վերադառնաս, - հարցրի ես:

- Ծեր Վարդապետը շա՜տ է ծերացել, չի կարող դիմանալ անապատին, և, հետո, ո՞վ պիտի հոգ տանի իմ հոտի մասին, - պատասխանեց հովիվը:

Իմ խե՜ղճ, սիրելի Վարդապետ...

Ես վազում էի հովվի ցույց տված ճանապարհով: Մի քանի ժամ անց հասա քուրդ հովիվների խրճիթներին: Նրանք մեծ հարգանք ունեին Ծեր Վարդապետի հանդեպ: Նա քրդերին տեղեկացրել էր, որ ես իր վաղեմի տիրոջ դուստրն եմ: Նրանք ինձ սպասում էին: Շատ բարի մարդիկ էին:

Երբ նստած մտածում էի Ծեր Վարդապետի վերադարձի, ոչխարների և Ահմեդ բեյի «ողորմածության» մասին, աչքերս արցունքոտվում էին: Քուրդ հովվի կինն ու աղջիկները շատ էին անհանգստանում, իսկ հովիվն ինքը գնաց Ահմեդի տուն՝ տեղեկանալու, թե արդյոք Ծեր Վարդապետը խնամո՞ւմ է նրա ոչխարները: Գիշերը նա վերադարձավ ծանր սրտով. իմացել էր Ծեր Վարդապետի տխուր վախճանի մասին:

Ահմեդ բեյը կասկած չուներ, որ ոչ ոք չէր կարող ազատել ինձ բանտից Ծեր Վարդապետից բացի: Ահմեդը Ծեր Վարդապետին կանչել էր իր մոտ ու հարցրել իմ փախուստի մասին: Վարդապետը խոստովանել էր, քանի որ այլ ելք չուներ: Ահմեդ բեյը կանչել էր իր զինվորներին, սրանք էլ Ծեր Վարդապետին տարել էին այնտեղ, որտեղ ոչխարի հոտը սպասում էր արոտավայր գնալու: Նրան գնդակահարել էին ոչխարի հոտի մոտ: Ծեր Վարդապետն իր վաղեմի տիրոջ աղջկա ազատության համար հատուցեց իր կյանքով:

Իմ խե՜ղճ, բարի, սիրելի Վարդապետ...

Քուրդը տագնապում էր ինձ համար: Ահմեդ բեյը զաբթիեներ էր ուղարկել ամենուրեք՝ դաշտերում, լեռներում, ձորերում ինձ փնտրելգտնելու համար: Ամեն րոպե նրանք կարող էին ներխուժել մեր բարեկամ քրդի խրճիթը:

Քուրդը և նրա ընտանիքը չէին ուզում ինձնից բաժանվել, բայց ես հասկանում էի, որ պետք է հեռանամ: Ահմեդի տունը շատ հեռու չէր այդ խրճիթից, զաբթիեները ամեն րոպե կարող էին գտնել ինձ: Որոշ ժամանակ անց նրանք ինձ տվեցին մի զույգ շատ լավ գործած երկար գուլպա, մի մեծ բոքոն հաց, ջրով լի մեծ կուժ և մեծ ծածկոց՝ գիշերները ծածկվելու համար: Բեռնավորված այս ամենով՝ ես հեռացա դեպի լեռները: Դիմացի սարերից այն կողմ Դերսիմն էր՝ արոտավայրերով ու ավազուտներով հարուստ: Գնա անթիվ մղոններ աջ ու ձախ՝ քրդից բացի ուրիշ ժողովուրդ չես տեսնի. այստեղ միայն Դերսիմի քրդերն էին ապրում. մի մասը գյուղերում էր հաստատվել, մյուս մասն էլ քոչվորի կյանք էր վարում: Դերսիմի սահմաններից դուրս թուրքեր էին ապրում: Մի ժամանակ հայեր էլ կային թուրքական այս քաղաքներում, բայց այդ ժամանակ նրանց արդեն տեղահանել էին:

Դերսիմի անմարդաբնակ ու ամայի վայրերի բնակիչները նման չէին հարավում ապրող չարագործ ու արյունարբու քրդերին: Հարավի քրդերը վաչկատուն ցեղեր են՝ անմարդկայնորեն դաժան: Դերսիմի քրդերը հիմնականում հողագործներ են և հաճախ են ըմբոստացել թուրքական իշխանությունների դեմ: Նրանք մոլեռանդ մուսուլման են և կրոնական ատելությամբ են լցված «անհավատների»՝ քրիստոնյաների հանդեպ, սակայն նրանք մարդ սպանելու կիրք չու-

նեն, որ հատուկ է հարավում ապրող ցեղերին: Ահա սրա՛նց եմ պարտական իմ կյանքով:

Ավելի քան մեկ տարի ես կա՛մ թաքնվեցի, կա՛մ թափառեցի Դերսիմի տարբեր վայրերում: Ծեր Վարդապետի սպանության լուրը լսելուց և իմ քուրդ բարեկամներին հրաժեշտ տալուց հետո ցերեկները թաքնվում էի, գիշերները քայլո՛ւմ, քայլո՛ւմ, բայց կարծես թե ոչ մի տեղ չէի հասնում: Երբ որևէ բնակավայր էր ուրվագծվում իմ առջև, ես շեղում էի ճանապարհս՝ հոգնած ու աննպատակ թափառելով դաշտավայրերի ու բլուրների միջով: Սննդիս պաշարները վերջացան, իսկ ջուր դժվարությամբ էի գտնում, որովհետև որտեղ ջրհոր կամ աղբյուր կար, այնտեղ էլ՝ քրդական բնակավայր:

Մի անգամ մի ողջ օր թաքնվեցի մի ջրհորի մոտ՝ սպասելով, թե բախտս գուցե բերի՝ թրջեմ չորացած կոկորդս և զովանամ: Ցերեկը վտանգավոր էր:

Մի օր, երբ գիշերը վրա հասավ, ուժերս հավաքեցի և սողացի դեպի ջրհորը: Շները բակերից հաչելով հարձակվեցին վրաս: Ես չափից ավելի հոգնած էի և ուժասպառ, կանգնած մնացի տեղումս: Գյուղացիները եկան պարզելու, թե ինչն էր իրենց շներին կատաղեցրել: Նրանք ինձ տարան և ողջ գիշեր փակեցին մի քարայրում: Առավոտյան տանուտերն ինձ ընդունեց որպես իր գերու և հրամայեց հնազանդվել իր ընտանիքի անդամների հրամաններին:

Նրանք ինձ ստիպում էին տղամարդու աշխատանք կատարել: Ես զբաղվում էի նախրով, ջուր էի բերում, աշխատում ցորենի արտում: Երբ չէի կարողանում նրանց գոհացնել, քրդերը ոչ միայն ծեծում էին ինձ իրենց հաստ ու երկար մահակներով, այլև զրկում էին սննդից: Իսկ երբ լավ էի աշխատում, և աշխատանքս գոհացնում էր նրանց, քուրդ կանայք մի կտոր հաց էին շպրտում ինձ: Գիշերները քնում էի գետնին՝ բաց երկնքի տակ, ցնցոտիների, պատառոտված ծածկոցի մեջ և երբեք չէի տաքանում:

Շաբաթներ անցան: Ես այնքան էի տկարացել, որ այլևս չէի կարողանում աշխատել: Մի օր դաշտ գնալու ճանապարհին ընկա և չկարողացա տեղիցս վեր կենալ: Մի քուրդ մոտեցավ ինձ և ոտքով խփեց: Այդ օրը նրանք ինձ կես բոքոն տվեցին՝ ասելով, որ հեռա-

նամ: Քիչ ճանապարհ անցնելուց հետո երկու օր հանգստացա: Այնքա՜ն հաճելի էր, որ այլևս ստիպված չէի առավոտից իրիկուն եզան նման քաշել փայտե գութանը: Ուժերս շուտով վերականգնվեցին: Ես շարունակեցի քայլե՛լ ու քայլել...

Գիտեի, որ Էրզրումից դեպի արևելք ռուսներն են՝ հայերի բարեկամները: Դեմքս դարձրի դեպի այն կողմ, որտեղ, իմ կարծիքով, Էրզրումը պիտի որ լիներ: Դա Դերսիմից մոտավորապես 100 մղոն հեռու էր: Աշխատում էի հեռու մնալ բնակավայրերից, քանի դեռ քաղցն ու ծարավը չէին հաղթում ինձ: Ես նորից կամավոր հանձնվում էի քրդերին որպես բանող ստրուկ: Քրդերն ինձ պահում էին մինչև իմ լիակատար ուժասպառ լինելը, որից հետո կես բոքոն հաց էին տալիս և վտարում:

Արդեն ցրտերն ընկել էին, իսկ ես տաք հագուստ չունեի: Քրդերն իրենց գործած հագուստներից ինձ ոչինչ չտվեցին: Ծարավս հագեցնում էի լեռների ծերպերում հավաքված ձյունով: Շաբաթներ ու ամիսներ շարունակ կերել եմ ծառերի կեղևներ և ձյան տակ մնացած խոտի ցողուններ:

Երբ հասա Դերսիմի արևմտյան սահմանին, այլևս ձյուն չկար: Չգիտեի, թե ո՛ր ամիսն է, կորցրել էի ժամանակի զգացողությունս, բայց ենթադրում էի, որ գարնան վերջը պիտի լինի, քանի որ ձյուն չէր մնացել նաև լեռների կատարներին: Ես հիմա գտնվում էի թուրք խաշնարածների հարևանությամբ: Մեկ-մեկ սպիտակ վերարկուներ հագած թուրքեր էին հանդիպում: Ես ժամանակ առ ժամանակ տեսնում էի ոչխարի հոտեր և այլ բաներ, որոնք հուշում էին, որ մոտ եմ քաղաքներին: Այդուհանդերձ աշխատում էի հեռու մնալ քաղաքներից ու մարդկանցից:

Մի օր քաղցից այնքան էի թուլացել, որ ի վիճակի չէի շարժվելու: Հանկարծ նկատեցի, որ իմ թաքստոց-բլրալանջի կողքով մարդկանց մի երկար շարան է անցնում՝ իրենց գրաստներով, սայլերով ու կառքերով: Նրանք գնում էին հարավ տանող ճանապարհով: Այդ քարավանի վերջը չէր երևում. դաշտավայրի միջով անցնում էին ժամերով: Ես զարմացած նայում ու մտածում էի՝ ի՞նչ է սա... Մի կերպ սողացի բլուրն ի վար, չորեքթաթ շարժվեցի առաջ

և այնքան մոտեցա, որքան հնարավոր էր: Վերջապես հասկացա, որ թուրքեր են և իրենց հետ տանում են տնային իրեր: Նրանք հուզված էին և անհանգիստ:

Մի ամբողջ օր դիտեցի այդ թուրքերի գաղթը: Երբ մթնեց, որոշեցի գնալ այն ճանապարհով, որով անցել էին թուրքերը: Ինչ-որ բան նրանց ստիպել էր թողնել իրենց տները և գաղթել արևելյան այս քաղաքներից, և դա չէր կարող վատ բան նշանակել մի հայ աղջկա համար:

Արդեն անցել էի Կարասու գետը՝ Եփրատի ամենահեռավոր վտակը: Ճանապարհի երկայնքով, որտեղով անցել էին թուրքերը, այս ու այն կողմ թափված էին հացի կտորտանք, ապակե ջրամաններ, միրգ և սննդի այլ մնացուկներ: Բավականին հավաքեցի, կերա, վերականգնեցի ուժերս և առաջ շարժվեցի: Այն դաշտավայրերը, որոնց միջով անցա այդ գիշեր, ըստ մեր հոգևորականների և կիրակնօրյա դպրոցի դասագրքերի, մի ժամանակ եղել էին եդեմական պարտեզներ: Կարասու գետը Եփրատի չորս վտակներից է: Այստեղ կողք կողքի են հոսում Սուրբ գրքում հիշատակված Աքամփիսը, Ճորոխը, Արազը և մյուս երեք գետերը: Այն ժայռերի միջով, որտեղով անցնում էի, ինչքան ոտքերիս մեջ ուժ էր մնացել, մի ժամանակ շրջել էր աստվածաշնչյան Եվան: Երբեմն, երբ նստում էի հանգստանալու, մտածում էի Եվայի մասին, ուզում էի իմանալ՝ արդյոք այս պահին երկնքում չէ՞ նա, չի՞ նկատում ինձ՝ վերջին ներկայացուցչին մի ժողովրդի, որն առաջինն ընդունեց Քրիստոսի ուսմունքը և հանուն այդ հավատքի դարեր տառապեց և դեռ շարունակում է տառապել...

Հաջորդ օրը թուրք փախստականների ավելի մեծ խմբեր անցան: Վերջիններս կարծես թե ուշացել էին և իրար անցած շտապում էին դեպի արևմուտք: Նրանց շարքերում երևում էին նաև ասկյարներ ու զաբթիեներ: Հեռու հորիզոնում նշմարվում էին քաղաքի մինարեթները: Հասկացա՝ դա պիտի որ Էրզրում քաղաքը լինի: Մոտեցա մի գյուղի: Նկատեցի, որ բնակիչները շփոթված վազում են տնից տուն:

Ես վախենում էի ճանապարհ ընկնել ցերեկով: Չէի կարող մոտենալ այդ գյուղերից որևէ մեկին՝ նույնիսկ ջուր խնդրելու համար, եթե անգամ վստահ լինեի, որ ինձ գերի չեն վերցնի. ախր մերկ էի, ամաչում էի...

Երեկոյան գաղտագողի է՛լ ավելի մոտեցա հեռվում երևացող քաղաքին: Առավոտյան արդեն կանգնած էի բարձր ժայռի եզրին, որտեղից ճանապարհը կտրուկ իջնում էր դեպի դաշտավայր: Կառչելով ժայռածերպերից ու քարերից, որոնք ինձ թաքցնում էին թուրք փախստականներից (նրանք դեռ շարունակում էին շարժվել նույն ճանապարհով), ես տեսնում էի, թե ինչ է կատարվում ներքևում:

Աչքերիս առջև մեծ իրարանցում էր: Ասկյարների մեծ խմբեր էին գալիս ու անցնում: Փախստականների հոսքը շարժվում էր քաղաքից դուրս, սրանց միանում էին շրջակա գյուղերի բնակիչները: Հեռուներից ինձ էր հասնում հրանոթների դղրդյունը:

Կրակոցների ձայնն ավելի էր մոտենում: Հրանոթների արկերի պայթյունից դողում էր գետինը, փլվում էին տները: Ես ականատես եղա, թե ինչպես է հրետակոծվում քաղաքը: Քաղաքի հեռավոր մասում հանկարծ բարձրացավ փոշու մի հսկայական ամպ: Հրանոթների թնդյունն է՛լ ավելի մոտեցավ: Ասկյարները փախչում էին քաղաքի դարպասից՝ կրնկակոխ հետևելով իրենց քաղաքացիներին:

Ուշ երեկոյան կրակոցները դադարեցին: Քաղաքի հեռավոր մասերից բարձրացող փոշու ամպերն ավելի ու ավելի էին մոտենում: Այդ ամպերից հանկարծ դուրս եկան հեծյալների խմբեր: Նրանք ուղիղ արշավեցին դեպի քաղաքի հեռավոր դարպասը:

Թուրք ասկյարները նրանց հանդիպեցին քաղաքի պարիսպների մոտ: Տեղի ունեցավ բախում, թուրքերը նահանջեցին: Հեծյալները հետապնդեցին նրանց: Լսվում էին հրազենային կրակոցներ: Հեծյալների այլ խմբեր արշավեցին քաղաքի արևելյան կողմից:

Ռուսները եկել էին...

Մեկ ժամ անց քաղաքը գրեթե խաղաղվեց: Հեռվում տեսա դանդաղ շարժվող շարասյուներ: Կազակներին հետևում էր ռուսական բանակը: Քաղաքի թուրքերն անձնատուր էին եղել:

Երբ մութն ընկավ, ես դուրս եկա իմ թաքստոցից և մտա քաղաք: Հուսով էի, որ մինչև լուսաբաց կկարողանայի լաթի մի կտոր կամ շալի նման մի բան գտնել՝ ծածկելու համար մերկությունս: Քաղաքացիների մի մասը, որ քաջություն էր ունեցել քաղաքում մնալու, փակվել էր տներում: Քաղաքի արվարձանային փողոցներն ամայի էին.

միայն մի պատահական զաբթիե էր գողությամբ զբաղված և վախենում էր նկատվելուց, ինչպես և ես:

Հանկարծ, երբ շրջվեցի նեղ փողոցի անկյունադարձով՝ քսվելով պատին և հույս ունենալով, թե ուր որ է կմոտենամ ռուս զինվորներին, իմ աչքի առջև բացվեց մի գեղեցիկ տեսարան. ծածանվում էր ամերիկյան դրոշը և փայլփլում լուսարձակի շողերի ներքո: Ես հասկացա, որ սա է լինելու իմ փրկությունը: Բայց մինչ լուսաբաց, մինչև արևի ծագելը չհամարձակվեցի մոտենալ այդ շենքին: Հետո նկատեցի մարդկանց, որ քայլում էին բակում և մուտքի մոտ: Դուրս նետվեցի իմ թաքստոցից և ընկա մի բարձրահասակ, բարետես մարդու ոտքերի առջև: Նա հենց նոր էր դուրս եկել տնից և կանգնած խոսում էր մի ռուս սպայի հետ: Զգացի, որ բարձրահասակ մարդը թեքվեց և ձեռքը դրեց գլխիս: Կարծես թե աշխարհը շուռ եկավ, արևն իր կենսատու շողերը տարածեց ինձ վրա: Հետո ես խոր քուն մտա:

Երբ աչքերս բացեցի, ինձ ասացին, որ մի քանի օր քնած եմ եղել: Ես մի տաքուկ անկողնում էի, բարի մարդկանց շրջապատում: Երբ նրանք խոսում էին ինձ համար անհասկանալի լեզվով, փորձում էի նրանց հասկացնել, որ ուզում եմ տեսնել այն բարձրահասակ մարդուն, ով ինձ բարձրացրեց փողոցում՝ տան մուտքի մոտ: Մի թարգմանիչ եկավ, ապա՝ բարձրահասակ մարդը՝ բարի ժպիտը դեմքին: Հասկացա, որ ամեն ինչ լավ է լինելու:

Ինձ ասացին, որ այդ համակրելի ու բարեհամբույր մարդը դոկտոր Ֆ. Ռ. Մակ-Քալումն է՝ հանրահայտ միսիոներ-բժիշկը, ով բարությամբ ու գթասրտությամբ էր լցված մեր ժողովրդի հանդեպ և մեծ համբավ էր ձեռք բերել: Նա հարկադրված թողել էր Կոստանդնուպոլիսը, երբ պայթել էր Առաջին համաշխարհային պատերազմը, սակայն վերադարձել էր Էրզրում ռուսների հետ՝ մեր ժողովրդին օգնելու համար:

Հիշատակածս շենքը մի ժամանակ պատկանելիս էր եղել ամերիկացի միսիոներներին: Վերջիններս հարկադրված հեռացել էին, բայց նույնպես վերադարձել էին ռուսների հետ:

ԱՄՆ ժամանելուց հետո դոկտոր Մակ-Քալումը Նյու Յորքում եղավ իմ առաջին բարեկամը: Ամերիկացի բժիշկը գերությունից

ազատել էր հազարավոր հայ աղջիկների այն օրերին, երբ ռուսները Կովկասից արշավում էին դեպի Թուրքիա: Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտեի դրամական միջոցներով դոկտոր Մակ-Քալումը թուրքերից գնել էր հազարավոր հայ աղջիկների՝ յուրաքանչյուրի համար վճարելով մեկ դոլար: Թուրքերը հասկանում էին՝ եթե ռուսները հայտնաբերեին գերեվարված քրիստոնյա հայուհիներին, նրանց բոլորին էլ կազատեին, ուստի նրանց ուրախությամբ վաճառում էին առաջարկված գնով:

Ինձ տեսնելու եկավ Անդրանիկ Զորավարը՝ հայ ժողովրդի ազգային հերոսը: Երկար տարիներ նա արիաբար պայքարել է իր ժողովրդի ոգին աննկուն պահելու համար: Նրան խոստացել է ազատություն՝ շարունակ վտանգելով սեփական կյանքը: Թուրքերը մեծ գլխագին էին նշանակել Անդրանիկ Օզանյանի համար և հետապնդում էին նրան Օսմանյան կայսրության ողջ տարածքում: Նա ոտքի էր հանել հայկական զորախմբերը, որոնք կազմավորվել էին Ռուսաստանում ապրող հայերից: Թուրքերի դեմ կռվելիս նրա զորագունդը մշտապես ռուսական բանակի առաջին շարքերում է եղել:

Երբ պատմում էի Անդրանիկ Զորավարին, թե ինչպես ականատես եղա մեր ժողովրդի բնաջնջմանը, նա խորապես վշտացավ: Ինձ հանգստացնում էր, աշխատում ուրախացնել՝ ինձ ասելով «իմ փոքրիկ աղջիկ»: Նրա զորովանքն ինձ ավելի շատ էր ոգևորում, քան եթե ինձ տար աշխարհի բոլոր հարստությունները:

Մի ռուս սպա, որ հայերեն գիտեր, նույնպես եկավ ինձ հետ զրուցելու: Երբ ամեն ինչ պատմեցի, ավարտեցի, նա գնաց, բայց մեկ ժամից վերադարձավ մի բարձրահասակ, բարի դեմքով սպայի հետ: Վերջինս, հավանաբար, բարձրաստիճան զինվորական էր, քանի որ բոլորը զգաստացան, երբ նա ներս մտավ: Այն սպան, ում հետ զրուցել էի, կրկնեց իմ պատմածը: Արտաքինով աչքի ընկնող սպան ինձ հետ խոսեց նախ ռուսերեն, ապա ֆրանսերեն (հասկանում էի):

- Դու շատ դժբախտ աղջիկ ես, - ասաց նա, - ուրախ եմ, որ ժամանակին ենք հասել ու փրկել քեզ: Դու կլինես մեր հոգածության ներքո, և բոլոր ռուսները քո բարեկամները կլինեն:

Երբ սպան հրաժեշտ տվեց, ներկաներն ասացին, որ նա Մեծ իշխանն է՝ Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր հրամանատարը, իսկ այն զինվորականը, որ նախապես զրուցել էր ինձ հետ, գեներալ Տրոկինն էր՝ Մեծ իշխանի շտաբի պետը:

Երբ ուժերս վերականգնվեցին, երբ ինձ արդեն լավ էի զգում, Անդրանիկ զորավարը թույլ տվեց ինձ մասնակցել հարյուրավոր հայ երեխաների խնամելու գործին: Երեխաներին հավաքել կամ գնել էին թուրքերից, կային նաև մեծահասակներ, որ բռնագաղթի ժամանակ պատսպարվել էին լեռներում, իսկ այժմ դուրս էին եկել իրենց թաքստոցներից: Նրանք պաշտպանություն էին խնդրում ռուսներից: Ես օգնեցի նաև այն աղջիկներին, որոնց գնել էին թուրքական հարեմներից:

Երբ Անդրանիկ Զորավարը առաջ շարժվեց ռուսական բանակի հետ, Մեծ իշխանը հրամայեց, որ զինվորների ուղեկցությամբ ինձ ապահով հասցնեն Սարիղամիշ, որտեղից էլ ինձ պետք է ուղարկեին Թիֆլիս: Զորավար Անդրանիկն ինձ հրաժեշտ տվեց և ասաց.

- Մեծ դուքսը կարգադրել է Ամերիկա ուղարկել քեզ, որտեղ մեր տառապյալ ժողովուրդը շատ բարեկամներ ունի: Երբ հասնես այդ սիրելի երկիրը, նրա ժողովրդին կասես, որ Հայաստանը հոշոտված է և արյունաքամ, բայց, միևնույն է, նորից ոտքի կկանգնի, եթե միայն Ամերիկան օգնի նրան, ուտելիք ուղարկի հայ սովյալներին, դրամ՝ նրանց վերադարձնելու համար իրենց տները, երբ պատերազմն ավարտվի:

Հաջորդ օրը զինվորների ուղեկցությամբ շարժվեցինք դեպի Սարիղամիշ: Զորավար Անդրանիկը մոտեցավ ինձ և մատից հանելով մի շատ գեղեցիկ մատանի, որ եղել էր իր պապի և ապա իր հոր մատանին, դրեց իմ մատը: Այդ զարդը մինչ օրս կրում եմ. դա այն ամենն է, ինչ մնացել է ինձ իմ երկրից:

Սարիղամիշից Մեծ իշխանի զինվորների ուղեկցությամբ մեկնեցի Թիֆլիս, որտեղ ինձ ընդունեց Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչը: Վերջինս միջոցներ տրամադրեց, որպեսզի Մեծ իշխանի անձնագրով ինձ տեղափոխեն Պետրոգրադ, Շվեդիա և ապա՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Երբ հասանք Պետրոգրադ, քաղաքն անհանգիստ էր: Ցարը գահընկեց էր արվել, և Կերենսկու կառավարությունն իր իշխանությունը կորցրել էր: Փողոցային անկարգություններ էին սկսվել: Այն իրավասու անձինք, որոնց հոգածությանը պետք է հանձնեին ինձ Մեծ իշխանի և Թիֆլիսի ամերիկյան ներկայացուցիչների միջնորդությամբ, կա՛մ արդեն պաշտոնանկ էին արվել, կա՛մ գնդակահարվել:

Նորից մնացի առանց բարեկամի և օթևանի: Ես շատ փող ունեի, բայց դրանով հնարավոր չէր սնունդ գնել: Հիսուն ռուբլով հազիվ հաջողվեց մի բոքոն հաց գնել: Երբ քաղցն սկսում էր տանջել ինձ, ստիպված փողոցում կանգնեցնում էի բարի մարդկանց և նրանցից օգնություն հայցում: Անցորդները տխուր նայում էին ինձ, բոով մանրադրամ տալիս և ասում, որ իրենք միայն այդ կարող են տալ, բայց ոչ ուտելիք: Ժողովրդի մոտ չափից շատ դրամ կար, բայց ոչ հաց:

Ոչ ոք չէր համաձայնում ինձ գիշերելու տեղ տալ: Վերջապես գտա դատարկ ու լքված հայկական մի եկեղեցի: Պետրոգրադում ապրող բոլոր հայերը վախից հեռացել էին քաղաքից: Նրանք, իրենց ժողովրդի դառը փորձից ելնելով, առաջինն էին գնահատել իրավիճակը և զգացել վերահաս վտանգը: Ես մնացի լքված եկեղեցում մի քանի օր. վախենում էի փողոց դուրս գալ, որտեղ շատ էին սպանություններն ու կողոպուտները: Միայն առավոտյան, երբ փողոցները համեմատաբար խաղաղ էին լինում, համարձակվում էի դուրս գալ՝ ուտելիք գտնելու հույսով:

Մի օր նկատեցի եկեղեցու մոտով անցնող մի ամերիկացու: Վազելով մոտեցա նրան և ֆրանսերեն խնդրեցի օգնել ինձ: Ցույց տվեցի անձնագիրս: Նա ինձ կառքով տարավ ԱՄՆ դեսպանատուն: Այստեղ բոլորը բարի էին իմ նկատմամբ: Անձնագիրս փոխեցին, և հաջորդ օրը ես մեկնեցի Քրիստիանիա (Օսլո):

Ճանապարհին զինվորական խմբերը հաճախ կանգնեցնում էին մեր գնացքը և ստուգում յուրաքանչյուրի անձնագիրը: Շատերին գնացքից իջեցրին հենց առաջին կայարանում: Իմ անձնագիրը խնդիրներ չառաջացրեց, և ես շարունակեցի ճանապարհս: Ինչքան հեռանում էինք Պետրոգրադից, մեր շուրջն ավելի ու ավելի խաղաղ էր դառնում: Հետո ամեն անհանգստություն ու տագնապ

մնաց հետևում... Մեր գնացքը սլանում էր դեպի աշխարհի մի ավելի խաղաղ, ավելի երջանիկ եզերք:

Վերջապես մենք հասանք Քրիստիանիա, որտեղ ես շատ բարի մարդկանց հանդիպեցի: Նրանք ինձ առատաձեռնորեն մատուցեցին այնպիսի համեղ բաներ, որ չէի հիշում, թե վերջին անգամ երբ էի կերել: Ես այստեղ զգացի բարություն և ընտանեկան խաղաղ մթնոլորտ: Մինչ Միացյալ Նահանգներից դրական պատասխան ստանալը ես բավականաչափ հանգստացա և վերագտա ուժերս:

Քրիստիանիայում դրամական միջոցներ ստանալուց հետո նավ նստեցի, որն ինձ պիտի Հալիֆաքս տաներ և ապա՝ Ազատության երկիր: Հալիֆաքսից ուղիղ եկա Նյու Յորք: Երբ ինձ ցույց տվեցին Ազատության արձանը, ուրախ էի ոչ միայն այն բանի համար, որ փրկվել էի դժոխք դարձած իմ երկրից, այլ որ պետք է Անդրանիկ Զորավարի պատգամը հաղորդեի ամերիկացի ժողովրդին՝ հավատալով, որ նա օգնության ձեռք կմեկնի իմ տառապյալ ազգին:

Ամերիկայում շատ բարի մարդկանց հանդիպեցի՝ հիանալի ամերիկացիների, ովքեր ջանք չէին խնայում ինձ երջանկացնելու համար: Ավելին, նրանք ոչ միայն կարեկից էին և բարեգութ մի դժբախտ աղջկա հանդեպ, այլև օգնության ձեռք էին մեկնում բոլոր նրանց, ովքեր դեռ ողջ էին մնացել անապատների ավազուտներում: Նրանք հնարավորություն տվեցին ինձ այս գրքում պատմելու այն, ինչ Անդրանիկ Զորավարը պատգամել էր ինձ. «Հայաստանը վստահում է իր բարեկամին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներին...»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽԱՎԱՐԻՆ ՀԱՂԹԱԾ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ
Ավրորա Մարդիգանյանի կյանքի ուղին 5

Զոն 13

Խոսք երաիւրագիրության 15

Նախաբան 17

Արշալույս՝ լույսն առավոտի պայծառության նախերգանքը 23

Գլուխ Ա
Փաշան եկավ մեր տուն 31

Գլուխ Բ
Սկսվեցին զարհուրելի օրեր 45

Գլուխ Գ
Վեհիբ բեյի ընտրությունը 59

Գլուխ Դ
Քեմալ էֆենդու անողոք ժպիտը 71

Գլուխ Ե
Զաբթիեների գործելակերպը 85

Գլուխ Զ
Աղջիկներ՝ Կոստանդնուպոլսի հարեմների համար 97

Գլուխ Է
Մալաթիա՝ մահվան քաղաք 109

Գլուխ Ը
Հաջի-Ղաֆուրի հարեմում 119

Գլուխ Թ
Հարձակում վանքի վրա 129

Գլուխ Ժ
Դիարբեքիրն ու սրախաղը 141

Գլուխ ԺԱ
«Իշիմ յո՛ք, քեֆիմ չո՛ք» 155

Գլուխ ԺԲ
Միացում, հեպո՝ շեյխ Զիլանը 167

Գլուխ ԺԳ
Հովվի կանչը 179

Գլուխ ԺԴ
Անդրանիկ Զորավարի հանձնարարականը 191

Համակարգչային շարվածքը և կազմի ձևավորումը՝ Արուսյակ Օհանյանի

Տպագրությունը՝ «Տիգրան Մեծ» տպարան
Տպաքանակ՝ 1000 օրինակ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

FL0356480

ISBN 979-0030-822-56-3

№
100850

ՀԱՅՈՑ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ